

ՍՏԵԼԼԱ ԲՐԱՄ
ՄԵՀՄԵՌ ՈՒԼԳԵՐ



Գորշ
Գայլեր

ՀԵՏԱԺՈՏՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐԶ
ՇԱՅՐԱՇԵՂ
ԱԳԱԿՈՂՄՅԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն գրքի հայերեն թարգմանությունն ու հրատարակումը հնարավոր է դարձել «Հոլանդիայի գրական սրեղծագործության ու թարգմանության ֆոնդի» հովանավորությամբ:

The publication of this book has been made possible thanks to the financial support of the Foundation for the Production and Translation of Dutch literature.

✓
ՀԱՅԿԵՏ
100 Գ

Ստեյլա Բրամ, Մեհմեթ Ուլգեր

GRIJZE WOLVEN
NIJGH & VAN DITMAR
Amsterdam 1997

© Stella Braam & Mehmet Ülger

© Arsen Nazarian (for Armenian translation)
“Zangak – 97” Publishing House
Yerevan 2003

ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ

Հետազոտություն թուրք ծայրահեղ
աջակողմյանների մասին

Հոլանդերենից թարգմանեց
Արսեն Նազարյան

A
89574



Երևան 2003

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3(4/8)
Բ 901

Հոլանդերենից թարգմանեց՝
Արսեն Նազարյան

Հեղինակներ՝
Բրամ Ստեյլա, Ուլգեր Մեհմեթ
Բ 901 ԳՈՐԸ ԳԱՅԼԵՐ/ Հետազոտությունը բուրբ ծայրահեղ
աջակողմյանների մասին. - Եր.: Չանգակ-97, 248 էջ. 2003թ.

0805000000
Բ $\frac{0805000000}{0003(01)-2003}$ 2003

ISBN 99930-2-746-4

ԳՄԴ 66.3(4/8)

© Ստեյլա Բրամ,
Մեհմեթ Ուլգեր, 2003 թ.

© Արսեն Նազարյան
(հայերեն թարգմ.), 2003 թ.



ԹԱՐԳՄԱՆԶԻ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինչպես գրքի տեքստից կարելի է հասկանալ, այն բոլորը, ինչ ասվում ու նկարագրվում է այս գրքում, հիմնված է փաստերի վրա: Լայնորեն օգտագործվել են Հոլանդիայի ոստիկանության արխիվները: Կատարվել են տասնյակ հարցազրույցներ՝ դեպքերին առնչվող պետական և ոչ պետական մարդկանց հետ:

Հեղինակներն իրենց կյանքը վտանգի են ենթարկել Գորշ Գայլերի մասին իրականությունը բացահայտելու և այն ներկայացնելու Հոլանդիայի հասարակությանը:

Սույն գրքի հրատարակումից հետո, 1997 թվին, Հոլանդիայի Գորշ Գայլերը հեղինակներին սպառնացին սպանությամբ: Ոստիկանության հրահանգով Ստեյլա Բրամն ու Մեհմեթ Ուլգերը միառժամանակ թաքնվեցին: Նրանք իրենց թաքստոցից դուրս եկան այն ժամանակ միայն, երբ լրատվական միջոցները լայնորեն անդրադարձան հարցին ու քննադատեցին Հոլանդիայի կառավարության կեցվածքն այս խնդրում:

Գրքում կա նաև ակնարկ Գորշ Գայլերի սպառնալիքների մասին՝ ընդդեմ թուրքահայերի Արցախյան պատերազմի տարիներին:

Արսեն Նազարյան
Հասագա, սեպտեմբեր, 2003 թ.

I. Մաֆիոզ – Գայլեր 10

«Նախընտրելի է մի ատրճանակ, քան տասը եղբայր»

«Եկսոդյուս» գործողության կասկածյալը իրո՞ք լավ կապեր ունի միլիցիայի հետ

Նախկին թուրք միլիցիոները քրեական գործում

Քյոյուն և Ռամազանը՝ Հոլանդիայի ծայրահեղ աջակողմյան մաֆիայի պարագլուխներ

Պատրաստ՝ զոհվելու գաղափարի համար

II. Սպիտակ գառնուկներ 37

«Գորշ Գայլը միմիայն խորհրդանիշ է»

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան իրո՞ք ոչ մի կապ չունի Էմ.Հա.Փե.ի հետ

Հոլանդիայի Գորշ գայլերի պատմությունը

Թուրքական մշակութային կենտրոն Ամստերդամում

Հոլանդական կառավարության նպաստով «ամիավատների» կրոնափոխում

III. «Մեկերտ» Գայլեր 56

«Պետք է կարգապահ լինել»

Ֆինանսավորված օղակ

Ամստերդամի թուրք երիտասարդները

Ռոտերդամի երևելի թուրքերը

Նպաստ ստանալու լեզվաբանություն

Արդյո՞ք Օսի քաղխորհուրդը նպաստ տրամադրելու է

IV. Մշակութային պատերազմ 75

«Կանգնե՛ք, զգա՛ստ»

Սա իրո՞ք մի անմեղ տոնական միջոցառում է

«Դու թո՛ւրք ես, թե՛ ոչ»

Ո՞վ է Ալփարսլան Թուրքեշը

«Մենք՝ Եվրոպայի թուրքերս...»

V. Բազմաֆունկցիա մզկիթ 86

«Անհավատների շրջանակից հեռու մնացեք»

Մզկիթը քաղաքական գործունեության վայր

Ապօրինի մնացողներ

Սափրիչը մազերդ կտրում է մի տասանոցի համար

Սարդկանց ապօրինի տեղափոխում

Մատաղի տոն Չեչենիայի համար

VI. Բաշբուղը ժամանում է Բելգիա 100

«Մենք կամավոր զինվորներ ենք»

Երկու ատրճանակ՝ ուղղված Մեհմեթին

Ֆաթման այլևս չի ուզում թարգմանել

«Դուք գտնվում եք կուսակցության համաժողովում»

Խոսք է առնում Բաշբուղը

Թիկնապահ Ալին գաղտնիքներ է բացահայտում

VII. Գառնուկները դառնում են գայլեր 119

«Մենք Չեր գործն իրականացնող մեքենան ենք այստեղ»

Թուրքական Ֆեդերացիան ինքն իրեն քողագերծում է

Ֆուտբոլը որպես Գայլերի հոգեբուժման միջոց

Կանանց ազատագրո՞ւմ, թե՛...

Չոհվածների ոգեկոչո՞ւմ

«Նարնջագույն առյուծ» Դորդեխտում

Ալևիթները կարո՞ղ են վերադառնալ

| | |
|--|------------|
| VIII. Գայլերի ոռնոց լեռներում | 141 |
| «Բաշբուղ, մենք ամբողջ աշխարհը տակնուվրա կանենք» Հաղթանակի համագումար էրչիեսում Հոլանդիայի Գորշ Գայլերն աշխատում են լեռը գրավելուց հետո չմնալ Առանց թշնամու Գորշ Գայլը չի կարող գոյատևել Բաշբուղը քաջալերում է | |
| IX. Ներթափանցում քաղաքական շրջանակներում | 157 |
| «Մեզնից յուրաքանչյուրը ոսկե մի թևնոց է» Գորշ Գայլը տեղական առաջադիմական կուսակցության մեջ Գորշ Գայլերի հավաքագրում Հոլանդիայի Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության շարքերում Բաշբուղը կոչ է անում Գայլերին զբաղվել դիվանագիտությամբ Բանվորական կուսակցության քաղխորհրդի թուրք անդամը հայտնվում է քրեական գործում «Քաուկի» Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության վարչությունը փակում է աչքերը իրականության դեմ Բեյվերվեյկի Բանվորական կուսակցության թուրք անդամը շահում է դատը Անստերդամի Բանվորական կուսակցության մասնաճյուղը սպասում է գրքի հրատարակմանը | |
| X. Բաշբուղը մահանում է | 177 |
| «Մեր "Մեկերտ աշխատատեղի" զբաղեցնողները գնացել են նրա հուղարկավորությանը» Թուրքական աշխարհը սգում է Պետական կարգի հուղարկավորություն Արդյո՞ք Գորշ Գայլերի հետևում թաքնված է թուրքական պետությունը Ո՞վ է Բաշբուղի հետևորդը Թուրքական ֆեդերացիան վախենո՞ւմ է, թե՞... | |
| Վերջաբան | 185 |

| | |
|--|------------|
| Հավելված 1 | 195 |
| Թուրք ծայրահեղ աջակողմյանների մաֆիան՝ սփռված աշխարհով մեկ Օրալ Չելիկ – Ալաթին Չաքըջը – Ուզբեյիր Բայրակլի ու Ռիֆաթ Յիլդիրհիմ–Նուրեթին Գուլեն Արդյո՞ք էմ. Հա. Փե.–ն թմրանյութերի առևտուր է անում Ալի Ռեզա Գուրբուզ – Թուրքուլ Թուրքեշ Արդյո՞ք թուրքական կառավարությունն օգնում է Գորշ Գայլերին: | |
| Հավելված 2 | 205 |
| Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի հայտարարությունը Հավելված 3 | 207 |
| Անջատված կազմակերպություններ Գործածված հապավումների ու տերմինների ցանկ | 210 |
| «Գորշ Գայլերի» հրատարակումից հետո | 213 |
| Օգտագործված գրականություն | 245 |

I. Մաֆիոզ – Գայլեր

«Նախընտրելի է մի ատրճանակ, քան տասը եղբայր»

«Էկստրոյուս» գործողության կասկածյալը իրո՞ք լավ կապեր ունի միլիցիայի հետ

Նախկին թուրք միլիցիոները քրեական գործում Քյոյլուն և Ռամազանը՝ Հոլանդիայի ծայրահեղ աջակողմյան մաֆիայի պարագլուխներ

Պատրաստ՝ զոհվելու գաղափարի համար

Սրճատան տերը, ըստ թուրքական հին սովորության, իր զարեջրի դատարկ բաժակը զարկում է սեղանին: Մատուցողուհին շտապում է բաժակը լցնել: Թուրքն ապա սկսում է իր վերարկուի գրպանը պրպտել, հանում է մի փոքր քսակ մարիխուանա ու անհոգ նետում երիտասարդ մի հաճախորդի կողմը:

— Միրո՞ւմ ես էս երաժշտությունը, — հարցնում է նա Ստելլային:

Առանց պատասխանի սպասելու, բարձրացնում է նա երաժշտությունը, ու սրճատունը ողողվում է թուրքական երաժշտությամբ:

Սրճարանը, որը գտնվում էր Ամստերդամի արևմտյան մի թաղում, գիշերները թուրք հանցագործների հանդիպավայրն է: Սրանցից շատերն իրենց կոչում են Գորշ Գայլ: Մա մի անհրապույր սրճատուն է՝ մաշված կահույքով ու նարնջագույն լամպերով: Պատին կախված է մի օրացույց՝ թուրքական դրոշակով: Մի անկյունում դրված է հին մի խաղամեքենա: Մի ծանուցատախտակի վրա նշված է՝ «Ձեռք կամ թմրեցուցիչ ունենալը, կամ առք ու վաճառքը արգելվում է»:

Հաճախորդներից շատերը, սակայն, կրում են զենք՝ իրենց գրպանում: «Դա մեր մշակույթի անբաժան մասն է, — ասում է նրանցից մեկը, — Թուրքիայում մենք ունենք մի ասացվածք՝ «Ավելի լավ է ունենաս մի ատրճանակ, քան՝ տասը եղբայր»:

Մի կնոջ ներկայությունն այս սրճարանում յուրահատուկ մի դեպք է: Կաֆեի տեր Ֆաթիհը հրավիրում է նրան խմիչքի ու հարցնում, թե կցանկանա՞ արդյոք բակը նայել:

Երբ Ֆաթիհը հետևի դուռը բաց է անում, մի սպիտակ ու մեծ բան դռան միջից ցատկում է նրանց վրա:

— Սրան Թուրքիայում են գնել, յոթ հազար գուլդեն՝, — ասում է նա: — Քյանգալ է անունը, հրաշալի շուն է, կարող ես շոյել, բայց եթե ես մոտը չլինեմ, վրա է տալիս:

Թուրքիայի գյուղերում, «Քյանգալ բյուխեզին» օգտագործում են ոչխարներին հսկելու ու գայլերին հեռու պահելու համար:

Ֆաթիհն ասում է, որ այն ժամանակից, երբ իր կաֆեն գող մտավ, առանց Քյանգալի չի մնում:

— Խաղամեքենան լրիվ դատարկեցին, խմիչքներն ու փողերը տարան: Հարյուր հազար գուլդեն վնաս կրեցի, — ասում է նա:

Ֆաթիհը ահազդու մի տիպար է: Հաղթանդամ է, ունի լայն ձեռքեր՝ հաստիկ մատներով: Աչքերը փոքր են, կասկածոտ ու ծակող: Մազերը կարճ կտրած են: Նա եղել է քիկնապահ և աշխատել որպես գիշերային ակումբի մուտքի հսկիչ՝ Ուտրեխտ քաղաքում:

— Էնտեղ տեսել եմ իրեն կռվելիս, — պատմում է հաճախորդներից մեկը, — զենքով չէ, պարզապես ձեռքերով: Մեկին զցել էր տակն ու ծեծում էր. էնքան զարկեց ու քացով խփեց, որ մարդն էլ տեղից չէր շարժվում:

Սպասարկության համար Ֆաթիհը աղջիկներ պետք ունի: «Երեկոյան ժամը ուրից մինչև գիշերվա ժամը երեքը: Յոթանասունհինգից մինչև հարյուր հիսուն գուլդեն կարող ես վաստակել, սև, իհարկե»:

— Ինչի՞ համար են աղջիկները:

— Արձակուրդի ժամանակ է:

Ֆաթիհի սրճարանում աշխատելը շատ հաճելի գործ չպիտի լինի: Սրճարանի տերը սպասարկուհիների մոտից չի հեռանում: Ինչքան գիշերն առաջանում է, այնքան ավելի է վավաշանում, մինչև որ երկուսին էլ բռնում ու ամուր պահում է, հենց հաճախորդների աչքի առաջ:

— Իրեն սուլթան է կարծում, — ասում է սպասարկուհիներից մեկը: Հետո դառնում է Ստելլային ու հարցնում.

— Կաթուղի՞ կ ես:

— Հա, կաթուղի ընտանիքից եմ:

— Ես մի կաթոլիկ ընկեր ունեի,— ասում է սպասարկուհին,— նրանից իմացա, որ կաթոլիկներն ու մուսուլմաններն իրար նման են: Չէ՞ որ ձեզ մոտ էլ ամուսնությունից առաջ սեռային հարաբերություն թույլատրված չի:

Ֆաթիհը բաժակը զարկում է սեղանին:

Շրջապատված երիտասարդ թուրքերով՝ ներս է մտնում «Սև Էմը*»²: Կոլոտ մի մարդ է՝ սև կոստյումով ու փողկապով: Մինչև վերջերս աշխատեցնում էր մի խաղասրահ՝ Ամստերդամի Ջէյ-դեյկ թաղում: Նա Հոլանդիա է եկել Թուրքիայից, 1980 թվի պետական հեղաշրջումից հետո: Թմրեցուցիչների առևտրի շրջանակներում նա մի փոքր «բաբա» է, ինչպես կոչում են թուրքերն իրենց մաֆիոզ պարագլուխներին: Նա ճանաչված է որպես ծայրահեղ աջակողմյան:

— Բայց եթե պետք է լինում, գործում է նաև «Փե. Քա. Քա»-ի համար»— ասում է սրճատան այցելուներից մեկը,— գործը գործ է:

Բարում նստած է Սերվեթ Ե.—ն ու հեռախոսում է իր բջջայինով: Հենց որ աչքն ընկնում է Ստեյլային, թեթև ձեռքով է անում, ապա սկսում է գոռալ ու մոնչալ՝ ինչպես մի շուն, որ պատրաստվում է հարձակվել: Հետո ոտքի է ելնում ու գնում մի սեղանի շուրջ նստում, որպեսզի Ստեյլան իրեն չտեսնի:

— Սերվեթը քեզ հրավիրում է մի բաժակ խմիչքի,— մի ժամ հետո կանչում է Ֆաթիհը բարի հետևից:

Երևի այս ձևով ուզում է պարտակել իր խոստման դրժումը. երկրորդ ժամադրությանը նա չէր երևացել:

Սերվեթի հետ մեր հարաբերությունն սկսվել էր 1997-ի հունիսի մի ուշ երեկոյից: Մենք սկսել էինք մեր հետազոտությունն արդեն 1995-ից, այն բանից հետո, երբ ոչ պաշտոնական մի աղբյուրից տեղեկացանք, որ Հոլանդիայի թուրքերի մեջ ազգայնամոլական հակումները սաստկանալու են: Մենք ուզում էինք իմանալ, թե արդյո՞ք Գորշ Գայլերը զբաղվում են քրեական կարգի գործունեությամբ, թե՞ ոչ: Սա մեր հետազոտության վերջին փուլն էր:

Նախ մենք հետախուզեցինք «օրինական աշխարհը»: Մենք ուսումնասիրեցինք «Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան», որը համատեղում է Հոլանդիայի բոլոր թուրքական կազմակերպություններին: Մենք նշաններ ձեռք բերինք, որ Գորշ Գայլերը, ինչպես օրինական աշխարհում, այնպես էլ ընդհատակում ակտիվ են, որ այս «մաֆիոզ-Գայլերից» մի քանիսը շարժման ներսում գորավոր դիրք ունեն և որ Գայլեր կան, որ այսպես կոչված «բարի նպատակով» հանցագործություն են անում: Մեր տեղեկատուներից մեկի ցուցումներով էր, որ գնացի վերոհիշյալ սրճարանը: Սա գտնվում է Ամստերդամի արևմտյան քաղաքամասում և, ի շարս այլոց, Սերվեթ Ե-ի այցելավայրն է: Սերվեթը Հոլանդիայի թուրքական ֆեդերացիային կից մի շարք կազմակերպությունների նախագահն է:

Ահա այս վերը նշված հունիսի մի երեկոյան, զանգում է Ստեյլայի հեռախոսը:

— Ճի՞շտ եմ լսել: Գիրք ես ուզում գրել իմ մասին ու ցանկանում ես հետս խոսե՞լ,— հարցնում է Սերվեթ Ե-ն:

— Գիրք քո մասի՞ն, դա մեծ պատիվ կլիներ ինձ համար. ես պարզապես մի քանի հարցեր ունեմ քո գործունեությունների մասին,— պատասխանում է Ստեյլան:

— Ես եմ, որ հարցեր պիտի տամ,— ասում է Սերվեթը:

Նրանք պայմանավորվում են հանդիպել Ամստերդամի կենտրոնական երկաթուղակայանի «Իրսթը Կլաս» ճաշարանում: Մեկմեքը չի ընկերանում. նա արդեն ճանաչված դեմք է:

Ճաշարանում նրա սեղանին է մոտենում մի սովորական տեսքով մարդ: «Ես Սերվեթն եմ»,— ասում է նա:

Ամմիջապես անցնում է հարցին:

— Ո՞վ է քեզ ֆինանսավորում: Ինձ չասես, որ քո անձնական հաճույքի համար ես սա անում:

— Եթե կարծում ես, որ ես արդարադատության նախարարության կամ Փե.Քա.Քա.-ի համար եմ աշխատում, սխալվում ես,— ասում է Ստեյլան,— ես ժուռնալիստ եմ:

— Ինչի՞ մասին է գիրքդ:

— Գորշ Գայլերի:

— Ես Գորշ Գայլ եմ,— ասում է Սերվեթը,— և պարծենում

եմ, որ այդպիսին եմ: Ես ուզում եմ Հոլանդիայի թուրք երիտասարդների թուրքական ինքնությունը փրկել:

— Բացատրիր, խնդրեմ:

— Թող ասեմ. թուրք երիտասարդը Հոլանդիայում պետք է թուրք մնա: Օրինակի համար, դիսկո գնալու փոխարեն, նա պիտի մեր ժողովրդական պարերը պարի: Մենք թուրք ենք, նույնիսկ Հոլանդիայում:

— Եվրոպայի թուրքեր,— ուղղում է նրան Ստեյլան: Սա այն անվանումն է, որ օգտագործում է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան, որին անդամակցում է Սերվեթը:

— Դատարկ խոսք, թուրքը թուրք է, որտեղ էլ լինի: Բայց մի հարց. իմ անունն էլ նշելո՞ւ ես գրքումդ:

— Այո՛:

— Դու ի՞նչ գիտես իմ մասին:

— Դու Ահմեդ Ա-ի կազմակերպության «բռնարարք և քաղաքականություն» բաժնին առնչվող քրեական գործի կասկածյալ ես: Այդ կազմակերպությունն էլ զբաղվում է թմրեցուցիչների առևտրով:

Պաշտոնապես, Սերվեթը մեղադրվում էր «առևանգումով» ու նաև «պարտքերի գանձումով», որի ընթացքում, ի շարս այլոց, հափշտակվում է պարտավորի ունեցվածքը: Այս բանը մենք հայտնաբերել էինք միլիցիայի «Էկստրյուս» գործողության թղթապանակում: Այս հետախուզական գործողությունը կատարվել էր 1993 և 1994 թվերին՝ արդարադատության նախարարության հրահանգով և վերաբերում էր Ամստերդամի Մերկատոր թաղամասում ակտիվ մի բանդայի, որն զբաղվում էր թմրեցուցիչների առևտրով:

Գործի գլխավոր կասկածյալ Ահմեդ Ա-ն դատապարտվել էր տասներկու տարվա ազատազրկությամբ: Ահմեդ Ա-ն սերտ համագործակցում է ունեցել Գորշ Գայլերի հետ:

Այս «Էկստրյուս» գործողությունը, որի գլխավոր կասկածյալ-դերակատարը այս վերոհիշյալ Ահմեդ Ա-ն էր, նկարագրվել է Հոլանդիայի պառլամենտական քննությունների ընթացքում կազմված «Ֆան-Թրա» կոչվող զեկույցում: Այս Ահմեդ Ա կոչվող թուրքը, որը համակրում է աջակողմյաններին, վերոհիշյալ զեկույցում զարմանալիորեն քրդական ինքնություն է

ստանում: Հիշյալ զեկույցում, «Ա»-ն և «Բ»-ն գործածվում են որպես ծածկանուններ: Զեկույցում նրա մասին ասվում է. «Թուրքիայում նա ակտիվ էր քրդական երիտասարդական շարժման մեջ, որի հետևանքով միառժամանակ բանտ է նստել և 1979 թվին ազատ արձակվելուց հետո Հոլանդիա եկել և դիմել ապաստանության»:

— Ինչպե՞ս է եղել, որ այս սխալ տեղեկությունները պառլամենտական զեկույցում տեղ են գտել,— հարցնում ենք կրիմինոլոգ պրոֆ. Ֆրանք Բովլընկերկից:

— Հաստատ մի հոգի Ամստերդամի միլիցիայից ինձ սխալ գծի վրա է դրել,— պատասխանում է նա: Մրանից ավել բան չունի ասելու:

«Էկստրյուս» գործողության ընթացքում, թաքուն ունկնդրվել են այն հաստատության հեռախոսագրույցները, որին անդամակցում է Սերվեթ Ե-ն: Նույնպես, ունկնդրվել են Ամստերդամի Մասջիդ-ալ-Ակսա մզկիթի հեռախոսագրույցները: Այս մեքենագրված հեռախոսագրույցներից կարելի է կազմել մի պատկերացում Ահմեդ Ա-ի բանդայի մասին: Բանդան զբաղվում է թմրեցուցիչների առևտրով. ի դեպ, այդ մասին խոսվում է ծածկորեն, քանզի կասկածում են, որ գրույցներն ունկնդրվում են. բանդայի այլ գործունեություններից են՝ կեղծ անձնագրերի պատրաստում, որոնց կոչում են «գրատետր», կեղծ փողի առևտուր և մարդկանց առևանգում: Այս վերջինի պարագայում խոսվում է նաև այն մասին, թե առևանգվածները վերացվե՞լ են, թե՞ ոչ:

Քրեական հետախուզական ծառայությունը Ա-ի բանդայում գտել էր հետքը «Գորշ Գայլեր-Բռնարարք և քաղաքականություն» կոչվող մի ստորաբաժնի: Այս բաժինը բաղկացած էր միմիայն Գորշ Գայլերից, որոնց մեջ էր նաև Սերվեթ Ե-ն:

— Ինչո՞ւ Ահմեդ Ա-ն տասներկու տարի ստացավ, իսկ դու ազատ, քեզ համար քայլում ես,— հարցնում է Ստեյլան:

— Ես ազատ եմ արձակվել, որովհետև օրինական ոչ մի փաստ չկա իմ դեմ,— ասում է Սերվեթը,— իմ փաստաբանին ես վճարել եմ յոթանասուն հազար գուլդեն:

— Ոստիկանության զեկույցներում կարդացի, որ դու հինգ միլիոն շվեյցարական ֆրանկ ես սպիտակեցրել,— հարցնում է

Ստեյլան,— այսինքն՝ մոտավորապես յոթ միլիոն գուլդեն (մոտ 3,5 մլն. դոլար):

— Վալյուտայի փոխանակում,— ուղղում է Սերվեթը:

— Բայց ոչ օրինական,— ասում է Ստեյլան:

— Հետո՞, դու երբևիցե հարցնո՞ւմ ես, թե հացթուխի մոտ հաջրը ինչպես է գոյանում: Դա ինձ չի հետաքրքրում:

— Դու Ահմեդ Ա-ի հետ համագործակցում էիր, չէ՞:

— Ո՛չ, մենք միասին դուրս էինք գնում կանանց հետևից:

— Ըստ միլիցիայի զեկույցի, Ալփարսլան Թուրքեշի անձնական փոխադրամիջոցը դու ես կարգադրել:

Ալփարսլան Թուրքեշը թուրքական Ազգային շարժման կուսակցության՝ Էմ. Հա. Փե.-ի ղեկավարն էր, որը մահացավ 1997-ի ապրիլի 4-ին: Թուրքիայի Էմ. Հա. Փե.-ն Եվրոպայի Գորշ Գալերի մայր կուսակցությունն է: Սա բաղկացած է «ուլքյուջուլերից», այսինքն՝ ինչպես Գալերը սիրում են իրենց անվանել «իդեալիստներից», որ մոլեռանդորեն հետևում են Ալփարսլան Թուրքեշի գաղափարներին: Նրանք նրան անվանում են «Բաշբուղ», որը նշանակում է մեծ ղեկավար: Բաշբուղ Թուրքեշը պայքարում է նախկին Օսմանյան կայսրության վերականգնման համար, որը «ձգվում էր Վիեննայից մինչև Չինական պարիսպները»: Ըստ Բաշբուղի, «այս բարձրագույն առաջադրանքը թուրքերին է հանձնարարել մեծ Մարգարեն»:

Ծրագրված էր, որ 1993 թվին Բաշբուղը Հոլանդիա այցելեր, սակայն վերջին պահին այցելությունը խոչընդոտվել էր:

— Այո՛, ես, իրոք, Բաշբուղի ավտոն ապահովել եմ,— ասում է Սերվեթը,— և պարծենում եմ, որ դա արել եմ:

1994-ի հուլիսի 8-ին, Սերվեթը հարցաքննվեց նախնական քննության դատավորի միջոցով՝ որպես վկա Ահմեդ Ա-ի դեմ հարուցված քրեական գործում: Իր ցուցմունքում Սերվեթն այսպես է հայտարարել. «Ազկիթի ժամանակի նախագահ Յիլդիզելին ինձ հանձնարարեց, որ Թուրքեշի համար մի տոմս և հյուրանոցի սենյակ ապահովեմ...»:

Հիքմեթ Յիլդիզելին ներկայիս նախագահն է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի: Այս ֆեդերացիան է, որ համադրում է Սերվեթի գլխավորած կազմակերպությունները:

Շարունակում եմ հարցերս:

— Ներքին ապահովության ծառայությունում դու համարվում ես ծայրահեղ աջակողմյան:

— Հա՛, դա նկատել եմ,— իբր թե կարևորություն չի տալիս,— հոլանդական անձնագիր ստանալուս դիմումը երկու անգամ մերժվել է,— ասում է Սերվեթը:— Երբ ես դատախազից բացատրություն պահանջեցի, ինձ ասաց, որ իմ թղթապանակը կորել է: Ահմեդ Ա-ի գործում դատախազը կատաղել է, որ իմ մեղսակցության փաստերը չէր կարողանում գտնել: Ինձ ասաց. «Ես քո հախից կգամ: Հաստատ իմացիր, որ տասնհինգ տարի նստեցնելու եմ»: Երբ միլիցիան ինձ կանգնեցնում է ու ստուգում իմ վարորդական իրավունքը, անմիջապես օգնական ջոկատ է կանչում: Երեք ավտո են ուղարկում:

— Որովհետև վտանգավո՞ր ես:

— Էդպիսի մի բան: Երբ մեր շրջանակներում սպանություն է լինում, իմ լուսանկարն են հրատարակում: Դա պատահել է, օրինակ, մի կրակոցից հետո՝ Բերխեն-օփ-Չոմում կամ Հաագայում: Մինչև հիմա չորս անգամ եկել են, տունս խուզարկել: Ոստիկանությունը ինձ մոտ գենք է փնտրում: Ինձ միշտ նախապես տեղեկացնում են, այնպես որ կինս ու երեխաներս հասցնում են տնից հեռանալ: Ես ոստիկանության մեջ լավ կապեր ունեմ:

— Ուրեմն՝ դուք գիտեի՞ք, որ ձեր հեռախոսագրույցները ունկնդրվում են:

— Դու որտեղի՞ց գիտես, թե մենք գիտեինք:

— Դա դուք ասել եք ձեր հեռախոսագրույցներում:

— Մենք ամենուրեք կապեր ունենք: Եթե մենք ունկնդրվում ենք, լուրը մեզ հասնում է: Լսիր՝ ինչ եմ ասում. ես չեմ ուզում, որ որևէ զրքում անունս նշվի: Մինչև էստեղ ինձ զսպել եմ, բայց կարող է մի պահ գա, որ ես շատ-շատ բարկանամ: Եթե իմ անունը բերես, ինձ վտանգի ես ենթարկում: Փե. Ջա. Ջա.-ն մտադրություն ուներ ինձ ահաբեկել, բայց վերջին պահին միլիցիան խափանեց նրանց պլանը: Միլիցիան համարձակվում էր պնդել, թե այդ ահաբեկչությունը հենց իմ մարդկանց միջոցով էր ծրագրվել:

— Վերջապես, քմրանյութերի առևտրով զբաղվե՞լ ես, թե՞ ոչ:



Handwritten text in blue ink: '42568' and '11'.

— Ես միլիցիայի հետ լավ կապեր ունեմ,— պատասխանում է Սերվեթը,— շատ հեշտությամբ կարող եմ քո հասցեն իմանալ:

— Բաղաքացիական ակտերի պետոեզիստրում՝ վարչությունում, իմ հասցեն ու տվյալները պաշտպանվում են,— ասում է Ստեյլան:

— Իմ կապերն ուժեղ են: Ես կարող եմ մեկ ժամվա ընթացքում քո հասցեն գտնել,— ասում է նա,— այս պահին ես վատ համբավի կարիքը բոլորովին չունեմ, քանզի ես ուզում եմ բուրքական ֆեդերացիայի նոր նախագահը դառնալ: Մտադիր եմ ինձ թեկնածու հայտարարել:

— Ճիշտ այնպես, ինչպես 1993-ին ուզում էիր Հոլանդիայի Բանվորական կուսակցության կողմից քաղխորհրդի անդամ դառնալ,— ասում է Ստեյլան:

— Այո՛, ես այդ մասին իրոք մտածել եմ, բայց դա լուրջ բան չէր,— ասում է Սերվեթը:

1993-ին հոլանդական «ՆՌՎԱ» հեռուստակայանի մի թողարկման ընթացքում ելույթ ունենալով՝ Ամստերդամի միլիցիայի պետ Է. Նորդհոլթը նշեց, որ հանցագործները փորձում են ներթափանցել Հոլանդիայի քաղաքական կուսակցություններում: Նա ի նկատի ուներ, ի շարս այլոց, այս Սերվեթ Ե-ին:

Նախնական քննության դատավորը, որը Սերվեթ Ե-ին կանչել էր դատարան, զարմացած էր, որ Թուրքիայում Սերվեթը աջակողմյան մի կուսակցության էր հարում, իսկ Հոլանդիայում հետաքրքրված է Բանվորական կուսակցությունով:

— Ես հիմա Հոլանդիայում եմ, իսկ դա արդեն ուրիշ բան է,— պատասխանել էր Սերվեթը:

Երբ դատավորը հարցրել էր, թե ինքն ինչո՞ւ է ուզում մտնել քաղաքականության մեջ, Սերվեթն այսպես էր պատասխանել. «Որպեսզի կարողանամ մարդկանց օգնել: Դա ավելի հեշտ կլինի, եթե քաղխորհրդի մեջ մի աթոռ ունենաս: Մարդկանց ասելով, ի նկատի ունեմ մեր հաստատության և թուրք ծագումով մարդկանց»:

Զանի որ դատախազությունը Սերվեթի հեռախոսագրույցներն ունկնդրել էր, պարզվել էին նրա քաղաքական նկրտումները: 1993-ի սեպտեմբերի 5-ին, ժամանակի ներքին ապահովության ծառայության Հոլ. Բե. Ֆե. ԴԵ.-ի պետ Ա. Դոկտորդ Ֆան

Լյուվենը Բանվորական կուսակցության ժամանակի նախագահ Ֆելիքս Ռոտենբերգին գրում է գաղտնի մի նամակ: Նամակում Ֆան Լյուվենը զգուշացնում է Ռոտենբերգին, որ ասպիրանտ-թեկնածու Սերվեթ Ե-ն «Թուրքեշի ծայրահեղ աջակողմյան շարժման» համակրող է: «Հոլանդիայում,— այսպես է շարունակում Բե. Ֆե. ԴԵ.-ի պետն իր նամակում,— Սերվեթը կապված է հանցագործ մի կազմակերպության հետ, որը ղեկավարվում է Ահմեդ Ա-ի միջոցով»:

Արդյոք, Սերվեթ Ե-ն, իրո՞ք միլիցիայի հետ սերտ կապեր ունի: Իրոք, նա կարո՞ղ է «մեկ ժամվա ընթացքում» տվյալ մեկի հասցեն ձեռք բերել: Իսկ եթե կարող է, ապա այն ժամանակ ի՞նչ է անելու:

«Ուլքյուջունների» աշխարհում գտնվող մի ծանոթ անձնավորություն գտնում է, որ սրանից լավ բան չի սպասվում: Նա առաջարկում է միջնորդել: Համաձայնում ենք: Սկզբում նա պատգամ է բերում, որ հեղինակները լավ կանեն՝ գիրքը չհրատարակեն: Սակայն հետո, հարցը այլ ընթացք է ստանում: Մեկ շաբաթ հետո Ամստերդամում գտնվող մի բնակարանում սպասում են Ստեյլային:

Ստեյլան միայնակ է գնում: Սենյակում նստած են երկու անծանոթ տղամարդ: Մեկն իրեն ներկայացնում է որպես Ալի ու ասում. «Ես Գորշ Գայլ եմ և մարզական մի ակումբի նախագահ Ուտրեխտ քաղաքում»: Մյուսը, որը կոչվում է Էրսին*, հայտարարում է. «Ես Ուտրեխտի մշակութային կենտրոնի նախկին անդամ եմ»:

Ալին խոսք է առնում.

— Դու մի գիրք ես գրել, որի մեջ անուններ ես նշել: Մենք պատրաստ ենք խոսելու, եթե միայն մեր անունները չնշես:

Երբ Ստեյլան խոստանում է «միջնորդների» անունը չնշել, Ալին ասում է.

— Եկե՛ք բաց քարտ խաղանք: Դու մի խնդիր ունես Սերվեթ Ե-ի հետ, որն իմ լավ ընկերն է: Ես եկել եմ այդ խնդիրը լուծելու: Իմ հարցն այս է՝ իր անունը նշելո՞ւ ես:

— Ոչ:

Ալին հետ է նստում ու թեթևացած հոգոց է հանում:

— Այժմ կարող ենք իրար հետ գործ անել: Հաջորդ հարցը՝ արդյոք գրելո՞ւ ես, որ Սերվերը հանցագործ է:

— Չէ՞ որ նա Ահմեդ Ա-ի հետ գործել է,— պատասխանում է Ստեյլան:

— Անկարելի է: Մեր կարծիքով՝ մեկը ռատիկանությունից քեզ մոլորեցրել է:

Որպես նախկին միլիցիոներ՝ ես լավ գիտեմ, թե դա ինչպես է կատարվում: 1989-ից մինչև 1996-ը, ես Ոստրեխտում ծառայել եմ որպես միլիցիոներ:

— Սերվերը ոսկի սիրտ ունի,— բարձրաձայն ասում է Էրսինը:— Եթե կա մի լավ Գորշ Գայլ, դա Սերվերն է:

Ալին գլխով հավանություն է տալիս:

— Սերվերի միջոցով մենք կարող ենք զենք ձեռք բերել: Ես, նույնիսկ ձրիաբար: Բայց որ ասենք թե նա հանցագործ է... Սերվերն այստեղ է եկել Թուրքիայում տեղի ունեցած պետական հեղաշրջումից հետո հստակ մի նպատակով՝ մեր շարժմանը օգնելու համար: Այդ տղան ստիպված կաֆեներում է քնել: Նա շատ կարևոր անձնավորություն է մեզ համար: Մեր շարժման ներսում նա ավելի մեծ ազդեցություն ունի, քան մեր նախագահ Հիքմեթ Յիլդիզելին: Մենք ուզում ենք, որ Սերվերը մեր նոր նախագահը լինի:

Էրսինը գլխով հավանություն է տալիս:

Ալին շարունակում է.

— Ես մի Գորշ Գայլ եմ և ամեն ինչ անում եմ նպատակի համար: Պատրաստ եմ մեռնել իմ ժողովրդի, իմ դրոշակի ու հայրենիքի համար այնպես, ինչպես Չաթլին:

— Չաթլին մի հերոս է,— կանչում է Էրսինը:

Ալին նույնպես կանչում է.

— Բանգի նա իր պետության համար էր աշխատում: Չաթլի նմանը երբեք չի լինի:

Արդուլահ Չաթլին տխրահոռչակ մի Գորշ Գայլ էր: Ֆրանսիայում նա ձերբակալվել էր թմրեցուցիչների առևտրի պատճառով: Նա նստել է նույնպես Շվեյցարիայում: Դանաչված էր որպես «իդեալիստ» և կապված էր սպանության ու ահաբեկչական գործերի հետ: 1996 թվի նոյեմբերի 3-ին, նա ավտովթարի զոհ գնաց Թուրքիայի Բալիկեշիր նահանգի Մուսուրլուկ կոչվող վայրում:

Մեքենան, որի մեջ նստած էր Չաթլին, վրաերթի էր ենթարկվել մի բեռնատար ավտոյի միջոցով: Մեքենայի մեջ նստած չորս ուղևորներից երեքը զոհվել էին: Այդ ուղևորները նշանավոր դեմքեր էին. գեղեցկության նախկին մրցանակակիր Գոնչա Ուսը, ռատիկանության օրգանի բարձրագույն պաշտոնյա Հուսեյին Քոչադաղը և հենց նույն ռատիկանության կողմից տարիներ հետապնդվող Արդուլահ Չաթլին:

Չորրորդ ուղևորը՝ Սեդաթ Բուչակը, ծանր վիրավորված վիճակում ավտոյից դուրս էր բերվել: Բուչակը քրդական մի ցեղախմբի ղեկավարն էր, որն օգնում էր թուրքական բանակին՝ քուրդ պարտիզանների դեմ կռվելու համար: Նա միևնույն ժամանակ խորհրդարանի անդամ է ու ներկայացնում է Թանսու Չիլլերի Դ. Ե. Փե. «Եշմարիտ ուղի կուսակցությունը»:

Ավտոյում ոչ միայն զենքեր են գտնվել, այլ նաև մի շարք ուշագրավ փաստաթղթեր: Դրանց շարքում է Չաթլիի կեղծ ինքնության փաստաթուղթը:

Հետապնդվող հանցագործը պաշտոնական կյանքում Մեհմեթ Օզբայ կոչվող միլիցիոներն էր: Նրա ինքնության թուղթը կրում էր Անկարայի ու Ստամբուլի նախկին ռատիկանապետ Մեհմեթ Ազարի կնիքը: Ավտովթարի ժամանակ այս վերջինը արտաքին գործոց նախարար էր և ներկայացնում էր Թանսու Չիլլերի Դ. Ե. Փե. կառավարությունը:

Արտգործնախարարը հերքեց, որ Չաթլիի թուղթը ինքն է ստորագրել: Հետազոտությունները, սակայն, ապացուցեցին, որ ստորագրությունը կեղծված չէ: Ազարը հրաժարական տվեց նախարարությունից, բայց ոչ խորհրդարանից: Այդ պատճառով կարելի չէր նրան հետապնդման ենթարկել:

Նույնպես պարզվեց, որ Չաթլին ունեցել է նաև մի դիվանագիտական անձնագիր: Այդպիսով, նա կարող էր առանց խանգարման արտասահման ճամփորդել: Բացի այդ, պարզվեց, որ նա կառավարության պատվերով մարդիկ է վերացրել: Այդ գործերից մեկը վերաբերում էր բախտախաղի կայսրության տեր Օմար ԼուքՖու Թոփալին:

Շնորհիվ այդ ավտովթարի, լույս աշխարհ եկավ Գորշ Գայլերի և թուրք պետության շողկապվածությունը: Ընդդիմադիր կուսակցությունները, հասարակական կազմակերպություն-

ներն ու լրատվական միջոցները ահազանգ ենչեցրին: Բոլորը պահանջում էին «մաքուր հասարակություն»:

Իսկ Թանու Չիլերը, որ այդ ժամանակ փոխվարչապետ էր, ընդհակառակը, Չաքիին հերոս անվանեց: «Նա այդ գնդակները կրակել է պետության համար: Ով պետության համար սպանում է կամ սպանվում է, հարգանքի արժանի մարդ է»,— ասել էր Չիլերը:

Գորշ գայլերը հոգով ու սրտով համաձայն էին նրա հետ: Չէ՞ որ Չաքիին նրանց առաջամարտիկներից էր: Արյան հեղեղները, որոնց համար նա պատասխանատու էր համարվում, «բարի նպատակի» համար էին հոսեցվել: Նրանք իրենց հերոսին թաղեցին բարձրագույն պատվով ու մեծարանքով: Չաքիին հողին հանձնվեց էմ. Հա. Փե.—ի, Բաշբուղ Թուրքեշի կուսակցության պանթեոնում: Այնուհետև, Գորշ Գայլերն անցան հակահարձակման: Մարդկանց, որոնք շատ էին զբաղվում այդ գործով, սպառնում էին սպանությանը: Էմ. Հա. Փե.—ի հավաքներում այս լուզուզն էր լսվում «Զիթներդ հեռու պահեք Չաքիից»:

Երկու «միջնորդների» հանդիպումից կարճ ժամանակ հետո, զանգահարում է Սերվեթ Ա.—ն:

— Ես ուզում եմ ոստիկանության դույնեք—թղթապանակը տեսնել,— ասում է նա:

Բարի:
Նրանք պայմանավորվում են, բայց Սերվեթը չի ներկայանում:

Կարճ ժամանակ անց, մի շաբաթ օրվա ուշ երեկո, զանգահարում է նախկին «միլիցիոներ» Ալին:

— Ես նստած եմ Ֆաթիհի կաֆեում: Կարո՞ղ ես գալ:

Սեղանի մոտ նստած է Ալին ու սպասում է: Մատուցվում են սեխով ու սպիտակ պանրի սալաղով լի փսեներ: Հասնում է Ստեյլան: Սպասարկուհին ճանաչում է նրան:

— Ա՛, դո՞ւ ես նորեն,— հարցնում է նա:

Ալին նայում է զարմացած:

— Էստեղ ի՞նչ գործ ես ունեցել:

— Գրքի համար:

Ալին զլուխը թափ է տալիս:

— Դու շատ միամիտ ես էս աշխարհի համար: Առաջին դաշտը՝ ո՞չ մեկին մի՛ վստահիր: Ես այլևս ինձ էլ չեմ վստահում:

Մի ակնթարթում նա հանում է իր անձնագիրը. մի կարճ պահ ցույց է տալիս Ստեյլային:

— Տե՛ս, իմ անունը Ալի չէ, իսկականը սա եմ ես,— ասում է նա:

Աչքի արագ հայացքով Ստեյլան տեսնում է միայն անվան առաջին տառերը՝ «Թա...»:

— Իրոք, դու միլիցիայում աշխատե՞լ ես:

— Իրոք,— ասում է Թա...ն:— Դիմումի ժամանակ, ինձ վարձող միլիցիոներին նույնիսկ ասել եմ, որ ես Գորշ Գայլ եմ: Ասել եմ, որ եթե վկայակոչման, ծանոթության պետք ունեք, կարող եք գնալ Ուտրեխտի թուրքական մշակութային կենտրոն. այնտեղ բոլորն էլ ինձ ճանաչում են:

Միլիցիոներն էլ սասց.

— Պետք չի, դու ինքը ծանոթություն ես տալիս: Շատ դիմորդներ փորձում են իրենց քաղաքական նախընտրությունները քարցնել:

Այսպիսով, ես երկու ատրճանակ ստացա. մեկը անձնական և մեկը՝ ծառայության:

— Իսկ անձնականն ինչի՞ համար էր:

— Դժվար է բացատրել: Ատրճանակ պետք է ունենաս քեզ ապահով զգալու համար:

— Ինչի՞ համար ես ոստիկանությունից հեռացել:

— Ես հոգնել էի խանութից գողեր բռնելուց ու բաժին բերելուց, որ նախքան նույնիսկ իմ բաժնից դուրս գալը, ազատ էին արձակվում,— ասում է նա:— Հոլանդիայում օրենք չկա: Այդ պատճառով սեփական գործ սկսեցի:

Իսկ որոշակի ի՞նչ գործերով է զբաղվում, չի ուզում ասել. «Իմպորտ—էքսպորտի» հետ կապվող մի բան է: Բացի այդ, Թա...ն դարձյալ շեշտում է, որ ինքը Ուտրեխտում սպորտի մի ակումբի նախագահ է: Իսկ հետո զրույցը հարցաքննության տեսք է ընդունում:

— Ի՞նչ գիտես Սերվեթ Ա.—ի մասին, իրոք ուժեղ փաստեր ունե՞ս. գրքում է՞լ ինչեր ես գրելու:

Սկսում եմ կասկածել, թե Թա...ն, իրոք, իր «լավ ընկերոջ» կողմից է այստեղ եկել:

— Սերվերն անմեղ է,— ասում է նա:

— Եթե Էքստրադիտուս գործողության թղթապանակները նայես, կարծիքդ կփոխվի,— ասում է Ստեյլան:

— Ես, որպես միլիցիոներ, Սերվերի համար մի փաստաբան եմ գտել,— ասում է նա:

Թա...ն նույնպես իր կազմակերպության համար է աշխատում:

— Ամբողջ երկրից ընկերներս զանգահարում են ու հարցնում, թե ի՞նչ է գրվելու գրքում, և թե արդյոք անուններ նշվելո՞ւ են, թե՞ ոչ:

— Իսկ ինչի՞ եք էղբան մտահոգված:

— Մենք շատ ենք աշխատում, որպեսզի լավ համբավ ձեռք բերենք: Մի բացասական գիրք մեր մասին՝ լավ պրոպագանդա չի մեզ համար:

Սրճարանի դուռը բացվում է: Դռան շեմին երևում է «Սև Էմը»:

— Հաստատ նրա անունն էլ չպիտի նշվի,— ցույց տալով Բաբային, կատակում է Ստեյլան:

— Ճիշտ է,— ասում է Թա...ն,— այս օրերին հինգ հարյուր գուլդենով մարդ են վարձում:

— Ուզում ես ասել վարձում են՝ մեկին սպանելո՞ւ համար:

Թա...ն գլխով է անում:

— Հինգ հարյուր գուլդենի համար քեզ կվերացնեն:

Ուտրեխտ քաղաքի ընկերությունների ու հասարակական կազմակերպությունների գրանցման պալատում ենք: Այստեղ գտնում ենք Թա...ի տվյալները: Նա, իրոք, մարզական մի ակումբի նախագահ է:

Իսկ իրո՞ք աշխատել է միլիցիայի հետ:

Ուտրեխտի ոստիկանության մի միլիցիոներուհի հաստատում է, որ Թա...ն մինչև 1996 թիվը աշխատել է նրա կորպուսում:

Ըստ միլիցիայի գործերով զբաղվող մի խորհրդատուի, մի Գորշ Գայլի ներկայությունը հոլանդական միլիցիայի ապարատում, պատահական չէ: Սույն խորհրդատուն վարձվել է, որպեսզի, ի շարս այլոց, փոքրամասնությունների միջից հարմար թեկնածուներ ընտրի ոստիկանության համար: «Հոլանդիայի ոստիկանությունը չափազանց սակավ տեղեկություն ունի աջ ծայրահեղականության ու ֆունդամենտալիզմի՝ մասին»,— ասում է խորհրդատուն:

Գորշ Գայլերը միտումնավոր ջանում են մուտք գործել ոստիկանության մեջ, ի շարս այլոց, իրենց մարդկանց օգնելու և իրենց հասարակության վստահությունը շահելու համար, քանզի մի համազգեստ նշանակում է հասարակական ստատուս: Ահա այդ պատճառով, մենք Ռոտտերդամում թեկնածուների ընտրության պրոցեդուրան դադարեցրինք, որովհետև նկատեցինք, որ մարզական մի ակումբի անդամները զանգվածաբար դիմել են միլիցիական աշխատատեղիների համար: Դժբախտաբար, Ռոտտերդամի ոստիկանությունը աշխատանքի հրավիրեց թուրք մի մարդու, որն ըստ իս, կապված է Գորշ Գայլերի հետ: Ես իրենց զգուշացրի ու նաև փորձեցի այս մարդուն կորպուսից հանել: Սակայն, ապարդյուն: Նա տակավին այնտեղ է աշխատում: Խորհրդատուի կարծիքով, բոլոր միլիցիոներները չէ, որ համոզված են, որ ազգայնամուլներն ու ֆունդամենտալիստները կորպուսից դուրս պիտի պահվեն: «Թեկնածուների ընտրման ընդհանուր կենտրոնի նախկին տնօրեններից մեկը, որը մինչև վերջերս աշխատում էր ոստիկանության համար, կարիքը չէր տեսնում, որ թեկնածուների ընտրման պրոցեդուրայից քաղաքական որոշակի հոսանքների կողմնակիցներին դուրս պահեն: Նրա կարծիքով, ֆունդամենտալիստներն էլ կարող են ծառայել ոստիկանության ապարատում:

— Եթե թուրքերի 30 տոկոսը ֆունդամենտալիստ է, ապա մենք վայելում ենք թուրք հասարակության 30 տոկոսի վստահությունը,— ասում էր նա:

Ամստերդամի միլիցիայի գաղտնի մի ոստիկան, որն զբաղվում է թուրք հանցագործների գործով, ասում է. «Առավել հավանական է, որ Գորշ Գայլերը ներթափանցել են մեր կորպուսում, քան թե կորպուսը զերծ է մնացել նրանցից»:

Ըստ Ֆան-Թրա կոչվող պառլամենտական զեկույցի, Հոլանդիայում հերոյինի թմրանյութի առևտուրը թուրքերի ու քրդերի ձեռքումն է:

Համաձայն Ֆան-Թրա հետազոտության հայտնագործումների, կան աջակողմյան մաֆիական խմբակներ, որոնք առաջացել են նախկին Գորշ Գայլեր կազմակերպությունից՝ մեծ մասամբ կենտրոնացված Ամստերդամում: Իսկ ձախ կողմում

ակտիվ են Փե. Քա. Քա.—ն, Դև Սոլը և ավելի փոքր, մաֆիոզ կապերով խմբակցություններ (մի կարևոր միջուկ գտնվում է Արնհեն քաղաքում) սակայն այս վերջիններ (ձախերը) ավելի նվազ չափով են առնչվում թմրեցուցիչների առևտրի հետ:

Մաֆիոզ խմբակներ, որոնք առաջացել են նախկին Գորշ Գայլեր կազմակերպությունից: Ի՞նչ ասել է դա: Թե՛ Սերվեթ Ա—ն և թե՛ Թա...ն ակտիվ են այժմյան Գորշ Գայլեր կազմակերպության մեջ:

— Սակայն, Սերվեթն ու Թա...ն, համեմատած «Քյոյլուի*» նման մեկի, գաճաճներ են»,— ասում է մի գաղտնի տեղեկատու:

Կարող ես նրան գտնել Ֆաթիհի կաֆեում: «Քյոյլու»՝ նշանակում է համազյուղացի և պարզապես այս տխրահռչակ «Գայլի» մականունն է:

Ուրեմն, Ստեյլան պետք է վերադառնա սրճատուն: Այս երեկո, կաֆեից լսվում է ականջ խլացնող ռոք երաժշտություն: Բարի հետևի երկու թուրք սպասարկուհիները փոխարինվել են մի հոլանդուհու միջոցով, որը գործ ունենալով թրքախոս հաճախորդների հետ, երբեմն անճարակության է մատնվում. «Կներեք, ես թուրքերեն չգիտեմ»:

— Քյոյլուն գալո՞ւ է այս գիշեր:

— Նա գտնվում է արտասահմանում,— ասում է Ֆաթիհը:

«Քյոյլուն թափառում է Եվրոպայի ու Թուրքիայի միջև»,— ասում են իր մարդիկ:

Նրանք Քյոյլուին ճանաչում են որպես առաջին կարգի Գորշ Գայլ:

— Նա գտնում է, որ Թուրքիան ցեղային գտման կարիք ունի,— ասում է Քյոյլուի ընկերներից մեկը՝ Դենիզը*: Չգուշորեն ըմպում է իր վիսկիի բաժակից և ջանում երաժշտության ձայնը գերազանցել: — Քյոյլուն հարուստ է՝ շնորհիվ հերոյինի ու կոկայինի առևտրի: Քայլում է՝ գրպանը լի հազարներով, բայց առանց ատրճանակի: Դրա կարիքը նա չունի: Իր թիկնապահները հսկում են իրեն:

— Քյոյլուն վտանգավո՞ր մարդ է:

— Դաժանությունից չի խորշում: Ես հիշում եմ, թե ինչպես նա «ազդարարման կրակոցի» հրաման տվեց: Այսպես, նա

հրամայեց երկու թուրք երիտասարդների վրա կրակել, որովհետև իր հետ ընդհարվել էին: Տղաներից մեկը, որի ոտքին երկու գնդակ խփեցին, փախավ, եկավ իմ տունը: Մյուսը, անունը Թուրգայ, ջարդված սրունքներով հիվանդանոց տարվեց: Հետո էլ ունեցավ դաժան մի վախճան: Նոր տարվա օրերին նրա դիակը գտան Ամստերդամում՝ վիզը կտրած: Երբ ես վրդովված՝ այս կրակոցների մասին Քյոյլուին հանդիմանեցի, նա ինձ այսպես ասաց. «Իրենց հախն էր, շատ խուժանություն արին: Իմ ինքնասիրությունը վիրավորեցին: Էդ տղաները պիտի իմանան, թե ո՞ւմ հետ գործ ունեն»:

Բայց, ըստ Դենիզի, Քյոյլուն լավ կողմեր էլ ունի: «Նա գիշերային մի կլուբի նախկին տիրոջ՝ Բ—ի կյանքը փրկել է»: Թուրքիայի աջակողմյան մաֆիայի պարագլուխը Բ.—ին իր մահացանկի մեջ էր դրել, որովհետև նա շատախոսի մեկն էր և այդպիսով ուրիշներին էլ վտանգի էր ենթարկում: Քյոյլուն Բ.—ի համար բարեխոսեց, և նրա անունը մահացանկից դուրս հանվեց:

Թմրեցուցիչների առևտրով զբաղվող մի այլ անձնավորություն՝ Հուսեյին Բայբաշին, որն իր իսկ ասելով, երկար ժամանակ թուրք պետության պատվերով աշխատել է, Քյոյլուի հետ գործ է ունեցել: Նրա մասին Բայբաշինն այսպես է արտահայտվում.

— Նա մի հայտնի Գորշ Գայլ է. 1991—ին հարկ եղավ, որ ես միջամտեմ, որովհետև Քյոյլուն որոշել էր վերացնել թմրանյութի առևտրով զբաղվող մեկի: Այս մեկի հետ նա կոնֆլիկտ էր ունեցել փողի կապակցությամբ: Ես դիմեցի մի բանկիրի Թուրքիայում՝ Իբրահիմ Գենչ անունով և խնդրեցի իր աջակցությունը: Այս բանկիրը, մականունով՝ «Իբո», նախկին Գորշ Գայլ էր և կապեր ուներ մաֆիայի հետ: Իբոյի միջնորդությունը արդյունք տվեց: Թմրեցուցիչի վաճառականը դեռևս ապրում է:

Քյոյլուով, սակայն, մենք դեռևս չենք հասնում Հոլանդիայի աջ—ձախրահեղական մաֆիայի գագաթին: Այս մաֆիայի պարագլուխը «Մալաթյայի Ռամազանն» է: Ռամազանին Ֆաթիհի սրճարանում չես գտնի: Նա իր գործերը կառավարում է Թուրքիայից: Ապա ինչպե՞ս կարելի է նրա մասին տեղեկություն ձեռք բերել:

— Պետք է գնաք Հասանի* մոտ,— ասում է մաֆիայի նախկին շեֆ Բայբաշինը:

Նախկին քննեցուցիչ փոխադրող Հասանին մենք հանդիպում ենք Հոլանդիայի բանտերից մեկում:

— Ես Ռամազանին մի քանի անգամ հանդիպել եմ, — ասում

է Հասանը:

— Հիմնականում, նա Մալաթիա նահանգի Փոքրուզե վայրից է: Նա ժամանակին Հոլանդիա է եկել՝ հետևելով Օրալ Չեփկին՝ մի կշիռ վայելող Գորշ Գայլի: Բնակության իրավունք ձեռք բերելու համար, Ռամազանն ամուսնացել է մարոկկացի մի աղջկա հետ:

Հասանի միջոցով մենք ծանոթանում ենք Օսմանի* հետ: Նա նախնական կալանքի մեջ է:

— Ստամբուլից սկսվեց, — ասում է Օսմանը: — Ես երիտասարդ տղաների մի բանդայի մեջ էի, որը բաղկացած էր մոտավորապես տասնհինգ հոգուց: մենք փող էինք վաստակում դրամաշորքությամբ: Ռամազանը կապվեց մեզ հետ: Մեր ծառայությունների համար մեծ գումարներ էր առաջարկում: Ընդունեցինք: Գործն ընթանում էր աստիճանական փուլերով: Սկզբում մեր գործը մարդկանց բրդելն էր: Ռամազանը մեզ ցուցումներ էր տալիս: Երբեմն մեկին պետք էր լավ բրդեհներ, մեկ ուրիշին՝ քեթև՝ միայն նախազգուշացնելու համար: Երիտասարդներից շատերը խմբից հեռացան: Մնացինք մենք՝ հինգս: Սկզբում ես նրա դրամ փոխադրողն էի: Թուրքիայում ես կապոցներով փող էի փոխադրում:

— Այդ դրամներից էմ. Հա. Փե. կուսակցության համար էլ տարե՞լ ես:

— Այո՛: Ես բազմաթիվ անգամներ փող եմ տարել էմ. Հա. Փե.-ի բարձրաստիճան անդամների համար: Վերջին անգամ, այդպիսի մեկի հանձնել եմ վաթսուն հազար գերմանական մարկ: Բացի այդ, Ռամազանը լավ կապեր ունի Դեմիրելի խորհրդակցանի հետ. մի տարեց մարդ, որ «բարա» է կոչվում: Հուսելիս Բայբաշինը հաստատում է, որ Ռամազանը սերտ կապեր ունի Թուրքիայի պետական բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

— Ռամազանն է ինձ Հոլանդիա ուղարկել, — շարունակում է Օսմանը: Հոլանդիայում ես պետք է մարդ սպանեի: Ո՞ւմ, դա չեմ կարող ասել, որովհետև Ռամազանն ինձ կվերացնի: Բացի

այդ, ես մի այլ եվրոպական երկրում էլ պետք է մի ահաբեկչություն կատարեի:

Արդյո՞ք թուրքական ծայրահեղ աջ թևը իշխող դիրք ունի

Հոլանդիայի թուրք հանցագործ աշխարհում: Ազատագրված նախկին քննեցուցիչ փոխադրող Հասանի կարծիքով, այդպես է: «Ութսունական թվականների կեսերին նրանք ուժն իրենց ձեռքը վերցրին»: Ըստ նրա, Հոլանդիայում «քմբիրով զբաղվող Գայլերին մեծապես օգնում ու քաջալերում էր տխրահռչակ մի Գայլ՝ Օրալ Չեփկ անունով, որը մասնակից էր եղել 1981 թվի՝ Պապի դեմ իրագործված մահափորձին:

— 1995 և 1996-ին Օրալ Չեփկը Հոլանդիայում էր, — ասում է Հասանը: — Այն ժամանակ, երբ Չեփկը եկավ, քմբանյութերի առևտուրը մի քանի ձախակողմյան անհատների ձեռքում էր, ինչպես ես: Բացի դրանցից, կային մի երկու հին տիպի ավանդական «բարաներ»: Գայլերի մասին շատ բան չէիր լսում: Սակայն, դրությունն արագորեն փոխվեց: Գնալով, նրանք ավելի հաճախ էին երևում այն վայրերում, ուր քմբեցուցիչների գործարքներ են կարգավորվում, այսինքն՝ գիշերային կլուբներում, ճաշարաններում, սրճարաններում: Նրանք միշտ խմբով էին գալիս, և բոլորն էլ զենք էին կրում: Նրանք գործում էին իրենց յուրահատուկ ոճով, — շարունակում է Հասանը: — Տվյալ վայրում՝ ճաշարան և այլն, կոիվ էին սարքում: Հետո ջարդ ու փշուր էին անում ամեն ինչ: Ներկաներին հրամայում էին գետնին պառկել, այլապես կրակելու էին: Այդ դեպքի փորձը ես ունեցել եմ հենց իմ գիշերային կլուբում: Մենք, սակայն, պատրաստված էինք և անմիջապես դուրս քաշեցինք մեր զենքերը: Չեփկն ինքն անձամբ միջամտեց, որովհետև գործն ըստ սպասածի չէր ընթացել: Մենք դիմադրություն էինք ցույց տվել: Նրանք, սակայն, բազմաթիվ ուրիշ կաֆեներ, կազինոներ, կլուբներ ու ճաշարաններ իրենց հակակշռի տակ առին: Հետո սկսեցին նրանցից հարկ գանձել:

Ըստ Ֆան-Թրա պառլամենտական զեկույցի, հոլանդական չափանիշներով, «թուրքական քմբանյութերի հանցաշխարհը բավական դաժան է»:

— Տակավին հիշում եմ, թե ինչպես էր գործն ընթանում, — ասում է Գորշ Գայլերի շրջանակներում ճանաչված մեկը: — Ե-

թե մեկին պետք է լիկվիդացնեին, Գերմանիայից մի ավտո էին բերում, ապա ավտոն տանում էին մի հավաքատեղի ու նոր համարանիշ էին փակցնում: Լիկվիդացումից հետո, մեքենան ուղղակիորեն տարվում էր ոչնչացման վայր: Առևանգումները սովորական երևույթ էին:

Հենց հիմա էլ անսովոր չեն դրանք: Ամստերդամյան մի դետեկտիվ այսպես է ասում. «Մենք հաճախ ենք գործ ունենում դաժանաբարո առևանգումների հետ: Հաճախ հանցագործները զարմանքից ապշում են, որ առևանգումն արգելված է օրենքով: Հեռախոսագրույցների ունկնդրման ժամանակ, երբեմն ստիպված ենք լինում հետախուզությունը դադարեցնել, որովհետև այն տպավորությունն ենք ստանում, որ մեկին ուզում են առևանգել: Այն ժամանակ պետք է խնդրո առարկա անձին զգուշացնել»:

Էլի վան դեր Բե-ն նախկին պարուհի է Ամստերդամի Լա վի ըն Ռոզ կոչվող ստրիպտիզ՝ կլուբում: 1994-ին առևանգում են նրա ընկերոջը, որովհետև իր վերցրած պարտքը ժամանակին չէր վճարել: «Մի հոգի մոտեցավ ինձ ու ասաց՝ Գորշ Գայլերն են տարել: Փող վերցրու, գնա իրենց մոտ, այլապես նրան կվերացնեն: Նրանք պահանջում էին հինգ հազար դոլարի համարժեք գումար: Ես ումից կարող էի, փող պարտք արի: Նրան տալը օր պահեցին: Երբ վերադարձավ, ահավոր վիճակի մեջ էր: Ամեն տեղը կապտած էր»:

— Իրո՞ք դուք մարդ եք առևանգում, — հարցնում է Ստեյլան:

— Ի՞նչ անսովոր բան է, — հարցնում է նախկին միլիցիոներ Թա...ն:

— Ես ոչ մի սովորական բան չեմ տեսնում դրա մեջ:

— Հարցին էսպես պիտի նայել, — ասում է Թա...ն: — Պատկերացրու, ես ուզում եմ քեզ հետ խոսել, բայց դու չես ընդառաջում: Ես տղաներից երկուսին ուղարկում եմ, ու նրանք գալիս են քեզ բերում ինձ մոտ: Սա չի նշանակում, որ քեզ տանում են սպանելու:

Այս վիճաբանությունը տեղի է ունեցել Ստեյլայի ու Թա...ի միջև 1997 թվի հուլիսի սկզբին՝ Ամստերդամ-Ուտրեխտի մայրուղու վրա գտնվող Բրոկելեն ճաշարանում:

Թա...ն հեռախոսով դիմել է Ստեյլային՝ այնտեղ հանդիպելու:

— Ճիշտ ժամը իննին: Քո ավտոյո՞վ ես գալու, բարի:

Թա...ն ցանկանում է միլիցիայի թղթածրարը տեսնել: Ստեյլայի գործընկեր Մեհմեթը չի վստահում:

— Ավտոյո՞վ, ժամը ճիշտ իննի՞ն:

Այդ չորեքշաբթի երեկո, Ամստերդամի մայրուղով քշում են դեպի Ուտրեխտ: Սոտավորապես ճանապարհի կեսին՝ Բրոկելենում, Մեհմեթն իջեցնում է Ստեյլային: Մեհմեթը մնում է ավտոյի մեջ՝ մի լցակայանում ու սպասում: Չղային լարվածությունից նա իրար հետևից ծխախոտ է վառում: Ինն անց կես է, պետք է զանգահարել: Այդպես են պայմանավորվել: Վերջապես, զանգում է բջջայինը:

— Ո՞նց ես, — հարցնում է Մեհմեթը:

— Ոչինչ, նստած եմ այստեղ՝ գեղեցիկ մի ռեստորանում, — պատասխանում է Ստեյլան:

Արդյո՞ք ուզում էր ասել, որ մտահոգվելու հարկ չկա:

Սեղանի վրա սուրճի շաշկաների կողքին դրված է մի թղթապանակ, որը պարունակում է մի քանի կրկնօրինակներ՝ ոստիկանության Էկստրյուս-գործողության թղթածրարից:

Ստեյլան վերցնում է առաջին էջը: Դա մեքենագրված տեքստն է մի հեռախոսագրույցի՝ ոմն Օսմանի և Մերվեթ Ե-ի միջև: Թա...ն ուշադիր կարդում է գրույցի տեքստը.

Օսման - Բաներ է պետք, բայց... հեռախոսով չեմ կարող ասել, գիտես:

Մերվեթ - Չէ, չի լինի, որտե՞ղ ես:.

Օսման - Բանում... Գեր... Շտուտգարտում եմ հիմա:

Մերվեթ - Հընմմ... ի՞նչ է պետք...

Օսման - «Չոյնթ»՞...

Մերվեթ - Հա...

Օսման - Լավ ապրանք... լավ որակի...

Մերվեթ - Կարելի է գտնել...

Օսման - Կիլոն ինչքա՞ն է դուրս գալիս, Մերվեթ:

— Կարդացի՞ր, — հարցնում է Ստեյլան, — խոսվում է «չոյնթի» մասին, թե՞ ոչ:

— Հիմար բան է, — բացականչում է Թա...ն: — Էս «չոյնթը»

դիտավորյալ դրվել է տեքստի մեջ: Որպես նախկին միլիցիոներ՝ ես գիտեմ, թե դա ինչպես է կատարվում: Բացի այդ, Սերվեթը շատ լավ գիտեր, որ հեռախոսները ունկնդրվում են: Նա երբեք բացարձակորեն «ջոյնք» չէր ասի: Իմիջիայլոց, սրա առևտուրը կիլոյով չի կատարվում:

Հաջորդ տեքստը մի վկայի հարցաքննություն է: Այստեղ Սերվեթը մեղադրվում է «մարդկանց առևանգումով» և «պարտքերի գանձումով», որի ընթացքում մարդկանց ունեցվածքները առգրավվել է:

— Սա հնարավոր է,— ասում է Թա...ն:

— Արյոք Սերվեթը բռնարարքի դիմում է:

— Եթե ասում է, որ մի բան ուզում է անել, իր խոսքը կատարում է: Մարդու խոսքը խոսք է: Այդպես է նա: Մենք նախընտրում ենք չբռնանալ, բայց եթե պետք է լինում, ուրեմն պետք է:

Հաջորդ թուղթը մի սխեմա է պատրաստված քրեական հետախուզական ծառայության միջոցով: Սխեման ցույց է տալիս կազմակերպության հավանական կառուցվածքը: Մեջտեղում աչքի է ընկնում Ահմեդ Ա-ն՝ որպես «կազմակերպիչ-ֆինանսավորող»: Հստակ է, որ այս Ահմեդն ավելի կարևոր է, քան Սերվեթ Ե-ն, որը տեղ է գրավել սխեմայի աջ կողմի ներքևում՝ Գորշ Գայլեր — «Բռնարարք-քաղաքականություն» ստորաբաժնում:

Թա...ն մի քանի թուղթ ուսումնասիրում է միլիցիայի քրեական բաժնում պատրաստված աղյուսակը: Հետո ասում է.

— Հնարավոր չի, որ Սերվեթը մի ուրիշ մեկի ղեկավարությամբ աշխատի: Սերվեթն ինքը ղեկավար է. քեզ մի օրինակ տամ՝ Սերվեթը նույնիսկ ընդհարվել է Թուրդուլ Թուրքեշի հետ:

— Ալփարսլան Թուրքեշի տղայի՞ն ես ասում,— հարցնում է Ստեյլան:

— Այո՛, Թուրդուլը Հուլանդիա էր եկել:

Հաջորդ թուղթը ոմն Շաբանի հեռախոսագրույցն է, որի հետ Սերվեթն աշխատել է: Այս Շաբանը, որն օգտագործում է նաև Մեհմեթ Ալթինչափա անունը, զանգահարում է Բուլղարիա՝ ոմն Իրֆանի:

Թա...ն կարդում է. «Շաբանն ասում է Իրֆանին, որ Դև Սուլի, Թիքքոն ու Փե. Զա. Զա.—ի թերթերն էլ կուղարկի: Ասում է, որ Եվրոպայում Փե. Զա. Զա.—ի գործն ավարտված է, և Դև Սուլն ու

Թիքքոն շատ գորավոր են: Էս գործերի տասից յոթը Դև Սուլինն է: Նա նույնպես ասում է, որ Դև Սուլը օրեկան հեռուստահաղորդում ունի: Իրֆանը խնդրում է նրանից՝ մի տեսածապավեն այդ հաղորդումներից ուղարկել»:

— Փե. Զա. Զա., Դև Սուլ, Թիքքո. սրանք ծայրահեղ ճախակողմյան կազմակերպություններ չե՞ն,— հարցնում է Ստեյլան:

— Ինչո՞ւ չէ,— ասում է Թա...ն:— Շաբանը թշնամուն հսկողության տակ է պահում: Ի դեպ, ես էլ եմ ջանում այդ բանն անել: Դու չե՞ս անում: Դե ուրեմն խելամիտ չես: Մարդ պետք է իր թշնամուն լավ ճանաչի:

— Շաբանը խորհրդակցել է մի միլիցիոների հետ՝ Թուրքիայում,— ասում է Ստեյլան, ու Թա...ն ցույց տալիս Շաբանի ու ոստիկանության մի աշխատողի միջև տեղի ունեցած հեռախոսագրույցի տեքստը: Այնտեղ խոսվում է «թմրանյութի մասին դիմումնագիր հանձնելու» առթիվ: Նույնպես խոսվում է ոմն Էների մասին, որ նկարագրվում է որպես «պատվազուրկ» մեկը:

— Հարկն էր նրան վերացնեին,— ասում է Շաբանն ու գրույցն ավարտում միլիցիայի աշխատողի հետ:

— Այս Շաբանը, հավանաբար, ՄԻԹ-ի աշխատող է եղել,— ասում է Թա...ն: ՄԻԹ՝ նշանակում է թուրքական ապահովության ծառայություն:

— Ասում եմ, թե մեծ թվով Գորշ Գայլեր ՄԻԹ-ի ազենտներ են,— ասում է Ստեյլան:

— Մխավում ես,— պատասխանում է Թա...ն:— ՄԻԹ-ն այդ ձևով չի աշխատում: Ես դա իմացել եմ, երբ դեռ միլիցիոներ էի: ՄԻԹ-ն իր ազենտներին ուղարկում է չորս հոգիանոց խմբակներով: Նրանց ուղարկում է մեկին հետևելու համար: Որպես միլիցիոներ՝ այսպիսի մի խմբակի ես հանդիպել եմ: Նույնիսկ տեսել եմ նրանց ինքնության թղթերը:

— Շաբանը զանգահարել էր Բուլղարիա՝ ոմն մեկի, մի հյուրանոցում: Գորշ Գայլն ի՞նչ գործ ունի Բուլղարիայում,— հարցնում է Ստեյլան:

— Երբեմն Էմ. Հա. Փե.—ի անդամներին Թուրքիայի բանտերից փախցնում են,— պատասխանում է Թա...ն:— Եթե՛ մի քաղաք սոցիալիստների ձեռքում է, ինչպես Իզմիրը, այն ժամանակ մեր մարդիկ, եթե մի սխալ բան են արել, անարդարացի

ծանր պատիժ են ստանում: Որոշներին բանտից փախցնում են Բուլղարիա կամ Հունգարիա են տանում: Մեկ անգամ ինձ զանգեցին ու ասացին, որ մի հոգու բերել են Հունգարիա և հարցրին, թե պատրաստ եմ գնալ ու իրեն վերցնել: Ես մի րոպե էլ չտատանվեցի: Թռա ավտոյիս մեջ ու մի շնչով բռնեցի:

Թերթում ենք թղթապանակի հաջորդ էջերը: Այդ էջերը վերաբերում են վալյուտայի մի գործարքի, որում հինգ միլիոն շվեյցարական ֆրանկ փոխանակվել է մի ուրիշ վալյուտայի:

Կտրվածք տեքստից՝ «Մերվեթ Ե-ն զանգահարում է Իդրիսին և ասում. «Հինգ միլիոն շվեյցարական ֆրանկ կա: Որտե՞ղ կարող ենք դա փոխանակել: Էդ քո բանկիրները կարո՞ղ են դա փոխել»: Իդրիսը հարցնում է, թե ինչո՞ւ էդ մարդիկ չեն գնում դրամատուն: Մերվեթն ասում է. «Սա բանի փող է... գիտես... պե՞տք է, որ ասեն»»:

Թա...ն քննիծաղ է տալիս.

— Այդ շվեյցարական ֆրանկները դեռ լավ հիշում եմ: Կեղծ փողեր էին:

— Դրամատները դա չե՞ն նկատում:

— Ո՛չ, դա շատ վարպետորեն էր կատարված: Ռոտերդամում կարող ես հենց հիմի էլ դրանցից գտնել:

— Կեղծ փողի մասին որևէ խղճի խնդիր չունե՞ս,— հարցնում է Ստեյլան:

— Իհարկե ոչ, փողը փող է:

Նա բերում է մի օրինակ. «Մի գումար էր, որ որոշակի մի երկրի համար էր պատրաստվել: Այդ գումարը երբեք տեղ չհասավ: Դա բաժան-բաժան էր արվել: Դրանից գիշերները քնել չեմ կարողացել: Ես գնել եմ մի ավտոհավաքատեղի: Երեք հարյուր հազար ներդրել եմ այդ գործում: Սակայն չեմ կարող ցույց տալ, թե այդ փողը որտեղի՞ց է: Իսկ երբ միլիցիոններ էի, ամսական 2500-ից 3000 գուլդեն (1250-1500 դոլար) էի ստանում: Հիմի ինձ ասա, դրանով ե՞րբ երեք հարյուր հազարի տեր կդառնաս»:

Հասարակական կազմակերպությունների ու ընկերությունների գրանցման պալատում հայտնաբերում ենք, որ Թա...ն ունի նաև մի վարսավիրանոց:

— Վերջերս ինձ մոտեցան մի քանի տղաներ Գերմանիա-

ից,— պատմում է Թա...ն:— Ինձ ասացին, որ այս պահին Գերմանիայում քննեցուցիչների ու զենքի լավ շուկա կա: Ինձ հարցրին՝ կարո՞ղ ես մեզ կապի մեջ դնել Ամստերդամի տղաների հետ: Դե, գիտես, որ սխալ է, բայց անում ես, էլի, քո ընկերներն են, չէ՞:

Թա...ն ջանում է՝ ինքը որպես լավ օրինակ ներկայանալ. «Մի տղայի հանդիպեցի, որ խմած էր: Նրա վերարկուի վրա մի մեծ Գորշ Գայլի նշան կար: Ասացի.

— Տղա՛, էստե՛ղ արի, հանի՛ր վերարկուդ, բոլորին մեզ վրա կծիծաղեցնես: Ես Ուտրեխտում նույնպես միջամտել եմ, երբ մի քուրք կավատ Գորշ Գայլի նշանը կախել էր իր պատուհանից: Նա չարաշահում էր մեր խորհրդանիշն ու մեր անունը: Գորշ Գայլերը միանշանակ դեմ են մարմնավաճառության ու պոռնկության:

— Տեսնում եմ, որ գաղափարական համոզմունքներ ունես,— ասում է Ստեյլան:

— Ես պատրաստ եմ մեռնել իմ գաղափարի համար:

— Թուրքեշի գաղափարի համար:

— Ճիշտ այդպես: Երբ նա Հոլանդիա էր եկել, ես իր անձնական վարորդն էի:

Թա...ի երեսը լուսավորվում է.

— Բաշբուղը սիրում էր արագ բռնել: Ես սուրում էի Գերմանիա-Հոլանդ մայրուղու վրա, բայց էլի բավարար չէր: Ամեն առավոտ նա սառը ցնցուղ էր ընդունում ու հետո գնում վազելու:

Թա...ն հասկացնել է տալիս, որ ուզում է մեկնել: Չեռքը մեկնում է ու ասում. «Ցտեսություն, մինչև մյուս հանդիպում»:

Ապա հաստատ քայլերով հեռանում է:

Ստեյլան տաքսի է կանչում ու գնում լցակայան, ուր Մեհմեթն իրեն է սպասում:

Հենց որ տաքսու վարորդը մայրուղի է ուզում մտնել, Ստեյլան նկատում է մի ավտո՝ ճանապարհի եզրին կանգնած: Վառվում է շարժիչն, ու ավտոն հետևում է տաքսիին:

Լցակայանում Ստեյլան իջնում է ու նստում Մեհմեթի մեքենայի մեջ:

— Տաքսուն հետևել եմ,— ասում է նա մտահոգ:

Ճանապարհ են ընկնում:

Քիչ հետո ավտոն բարձր արագությամբ մոտենում է նրանց մեքենային: Ուզում է վա՞զ անցնել: Չէ, միառժամանակ նրանց կողքից է քշում: Հետո արագությունն իջեցնում է ու նրանց հետևից գալիս: Հանկարծակի նա թեքվում է աջ, այնպես որ Ստելլան տեսնում է չորս երիտասարդ թուրքերի դեմքերը, որ խիստ հայացքներով իրեն են նայում:

Մի երկու շաբաթ հետո Թա...ն բացատրվում է.

— Եթե անունն ունի, ձեր երկուսին էլ կսպանեն:

— Հանգիստ եղիր, քո անունը չենք ունի:

— Իրականում իմ անվան մասին չի խոսքը, այլ՝ շարժման:

Կարճ ժամանակ այս գրքի լույս տեսնելուց առաջ, Թա...ն ասում է.

— Հնարավոր է մայրուղիում ավտովթարի ենթարկվես: Թաքնվելն էլ անիմաստ է: Դու փող չունես լավ թաքստոցներ գտնելու կամ թիկնապահներ վարձելու համար: Ես քեզ զգուշացրի՝ մի մարդու կյանքը հինգ հարյուր գուլդեն ավել չարժե:

1. Դին հոլանդական փող, որը հավասար էր մոտավորապես կես դոլարի:
2. *Կրճատված անուն կամ ծածկանուն. գրքում օգտագործվել են մի շարք ծածկանուն/կեղծանուններ պատկան անձնավորությունների ինքնությունը պահպանելու համար: Այդ պարագայում անվան կողքին նշվել է *:
3. «Փարթիյե Քարգարանե Քուրդիստան» — Քրդական բանվորական կուսակցություն, որը պայքարում է Քյուրդստանի ազատագրման համար:
4. Կրոնական արձատականություն, կրոնամոլություն:
5. Սերկ պարուհիների կլուբ
6. Դաշիչ:

II. Սպիտակ գառնուկներ

«Գորշ Գայլը միմիայն խորհրդանիշ է»

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան իրո՞ք ոչ մի կապ չունի էմ. Հա. Փե.՝ի հետ

Հոլանդիայի Գորշ Գայլերի պատմությունը
Թուրքական մշակութային կենտրոն
Ամստերդամում

Հոլանդական կառավարության նպաստով
«անհավատների» կրոնափոխում

Մեր փնտռտուքն սկսվել էր Ստամբուլում, Էմ. Հա. Փե. կուսակցության գրասենյակից:

Ընդունելության սեղանիկի աշխատակցուհին մի կողմ է դնում մեր թղթերը, գննող աչքերով նայում է մեզ ու վերցնում ընկալուչը. «Երկու հոգի Հոլանդիայից այստեղ են»:

Սանդուղքից վեր, մի խումբ տղամարդիկ հետաքրքրված դիտում են ֆուտբոլի մրցություն՝ հեռուստացույցից: Մի համակրելի տղամարդ, քառասունի շուրջ, մեզ դիմավորում է ու իրեն ներկայացնում. «Յավուզ Սելիմ Դեմիրազ, Էմ. Հա. Փե.-ի օրգան «Օրթադողլու» թերթի գլխավոր խմբագիր և ընտրապայքարի կոորդինատոր»:

1995 թվի դեկտեմբերն է: Թուրքիան պատրաստվում է ընտրությունների համար: Ստամբուլը մի վիուկի կաթսայի է նմանվում. քաղաքը լի է շչացող մեքենաների շարաններով, որոնց վրա փողփողում են կուսակցությունների դրոշակները: Համարյա բոլոր պատերը ծածկված են ազդերով ու պաստառներով:

Էմ. Հա. Փե.-ի կենտրոնատեղին վերածվել է պրոպագանդայի նյութերի մի մեծ պահեստատեղիի: Թղթապանակներն ու թերթերը ընկած են դրոշակների կույտերի տակ, որոնք բոլորն էլ կրում են երեք կիսալուսնի նշանը: Բոլոր պատերից Բաշբուլդն իր հայացքը սևեռել է մեզ վրա:

— Ի՞նչն է ձեզ այստեղ բերել,— հարցնում է Դեմիրազը:

— Մենք լրագրողներ ենք Հոլանդիայից: Մենք ցանկանում ենք տեղեկանալ Էմ. Հա. Փե. կուսակցության ազգային գաղափարաբանության մասին:

Դեմիրագն սկսում է իր ճառն ու ավարտում մեկ շնչով.

— Դա նշանակում է, որ մենք, թեև սիրում ենք մարդկությունը, բայց նախ և առաջ սիրում ենք մեր ազգին: Ով որ ձգտում է պետությունը քայքայել ու երկպառակություն սերմանել մեր ժողովրդի մեջ, մեզ իր դեմ հանդիման կտեսնի: Ով կհամարձակվի թուրք ազգի ու նրա պետության պատվի հետ խաղալ, ուր էլ որ լինի, մենք կզոհվենք իրեն: Միմիայն նրանք, ովքեր ճշմարտապես ազգն ու պետությունը սիրում են, կարող են նրան ծառայել: Եթե դու մի իսկական ազգասեր ես, և քո մեջ կա հայրենիքի սեր, ոչնչից չես վախենա: Պետք է ամեն ինչի համար պատրաստ լինես: Փափկասուն ազգասերների մենք կարիք չունենք:

— Արդյոք էմ. Հա. Փե.—ն Հոլանդիայում մասնաճյուղեր ունի՞, — հարցնում ենք մենք:

Դեմիրագը շարունակում է.

— Մենք ունենք սերտ կապեր թուրքական ֆեդերացիայի հետ: Մեր հարաբերություններն այդ կազմակերպությունների հետ Եվրոպայում զգայական բնույթ են կրում: Մեր հայրենակիցներն այնտեղ միշտ իրենց կապված են զգում՝ իրենց մայր երկրի հետ: Միանգամայն տրամաբանական է, որ նրանք համակրում են այստեղի կուսակցություններին և նրանց պաշտպանում: Դա վերաբերում է նաև մեր կուսակցությանը: Մի՛ մոռացեք, որ էմ. Հա. Փե.—ն առավել քան բոլոր կուսակցությունները, պաշտպանել է մեր թուրք հայրենակիցների շահերը Եվրոպայում:

Էմ. Հա. Փե.—ն պահանջում է, որ թուրքական կառավարությունը արտասահմանում բնակվող թուրքերի համար հատուկ նախարարություն ստեղծի: Ըստ կուսակցության ծրագրի, Եվրոպայում պետք է կառուցվեն թուրքական մանկամսուրներ, քանզի այնտեղ տակավին դպրոց չհաճախող երեխաների համար շատ քիչ թվով մանկամսուրներ կան: Բացի այդ, թուրք ծնողներն իրենց երեխաներին չեն ուղարկում գոյություն ունեցող մանկամսուրները, քանի որ այնտեղ քրիստոնեական պրոպագանդա է տարվում: Այն երկրներում, ուր մեր հայրենակիցները գտնվում են, պետք է տեղական իշխանությունների հետ խորհրդակցությամբ, թուրքական միջնակարգ դպրոցներ հիմնվեն: Ներկա կացությանը, որի հետևանքով երիտասարդներն

ստիպված իրենց հայրական տունը լքում են, պետք է վերջ տրվի: Եթե սա չի հաջողվում, համենայնդեպս, պետք է թուրք աշխատողներ նշանակվեն այն մանկամսուրներում, ուր թուրք երեխաներ կան: Պետք է թուրք մանուկների համար հատուկ մանկամսուրներ հիմնադրվեն:

Որտե՞ղ է գտնվում այս թուրքական ֆեդերացիան, որի հետ էմ. Հա. Փե.—ն սերտ կապեր ունի: Դա մենք հայտնագործում ենք պատահաբար, երբ գովազդային մի գրքույկ է մեր ձեռքն ընկնում հետևյալ տեքստով. «Մենք Ձեր դին կփոխադրենք Թուրքիա: Չանգահարեք՝ Հոլանտա Հիլալ Ջենազե Ֆոնու», թարգմանաբար՝ հոլանդական «Կիսալուսին» հուղարկավորության ֆոնդ:

Չանգահարում ենք:

— Թուրքական ֆեդերացիա, համեցե՛ք, — լսում ենք գծի այն կողմից:

— Հուղարկավորության ապահովագրության հաստատություն չի՞ այստեղ, — հարցնում է Մեհմեթը:

— Ինչո՞ւ չէ, — լսվում է այն կողմից, — կարող եք դիմել մեզ:

— Իսկ ինչպիսի՞ կազմակերպություն եք դուք:

— Մենք մի ֆեդերացիա ենք, որ թուրքերի շահերը պաշտպանում է, — լսվում է այն կողմից:

Թուրքական ֆեդերացիան գտնվում է Ամստերդամի Ջեյբուրխերդեյկ քաղաքամասի շենքերից մեկում: Դա մի մեծ ու մռայլոտ շենք է, որի աջ կողմում՝ ցանկապատի հետևում, մզկիթն է: Ավելի շուտ մի բերդի տպավորություն է բողոմում: Գիշերները շարունակ մի պահակ ներսում հսկում է:

Երբեմն—երբեմն կեսգիշերին քշում ենք շենքի կողքից: Հաճախ լույս է երևում ներսից: Եթե պատուհանները բաց են լինում, լսում ենք խանդավառ գրույցի ձայն: Շենքում էմ. Հա. Փե.—ի սիմվոլներից ոչ մի նշույլ չկա: Երեք կիսալուսնով դրոշակ, կամ Գորշ Գայլերի նշանն էլ չի երևում, չկա նույնիսկ Բաշբուդի նկարը: Արդյո՞ք Դեմիրագը մի ուրիշ ֆեդերացիա ի նկատի ուներ:

Մի օր՝ ճաշից հետո, Ստեյլան հանդիպում է ֆեդերացիայի վարչության երկու անդամների հետ:

— Մենք ո՛չ մի կապ էմ. Հա. Փե.—ի հետ չունենք,— ասում է Հիքմեթ Յիլդիզելին՝ ֆեդերացիայի նախագահը:

— Մենք այլ կազմակերպություն քողարկող կազմակերպություն չենք,— ասում է կոորդինատոր Ֆիդայի Էքենը:

— Էմ. Հա. Փե.—ի մարդիկ ասում են, թե ձեր ֆեդերացիան սերտ կապեր ունի այդ կուսակցության հետ: Սրա ասողը ոչ պակաս մեկն է, քան Յավուզ Սելիմ Դեմիրազը,— ասում է Ստելլան:

— «Նուսրեթ Դեմիրել»,— իր կարծիքով ուղղում է Էքենը:— Սա Անկարայի նախկին գլխավոր դատախազն է, որ 1995-ին էմ. Հա. Փե.—ի կողմից պառլամենտական թեկնածու էր:

Յիլդիզելին բորբոքվում է ու սկսում թուրքերեն խոսել: Էքենը քարգմանում է. «Էս Դեմիրազին ես չեմ ճանաչում և, եթե ճանաչեի էլ, դա չի նշանակում, որ ես էմ. Հա. Փե.—ի հետևորդ եմ»:

Երկու վարչության անդամները փորձում են թյուրիմացությունը վերացնել:

— Թուրքական ֆեդերացիան մի համադրող, համախմբող կազմակերպություն է, որ հիմնադրվել է 7 հոկտեմբերի 1995-ին,— ասում է Էքենը:— Մենք ամբողջովին մի նոր կազմակերպություն ենք ու քաղաքականապես անկողմնակալ:

Ֆեդերացիայի լրիվ անունն այսպես է՝ «Հոլանդա Դեմոքրատիք Ուլքյուջու Թյուրք Դերենքլերի Ֆեդերասիոնու». քարգմանությունը՝ Հոլանդիայի դեմոկրատական իդեալիստական կազմակերպությունների թուրքական ֆեդերացիա:

Էքենը ցույց է տալիս պատի վրա կախված մի քարտեզ, որի վրա փոքր կետերով նշաններ կան. «Դրանք այն քաղաքներն ու շրջաններն են, ուր հաստատված են մեր ֆեդերացիային կցված 54 կազմակերպություններ»:

— Թե ֆեդերացիան քանի՞ անդամ ունի, հենց այսպես չի կարելի ասել: Յուրաքանչյուր կազմակերպություն ունի մի վարչություն՝ յոթից մինչև տասնմեկ անդամից բաղկացած: Յուրաքանչյուր կազմակերպություն ունի մի շարք անդամներ: Անդամների թիվը տատանվում է հիսունից երկու հարյուր, երեք հարյուր և նույնիսկ չորս հարյուր,— ասում է Էքենը:

Ասենք ընդհանուրը մոտավորապես 12150 անդամ:

— Մի այլ ցուցանիշ մեր առաջին համագումարն էր՝ 1995

թվին: Մենք մեր բոլոր համակրողներին կանչեցինք: 7500 մարդ ներկա գտնվեց,— ասում է Էքենը:

Իսկ թերթերը խոսել են մոտավորապես երեք հազար մասնակցողի մասին:

Նախագահ Յիլդիզելին փրկում է դրությունը.

— Մենք ունենք ութ հազար անդամ: Դրանք մեծ մասամբ տղամարդ են: Իսկ նրանց պիտի ավելացնել նաև իրենց կանանց, զավակներին ու հարազատներին. դրա համար է, որ մեր համակրողների թիվը բարձր է:

Յիլդիզելիի ենթադրությամբ, համակրողների թիվը Հոլանդիայում մոտավորապես, 32000՝ ծագումով թուրք մարդ է:

— Մեր բոլոր կազմակերպությունները մեկ ընդհանուր նպատակ ունեն, այն է՝ պաշտպանել թուրք հասարակության շահերը, ինտեգրացիա², կանանց ազատագրում և թուրք համայնքի հասարակական պրոբլեմների լուծում: Ահա այս նպատակների համար մենք կազմակերպում ենք միջոցառումներ, տեղեկատվություն, դասընթացներ, մշակութային ձեռնարկներ,— շարունակում է Էքենը:

— Մուտքն ազատ է բոլորի համար,— ասում է Յիլդիզելին,— ռասսա կամ կրոն մեզ մոտ կարևոր չեն: Մենք ուզում ենք Հոլանդիայում բնակվող 300000 թուրքերի խնդիրները լուծել: Թուրք փոքրամասնության խնդիրներն այստեղ մեծ են՝ գործազրկություն, թերուսների խնդիր:

Ստեյլային համոզելու համար նրան ցույց են տալիս ֆեդերացիայի ծրագիր-կանոնագիրը: Այդ կանոնագրի մեջ կարևոր տեղ է գրավում հասարակական ինտեգրացիան:

— Գորշ Գայլեր գոյություն ունե՞ն,— հարցնում է Ստեյլան:

— Ոչ որպես կազմակերպություն,— ասում է Էքենը:— Գորշ Գայլը միայն մի խորհրդանիշ է ու բարևի մի ձև: Էքենը բարձրացնում է իր աջ ձեռքը, ցցում ճկույթն ու ցուցամատը և փորձում նմանեցնել գայլի ականջներին: Ծիծաղելով ասում է. «Սա Գորշ Գայլի գլուխն է, Թուրքիայում շատ սիրված նշան է»:

— Պետք է Թուրքիայում տեսնես ֆեդերացիայի անդամներին: Այնտեղ նրանք ամենամեծ էմ. Հա. Փե.—ականներն են,— քննադատելով ասում է Նուրիին՝ Ուտրեխտ քաղաքի թուրքական մշակութային կենտրոնի վարչության նախկին անդամը:

Սակայն Նուրին չի քննադատում վարչության կեցվածքը: Ասում է, որ դա արդյունքն է Թուրքիայի օրենսդրության, «որն արգելում է քաղաքական կուսակցություններին արտասահմանում մասնաճյուղեր ունենալ»:

Գերմանիայում, սակայն, այս օրենսդրությունը ոտնատակ արվեց: Դեռևս 1973 թվի ապրիլին, այնտեղ գործում էր Գորշ Գայլերին համադրող մի կազմակերպություն՝ Էմ. Թե. Ի. Բե., Միլիեթի Թյուրք Իշչիլերի Բիրլիդի, որը նշանակում է՝ «Թուրքական ազգայնական բանվորների միություն»: Էմ. Թե. Ի. Բե.-ն գործում է ազատորեն, մինչև որ գերմանական Դե. Գե. Բե.-ն՝ Գերմանիայի արհմիությունների կենտրոնը, դատ բացեց նրա դեմ:

Դե. Գե. Բե.-ն բացահայտեց Էմ. Թե. Ի. Բե.-ի և Էմ. Հա. Փե. կոչվող թուրքական կուսակցության միջև կապերը: Ոչ միայն Գերմանիայի իշխանությունները, այլ թուրքական իրավապահ մարմիններն էլ գործի անցան: Ինչպես վերևում ասվեց, թուրքական սահմանադրությունն արգելում է քաղաքական կուսակցություններին՝ արտասահմանում մասնաճյուղեր ունենալ:

1976 թվի հունիսի 9-ին, Թուրքիայի Սահմանադրական դատարանը վճիռ արձակեց առ այն, որ Էմ. Հա. Փե.-ն վեց ամսվա ընթացքում իր գործունեությունն արտասահմանում պետք է դադարեցնի, այլապես կուսակցությունը կազմալուծվելու է:

Այս դատավճիռից հետո, Գորշ Գայլերի ղեկավարները Եվրոպայում տենդագին սկսեցին ժողովներ գումարել: Ռոտերդամում նույնպես միության նախկին կենտրոնատեղիում՝ Սխերմլան պողոտայում, հավաքվեցին պարազլուխները: Գորշ Գայլերի ղեկավարները որոշեցին Եվրոպայում այլևս իրենց անվան տակ չգործեն, այլ միությունների ու ֆեդերացիաների միջոցով, որոնք թղթի վրա անկախ են: Էմ. Թե. Ի. Բե. համադրող կազմակերպությունը վերածվեց «Թուրք ֆեդերասիոն»-ի, ամբողջը՝ Ա. Դե. Յու. Էֆ. - «Եվրոպայի Թուրք դեմոկրատական-իդեալիստական կազմակերպությունների ֆեդերացիա»:

Յոթնասունական թվականների սկզբին, Գորշ Գայլերն աշխատում էին մի համադրող կազմակերպություն էլ Հոլանդիայում ստեղծել: 1976-ին նրանք ծրագրում էին տոնական մի համագումար կազմակերպել, սակայն ծրագիրը ջրի երեսն ըն-

կավ: Ռոտերդամի «Հիլտոն» հյուրանոցը, ուր նրանք մի սրահ էին վարձել, վարձման պայմանագիրը չեղյալ հայտարարեց: Հյուրանոցի դիրեկցիային զգուշացրել էին, որ նոյեմբերի 7-ի տոնախմբության հետևում թաքնված են Գորշ Գայլերը:

— «Հիլտոն» հյուրանոցի դիրեկցիան չկարողացավ դիմանալ ձախակողմյան կազմակերպությունների սպառնալիքներին, — պոռթկում է Օրհան Յիլմանը՝ հոլանդական «Էլսեվիր» շաբաթաթերթին տված իր հարցազրույցում:

Չբաղմունքով զոդող-եռակցող այս 31 տարեկան Յիլմանը՝ Հոլանդիայի Գորշ Գայլերի առաջին «Բաշկան», «նախագահն» է եղել: Նրա նպատակն այն էր, որ «թուրքերը Հոլանդիայում իրենց մշակույթն ու ինքնությունը պահպանեն և չվարակվեն ցնորված ձախերի թունոտ գաղափարներով»:

Նրա կազմակերպությունն սկզբում կոչվում էր Ուլբյուջու թյուրք Իշչիլերի Դերնեդի - Ու. Թ. Ի. Դ. - Թուրք իդեալիստ բանվորների ընդհանուր միություն: 1979-ին Յիլմանը հայտարարեց, որ Ու. Թ. Ի. Դ.-ն երեք հազար անդամ ունի: Հենց նույն տարի, ի պատասխան պառլամենտական հարցաքննություններին, Հոլանդիայի երեք նախարարներ՝ Դը Ռատտեր (արդարադատության), Վիխել (ներքգործնախարարության) և Խարդենիերզ (առողջապահական, բարեկեցության ու սպորտի), հերքեցին Գորշ Գայլ ակտիվիստների գոյությունը Հոլանդիայում: Դրանից առաջ, նույնպես, խորհրդարանում Գորշ Գայլերի անդամ չորս ուսուցիչների մասին տրված հարցաքննության պարագային նմանապես կառավարության ռեակցիան թույլ էր:

— Կեղծ ահազանգ է, — հայտարարեց ժամանակի կրթության ու գիտության նախարար Ֆան Կեննեմադեն:

Յոթնասունական թվերի վերջերին Գորշ Գայլերի համբավը Հոլանդիայում գնալով փչացավ: «Թշնամիների» դեմ տարած իրենց պայքարում նրանք սփռում էին պրովոկացիոն թռուցիկներ ու չէին խորշում իրենց «թշնամիներին» դանակահարելուց կամ նրանց վրա կրակելուց: Նրանց գործողությունները ուղղված էին հրեաների, հայերի, քրդերի, հույների և, հատկապես, «կոմունիստների» դեմ:

«Շուն, լավ իմացիր, մենք ունենք քո՝ այստեղի հասցեն և կնոջդ ու երեխաներիդ հասցեն՝ Թուրքիայում». այսպես էր գր-

ված մի նամակում, որն ստացել էր Էնսխեդե քաղաքում բնակվող պրոգրեսիվ մի թուրք:

1979 թվին, ֆուտբոլի մի մրցությունից հետո, Ուտրեխտում բնակվող Մուզաֆֆեր Չավուշօղլուն սպանեցին Գորշ Գայլերը: Մուզաֆֆերի փոքր եղբայր Մեսուքը վկայություն տվեց:

— 1979 թվից առաջ, թուրք երիտասարդները միշտ եղբայրաբար ֆուտբոլ էին խաղում: Դրությունը փոխվեց, երբ երկու թուրք տղաներ, երկուսն էլ Մուստաֆա անունով, Հոլանդիա եկան,— ասում է Մեսուքը:— Մուստաֆաներից մեկը բռնցքամարտիկ էր, մյուսը՝ կարատե էր պարապում: Երկուսն էլ կապված էին Գորշ Գայլերի հետ: Այս երկուսը սկսեցին երկպառակություն սերմանել թուրք երիտասարդների շարքերում: Նրանք դրդում էին թուրք երիտասարդներին այն թուրքերի դեմ, որոնց իրենք ձախ էին անվանում, այսինքն՝ նրանք, որոնք Գորշ Գայլերի հետ չէին, ինչպես ես ու եղբայրս: Թեև մենք քաղաքականության հետ գործ չունենք, բայց նրանք մեզ ձախակողմյան էին ներկայացնում: Մի ֆուտբոլի մրցությունից հետո այդ երկու մուստաֆաների ու մի այլ մարդու միջև, որն ուսուցիչ էր և, իրոք, ձախակողմյան էր, վիճաբանություն առաջացավ: Մի երկու շաբաթ հետո մի կռիվ էր ծագել, իրար բրդում էին: Երբ եղբայրս մոտ գնաց, կրակեցին նրա վրա: Հետո պարզվեց, որ եղբորս էն պրոգրեսիվ թուրքի տեղ էին դրել. Մուզաֆֆերը նման էր նրան: Մարդասպանը կարատե խաղացող Մուստաֆայի եղբայրն էր: Նա հենց նոր էր հասել Հոլանդիա: Կրակոցից հետո Մուստաֆան գոռաց իր եղբոր վրա. «Ա՛յ տղա, ի՞նչ արիր»: Սրանից ես իմացա, որ նրանք իրականում էն ուսուցչին էին ուզում խփել:

1980 թվի ապրիլի 7-ին, Թուրքիայի մաքսային գործերի նախկին նախարար և Էմ. Հա. Փե.—ի անդամ Գյուն Մազակը սպանվեց: Ու. Թ. Ի. Դ.—ը (Հոլանդիայի Գորշ Գայլերը), Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի հետ միասին, թունոտ մի հայտարարություն արին. «Այս օրը հավիտյան մեր հիշողության մեջ կմնա: Մայիսի 7-ը մենք երբեք չենք մոռանա: Մեր զավակները կմեծանան ԱԶԳԱՅԻՆ ՎՐԵԺ լուծելու կարգախոսով: ՄԵՆՔ ԿՀԱՄՆԵՆՔ ԴՐԱՆ: Մենք անդադար ՊԱՅՔԱՐԵԼՈՎ կսպասենք այդ օրվան: Մենք այդ մոլախոսող՝ հյուսիսից փչող Կարմիր փոթորիկը, իր արմատով կոչնչացնենք,

նրան օրորոցում կխեղդենք: Այդ օրը հաստատ գալու է. այն օրը, երբ ռուսների ծառաները ԻՆՉՊԵՍ ՄՈՒԿ՝ ԹԱԿԱՐԴԻ ՄԵՋ ԿԸՆԿՆԵՆ, և մեր բռունցքները ՎՐԵԺԻՆԴՐՈՒԹՅԱՆ փշրող հարվածով նրանց ուղեղների վրա կիջնեն: Կգա այն օրը, երբ արյունն արյունով կլվացվի, և մենք նրանց կսովորեցնենք, թե ի՞նչ է նշանակում ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ, ԱՏԱՄՆ ԸՆԴ ԱՏԱՄԱՆ»:

Նուրին Հոլանդիա եկավ 1980-ին, Թուրքիայի զինվորական պետական հարվածից քիչ հետո: Այդ ժամանակ մեծ թվով Գորշ Գայլեր Հոլանդիա եկան, քանի որ հեղաշրջումից հետո բոլոր կուսակցությունները ժամանակավորապես արգելվեցին:

— Թուրքիայում Գորշ Գայլերն իրենց լավագույնն արել էին,— ասում է Նուրին:— Մենք աշխատում էինք երկիրը փրկել կոմունիստներից: Դա ժամանակն առավել դաժանությամբ էինք պատասխանում: Փողոց էինք դուրս գալիս կրակելով: Մի անգամ մի ամբողջ խմբով հարձակվեցինք մի խանութպանի վրա, որը կոմունիստ էր: Հիմա, որ դա վերհիշում եմ, տեսնում եմ ի՞նչ դաժան վարվեցինք: Բայց իմ արածից չեմ փոշմանել: Դա հարկավոր էր:

— Գորշ Գայլերն ունեին իրենց համադրող կազմակերպությունը,— շարունակում է Նուրին: Նա ի նկատի ունի Հա. Թե. Դե. Էֆ.—ը (Հոլանդա Թյուրք Դերմեքլերի Ֆեդերասիոնու), այսինքն՝ Հոլանդիայի թուրք միությունների ֆեդերացիա: Սա հիմնադրվել էր 1982-ի սեպտեմբերի 22-ին և հաջորդել էր առաջին համադրող կազմակերպության՝ Յու. Թե. Ի. Դե.—ի:

— Սակայն այս կազմակերպությունը վերջին տարիներին լավ չաշխատեց: Այսպիսով, մենք ընկանք Գերմանիայի Թյուրքմեն կոչվող անձնավորության ազդեցության տակ,— ասում է Նուրին:

Նա ի նկատի ունի Թյուրքմեն Օնուրին, որը մինչև վերջերս Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի նախագահն էր:

Նուրին վերհիշում է անցյալի դժվար ժամանակները:

— Մեր վատ համբավի պատճառով, մենք չէինք կարողանում բացահայտորեն ասել, թե մենք ո՞վ ենք: Այդ պատճառով ստեղծեցինք մշակութային կազմակերպություններ: Ուտրեխ-

տում, օրինակ, կյանքի կոչեցինք թուրքական մշակութային կենտրոնը: Սկզբում մենք նույնիսկ մեր մշակութային կենտրոնում չէինք համարձակվում բացահայտորեն մեր գաղափարների մասին խոսել,— վերհիշում է Նուրին ծիծաղելով:— Մենք վախենում էինք, որ իրավապահ մարմինները մեզ հսկողության տակ ունենան:

Դա, իհարկե, միակ պատճառը չէր:

— Մենք ֆինանսական նպաստ էինք ուզում: Մակայն, ամեն տարի մեր ջանքերը ձախողվում էին, որովհետև Ուտրեխտի քաղխորհուրդը մեզ չէր վստահում: Դրա պատճառն էլ թուրք ձախակողմյաններն էին: Հոլանդիայում նրանք լավ համբավ ունեին: Նրանք կարողացել էին կարևոր պաշտոններ ձեռք բերել և կարողանում էին մեր դիմումագրերը նպաստի համար խափանել: Համենայնդեպս, Ուտրեխտում չհաջողեցրինք: Մեկ անգամ միայն «Յուլիանա» ֆոնդից մի քանի հազար գուլդեն ստացանք: Մի օր էլ մեր համբերության բաժակը լցվեց: Որոշեցինք Թուրքեշի դիմանկարն ու էմ. Հա. Փե.—ի դրոշակները կախել պատից: Այն, ինչ Ուտրեխտում ձախողվեց, Ամստերդամում հաջողվեց,— ասում է Նուրին:— Ամստերդամի Թուրքական մշակութային կենտրոնին հաջողվեց նպաստ ստանալ: Ութսունական թվականներին այդ կենտրոնն ընկավ մեր ձեռքը: Այն հարցին, թե կենտրոնը տակավին մեր ձեռքումն է, թե ոչ, չեմ կարող պատասխանել:

1996 թվի ապրիլի մի չորեքշաբթի օր: Մեհմեթը մեկնում է Նուրիի նշած թուրքական մշակութային կենտրոնը՝ տեսնելու, թե ի՞նչ է կատարվում այնտեղ: Իրեն ներկայացնելու է որպես ոմն «Մեհմեթ-Ալի», որը նոր է մտել Ամստերդամ և կապեր է փնտրում: Այս կենտրոնը, որն անդամ է թուրքական ֆեդերացիայի, տարեկան 90000 գուլդեն (շուրջ 45000 դոլար) նպաստ է ստանում Ամստերդամի քաղաքապետարանից:

Մտնում է մի շենք՝ Ամստերդամ-Վեստ շրջանի Բելամիստրատ փողոցում ու աստիճաններից բարձրանում: Հայտնվում է մի մեծ սրահում, որն ունի մեծ բեմահարթակ ու մի բուֆետ: Մի երկու երիտասարդներ սեղանի թեմիս են խաղում:

— Սալամալեյքում,— բարևում է Մեհմեթը:

«Սալամալեյքում» բարևին պատասխանում են երիտասարդներն ու շարունակում իրենց խաղը:

Աջ կողմում մի դուռ կա այս ցուցանակով. «Վարչություն. արգելվում է մուտքը առանց իրավունքի»: Բեմահարթակի հետևում՝ մի դռան վրա, նշված է. «Մեսջիդ» — «Աղոթարան»: Դրա կողքին մի ապակյա դուռ կա, որի հետևում ինչ-որ բան շարժվում է:

Երբ Մեհմեթն ուշադիր գնում է, տեսնում է մի սափրիչի, որ զբաղված է իր գործով:

Մեհմեթը շարունակում է իր այցերը: Հաջորդ շաբաթներում էլ նույն պատկերն է: Մի քանի երիտասարդներ սեղանի թեմիս են խաղում: Այդտեղ մշտապես ներկա են երիտասարդ բուֆետապան Հուսեյինն ու սրճագույն վերարկուով մի տարեց սափրիչ: Մա տասը գուլդենի դիմաց կտրում է հաճախորդի մազերը:

Ճաշի աղոթքի ժամանակ, այսինքն՝ ժամը մեկին, վայրն սկսում է աշխուժանալ: Մեծ մասամբ գալիս են տարեց թուրքերը, մտնում են մզկիթ ու հետո նորից մեկնում: Մի քանիսը նստում ու թեյ են ըմպում:

— Օրեկան քանի՞ ժամ ես աշխատում,— հարցնում է Մեհմեթը բուֆետապան Հուսեյինին, որը մի կենսուրախ ու սրտացաց երիտասարդ է:

— Կանուխ առավոտից մինչև ուշ գիշեր,— պատասխանում է նա:

— Դե, ուրեմն լավ ես վաստակում:

Հուսեյինը հեզմանակալան քմծիծաղ է տալիս:

— Մե, չէ՞, իլեգալ՞ ես:

Պատասխան չի տալիս:

Մեհմեթը գլխով է անում վարսավիրի կողմն ու ասում.

— Ինձ համար հարց է, թե վարսավիրանոցներն այս օրերին ինչպե՞ս են իրենց գլուխը պահում:

— Ո՞նց թե,— հարցնում է Հուսեյինը:

— Բոլորն էլ գալիս են մզկիթ կամ գնում մի թուրքական միություն՝ սափրվելու համար:

— Բնական է, տասը գուլդենն ի՞նչ է, որ: Գնաս սովորական վարսավիրի մոտ, քսանհինգ գուլդեն ձեռքիցդ գնաց: Ափսոս է

փողը: Մեր սափրիչը չի բողոքում. լավ վաստակում է: Միու-
թյունն էլ օգտվում է:

— Արդոք ձեր սափրիչը ավելի լավ չի՞ աշխատի, եթե սեփա-
կան գործ բացի:

— Հեշտ է ասելը: Նախ պիտի մի տեղ վարձես, հետո քաղա-
քապետարանին տուրք պիտի տաս: Պետական հարկերն էլ իր
հերթին: Հիմա նա իր վաստակածի կեսը մաքուր ստանում է:
Մյուս կեսը տալիս է միությանը: Իսկ նա ինչպե՞ս պիտի կարո-
ղանա սեփական գործ բացել:

— Ամեն ոք կարող է սեփական գործ բացել: Միգուցե իլե-
գա՞լ է:

— Եսի՞մ,— ասում է Հուսեյինը,— բայց դա կարևոր չէ: Ու-
րախ լինենք, որ գործ ունենք, մենք գոհ ենք, միությունն էլ գոհ է:

— Դու է՞լ ես իլեգալ:

Հուսեյինն իր գլուխը թեքում է. «Ի՞նչ կխմես»:

Կենտրոնում՝ ապրիլի 21-ին, տեղի է ունենալու տեղեկատ-
վական մի երեկո հետևյալ թեմայի շուրջ՝ «Մարգարեի տեսակե-
տը իսլամական եղբայրության մասին, և մարդու իրավունքի
կարևորությունը»: Միջոցառումը նվիրված է Մուհամմեդ մար-
գարեի ծննդյան 1425-րդ տարելիցին: Միջոցառմանը ելույթ է
ունենալու Անկարայի համալսարանի աստվածաբանության
պրոֆեսոր Հայրանի Ալթինթաշը:

Ալթինթաշն իր խոսքն ուղղում է կենտրոնում հավաքված
ներկաներին.

— Արևմուտքում, միայն տասնիններորդ դարում սկսեցին
զգուշորեն մարդու իրավունքների մասին խորհել: Մեզ մոտ
մարդու իրավունքներն արդեն տասնչորս դար է, ինչ իրակա-
նացվել է Դուրանի միջոցով: Վերցնենք, օրինակ, կանանց իրա-
վունքը: Նախքան իսլամի գալը, կանանց կենդանի թաղում էին:
Իսլամը վերջ տվեց այդ սովորություններին: Այս հարցում
Արևմուտքի մարդիկ, որ մեզ մեղադրում են մարդու իրավունք-
ները ոտնահարելու մեջ, դեռ շատ բան ունեն սովորելու: Նրանք
միայն անցյալ դարում են հայտնագործել, որ կանայք էլ իրա-
վունքներ ունեն: Երբ մենք Դուրանը կարդալով տեսնում ենք, թե
ինչքա՞ն կարևորություն է տրվում այնտեղ մարդու իրավունք-

ներին, էլ ինչո՞ւ պիտի ուշադրություն դարձնենք Մարդու իրա-
վունքների համաշխարհային դեկլարացիային:

Պրոֆեսորն այն կարծիքին է, որ օսմանական կայսրության
օրոք, «որն իսլամի տարածողն ու գործադրողն էր», մարդու ի-
րավունքներն իր աճման զագաթնակետին հասավ: Ըստ պրո-
ֆեսոր Ալթինթաշի, սակայն, միայն մեկ հարցում Արևմուտքը
մուսուլմաններից առաջ է ընկել, այն, որ «Քրիստոնյա աշխար-
հը Հիսուսի ծնունդը մեծ շուքով տոնում է: Եկեղեցիները զար-
դարվում են լուսամտիկներով ու ծաղիկներով: Մենք, սակայն,
անտարբեր ենք այդ հարցում: Ինչո՞ւ մենք մեր մարգարեի ծնն-
դյան օրը մույնը չենք անում մեր մզկիթներում: Մի՞թե մարգա-
րեն չէր, որ ողջ աշխարհը լուսավորեց»:

Կենտրոնում, 1996-ի դեկտեմբերին մի այլ կոնֆերանս-հա-
մագումար է տեղի ունենում: Այս միջոցառումը ծանուցվում է
«Թուրքիյե» թերթում այս անվան տակ՝ «Ժամանակակից հար-
ցեր ու խնդիրներ՝ մոտեցող դարաշրջանի լույսի տակ»:

Արդյո՞ք թեման վերաբերում է Հուլանդիայի թուրք համայնքի
պրոբլեմներին: Ոչ: Այնպես որ երևում է, դա վերաբերում է «ողջ
թուրք աշխարհի» պրոբլեմներին, «աշխարհ», որը տարածվում
է Ադրիատիկ ծովից մինչև Չինական պարիսպները:

Հրավիրյալ դասախոսը պրոֆեսոր Էօկսուզն է՝ թուրքական
«Ավրասիա -1» կամ «Եվրասիա -1» հաստատության նախա-
գահը: Հաստատության անունից պետք է հասկանալ, որ խոսքը
գնում է «թուրքական աշխարհի» մասին: Հաստատության
նպատակն է խնդրո առարկա «աշխարհի» վերամիավորումը
թուրք լեզվի ու մշակույթի առանցքի շուրջ:

Էօկսուզը հայտարարում է, որ «2000 թվականից հետո այդ
տարածքաշրջանում, որ տարածվում է Ադրիատիկ ծովից մինչև
Չինական պարիսպները», թուրքական մի մեծ պետություն կս-
տեղծվի: Ըստ նրա՝ «աշխարհը կարիք ունի արդարության ու մե-
ծահոգության, որը յուրահատուկ է թուրքերին: Այս պահին մենք
ականատես ենք օսմանյան ուժի վերակենդանացմանը: Այս
պրոցեսը հանգելու է թուրքական համաշխարհային մի տերու-
թյան ստեղծմանը: «Թուրանչիլիկ», Մեծ Թուրանի գաղափարը
երբեք այսքան կենդանի չի եղել: Դրա համար կարիք չկա նույ-
նիսկ մի գնդակ արձակելու: Թուրքական աշխարհում ապրում

են 210 միլիոն թուրքեր, որոնցից 200 միլիոնը մուսուլման են: Մնացածին մենք աշխատում ենք կրոնափոխ անել: Իսլամն առանց Թուրքիայի, ստվարաթոքե տան նման փլվելու է:

— Ես ձեզ վստահեցնում եմ, որ տասը տարուց հետո դուք առանց որևէ արգելքի կարող եք ճամփորդել դեպի արևելք, մինչև Չինաստան: Պայմանով, որ մենք մեզ ազատենք մեր այսօրվա կարճամիտ ղեկավարներից: Այժմ դուք պիտի պատրաստվեք մեծ գործերի համար, որ հավանաբար, շատ կարճ ժամանակից ձեզ կհանձնարարվեն:

Պրոֆեսորն արևմուտքի մարդկանց քամահրում է՝ «նրանք, շեշտավորելով ազգային տարբերությունները, իրականացնում են «բաժանի՛ր, որ տիրես» քաղաքականություն: Յուրաքանչյուր մուսուլմանի պարտականությունն է, որ գլավուրներին՝ անհավատներին, մուսուլման դարձնի»:

Էօկսուզի հայտարարությունը՝ «անհավատներին» կրոնափոխ անելու կապակցությամբ, բացեիբաց հակասում է մի պամֆլետի բովանդակությանը, որը հրատարակել է հիշյալ թուրքական մշակութային կենտրոնը 1996 թվին՝ իր հիմնադրման 5-րդ տարելիցի առթիվ: Պամֆլետում կարդում ենք, որ շնորհիվ այս կենտրոնի, տեղացի բնակչության ու միգրանտների միջև եղած նախապաշարումները նվազել են և շնորհիվ նրա գործունեությանը, բազմամշակութային հասարակությունն, ահա, իրականություն է դառնում: Պամֆլետը հրապարակվել է 1996 թվին՝ կենտրոնի հիմնադրման 5-րդ տարեդարձի առթիվ:

Այս կենտրոնի համար, որը գրանցված է և օգտվում է օրինական նպաստից, պայքարել են թուրքական տարբեր խմբակցություններ:

1998-ին, «իդեալիստները», ինչպես Գորշ Գայլերն իրենք իրենց անվանում են, մի փորձ արին թուրքական մշակութային կենտրոնն իրենց հակակշռի տակ առնելու համար: Նախագահության քեկնածուներից մեկը թուրքական ֆեդերացիայի ներկա նախագահ Հիքմեթ Յիլդիզելին էր: Փորձը չհաջողվեց:

Մեկ տարի հետո, «իդեալիստներն» իրենց բոլոր ուժերը գործի դրին: Անդամների ընդհանուր ժողովից առաջ ու ժողովի ընթացքում, որը պետք է նոր վարչություն ընտրեր, լծվեցին քվե որսալու տենդագին աշխատանքի: Թռուցիկներում, որ բաժա-

նում էին, կենտրոնի հին վարչության անդամները ներկայացվում էին որպես «դավաճաններ» ու «կեղծ մուսուլմաններ»: Նրանց մեղքն այն էր, որ «թուրքերի Մեծ պապերի դիմանկարները պատից ցած էին բերել: Իսլամական թուրք մեծ ազգի հարուստ անցյալը ներկայացնող նկարչությունները աղբամանի մեջ էին նետել և դրանով իսկ ապացուցել, որ պատասխանատվության զգացում չունեն: Իսլամական ազնվամտության քողի տակ նրանք չարաշահում են մեր կրոնը: Այս վարչակազմների կարծիքով, իսլամական թուրք ժողովրդին սիրելը, այսինքն՝ այն ժողովրդին, որով մենք պարծենում ենք և, որի զավակներն ենք մենք, հանցագործություն է ու ամոք»:

Մի ուրիշ թուրքիկի մեջ այսպես էր ասվում. «Ո՛վ մեծ թուրք ժողովուրդ, զգույշ եղիր այն վարչակազմներից, որ քեզ չեն հարգում, բայց ձգտում են իրենց կամքը քեզ թելադրել, փորձում են երկպառակություն սերմանել իսլամական սուրբ կրոնի հետևորդների շարքերում: Մի՛ թող, որ այս ապիկար ղեկավարները, որ իրենց բարձր են դասում մյուս մարդ արարածներից, քեզ մոլորեցնեն: Սրանք իրենց գոյությունը քարշ են տալիս առանց մի նպատակի ու չգիտեն, թե ի՞նչ են ուզում: Պաշտպանե՛ք այն քեկնածուներին, որոնք իսլամական թուրք ժողովրդի սրտից են դուրս եկել ու պատրաստ են իրենց կյանքը զոհել նրա համար: Մեզ համար ընտրությունները կարևոր չեն, այլ այն, որ դուք ձեր աչքերով տեսնեք, թե ի՞նչ է կատարվում»:

Կոչը ավարտվում է մի երկտող բանաստեղծությամբ.

«Ալլահ, անգո՛ւթ եղիր, քանզի քեզ անպատվելը հիվանդություն է,

Ինչի՞դ է պետք մի ժողովուրդ, որ զրկված է ազնվությունից...»:

Այսպիսով, 1983 թվի հոկտեմբերի 7-ին, թուրքական մշակութային կենտրոնն ընկավ Գորշ Գայլերի ձեռքը: Այս հարվածը կազմակերպողների շարքում էր թուրքական ֆեդերացիայի ներկա նախագահի տեղակալ Ահմեդ Ջեյհանը: Հետագայում նա դարձավ հիշյալ կենտրոնի նախագահ: «Էկսոդյուս» գործողության ընթացքում ունկնդրված հեռախոսագրույցներից երևում է, որ ժամանակի կենտրոնի նախագահ Ջեյհանը 1993

թվին սերտ կապեր է ունեցել Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի ժամանակի նախագահ Թյուրքմեն Օնուրի հետ:

Նույն տարի կենտրոնը կազմակերպեց «Եվրոպայի թուրք գրողների գրավործի (երկագրության) առաջին մրցությունը»: Այդ երկագրությունները հրատարակվել են մի գրքում:

Ժյուրիի անդամներից մեկը Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի ներկա նախագահ Հիքմեթ Յիլդիզելին էր: Նվերների բաշխման ժամանակ Յիլդիզելին այսպես է արտահայտվել. — Թող ամեն ոք լավ իմանա, որ մեր երրորդ սերունդին, որն այժմ աճում ու մեծանում է, ինչպես մահ եկող սերունդներին, մեծ վտանգ է սպառնում՝ ինտեգրացվելու ու ձուլվելու վտանգ: Մեր մշակութային ու կրթական ծրագրերի նպատակը պետք է լինի պայքարել այս վտանգի դեմ հիմա և ապագայում: Այլապես, մենք, հիսուն կամ հարյուր տարուց հետո կունենանք սերունդ՝ առանց ինքնության, լիապես ձուլված ու քրիստոնեացված: (...): Արևմուտքը վարում է միտումնավոր ասիմիլյացիայի քաղաքականություն: Նա պարտադրում է մեզ իր մշակույթն ու կրոնը: Մեր մատաղ սերունդը փրկելու պարտականությունը ձեր, ծնողների ու միութենական ղեկավարների ուսին է դրված: Նրանք պետք է կրթվեն ու դաստիարակվեն իսլամով և թուրքական ազգային պատմությունով, որպեսզի կարողանան հակակշռել քրիստոնեական գաղափարաբանությանն ու եվրոպական մշակույթին:

Շարադրանքների մեծ մասն ունեն թուրք ազգայնամոլական լիցքավորում: Ճարտարագիտության մի ուսանող ակնարկում է «իդեալիստների» մեջ սիրված մի ասացվածք, ըստ որի թուրք միգրանտներին հաջողվել է անել այն, ինչն օսմանցիներին չհաջողվեց սրով անել, այն է՝ գրավել Արևմուտքը:

Մի ուրիշ մեկն առաջարկում է ստեղծել համաեվրոպական թուրքական մի ֆեդերացիա, որն իր ծածկի տակ պիտի առնի Եվրոպայի բոլոր ուլթյուջուներին: Ոմանք ցանկություն են հայտնում թուրքական դպրոցներ բացել:

— Չէ՞ որ կաթոլիկներն ու հրեաներն էլ ունեն իրենց դպրոցները, — պնդում են նրանք: Երկագիրներից ոմանք տարված են կարոտախտով Օսմանյան կայսրության նկատմամբ, որը փլուզվեց Առաջին աշխարհամարտից հետո:

Հոլանդիայում գտնվող թուրք գրողները քննադատում են հոլանդական միստոկացն ու ապրելաձևը: Այսպես, 1993 թվին թուրքական մշակութային կենտրոնի վարչության անդամ Հուսեյին Դումանը մի երկագրություն շարադրեց «Քյոփրու» — «Կամուրջ» խորագրով: Դումանի գրվածքում կարդում ենք. «Այսօր հաճախ նկատելի է, որ մեր աղջիկներն աշխատում են հոլանդական կառավարական հաստատություններում ու հասարակական հիմնարկություններում: Ի՞նչ սրտաճմլիկ տեսարան է բացվում աչքիդ առաջ, երբ տեսնում ես նրանց՝ այնտեղ մտած՝ կոճակները բաց բլուզներով, որ նկատելի է դարձնում իրենց կուրծքերը, կարճ փեշերով, որ համարյա ոչինչ չի ծածկում: Եթե անտեղյակ մեկը լինես, չես կարծի, որ թուրք աղջկա հետ գործ ունես: Մի՞թե հոլանդացի աղջիկներն այդպես չեն անում. նրանք ոչնչից չեն ամաչում: Կարիք էլ չունեն, որովհետև ոչ ոք նրանց բան չի ասում: Այստեղ սա սովորական բան է, նրանք դա սովորում են կաթնակեր հասակից: Սակայն, մենք մերոնց դաստիարակում ենք պարկեշտությամբ ու ամոթխածությամբ»:

Այս խոսքերի հեղինակ Հուսեյին Դումանը, 1997 թվականին Հոլանդիայի թուրքական մշակութային կենտրոնի նախագահն է:

Վարչության նախկին անդամներից մեկն ասում է. «Ես իմ կյանքի ամենալավ տարիները նվիրել եմ թուրքական մշակութային կենտրոնին: Ես պարծենում եմ այն ամեն ինչի համար, որ արել եմ, բայց միաժամանակ մտածում եմ՝ ինչի՞ համար եմ արել: Ավելի լավ չէ՞ր լինի, եթե մի կրթություն ստանայի»:

— Ինչո՞ւ է Չեր կենտրոնը միշտ աշխատում իր քաղաքական պատկանելությունը քողարկված պահել:

— Էմ. Հա. Փե.—ն լավ համբավ չունի, — ասում է նա, — ինչպես որ չունի «ժայրահեղ—աջ» անվանումը: Եթե քո մասին ասում են, որ ժայրահեղ աջակողմյան ես, նույնն է, եթե ասեն՝ Հոլանդիան քո տեղը չէ: Այն ժամանակ, իրոք, այստեղ քո տեղը չէ: Իմիջիայլոց, Էմ. Հա. Փե.—ն չէ որ շատ սիրված է, այլ՝ Ալփարսլան Թուրքեշը:

— Դու տակավին Գորշ Գա՞յլ ես:

— Այո՛, բայց եթե գրես, քեզ կտոր—կտոր կանեն:

1985 թվականին, «Ամստերդամի միգրանտ կազմակերպությունների ֆինանսավորման մասին» քաղաքապետարանի նոտայում, թուրքական մշակութային կենտրոնի մասին մի ծանոթագրություն էր դրված՝ «Հնարավոր է, որ երկամյա վարչության ընտրությունների արդյունքում, Հոլանդիայի որոշակի մի թուրք խմբակցություն այս մշակութային կենտրոնն իր հակակշռի տակ առնի»:

Եթե 1985-ին թուրքական մշակութային կենտրոնը 62000 գուլդեն (մոտ 31000 դոլար) նպաստ էր ստանում, հետագա տարիներին այդ գումարն ավելացավ տարեկան 50 տոկոսով:

Նպաստի բաժնի պատասխանատու Ֆրանսին ֆան դեր Ջեյը ասյպես է արտահայտվում. «Շշուկներ կան, որ թուրքական մշակութային կենտրոնը Գորշ Գայլերի ձեռքումն է: Ութսունական թվերի սկզբին, թուրքական ձախ կազմակերպություններ, ինչպես՝ Հա. Թե. Ի. Բե-ն, այս առնչությամբ բողոքեցին: Նրանք ասում էին, որ թուրքական մշակութային կենտրոնը Գորշ Գայլերի կենտրոնն է: Իսկ հիմա ինչպե՞ս է իրավիճակը, ես լուր չունեմ: Դ-ա մի բան է, որ, համեմայնդեպս, պետք է ապացուցվի: Ով ցանկանում է, կարող է դիմել դատարանին»:

Ամստերդամի քաղաքապետարանի մի խոսնակ մեզ ասում է, որ քաղաքապետարանի տեսակետից մի կենտրոն-միության քաղաքական պատկանելությունը կարևոր դեր չի խաղում:

— Բավական է միայն նպաստ ստացող կազմակերպությունը լրացնի նպաստին կապվող պահանջները: Օրինակի համար, նա պետք է գործի դեմոկրատական կարգով:

Այն հարցին, թե դա ինչպե՞ս է ստուգվում, տվյալ պաշտոնյան պատասխանում է.

— Ի շարս այլոց, տվյալ միության կանոնադրությամբ, նպատակներով և ֆինանսական զեկույցով, եթե, իհարկե, այդպիսի զեկույց տրվում է:

Այնպես որ երևում է այս թուրքական մշակութային կենտրոնը Գորշ Գայլեր պատրաստելու մի դարբնոց է: Կենտրոնի քարտուղար Ուչլեր Աքքոջը հետագայում դառնում է բարձրագույն պաշտոնյա Ուլու Ջամի մզկիթի, այսինքն՝ այն մզկիթի, որ

կապված է թուրքական ֆեդերացիային: Նախագահ Կադիր Այազը դառնում է հիշյալ մզկիթի նախագահը, իսկ կենտրոնի մի այլ ժամանակի նախագահ Ահմեդ Ջեյհանը գրավում է թուրքական ֆեդերացիայի փոխնախագահի պաշտոնը:

Չեղինակի ծանոթ.

Տեսնել նույնպես հավելված 2-ում Չոլանդիայի թուրքական ֆեդերացիայի հայտարարությունը:

1. Թուրք ազգային շարժման կուսակցություն:
2. Չարմարվել, մերվել մեծ հասարակության մեջ: Նույնը չե ինչ որ ծուլումը:
3. Ապորինի մնացող, բնակության իրավունք չունեցող:

III. «Մեկերտ» – Գայլեր՝

«Պետք է կարգապահ լինել»

Ֆինանսավորված օղակ

Ամստերդամի թուրք երիտասարդները

Ռոտերդամի երևելի թուրքերը

Նպաստ ստանալու լեզվաբանություն

Արդյոք Օսի քաղխորհուրդը նպաստ

տրամադրելու է

«**Մ**եր դասընթացները երիտասարդների համար վերստին սկսել ենք: Եթե ցանկանում եք մասնակցել, դիմեք վարչությանը».

Այս տեղեկանքը փակցված էր Թե. Դե. Վե.-ի, Թուրք երիտասարդների դեմոկրատական միության (հասցե՝ Մեկերեսսթրաթ, Ամստերդամ – Օստ) ծանուցատախտակի վրա: Միությունն անդամ է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի:

Թե. Դե. Վե.-ի կենտրոնատեղին թուրքական սրճատան տպավորություն է թողնում, առնվազն, եթե Բաշբուլ Թուրքեշի դիմանկարները չլինեին: Այստեղ ներկա են երիտասարդ թուրքեր, որ կամ հեռուստացույց են դիտում և կամ սեղանի ֆուտբոլ խաղում:

Միառժամանակ է, որ Մեհմեթը այցելում է այս վայրը: Ճիշտ այնպես, ինչպես Ուտրեխտի թուրքական մշակութային կենտրոնում, այստեղ էլ ոչ ոք նրան ուշադրություն չի դարձնում: Ծանուցված դասընթացը լավ առիթ է՝ կացությունը փոխելու համար:

Երբ Մեհմեթը բուֆետապանից հարցնում է, թե կարո՞ղ է վարչության անդամներից մեկի հետ խոսել, սա ցույց է տալիս ֆուտբոլի սեղանի շուրջ հավաքված երիտասարդներից մեկին. վերջիններս բուռն տարված են իրենց խաղով:

— Էն տղան, էնտեղ՝ վարչության մեջ է:

Մոտենում է նրանց: Սեղանի ֆուտբոլ խաղացողները ուշադրություն չեն դարձնում նրան: Չեռքով խփում է վարչության անդամի ուսին ու հարցնում, թե կարո՞ղ է հետը խոսել:

— Նախ էս մի շուրջը լրացնենք:

Մի քառորդ տևում է, մինչև որ երիտասարդ վարչականը իր խաղն ավարտում է: Մոտենում է Մեհմեթին:

— Ի՞նչ գործ ունեիր, — հարցնում է:

— Կարո՞ղ եմ հարցնել՝ դու ո՞վ ես:

Երիտասարդը հանկարծակի է գալիս, բայց հետո պատասխանում է.

— Ես Հուսեյին եմ կոչվում, ի՞նչ կա:

— Ես ուզում եմ մասնակցել մի աշխատանքի: Դուք ի՞նչ աշխատանքներ ունեք այստեղ:

— Ֆուտբոլ, ազգային պարեր. հենց վերջերս սկսել ենք մի դասընթաց:

— Կարո՞ղ եմ մասնակցել:

— Պետք է վարչության հետ խոսեմ. վաղն արի:

— Դասընթացներն այստե՞ղ են լինում:

— Ո՛չ, ֆեդերացիայի շենքում:

— Ո՞ր ֆեդերացիայի:

— Թուրքական ֆեդերացիայի:

— Դու էլ նրա անդամ ես:

— Ճիշտ հասկացար:

— Ուրիշ էլ ո՞վ կա վարչության մեջ:

— Աբդուլլահ Սարին նախագահն է: Հա, Ջեմն էլ վարչության անդամ է:

— Ջե՞մ:

Հուսեյինը ցույց է տալիս կոպիտ ու մոայլ հայացքով հաղթանդամ մի մարդու, որը միշտ այդտեղ ներկա է, բայց երբեք մի բառ չի խոսում:

Նախ աշխատում ենք այդ բոլորն ստուգել: Գնում ենք հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների գրանցման պալատ: Այնտեղ գտնում ենք միության վարչության անվանացանկը, որը հանձնել է Թե. Դե. Վե.-ն և, սակայն, Ջեմի անունին այդտեղ չենք հանդիպում:

Հաջորդ օրը Մեհմեթը խոսում է «վարչության անդամ» Ջեմի հետ:

— Վարչության մեջ խոսե՞լ են դասընթացում՝ իմ մասնակցելու մասին, — հարցնում է նրանից:

— Ո՛չ, — պատասխանում է Ջեմը, — ես էդ բաների հետ սկի

գործ չունենա: Դրա համար պետք է անձամբ նախագահին տեսնես:

Դիմում է բուֆետայանին.

— Նախագահն ամեն օր գալիս է կամ թե չէ՝ զանգահարում է. ես իրեն կտեղեկացնեմ:

Ամեն օր նույն դեմքերն են: Մոտավորապես 10–15 հոգի՝ տասնհինգից քսան տարեկան երիտասարդներ, որոնք սեղանի ֆուտբոլ են խաղում: Կանոնավոր այցելուների շարքում են նույնպես 40–ից անց տղամարդիկ: Նախագահ Աբդուլլահ Սարին հազվադեպ է երևում:

Երբ մի անգամ Մեհմեթն այցելուներից մեկին հարցնում է, թե ի՞նչ քաղաքական հակումներ ունի այս միությունը, նա այսպես է իրեն պատասխանում.

— Շա՞ջ ես: Չե՞ս տեսնում, ամենուրեք էմ. Հա. Փե.–ի ղեկավար Թուրքեշի նկարներն են կախված: Ծանուցատախտակի վրա նշված համարյա բոլոր կարգախոսերը նրանն են: Պահարաններում միայն Գորշ Գայլերի գրքեր են ու էստեղ՝ բացի Օզան Արիֆի երգերից, ուրիշ բան չես լսի:

Օզան Արիֆն, ի դեպ, հայտնի թուրք երգիչ է, որ Գորշ Գայլերի նկատմամբ իր համակրանքը չի թաքցնում:

— Ի՞նչ կարծեցիր, — քննիծաղում է երիտասարդը:

— Համակրողի չես նմանվում, — ասում է Մեհմեթը:

— Սկի չեմ էլ: Ես գալիս եմ էստեղ, որովհետև էս թաղում ուրիշ տեղ չկա գնալու:

Երբ մի շաբաթ հետո նախագահ Սարին ներս է մտնում, Մեհմեթն առիթը բաց չի թողնում:

— Բավական դժվար գործ է քեզ գտնելը. ինչպիսի՞ նախագահ ես, որ երբեք միությունումդ չես գտնվում, — հարցնում է նա:

— Սաղ ժամանակ մի տեղից մյուս տեղ եմ վազում, — պատասխանում է Սարին: — Տանն էլ ինձ կարիք ունեն, չէ՞. բայց դու ի՞նչ գործ ունես:

— Ես ուզում եմ մասնակցել մի դասընթացի: Ինձ ասել են, որ դու ես միայն զբաղվում այդ գործով:

— Հիմա հասկանո՞ւմ ես, ինչու եմ եղբան զբաղված, — քննիծաղում է Սարին:

— Ոչ որ չկա՞ քեզ օգնի:

— Ինչո՞ւ չէ, բայց նրանք շատ երիտասարդ են ու անփորձ: Ցավում եմ, որ պիտի ասեմ, որ դասընթացներն ավելի փոքրերի համար են, այսինքն՝ իմ տարիքի մարդկանց համար:

Ըստ հիմնարկությունների գրանցման պալատի տվյալների՝ Աբդուլլահ Սարին միայն մի տարի է Մեհմեթից մեծ:

— Ուրեմն, ես տարիքավորների շարքո՞ւմ ընկա, — բողոքում է Մեհմեթը:

— Չէ, էդ չեմ ուզում ասել, մասնակցողները քեզնից մի քիչ ավելի փոքր են: Ուրիշ աշխատանքներ էլ լինելու են, որոնցում դու կարող ես մասնակցել: Մինչև էն ժամանակ մենք իրար ավելի լավ կճանաչենք: Հիմա մենք ոչ մեկս իրարից որևէ գաղափար չունենք:

— Դուք ինչպե՞ս կարող եք իմ մասին գաղափար կազմել, եթե հնարավորություն չեք տալիս ինձ որևէ աշխատանքի մասնակցելու:

— Չեզ նման մարդկանց մենք պետք ունենք, — ասում է նախագահը, — բայց դա չի նշանակում, որ ամեն ոք միանգամից ամեն ինչի կարող է մասնակցել: Այս միությունը ուլքյուջուների միություն է: Դու կարող ես մասնակցել միայն, եթե ինքդ իդեալիստ ես: Դա նշանակում է, որ դու կարգապահ պիտի լինես: Պետք է կարողանաս մեր վստահությունը շահել: Իդեալիստ լինել՝ չի նշանակում, որ դու մի բան հենց այսպես անես: Պետք է պատրաստ լինես ամեն ինչ զոհաբերելու՝ նպատակի համար:

Ըստ Թե. Դե. Ե. Վե.–ի կանոնադրության, միության նպատակները հետևյալն են՝ «Կատարել ու քաջալերել մշակութային, մարզական ու ֆուլկլորիկ աշխատանքներ՝ իր բոլոր ձևերով ու երանգներով»:

Թե. Դե. Ե. Վե.–ն ստանում է տարեկան քառասուն հազար գուլդեն նպաստ Ամստերդամի քաղաքապետարանից: 1996 թվականի դեկտեմբեր 31–ից այս նպաստը դադարեցվել է, որովհետև կենտրոնը օրենքով նախատեսված որևէ բաց չի լրացնում: Նպաստը, սակայն, փրկագնվել է մի չնչին 135 000 գուլդեն վճարելով:

Մի կեսօրից հետո ներս է մտնում հոլանդացի մի մարդ: Բոլոր թուրք երիտասարդները շշմած նայում են նրան: Հոլանդացի մի մարդ Թե. Դե. Ե. Վե.-ն՝

Վարչության անդամ Ֆեդայի Էքենը վեր է ելնում նրան դիմավորելու: Հոլանդացի այցելուն ասում է, որ հետաքրքրված է թուրքական կազմակերպություններով: Էքենն ասում է, որ գոյություն ունի համադրող մի կազմակերպություն, որն է՝ թուրքական ֆեդերացիան, որն հիմնադրվել է 1995 թվին և որի մեջ անդամագրված են հիսունից ավել կազմակերպություններ:

— Պատկառելի թիվ է,— ասում է այցելուն:

— Սրանք բոլորն իրենց համար առանձին միություններ են,— շարունակում է Էքենը:— Նրանք չէին կարողանում հարմարվել գոյություն ունեցող համընդհանուր կազմակերպությունների մեջ: Հստակ կարիք էր զգացվում մի նոր համադրող կազմակերպության: Դժվարին աշխատանք էր այդ բոլոր միություններին մի հովանու տակ բերելը:

— Ինչո՞վ եք դուք տարբերվում մյուս համադրող կազմակերպություններից,— հարցնում է հոլանդացին:

— Նրանք աշխատում են քաղաքական դիրքերից: Ունեն կապեր քաղաքական կուսակցությունների հետ: Մենք չունենք: Մեզ համար հիմնական հարցը թուրք համայնքի խնդիրներն են: Այդ խնդիրների համար պետք է լուծում գտնել: Մենք հոլանդական հասարակության անբաժանելի մասն ենք կազմում:

Հոլանդացի հյուրը տպավորվում է:

— Այդպես դուք Ձեր արժանի ներդրումն եք ունենում մեր հասարակության մեջ,— ասում է նա:

— Երանի թե բոլորն էլ ձեր նման մտածեին:

— Գովելի է ձեր աշխատանքը,— ասում է հոլանդացին ու թողնում վայրը:

— Լավ գիտես՝ ինչպես սրանց խամ անես,— ասում է տարեց ներկաներից մեկը Էքենին:

— Գիտես՝ ինչ լեզվով էս մարդկանց հետ խոսես, Ֆեդայի՛,— ասում է մի այլ մեկը:

— Դե, չեմ կարող իրենց ասել, թե մենք է՛մ. Հա. Փե.—ի իդեալիստներ ենք: Կարող է պատահի, որ նա քաղաքապետարանի մարդ է,— ասում է Էքենը:

Ոստիկանությունը ճիշտ ժամանակին կարողացավ նպաստի փողի չարաշահումը կանխել: Մի թուրք երիտասարդ ձեռքակալվեց, երբ իր հետ տանում էր մի ճամպուրակ՝ հարյուր հազար գուլդենով: Նա չկարողացավ բացատրություն տալ, թե այդ գումարը որտեղի՞ց է եկել: Թե. Դե. Ե. Վե.—ի վարչության անդամներից մեկի հետ նա համաձայնություն էր կայացրել:

— Ես կհայտարարեի, որ գումարը պատկանում է Թե. Դե. Ե. Վե.—ին,— ասում է հարցին կապվող վարչականը:— Ապա մենք այդ գումարի մի մասը կստանայինք, որը կգործածեինք մեր կենտրոնատեղին վերանորոգելու համար: Սակայն, ոստիկանությունը չի միջամտել...»:

Վերոհիշյալ վարչության անդամը թուրքական ֆեդերացիային կցված հաստատություններից մեկում «Մելկերտ աշխատատեղի» զբաղեցնող է:

— Պարզ է, որ ես կնախընտրեի, որ թուրքական ֆեդերացիան ինձ վճարեր: Սակայն, միայն Չեյբուրխերդեյկի մեր շենքի կալվածագրավի համար ամսական հինգ հազար գուլդեն պիտի մուծենք,— բացատրում է վարչության անդամը:

Ամստերդամում «Մելկերտ աշխատատեղի» զբաղեցնողներով աշխատում են ՍՈՅԱԴ հաստատությունը, թուրքական մշակութային կենտրոնը, Քուրբան և թուրքական ռադիոհեռուտահաղորդման հաստատություն «ԹՈՍ»-ը:

Թուրքն և Քուրբա հաստատությունները ֆինանսավորվում են Ամստերդամի Չեյբուրխ շրջխորհրդի միջոցով: Նրանք ստանում են փող իրենց աշխատանքների համար ու նաև տարեկան 49000 գուլդեն նպաստ՝ թուրքական ֆեդերացիայի շենքում իրենց բաժնի վարձի ու հարմարեցման ծախսերի համար: Շրջխորհուրդը կազմակերպության քաղաքական պատկանելության մասին բան չգիտի:

Մեր հաշվարկումներով, 1985 թվականից Ամստերդամի քաղաքապետարանը տրամադրել է առնվազն մեկ միլիոն գուլդեն նպաստ՝ մայրաքաղաքի Գորշ Գայլեր կազմակերպությանը: Այսպիսով, նա ֆինանսավորել է, ի շարս այլոց, Թուրքական մշակութային կենտրոնին և Թուրքական դեմոկրատական երիտասարդական միության Թե. Դե. Ե. Վե.—ին: Այս գումարում դեռևս հաշվի չեն առնված շրջխորհուրդների տրամադրած

նպաստները, ինչպես նաև հաշվի չի առնված սովորական կամ «Մելկերտ» տիպի աշխատատեղիների տնօրինությունը, որի հետ աշխատում են վերը նշված միությունները:

1996 թվի փետրվարն ու մարտը Մեհմեթն անց է կացնում իր օրերը ՎԵՐՍԱՍ-ում՝ Հոլանդական և իսլամական երիտասարդների համագործակցության միությունում: Դպրոցական հին շենքի դասարաններից մեկում պատից կախված է մի հսկա թուրքական դրոշակ և մի ցուցանակ՝ Թյուրք ֆեդերասիոն — թուրքական ֆեդերացիա նշումով: Երիտասարդներն այստեղ հեռուստացույց են դիտում կամ բիլիարդ-սնուկեր խաղում: Դրանցից մեկն է Ահմեդը՝ միջնակարգի մի դպրոցական, որի կաշվե վերարկուի հետևում նախշված է թուրքական դրոշակ: Վզին կախված է մի մեծ շղթա, որից ճոճվում է մի Գորշ Գայլ:

Մի օր էլ Մեհմեթը հարցնում է.

— Ինչի՞ ես էս շղթան վզիդ կրում:

— Մենք՝ թուրքերս, պետք է ցույց տանք, թե ո՞վ ենք: Երբ տեսնում են մեկի, որ չի կրում Գորշ Գայլը, կասկածում են, որ նա թուրք լինի, — ասում է Ահմեդն ու զննող հայացքով նայում Մեհմեթին: — Յուրաքանչյուր թուրք պետք է պարծենա իր ազգությանը: Ես պարծենում եմ: Թուրք ժողովուրդն աշխարհի ամենաբարձր ժողովուրդն է:

— Դու գիտե՞ս, թե Գորշ Գայլի սիմվոլն ի՞նչ է նշանակում:

Ահմեդը գլխով է անում.

— Այն ժամանակ, երբ մեր պապերը Հեռավոր Արևելքից դեպի Անատոլիա էին քոչում, առաջնորդվում էին Գորշ Գայլով:

— Ինչո՞ւ էստեղ ոչ մի հոլանդացի չկա, — հարցնում է Մեհմեթը:

— Իսկապես կարծում ես, որ մենք ես անհավատ շների հետ կարող ենք համագործակցել: Հոլանդացիներն, ամեն ինչից, որ թուրքական է, վախենում են: Էդ տեսակ մարդկանց հետ հո չե՞ս նստի մեկ միության մեջ:

— Բայց չէ՞ որ Հոլանդիայում իրենց հետ գործ ունենք:

— Հետո՞. մենք՝ թուրքերս, միշտ մեր ինքնությունը պահել ենք, աշխարհի որ ծայրում էլ, որ լինի: Դրա համար էլ դեռևս գոյություն ունենք: Եթե թողնեինք, էդ ամհավատները մեզ շատ ժամանակ առաջ ձուլել էին:

— Եթե մի հոլանդացի էլ մեզ էսպես հայիոյի, հետո ասելու ենք, թե մեզ ճնշում են, դա ռասիզմ չի՞:

— Բայց մենք՝ թուրքերս, նացիոնալիստ ենք: Հետո մենք նույնը չենք: Թուրք ազգը ամենից բարձրն է:

— Այդպիսով, ինքնաբերաբար քեզ վեր ես դասում ուրիշ ազգերից:

— Չէ, էդպես չի: Բայց, ամեն մարդ իր ազգի մասին էսպես պիտի մտածի: Մենք՝ թուրքերս, երբեք բավական չափով էդ բանը չենք արել, դրա համար էլ էսքան տանջվել ենք:

— Իսկ ի՞նչ կասես այն հոլանդացիների մասին, որ ասում են. «Իմ ժողովուրդն ամենից բարձր է»:

— Նրանք իրավունք ունեն:

— Իսկ եթե մեզ կեղտոտ թուրք անվանե՞ն:

— Ինձ էդ բանը մի անգամ պատահել է: Միայն էն ժամանակ հասկացա, որ ես թուրք եմ և թե էդ ինչ է նշանակում: Դրանից առաջ ես ոչ մի տարբերություն չէի դնում մարդկանց մեջ: Հիմա գիտեմ, որ միայն թուրքերին կարող եմ վստահել:

Թեև Ահմեդը Հոլանդիայում է ծնվել ու մեծացել, ամեն տարի գնում է Թուրքիա՝ մասնակցելու Էմ. Հա. Փե.—ի բանակումներին:

— Բաղաբական դաստիարակություն ես ստանում, — բացատրում է նա: — Բեզ ամեն ինչ սովորեցնում են մեր ժողովրդի պատմությունը և էն, որ ինչպե՞ս պիտի պայքարես քրդերի դեմ, որ ուզում են մեր երկիրը երկու կտոր անել: Էստեղ էլ լինում են ժողովներ, բայց դրանց չես կարող համեմատել էն վարժեցման ճամբարների հետ, որ Թուրքիայում են: Էնտեղ շատ լավ գիտեն, թե ի՞նչ են անում: Ինչպես ասում են կուսակցության ղեկավարները, կարող ես վստահ լինել, որ սովորածդ երբեք չես մոռանա:

— Քո ընկերներին ասո՞ւմ ես, թե այնտեղ ինչեր ես սովորել:

— Իհարկե. էստեղ երիտասարդներից շատերն ամաչում են, որ ասեն, թե թուրք են, մինչդեռ պետք է պարծենան: Թուրք ժողովրդից ավելի ազնիվն ու բարձրը չկա: Ես աշխատում եմ՝ դա էդպիսիների ուղեղի մեջ մտցնել:

Ահմեդի դասագրքերից մեկը կոչվում է «Ուլքյուջուեյ Նոթլար», որը նշանակում է՝ «Յուցմունքներ իդեալիստի համար»:

Ահմեդը սովորում է ազգապաշտ ու քրքապաշտ լինել: Ազգապաշտ թուրքը «մի «Գերմարդ»² է, որը չի ընդունում երկու ազգի գոյությունն այս աշխարհում»:

Շարունակում ենք կարդալ. «Դառնալ առավել մեծ պետություն, դառնալ ամենամեծ պետությունը և միակ պետությունը, դա է ամենաթանկագին իդեալը երիտասարդ թուրք իդեալիստի համար»:

Համաձայն այս դասագրքի ուսուցումների, յուրաքանչյուրի բարձրագույն նպատակն այս պիտի լինի. «Ստեղծել ազգային մի պետություն, որը մի թուրքի երկու մազի համար պատրաստ կլինի ամբողջ աշխարհը զոհել: Այս պետությունը կազատագրի մեզ պատկանող օկուպացված տարածությունները և կկազմակերպի կապիտալիստական ու կոմունիստական տիրապետության տակ ճնշված բոլոր ազգերի ազատագրման շարժումը»:

Ահմեդը թերևս միակ մեկն է, որ Մեհմեթի հետ խոսում է: Մի օր էլ Մեհմեթը դիմում է ՎԵՐՍԱՄ երիտասարդական միության նախագահ Հաջի Աշքինին.

— Նոր եմ մտել Ռոտերդամ, դուք ի՞նչ աշխատանքներ ունեք այստեղ:

— Ժողովրդական պարեր ու ֆուտբոլ. մենք կազմակերպում ենք հավաքներ ու սեմինարներ:

— Ինչի՞ մասին:

— Ամեն ինչի, որ վերաբերում է թուրքերին,— Աշքինը շուտ է գալիս ու հեռանում:

— Սպասե՛ք մի րոպե,— կանչում է Մեհմեթը,— ես ուզում եմ մասնակցել պարի աշխատանքներին:

— Դրա համար տարիքդ բարձր է:

1996 թվականին, ՎԵՐՍԱՄ-ը 28400 գուլդեն նպաստ է ստացել Ռոտերդամ-Նորդ շրջխորհրդից: 1997 թվականին՝ 28700 գուլդեն՝ մշակութային ու ինտեգրացիոն աշխատանքների համար:

Երբ թերթում ենք ՎԵՐՍԱՄ-ի կանոնադրությունն ու տարեկան զեկույցը, այնտեղ կարդում ենք, որ ՎԵՐՍԱՄ-ի նպատակը թուրքերի և հոլանդացիների միջև բարեկամությունն ամրապնդելն է:

ՎԵՐՍԱՄ-ն իրեն ներկայացնում է որպես դեմոկրատական մի միություն, որ ջանում է թուրքերին ինտեգրացնել Հոլանդիայի հասարակության մեջ: Նրա գործունեության ծրագրում հիմնական տեղ է զբաղում տեղեկատվությունն ու լուսաբանությունը: Միության այցելուներին տրվում է ամեն տեսակի տեղեկություն, ինչպես, օրինակ, թմրեցուցիչների, առողջապահության, ինտեգրացիայի, բնակարանի, մանկական նպաստի, հոլանդական օրենքների, բախտախաղերի և այլնի մասին: Բացի այդ, միությունը դպրոցականներին օգնում է իրենց դասերը պատրաստելու մեջ և աշխատանք փնտրողների համար հրատարակում մի թերթ:

Իսկ իրականությունն ի՞նչ է: Այցելուները կարող են օգտվել միայն «Թուրքիյե» թերթից և է.մ. Հա. Փե.—ի քարոզչական նյութերից:

Վեյլին* ՎԵՐՍԱՄ-ի այցելուներից է, բայց իրեն այստեղ հանգիստ չի զգում:

— Սրանից առաջ ես փորձել եմ մտնել հոլանդական միություններ,— ասում է նա:— Սակայն, հոլանդացի երիտասարդներից շատերը, որոնց ես հանդիպեցի, ինձ մարդու տեղ չէին դնում: Դրա համար ես միացա թուրքական միության: Թեկուզ գիտեմ, որ Գորշ Գայլերն են պտտեցնում միությունը, դրանով հանդերձ, էստեղ մեկն իմ դեմ խտրություն չի անում: Զաղաքականությունն ինձ չի հետաքրքրում: Ես գալիս եմ էստեղ միայն իմ ընկերներին տեսնելու: Հոլանդացիներին ես այլևս չեմ վստահում:

Մի ուրիշ պատանի ասում է, որ «նրա համար է ՎԵՐՍԱՄ օգնում, որ իրենց թաղում ուրիշ մի տեղ չկա, ուր կարենաս մարդու հանդիպել»:

Թեև ՎԵՐՍԱՄ-ը երիտասարդական միություն է, սակայն, քառասունն անց երեք տղամարդ նրա մշտական հաճախորդներն են: Նրանք ունեն երկար, կողքերից կախված բեղեր: Թեև նրանք չեն խառնվում ուրիշների հետ, պարզ նկատելի է, որ հեղինակության տեր մարդիկ են:

Փետրվարի վերջերը, երբ մի օր Մեհմեթը ակումբում է լինում, փորձում է առանց աչքի ընկնելու ունկնդրել այդ երեք տղամարդկանց երկուսի գրույցը: Մեհմեթը տեղավորվել է նույն

սեղանի ծայրին, որի շուրջ նրանք էլ նստած են: Երկու տղա-
մարդիկ խոսում են իրենց առջև դրված թերթի մասին:

— Այսպիսով, կազմակերպությունը երբեք խայտառակու-
թյան խարանհից չի ձերբազատվի,— ասում է նրանցից մեկը:

— Ֆեդերացիան կուսակցությանն զգուշացրել էր այս մար-
դու մասին,— ասում է մյուսը:— Նա երբեք թեկնածու չպիտի ա-
ռաջարկվեր: Սակայն, Թուրքեշը չուզեց լսել:

— Մինչդեռ բոլորը գիտեն, որ դավաճանները սպասում են
առիթի՝ կուսակցությունը փչացնելու համար: Էսպիսի մի առիթ
նրանք երբեք բաց չեն թողնի:

— Կարելի՞ է թերթը,— խնդրում է Մեհմեթը:

Թերթն ստանում է ու նայում: Լուրի խորագիրը հետևյալն է՝
«Իզմիրի քաղաքի Էմ. Հա. Փե.—ի թեկնածու Ալի Ռեզա Գյուր-
բուզը ձերբակալվել է Շվեյցարիայում՝ քառասուն կիլոգրամ հե-
ռոյին տեղափոխելիս»:

ՎԵՐՍԱՄ, մայիսի 1:

— Ստանբուլը գրավել են,— կանչում է Հաջի Աշքինը՝ սնու-
կերի սեղանի հետևից:

— Ի՞նչ է պատահել,— հարցնում են բոլորն ապշած:

— Մայիսի մեկ է, չէ՞, կարմիրների օրը: Խանութները կո-
ղոպտել են ու ոստիկանությանը ջարդ տվել,— ասում է Աշքինը:

Ամեն ոք դադարեցնում է բիլիարդը, կամ ձեռքի թերթը մի
կողմ դնում ու շտապում հեռուստացույցի անկյունը: Հեռուստա-
հաղորդումը ստացվում է Թուրքիայից՝ կենդանի, արբանյակի
միջոցով: Ցուցադրվում են պատկերներ Մայիսի մեկի տոնախմ-
բությունից, որը Թուրքիայում հանգել է վայրագությունների:
Կան երեք սպանվածներ, մեծ թվով վիրավորներ: Ջարդուփշուր
են եղել շատ մեքենաներ:

— Կոմունիստներին բոլորին պիտի բնաջինջ անել,— բա-
ցականչում է Աշքինը:

Ջարդ տված մի միլիցիոնների պատկերը երևալիս ներկանե-
րը ցասումով են լցվում:

— Ինչպե՞ս կարելի է մի թուրք, թուրք ոստիկանին էսպես
ջարդի:

— Սրանք թուրք չեն, այլ տեռորիստ են:

Երբ պատկերի մեջ է գալիս սպանված մի ցուցարարի ա-

բյուռնոված դիակը, բոլորը վեր են թռչում տեղից. «Շատ լավ
են արել, սրանց հենց էսպես պիտի անել»: Փախչող ոստիկան-
ների տեսարանը ներկաների մեջ առաջացնում է զայրույթ:

— Էս ոստիկանությունից բան դուրս չի գա:

— Սրանց դեմ պետք է «Ըոզել-թիմ» հատուկ ջոկատներին
գործի դնել, այնպես, ինչպես Փե. Հա. Հա. տեռորիստների դեմ
են ուղարկում:

— Սրանք մեր երկրի թշնամիների գործակալներն են:

Մի քանի ամիս հետո, Մեհմեթը որոշում է նորից այցելել
միություն: Այդ առավոտ ՎԵՐՍԱՄ-ի կենտրոնատեղին դա-
տարկ է: Միայն ճաշարանի սպասարկողն է, որ բուֆետում նս-
տած սենդվիչ է ուտում:

— Բարի լույս,— ասում է Մեհմեթը:

Տղան վեր է թռչում տեղից:

— Ի՞նչ խաբար է, ինձ լեղապատառ արիր:

Երիտասարդը Այհան* է կոչվում: Գիշերում է հենց այստեղ:

— Տուն չունե՞ս:

Այհանը աչքերը սևեռում է առաստաղին. «Մեկ ամիս ու կես
ավել չէ, որ էստեղ եմ, գործ չունեմ: Փառք ասածու, էստեղ կա-
րող եմ աշխատել ու մաժամանակ կարող եմ էլ գիշերել»:

Նա ՎԵՐՍԱՄ-ից ստանում է ամսական ինը հարյուր գուլ-
դեն: Դրա դիմաց կատարում է պատահական հանձնարարու-
թյուններ, հավաքարարություն, կառավարում բուֆետը:

— Բախտ եմ բերել,— ասում է նա:— Շատ իլեգալներ ավե-
լի վատ վիճակ ունեն, բայց իմ լավ օրերն էլ մոտենում են իրենց
ավարտին: Լսել եմ մի հոգի եկել է Հոլանդիա, նույնպես ապօ-
րինի: Նա իմ տեղը բռնելու է. իրենց մարդկանցից է:

— Դու իրենցից չե՞ս:

— Չէ, ես քաղաքականությունից ոչինչ չգիտեմ և չեմ էլ ու-
զում գիտենալ:

— Ուրեմն, գործդ ձեռքից տալու ես:

— Էդպես է երևում. եթե քեզ հովանավորող մեկը չունես, ու-
րեմն քանդ բուրդ է:

Քրիստինա Վոնկեմանը Ռոստերդամ-Նորդ քաղխորհրդի ա-
վագանիներից է: Նա պատասխանատու անձ է նպաստների

հարցով: Երբ պատմում ենք իրեն ՎԵՐՍԱՄ-ի մասին մեր իմացածները, չի զարմանում.

— Այո՛, մենք, իրոք, նշաններ ենք ստանում, որ ՎԵՐՍԱՄ-ը Գորշ Գայլերի ձեռքում է:

— Այդ դեպքում ինչո՞ւ են նպաստ ստանում:

— Հարցը իրավական բնույթ ունի,— ասում է նա:— Այսինքն՝ մի կազմակերպության կասկածյալ անդամակցությունը կարո՞ղ է պատճառ հանդիսանալ՝ նրան նպաստից զրկելու: Տվյալ կազմակերպության քաղաքական պատկանելությունը հիմնական դեր չի խաղում այս հարցում: Մենք առաջին հերթին պետք է ճշտենք, թե արդյո՞ք նրա գործունեությունները բավարարում են սահմանված պայմանները, թե՞ ոչ:

Միայն հոլանդական և իսլամական երիտասարդների համագործակցության միությունը՝ «ՎԵՐՍԱՄ»-ը չէ, որ իր անունով քաղաքապետարանի պաշտոնյաներին մոլորության մեջ է գցում: Թուրքական ֆեդերացիայի անդամ կազմակերպություններից շատերն են օգտագործում այս «նպաստ ստանալու լեզուն»:

Օրինակի համար, Դորդրեխտում, այսպես կոչված «իդեալիստները» ներկայանում են ամենատարբեր ձևերով ու անուններով: Իրենց շրջանակներում, իրենք իրենց անվանում են Դորդրեխտի դեմոկրատական իդեալիստական երիտասարդական միություն («Դորդրեխտ Ուլքուջու Գենչլիկ Դերնեդի»): Նույնպես օգտագործվում է «Թուրքական մշակութային միություն», Թյուրք Քուլթուր Դերնեդի անունը: Իսկ հոլանդացիների համար դա կոչվում է Դորդրեխտի իսլամական ու հոլանդական երիտասարդների համագործակցության միություն (հոլ. հապավ.՝ ՎԵՐՍԱԴ): Սրա ամենավերջին տարբերակը Դորդրեխտում կոչվում է «Իդեալ – 1 հաստատություն»:

«Նպաստի լեզվաբանության» մի այլ ձևը, կազմում են տարեկան զեկույցներն ու գործունեության պլանը: Այդ զեկույցներում ընդհանրապես նշվում է, որ միությունը ինտեգրացիոն աշխատանք է տանում: Այդ զեկույցները հույժ կարևոր են, քանզի այն կարևոր հարցի ճշտումը, թե տրված նպաստներն ինչպե՞ս են օգտագործվում, ընդհանրապես կատարվում է միայն «թրքային ստուգամբ»:

Նպաստներով ֆինանսավորված աշխատանքները սակավ

են վերահսկվում, դեռ չխոսենք այն մասին, թե նպաստ մատակարարողները երբևիցե գնո՞ւմ են պատահական ստուգման այցերի: Այս հարցին այսպես է պատասխանում Լիրդամի քաղխորհրդի անդամ Բեն Ֆան դեր Քաուր. «Ես ուստիկան չեմ»: Նրա քաղխորհուրդը ֆինանսավորում է թուրքական ֆեդերացիայի անդամ Լիրդամի Թուրքական բանվորական միությանը՝ տարեկան 10,600 գուլդեն գումարով:

— Մենք հետաքրքրված չենք քաղաքական պատկանելությամբ: Կարևորն այն է, որ գործունեությունը համընկնի նպաստին կապվող ուղեգծերին,— ասում է Ֆան դեր Քաուր:

Հիվերսումի քաղաքապետարանը 1997-ին, մի չնչին 21000 գուլդեն նպաստ է տրամադրել Հիվերսումի ու շրջակայքի թուրքական մշակութային կենտրոնին (որը կոչվում է նաև Անադոլու)՝ կենտրոնատեղիի ու աշխատանքների համար: 1995 թվին, այս կենտրոնի վարչությունն ընկավ Գորշ Գայլերի հակակշռի տակ:

— Ճի՞շտ է, որ Անադոլուում էմ. Հա. Փե.—ի դրոշակներ են կախված պատերից,— հարցնում ենք նպաստի պատասխանատու պաշտոնյա Այհան Շիրինից:

— Դա, իրոք, մենք լսել ենք,— պատասխանում է Շիրինը,— բայց նրանք ասում են, թե բոլորի հանդեպ էլ նույն ձևով են վարվում:

— Իսկ էմ. Հա. Փե.—ի դրոշակները չե՞ն վրդովեցնի Ալկիթներին (Ալկիթները իսլամի ազատամիտ մի հոսանքի հետևորդներն են և հալածվում են Գորշ Գայլերի կողմից):

Շիրինի պատասխանը. «Այո՛, բայց Ալկիթները չեն գալիս այնտեղ. նրանք իրենց շրջանակն ունեն»:

1996-ի մայիսի 18-ին Գորշ Գայլերն Օս քաղաքում հիմնադրում են իրենց միությունը: Բացման օրը երկու տեսակ հրավեր է ուղարկվում: Քույր կազմակերպություններին հղած հրավերի վրա կա երեք կիսալուսին, մի Գորշ Գայլ և մի թուրքական դրոշակ: Իսկ այն հրավերի վրա, որն ստանում է Օսի քաղաքապետարանը, չկան այս նշանները: Այս քաղաքապետարանին է, որ Թուրքական մշակութային միությունը ներկայացրել է իր նպաստի դիմումագիրը:

Բացման տոնակատարությունը տեղի է ունենում «Դը Ֆլետր» կաֆե-ռեստորանում: Ճանապարհին՝ երկաթուղակա-

յանի մոտ, կանգնած են երկու երիտասարդներ՝ ձեռքներին էմ. չա. Փե.—ի դրոշակներ: Հենց որ Մեհմեթին տեսնում են, Գորշ Գայի բարև են տալիս:

Այնպես որ երևում է՝ այդ կաֆե-ճաշարանի սրահներից մեկը վարձել են միջոցառման համար: Սակայն, երբ Մեհմեթը ներս է մտնում, նրան խուզարկում են:

Սրահը զարդարված է դրոշակներով ու ցուցապաստառներով, որոնց վրա նշված են Գորշ Գայեր և երեք կիսալուսնի նշաններ:

Մի սեղանի հետևում, ուր վաճառվում են էմ. չա. Փե.—ի քարոզչական նյութերը, կանգնած են երկու ծանոթ դեմքեր՝ Ամստերդամից: Նրանցից մեկը՝ մոտավորապես քառասունի կես տարիքով ու երկար բեղերով, Ամստերդամի Ուլու Ջամի, «Մեծ մզկիթի» կանոնավոր այցելուներից է: Մյուսին Մեհմեթը տեսել է թուրքական մշակութային կենտրոնում:

— Դու էստեղ ի՞նչ ես անում,— հարցնում է մզկիթ այցելողը:

— Մի հրավեր տեսա պատին,— պատասխանում է Մեհմեթը:— Այսօր պատահաբար եկել էի Օս՝ ընկերոջս այցելելու, ափ գնամ:

— Մի գնդակով երկու նշան ես խփել,— ասում է թուրքական մշակութային կենտրոնի մարդը:

— Ի՞նչ միջոցառում է սա,— հարցնում է:

— Այստեղ մի նոր մշակութային կենտրոն է բացվում. այսօր բացման արարողությունն է,— ասում է մզկիթի մարդը:— Չե՞ս ուզում մի բան գնել:

— Ինչո՞ւ չէ, որևէ բան կառաջարկե՞ս:

Մզկիթի մարդը կարիք չունի մտածելու: Ամնիջապես գրքերի կույտի միջից փնտրում ու հանում է Ալփարսլան Թուրքեշի «Դոկուզ իշիկ»՝ «Ինը ջահեր» գիրքը:

— Դա պետք է դու կարդացած լինես,— ասում է մարդը,— ամեն մի թուրք պետք է դա ունենա իր պահարանում:

«Դոկուզ իշիկը» Բաշբուդի ամենակարևոր աշխատությունն է և համարվում է ուլքյուջուների («իդեալիստների») ուղեցույցը: Այդ «Ինը ջահերը» ինը գործունեության կետեր են կուսակցության համար, որոնցից նացիոնալիզմը՝ «միլլիթեշիլիկ», առաջին ջահն է: Մեջբերումներ գրքից. «Նացիոնալիզմ՝ նշանակում է ան-

սահման սեր թուրք ազգի նկատմամբ: Թուրք՝ ասել է այն, որ երբեք ուրիշ մի ցեղի չի ուզեցնա պատկանել, որ ճշմարտացիորեն իրեն թուրք է զգում և իրեն նվիրում թուրքականության...»:

Երկրորդ «ջահը» կոչվում է «Ուլքյուջուլուք», «իդեալիզմ»: Մա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ մարդկությանը պետք է ծառայի նախ և առաջ իր ազգին ծառայելով:

Երրորդ ջահը կոչվում է «Ահալչիլիկ», «բարոյականություն»: Հասարակությունը կարող է առաջանալ միայն թուրքական բարոյականությամբ, այսինքն՝ մի բարոյականությամբ, որ համընկնում է թուրքական ավանդույթների ու հոգեբանության հետ: Մյուս գործունեության կետերը հետևյալներն են՝ «Թուլլումչուլուկ»՝ համայնականություն: Սեփական գործառնությունը պետք է պաշտպանվի ու քաջալերվի պայմանով, որ գործատերերի ու գործավորների միջև «վտանգավոր» հակասությունները կանխարգելվեն: Հետո՝ «Իլլիմչիլիք», գիտություն-գիտականություն: Ամեն ինչ պետք է ուսումնասիրվի ըստ գիտական չափանիշների: Ապա «Հուրիթեշիլիկ», որը նշանակում է անձի ազատության երաշխավորում, խոսքի ազատություն, սեփական ձեռնարկի ազատություն և ձերբազատություն անապահովությունից, լարվածությունից ու չքավորությունից: Յոթերորդ ջահը կոչվում է «Քոչլուլուկ», այսինքն՝ հոգատարություն գյուղերի ու գյուղացիության նկատմամբ, այսինքն՝ գյուղերը զարգացնել ինդուստրացմամբ ու տեխնոլոգիաների մատակարարմամբ: Ութերորդ՝ «Գելիշմեշիլիք վե հալչիլիկ», «զարգացում և ժողովրդավարություն»: Գոյություն ունեցող իրավիճակի նկատմամբ դժգոհությունն իրականում հիմք է հանդիսանում առաջադիմության ու զարգացման: Իսկ այդ զարգացումը պետք է իրականանա ըստ թուրքական ավանդույթների և թուրքական հոգեբանության: Ժողովրդավարություն, այսինքն՝ ամեն ինչ ժողովրդից, ժողովրդի համար և ժողովրդի միջոցով, ասել է թուրք ժողովրդի:

Վերջապես, վերջին ջահը՝ «Էնդուստրիլիլիկ վե թեքնիլիլիկն» է, այսինքն՝ ջանք դեպի ինդուստրացում ու ճարտարվեստ: Միայն ինդուստրացիայի ու տեխնոլոգիայի քաջալերմամբ հնարավոր է մուտք գործել ատոմային ուժի ու տիեզերագնացության ժամանակաշրջանը: Այսպիսով, Թուրքիան կարող է հզորագույն զերպետություն դառնալ:

Մեհմեթը ներս է մտնում ու գնում նստում սրահի բուֆետի շուրջ:

— Մի՞թե Թուրքիայում դուք երկու դրոշակ ունեք,— հարցնում է բուֆետի հովանդացի սպասարկուհին Մեհմեթից:

Նա զարմացած նայում է բեմահարթակի պատի վրա կախված երկու մեծ դրոշակների՝ մեկը՝ Թուրքիայի, մյուսը՝ Էմ. Հա. Փե.—ի:

— Այն դրոշակը, որ երեք կիսալուսնով է, դա կուսակցության դրոշ է,— բացատրում է Մեհմեթը:

— Ո՞ր կուսակցության:

— Այն կուսակցության, որին համակրում է այս միությունը:

Բարձրախոսից լավում է նախագահի ձայնը. «Բարի՛ եղեք ձեր տիկիհներին ու երեխաներին զանգահարել: Մեկ քառորդից սկսելու ենք»: Բուֆետում նստած է մի երիտասարդ՝ երկար մազերով, որ ներկայանում է որպես Մեհմեթ: Դժգոհ է, որ շատ քիչ մարդ է եկել. մոտավորապես քսան հոգի. «Մենք մեզ ջարդում ենք մարդկանց համար, մի բան կազմակերպում, ու ոչ ոք չի գալիս: Հարկն էր՝ մահակով գնայինք տներն ու կաֆեներն ու ասեխնք՝ հայդե՛, վեր կացեք, եկեք: Էն ժամանակ էդ թուրքերը կգային»:

— Ուրիշ թուրքական միություններ էլ կա՞ն Օսում,— հարցնում է Մեհմեթը:

— Կոմունիստներն ու Փե. Քա. Քա.—ի տեղորիստներն ունեին մի ակումբ, կարծես Օ. Թ. Ի. Դ. էր կոչվում: Բայց դա հիմա գոյություն չունի, որովհետև իրենք իրենց մեջ վեճ ունեին:

Մեհմեթը գիտի Օ. Թ. Ի. Դ.—ի (Օսի թուրքական բանվորական միության, «Օս Թուրքիյեյի Իշխիլեր Դերնեդի») մասին: Հավանական է, որ կոմունիստներին համակրող մի քանի մարդ նրանց մեջ եղած լինի, բայց Օ. Թ. Ի. Դ.—ը «կոմունիստական — Փե. Քա. Քա.—ական» մի ակումբ անվանելը չափազանցություն է: Մի երիտասարդ ձեռքով խփում է Մեհմեթի գրուցակցի ուսին:

— Կոնսուլը եկավ,— ձայն են տալիս:

Կոնսուլը: Կազմակերպիչների մեջ իրարանցում է առաջանում: Երեք տղամարդ կոճկում են իրենց բանկոններն ու շարժվում դեպի մուտք: Մի երկարաբոյ մարդ՝ սև կոստյումով, ներս է մտնում: Հազիվ երեսունհինգ տարին լրացած լինի: Կազմակերպության երեք տղամարդ առաջնորդում են նրան:

— Սա հո կոնսուլը չի,— հարցնում է Մեհմեթը կարգապահներից մեկին:

— Ճիշտ է, կոնսուլը պետք է շտապ մի ժողովի գնար: Սա վիցե-կոնսուլն է:

Համարյա բոլոր ներկաները միանգամից ոտքի են կանգնում: Վիցե-կոնսուլ Բորա Քերիմօղլուն, շրջապատված երեք ուղեկցողներով, իր պատվո տեղն է գրավում: Կանայք ու երեխաները սկսում են սրահ մտնել: Գնում նստում են սրահում հատկացված առանձին մի մասում: Օսի թուրքական մշակութային միության նախագահ Մեհմեթ Քուրթբաշը բարձրանում է բեմ: Խոսքն ուղղում է ներկաներին.

— Մշակութային կենտրոնները միշտ կարևոր են եղել մեր ինքնությունը պահպանելու համար: Այդ պատճառով մենք որոշեցինք, որ Օսի թուրքերի համար մի այսպիսի կենտրոն ստեղծենք: Մենք մեր ամենակարևոր պարտականությունը թուրքական հարուստ մշակույթի տարածումն ենք համարում: Թուրք ժողովրդի միասնականությունը, որը դուր չի գալիս ոմանց, պետք է ամուր հիմքերի վրա դրվի: Մենք ինչ էլ որ լինենք՝ ավելիք, սուննի, քուրդ կամ մի ուրիշ բան, միասնաբար կազմում ենք մեկ թուրք ժողովուրդ: Թե՛ մեր ներսից և թե՛ դրսից, մեր ժողովրդի թշնամիները փորձում են արհեստական հակասություններ ստեղծելով՝ մեզ թուլացնել: Որպես նացիոնալիստներ՝ մենք պարտավոր ենք դրա դեմ պայքարել:

Խոսք է առնում նաև վիցե-կոնսուլ Քերիմօղլուն: Նա շնորհավորում է Օսի թուրքերին՝ իրենց նոր միության համար և շեշտում հյուսիսատեսարանի պատրաստականությունը՝ օգնելու իր հայրենակիցներին.

— Մեր կառավարությունն ամեն ինչ անում է Ձեզ ավելի լավ ծառայելու համար: Վստահեք ձեր կառավարությանը: Մենք ամեն ինչ անում ենք խոչընդոտներն արագորեն վերացնելու համար: Մեր կառավարությունը միշտ ձեր կողքին է, հիմա և միշտ: Կարող եք դրանում վստահ լինել: Մենք գնահատում ենք հատկապես այսպիսի հավաքներ-միջոցառումների կազմակերպումը, քանզի դա իրար շուրջ է բերում մեր հայրենակիցներին:

Իսկ ինչպիսի՞ ոեակցիա է ցուցաբերել Օսի քաղաքապետարանը այս նոր միության նպաստի դիմումագրի վերաբերյալ: Իր

դիմումագիրն առավել ազդու դարձնելու համար միությունը ստորագրությունների մի ցանկ է հանձնում քաղաքապետարանին: Յանկը պարունակում էր 174 ստորագրություն՝ Օսում բնակվող թուրքերից, որոնք պահանջում էին նպաստ՝ իրենց միության համար: Համաձայն քաղաքապետարանի ներքին մի աղբյուրի, ստորագրությունների ցանկը ներկայացվել է ոստիկանությանը: Քաղաքապետարանն այն կարծիքին է, որ ստորագրությունների ցանկում, հավանաբար, գտնվում են ման հանցագործներ: Նույն աղբյուրը տեղեկացնում է, որ այս դիմումագրի կապակցությամբ, քաղաքական հետախուզական ծառայությունից մի աշխատող նպաստի բաժին եկավ, վերցրեց թղթածրարներն ու ասաց.

— Ես ուզում եմ, որ սրանք իրենց նպաստն ստանան: այս ձևով հսկողությունն ավելի հեշտ է...:

Երբ խնդրո առարկա քննիչից այս մասին հարցնում ենք, նա ամեն ինչ հերքում է, բացի նրանից, որ նա Օսի քաղաքապետարանում պաշտոնյաների հետ խոսել է այս խումբ մարդկանց (թուրքերի) «նպաստի հարցի կապակցությամբ»:

Այդ ո՞ր ժամանակից քննիչները նպաստի հարցերում խորհրդատու դարձան:

— Դա զարմանալու բան չի,— պատասխանում է քննիչը:

Ուրիշ բան մերժում է նա ասել:

1 Խոսքը «Մեկներտ» կոչվող աշխատատեղի գրադեցնողների մասին է: Այս աշխատատեղիներն ստեղծվել են ժամանակի սոցիալ ապահովության նախարար Մեկներտի (Բանվորական կուսակցությունից) նախաձեռնությամբ: «Մեկներտ աշխատատեղիներն», իրոք, մի կարևոր տնտեսական պահանջ չեն բավարարում, այլ պարզապես ստեղծվել և ֆինանսավորվում են պետության կողմից նվազ շանս ունեցող գործազուրկներին աշխատանքով ապահովելու համար:

2 – Übermensch

IV. Մշակութային պատերազմ


«Կանգնե՛ք, զգա՛ստ»

Սա իրո՞ք մի անմեղ տոնական միջոցառում է

«Դու թո՞ւրք ես, թե՞ ոչ»

Ո՞վ է Ալիարսլան Թուրքեշը

«Մենք՝ Եվրոպայի թուրքերս...»

—  Ե՛, ապե՛ր, դո՞ւ էլ էստեղ ես,— ասում է Մեհմեթին Թուրքական դեմոկրատական երիտասարդական միության մշտական այցելուներից մեկը:

— Չի՞ կարելի,— հարցնում է Մեհմեթը:

— Ինձ սխալ մի՛ հասկացիր, բայց ես քեզ երբևէ էսպիսի մի հավաքում չեմ տեսել:

Զրույցը տեղի է ունենում Ամստերդամ–Օստ քաղամասի «Հեթ Բավոհաուս» կոչվող փոքրամասնություններին հատկացված հասարակական–մշակութային կենտրոնի մուտքի առջև: Նախքան ներս մտնելը, Մեհմեթը ենթարկվում է մարմնական խուզարկման: Մեհմեթի դուրը չի գալիս դա:

Մեհմեթն ուզում է մի միջոցառման ներկա գտնվել, որ «Թուրքիյե» օրաթերթում ծանուցվել է որպես մի «տոնական միջոցառում», ուր թուրք արվեստագետները ելույթ պիտի ունենան: Այս տոնական միջոցառումը, որը տեղի պիտի ունենար 1966 թվի ապրիլի 5–ին կազմակերպել էր թուրքական ֆեդերացիան:

Սկզբում թերթը հայտարարել էր, որ տոնախմբությունը տեղի կունենա Բելամիստրաթ փողոցում գտնվող թուրքական մշակութային կենտրոնում: Իսկ երբ մենք զանգահարեցինք մշակութային կենտրոն, մեզ ասացին, որ որոշվել է, որ միջոցառումը Հեթ Բավոհաուսի սրահում տեղի ունենա:

— Թուրքական մշակութային կենտրոնը շատ փոքր է,— ասել էր կենտրոնի մի խոսնակ:

Մեզ համար կարևոր հարցն այս էր՝ արդյոք Մեհմեթը որպես համակրո՞ղ պիտի գնա այս միջոցառմանը: Բայց հավանական է, որ այնտեղ հանդիպի մարդկանց, որոնք իրեն ճանաչում են որպես լրագրող:

Համարձակ մի ձեռնարկ:

Երբ Մեհմեթը խուզարկվում է ու ներս մտնում, նրան դիմավորում է մաքուր հագնված մի երիտասարդ: Աչքի է ընկնում նրա փողկապը՝ Գորշ Գայլի նշանով: Նրա բաճկոնի օձիքին փակցված է մի կրծքանշան՝ «Գյորևլի» (կարգապահ) պիտակով: Նրա հետևում կանգնած երիտասարդը, որը տոնս է վաճառում, մմանապես մաքուր հագնված է:

Սրահի այն մասը, ուր բեմն է, տակավին փակ է: Նախասրահում բիլիարդի մի սեղան կա, որի վրա կուտակված են Էմ. Հա. Փե.—ի քարոզչական նյութերը: Շուրջը հավաքված են մոտ տասնհինգ երիտասարդ թուրքեր:

Մեհմեթը գտնում է մի հարմար անկյուն՝ բուֆետի մոտ, ուր երկու հուլանդացի թեյ ու սուրճ են մատուցում: Կազմակերպիչները շտապ այս ու այն կողմ են գնում: Սրանց մեջ է թուրքական հեռուստակայան ԹՈՍ—ի նախագահ և Թե. Դե. Ե. Վե.—ի վարչության անդամ Աբդուլլահ Սարին: Մեհմեթը փորձում է նրա ուշադրությունը գրավել.

— Բարև ձեզ, պարոն նախագահ:

— Կներես,— ասում է նախագահ Սարին,— ես տեսա, որ ներս մտար, բայց տեսնո՞ւմ ես այստեղ ինչ իրարանցում է, բարո՞վ ես եկել:

— Այսպիսի մեծ բան կազմակերպելը, բա ի՞նչ ես սպասում,— ասում է Մեհմեթը:

— Հա, ամեն ինչ մեկ անգամից թափում են գլխիդ: Այս բոլորը կարճ ժամանակում պետք է գլուխ բերեին:

— Բայց դեռևս ոչ ոք չի եկել:

— Հա, բայց մեծ մասը մի քիչ ուշ են գալիս,— ասում է Սարին,— նույնիսկ մեր մարդիկ դեռ բոլորը ներկա չեն:

Ժամը յոթին, այսինքն՝ մեկ ժամ հայտարարված ժամկետից անց, ծրագիրը տակավին չի սկսել: Սրահը, սակայն, սկսում է լցվել: Հիմա մոտավորապես հարյուր մարդ կա, մեծ մասամբ երիտասարդներ:

Լսվում են հրահանգներ՝ ինչպես բանակում:

— Այի՛, աթոռները շարիր:

— Ձե՛ն, դու ուտելիքները դասավորիր:

— Երգիչների համար ջուր բերեք:

Հրաման տվողներին «Բաշկան» են կոչում: Նրանցից մեկը

Ամստերդամի թուրքական մշակութային կենտրոնի նախագահ Կադիր Այազն է: Մյուս «Բաշկանը» թուրքական ֆեդերացիայի փոխնախագահ Ահմեդ Ջեյհանն է:

— Նախագահը գալիս է,— հայտարարվում է:

Մեռելային լռություն է տիրում: Բոլորը ոտքի են կանգնում ու հայացքներն ուղղում դեպի մուտքը: Ոմանք արագ իրենց ժակետն են կոճկում: Մուտքի մոտ գտնվող մարդիկ արագ մի կողմ են քաշվում:

Շրջապատված իր շքախմբով՝ ներս է մտնում Հիքմեթ Յիլդիզելին: Ամբողջովին շագանակագույն կոստյում է հագին: Աջ ու ձախ բոլորին բարևելով՝ շտապում է դեպի իր համար ապահոված աթոռը: Ոմանք խոնվում են նրա շուրջ, ուզում են ձեռք տալ նրան: Սրահի մնացած մասը սևեռված հայացքով նրան է նայում: Այժմ ավելի ծանր լռություն է, քան նախքան նրա գալը:

— Ե՞րբ է սկսվելու,— հարցնում է Մեհմեթն իր կողքի հարևանից:

— Նախագահն արդեն եկել է, հիմա կսկսեն,— ասում է մարդը:

— Բայց կարող էին առանց նրան էլ սկսել:

— Տեսնում եմ, որ դու լավ տեղյակ չես,— ասում է մարդը:— Ուլքյուջուների մոտ առանց նախագահի ներկայության կամ առանց նրա հրամանի, ոչինչ չի սկսվում:

— Դա մեծերին հարգելու համա՞ր է:

— Բա, իհարկե, մեր հաջողությունն էլ հենց դրա մեջ է: Երբ մեր Բաշբուրը կամ մեր նախագահները մի բան են հրամայում, մենք անմիջապես կատարում ենք:

Այստեղ, այս միջոցառման ընթացքում, մարդիկ սովորական ձեռքսեղմումով իրար չեն դիմավորում, այլ Գորշ Գայլի հատուկ ձևով են իրար ձեռքը սեղմում: Մեհմեթի զրուցակիցը նրան ցույց է տալիս, թե ինչպե՞ս պիտի անել: Բռնում է Մեհմեթի աջ ձեռքը և իր ճկույթը մտցնում նրա ճկույթի արանքը: Ցուցամատն ու միջամատը ինքնաբերաբար ձգվում են առաջ, բթամատերը ցցվում են վեր, իսկ մատանու մատով տակից իրարու ձեռքերը պինդ պահում են: Այդպիսով, երկու Գայլերի գլուխները միախառնվում են իրար:

Թուրք տղամարդիկ, մեկմեկու այտերը համբուրելով, ողջու-

նում են իրար: «Իդեալիստները», սակայն, իրենց ճակատն են շփում իրար ճակատի, մեկ՝ աջ կողմից, մեկ՝ ձախ կողմից:

— Այսպիսով, ուզում ես ասել, որ գլուխներդ միացնում եք իրար լավ նպատակի համար, — բացատրում է Մեհմեթի գրուցակիցը:

— Ուլքյուջուլե՛ր, — քնդում է սրահից ներս:

— Գրավե՛ք ձեր տեղերը:

Արդեն մոտավորապես երկու հարյուր մարդ է հավաքվել: Բենը տակավին փակցված է սև մի կտավով: Բենի վերևի մասում տեղադրված է մի մեծ ցուցապաստառ այս տեքստով՝ «Թուրքական ֆեդերացիա»: Դրանից աջ կա մի ուրիշ ցուցապաստառ, որի վրա նշված է մի տող Հաջի Բեկթաշ Վելիի բանաստեղծությունից՝ «Բիր օլալիմ, իրի օլալիմ, դիրի օլալիմ», որի ազատ թարգմանությունն է՝ «Մեկ լինենք, մեծ լինենք, ուժեղ լինենք»:

Ի՞նչ գործ ունի Հաջի Բեկթաշ Վելիի բանաստեղծությունն այստեղ: Նա մի Ալևիք մտավորական ու գրող էր: Ալևիքներն, իհարկե, մուսուլման են, սակայն ոչ արմատական ու մոլեռանդ և վստահաբար «իդեալիստների» կողմից էլ սիրված չեն: Բազմաթիվ անգամներ, Գորշ Գայլերը Թուրքիայի Ալևիքների համայնքում արյունալի դեպքերի առիթ են տվել: Այդ արյունահեղությունների գագաթնակետը Կահրաման-մարաշի 1978-ի դեկտեմբեր 4-ի պոգրոմն էր, որի ընթացքում տասնյակ Ալևիքներ զոհվեցին, ու մեծ թվով ուրիշներ վիրավորվեցին: Այս արյան հեղեղներն ստեղծող կասկածյալների ցանկում էին գտնվում Էմ. Հա. Փե-ի բարձր ղեկավարության անդամներ:

— Այս Հաջի Բեկթաշ Վելին Ալևիք չէ՞ր: Ինչո՞ւ են նրա կարգախոսներն այստեղ ցուցանակի վրա դրել, — ասում է Մեհմեթն իր մոտ նստողին:

— Նա թուրք էր. դա է հիմնականը, ուզում է Ալևիք լինի, կամ ոչ: Մրանք բառեր են, որ ամեն մի թուրք իր սրտում պիտի պահի:

— Ինչո՞ւ:

— Հալո, դու թո՞ւրք ես, թե՞ ոչ:

— Իհարկե:

Մեհմեթի հարևանն իր աջ ձեռքը բռունցք է անում ու ասում.

— Լսի՛ր, բոլոր թուրքերի համար, ուր էլ որ լինեն աշխար-

հում, սա է կարևորը՝ մենք պետք է մեկ լինենք, մեծ լինենք և ուժեղ լինենք: Այս կարգախոսը քեզ համար էլ է. այսպիսի հիմար հարցեր էլ չտաս:

Մրահում լավում են կանանց ու երեխաների ձայներ: Նոր են հասել ու թվում է, թե քայլում են դեպի պատշգամբ՝ իրենց տեղերը գրավելու: Նրանք ներս են մտել հետևի դռնից: Տղամարդկանց բաժնից հնարավոր չի կանանց տեսնել: Միայն, եթե աթոռումդ շուռ գաս և ուղիղ դեպի վեր նայես, ճաղաշարից ցցված պատահական մի երկու կանանց գլուխ կարող ես տեսնել:

Սև պաստառը մի կողմ է գնում, ու բենը բացվում: Խորքում՝ պատին, տեսանելի է Էմ. Հա. Փե.-ի երեք կիսալուսնով զարդարված Ալիարսլան Թուրքեշի հսկայական դիմանկարը:

Բաշբուրը, իսկական անունով՝ Հուսեյին Ֆեյզուլլահ, ծնվել է 1917 թվին, Կիպրոսում: 1938 թվին նա դարձավ բանակի սպա: Իր անունը փոխեց Ալիարսլան Թուրքեշի, որովհետև այդ անունը լավ էր հանընկնում իր մտքերին ու գաղափարներին: Ալիարսլան, այն սուլթանի անունն է, որը 1071-ին Բյուզանդական կայսրությանը վճռական պարտության մատնեց: Այս սուլթանն, այդպիսով, Օսմանյան կայսրության հիմքը դրեց: Իսկ Թուրքեշ՝ նշանակում է «թուրքերի ընկեր-բարեկամ»:

Իր երիտասարդ տարիքից, Թուրքեշը գրավվել է, այսպես կոչված՝ պանթուրքիզմի գաղափարով: Այս գաղափարական հոսանքը անցյալ դարում ձևավորվեց հիմնականում որպես մշակութային մի շարժում՝ թուրք մտավորականների շրջանակներում: Նրանք ժամանակին ականատես էին եղել Օսմանյան գործող կայսրության փլուզմանն ու նրա՝ «Բոսֆորի ափին հիվանդ մի ծերունու» վերածվելուն: Նրանց՝ պանթուրքիստների կարծիքով, պետք էր մի նոր ու մեծ կայսրություն ստեղծել բոլոր թրքախոս ժողովուրդներից: Ահա այդ քաղաքական-մտավորական մթնոլորտում էր, որ մեծացավ Թուրքեշը:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքին, Թուրքեշը ցանկանում էր միանալ Հիտլերին՝ թուրքական մեծ կայսրությունը իրականացնելու հույսով: Թուրքեշը չէր թաքցնում, որ Հիտլերի գաղափարները, ինչպես, օրինակ, ցեղերի-ռասաների մասին նրա հայեցողությունը իրեն դուր է գալիս: Այնտեղ, ուր Հիտլերը

գերմանացիների մասին խոսում էր որպես «բարձր-ազնիվ» ցեղ, Թուրքեշը գործածում էր «Ասիլ Թուրքեր» (իսկական բուրբ) բառակապակցությունը: Նրա կարծիքով, թուրքերն աշխարհի «ամենաազնվացեղ ժողովուրդն» են:

Թուրքեշը «Ուլքուջու» շարժման ստեղծման օրերից, որը տեղի ունեցավ պատերազմի տարիներին, ներկա էր շարժման մեջ: Այդ ժամանակ ուլքուջուներն իրենց կոչում էին մացիոնալ-իդեալիստներ: 1944-ի մայիսին էր, որ դրսի աշխարհը տեղեկացավ այս շարժման մասին: Այդ օրը դատական մի պրոցես սկսվեց թուրք մացիոնալիստների և պանթուրանիստների (թուրքերենով՝ «Թուրանչի»), այսինքն՝ Մեծ Թուրան գաղափարի համակրողների դեմ: Դատվողների մեջ էր շարժման ղեկավար ու ոգեշնչող Նիհալ Աթսիզը և Թուրքեշը: Նրանք մեղադրվում էին ապօրինի կազմակերպության ստեղծմամբ, որը նպատակ ուներ կառավարությունը տապալել, ինչպես նաև պետության դեմ գրգռություն անելով ու ցեղապաշտության (ռասիզմի) տարածումով:

Դատավարությունն աննկատ չանցավ: Անկարայում հազարավոր համակրողներ բողոքի ցույց կատարեցին իրենց ղեկավարների դատման դեմ:

Ժամանակի նախագահ Իսմեթ Ինույուն, այսինքն՝ Աթաթուրքից հետո երկրորդ մարդը Թուրքիո Հանրապետության հիմնադրման գործում, զգուշացրեց իր երկրի քաղաքացիներին «պանթուրքիզմի վտանգի» կապակցությամբ: 1944-ի մայիսի 19-ին, նա այսպես հայտարարեց՝ «Թուրանչիները գտել են մի ռեցեպտ, որը թուրք ժողովրդի հարաբերությունները իր հարևանների հետ անդարմանելի կերպով վնասելու է: Հանրապետական կառավարությունն իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները գործի է դնելու, որպեսզի թուրք ժողովրդի ճակատագիրն այս անխիղճ ու անամոթ խռովարարների ձեռքում չընկնի: Մենք ամբողջ ուժով կպաշտպանենք մեր հայրենիքը այսպիսի սադրանքների դեմ:

Չնայած նախագահի այս կտրուկ ու վճռական հայտարարությանը, դատարանն այս «խռովարարներին», ներառյալ Թուրքեշին, ազատ արձակեց: Գորշ գայլերը մայիսի 3-ը շարունակում են տոնել որպես պանթուրանիզմի, Մեծ Թուրանի գաղափարի օր: Բոլոր «դրսի թուրքերը», հատկապես նրանք,

որոնք բնակվում են նախկին խորհրդային հանրապետությունների տարածքում, պետք է «ազատագրվեն»: Մեծ թվով Գայլեր խոսում են մույնիսկ Օսմանյան կայսրության վերականգնման մասին, որը սփռվում էր «Վիեննայից մինչև Չինական պարիսպը»: Այդ հսկայական տարածքում, պնդում են նրանք, «բոլորը թուրք են, մույնիսկ չեչենները»: Մայիսի 3-ը նրանք տոնում են իրենց այն նպատակի վերահաստատման համար, որ Թուրքիային դարձնեն մի գերուժ և վերջնականապես մույնիսկ աշխարհի միակ տերությունը:

1944 թվի դատավարությունից հետո, Գորշ Գայլերն սկսեցին կազմակերպվել մշակութային միություններում և լույս ընծայել իրենց թերթերն ու մամուլը: Երկրորդ աշխարհամարտին հաջորդող տարիներին, Ալվարսլան Թուրքեշը մի որոշ դեր ունեցավ շարժման մեջ, սակայն շարժման առաջնորդն ու ոգին Նիհալ Աթսիզն էր: Այս տարիներին շարժման պայքարի սուր ծայրն ուղղված էր «կարմիր վտանգի» դեմ: 1944 թվին ազատ արձակվելուց հետո, օֆիցեր Թուրքեշը վերադարձավ բանակ: 1948-ին նա ուղարկվեց Միացյալ Նահանգներ, ուր ստացավ զինվորական ու տնտեսական կրթություն: Այնուհետև, նա անցավ Գերմանիա՝ միջուկային պատերազմի ռազմավարման ուսում ստանալու համար: Հիսունական թվականներին նա արդեն ներկայացնում էր Թուրքիան՝ ՆԱՏՕ-ում: 1960 թվին նա գնդապետի աստիճան ուներ: Ահա այս տարի նա մասնակցեց մայիսի 7-ի պետական զինվորական հարվածին: Պետական հարվածից հետո կառավարության մեջ ընթացող ներքին պայքարից նա բավական թեթև վնասով դուրս պրծավ: Մյուս տասներեք համախոհների հետ միասին նա «աքտրվեց» արտասահման դիվանագիտական պաշտոնով: Թուրքեշին ուղարկեցին Հնդկաստան:

1965-ին, երեք ամիս իր վերադարձից հետո, Թուրքեշը դարձյալ մասնակցեց պետական հարվածի մի փորձի, սակայն այս անգամ ձախողվեց: Այդ հարվածի ղեկավարներից երկուսը մահվան դատապարտվեցին, սակայն Թուրքեշը այս անգամ էլ փորձանքից անվնաս դուրս եկավ: Իբր թե փաստերի չզոյության պատճառով նա ազատ արձակվեց:

1965-ին, երեք ուրիշ նախկին քստրյալների հետ միասին

մտավ Գյուղացիների ազգային հանրապետական կուսակցության Ջե. Բա. Էմ. Փե. – Ջումհուրիեթչի Զեյլու Միլլեթ Փարթիսի մեջ: Ընդամենը երկու ամսվա ընթացքում կարողացավ կուսակցությունն իր հակակշռի տակ առնել: Նա դարձավ կուսակցության ղեկավար և սկսեց Ջե. Բա. Էմ. Փե.–ն ըստ իր հայեցողությունների, կադապարել: Այս պրոցեսը 1969–ին պսակադրվեց կուսակցության վերանվանմամբ: Կուսակցությունն այնուհետև կոչվեց Ազգային կամ ազգայնական շարժման կուսակցություն (Միլլիեթչի Հարեբեթ Փարթիսի, հապավված՝ Էմ. Հա. Փե.): Կուսակցության նոր նշանը կազմում էր երեք կիսալուսին: Թուրքերը ղեկավարում էր կուսակցությունը երկաթյա բազուկներով:

Յոթամասունական թվականներին Էմ. Հա. Փե.–ն մասնակցում էր կառավարության մեջ: Ներկա «Բիֆահ» կուսակցության ղեկավար Էրբականի ներքո, նա զբաղեցնում էր փոխնախագահի պաշտոնը: Այս տարիներին, Էմ. Հա. Փե.–ականները զնալով ավելի ազդեցիկ արշավանքներ ձեռնարկեցին ընդդեմ «կոմունիստների»:

Ութսունական թվականների սկիզբը, Ուլքյուջու շարժման համար շատ հաջողակ ժամանակաշրջան չէր: 1980 թվականի սեպտեմբերի 1–ի պետական հարվածից հետո, բոլոր քաղաքական կուսակցությունները, ներառյալ Էմ. Հա. Փե.–ն, արգելվեցին: Ինքը՝ «մեծ ղեկավարն» էլ մի քանի տարի նստեց: Այդ կացությունը նրան դառնացրեց: Նրա կարծիքով, զինվորականներն իր հանդեպ անարդար էին գտնվել:

— Մեր գաղափարները իշխում են, սակայն մենք նստած ենք բանտում,— ասում էր նա:

Ութսունական թվերի կեսին քաղաքական արգելքները վերացան: Այն ժամանակ կուսակցությունն սկսեց իրեն վերակազմակերպել:

Թուրքերը վերադարձավ քաղաքական դաշտ և այս անգամ ամեն ինչն ուժեղ հսկողության տակ առավ: Ինչ որ հրամայում էր, պետք էր կատարել: Իր Ուլքյուջույե Նոթլարում այսպես է գրում. «Ո՛չ թե այն, ինչ անձնական տրամաբանություն է ասում՝ ճիշտ է, այլ այն, ինչ ղեկավարն է հրամայում: ... Հետևե՛ք ինձ: ... Եթե ես այս պայքարում որևէ պատճառով ընկնեմ, դուք վերցրե՛ք դրոշն ու առաջ քայլեք: ... Եթե ես շուտ գամ ու հետ նահան-

ջեմ, խփե՛ք ինձ, սպանե՛ք: ... Խփե՛ք ու սպանե՛ք բոլոր նրանց, որոնք պայքարել են մեր նպատակի համար և հիմա շուտ են գալիս»: Բաշբուղ, Մեծ ղեկավար:

Մի ամբողջ երեկո Բաշբուղի դիմանկարն իշխում է Ամստերդամ–Օստ շրջանի Բավոհաուս կենտրոնի սրահի վրա: Հասարակական մշակութային կենտրոնի հոլանդացի նախագահը, սակայն, այն կարծիքին է, որ տեղի է ունենում մշակութային մի հասարակ միջոցառում:

Արդուլլահ Սարին բարձրանում է բեմ և ձեռքը բարձրացրած՝ Գորշ Գայլի բարև է տալիս: Ապա խոսքը տալիս է մի իմամի, որին ներկայացնում է որպես «Ուլու–Չամի» մզկիթի Իմամ Արդուլլահ: Այն ներկաները, որոնք թափահարում են իրենց Գորշ Գայլով զարդարված դրոշները, իմամի ներկայացմամբ միանգամից դադարում են: Սրահում լարված լռություն է տիրում: Իմամը, որը կրում է մի “թաքե”՝ իր գլխին, գնում նստում է բեմի աթոռին: Արաբերեն լեզվով Դուրանից մեջբերումներ է անում և ինքն էլ համառոտ թարգմանում՝ «Որպես մուսուլման՝ մենք պարտավոր ենք աղոթել հինգ հազար ուլքյուջու – իղեալիստ նահատակների համար»:

Դուրանում գրվա՞ծ է այսպիսի բան:

Փոխնախագահ Ահմեդ Ջեյհանի բջջային հեռախոսը զանգում է: Ջեյհանը սրահից դուրս է վազում: Բոլոր ներկաները պատրաստվում են ազգային հիմնը երգելու: Ուղղածիզ կանգնում են, բաճկոնները կոճկում:

— Կանգնե՛ք զգա՛տ,— գոռում է Արդուլլահ Սարին:

Չայներիզից խշխշոցով լավում է թուրքական ազգային հիմնը: Ամեն ոք երգում է լիաթոք: Ապա ներկաներն սկսում են իրենց ձեռքի դրոշակները թափահարել: Ձեռքերը բարձրանում են վեր ու Գորշ Գայլի բարև են տալիս: «Կեցցե՛ Թուրքիան: Կեցցե՛ Բաշբուղը: Բաշբուղ Թուրքե՛շ, Մեծ Դեկավար Թուրքե՛շ»:

Երբ նախագահ Յիլդիզելին բեմ է բարձրանում, բոլորը ոտքի են կանգնում:

— Միրելի՛ իղեալիստներ, երիտասարդ Գորշ Գայլեր, գայլերի զավակներ և Գորշ Գայլ տիկիներ, մեր՝ Եվրոպայի թուրքա-

կան ֆեդերացիայի անունից ձեռք բերվող բարի գաղափարներն են մաղթում,— ասում է Յիդիզեյի:— Մենք այս երեկո ավելի մեծ բազմություն էինք սպասում, բայց, դժբախտաբար, դա մեզ չհաջողվեց, որովհետև մենք ամեն ինչ երկու օրվա ընթացքում պետք է կազմակերպեինք: Դրանով հանդերձ, դուք ձեր ներկայությամբ ապացուցում եք, որ կարիքը կա այսպիսի միջոցառումների: Հույսով, Ձեր օգնությամբ մյուս անգամ այս սրահը լեցուն կլինի:

Յիդիզեյը շարունակում է.

— Մենք՝ Եվրոպայի թուրքերս, պետք է աշխատենք՝ մեր մշակույթը, մեր լեզուն ու մեր ավանդույթները պահպանել: Պետք է բոլոր միջոցներով պայքարենք ձուլման քաղաքականության դեմ: Մշակութային աշխատանքներ, ինչպես սա, անհրաժեշտ է մեր մշակույթի ու մեր ինքնության պահպանման համար: Այս մշակութային երեկոն ինքնին ապացույց է, որ ապագայում էլ դրա կարիքն ունենք: Մեր ֆեդերացիան ամեն ինչ գործի կդնի, որպեսզի մեր երիտասարդների ձուլվելու առաջն առնվի:

Ներկաների մեծ մասը ելույթի ժամանակ մնում են կանգնած: Միայն նրանց աջ ձեռքերը, որ Գորշ Գայլի բարև են բռնած, թեթև շարժվում են օդի մեջ:

Սկսում է մշակութային բաժինը: Էմ. Հա. Փե.—ի կարգախոսների ու լոզունգների թեմաներով բանաստեղծություններ է ասվում: Երգերի մեծ մասը քաղաքական պայքարի մասին է: Արդուլահ Սարին մեծ ճիգով ու նեղությամբ ղեկավարում է ուլքյուջուլների ամենահայտնի ռազմերգերից մեկը՝ «Շանի Բույու. Օսման փաշա» (Օսման փաշա, գործերդ մեծ ...):

— Ի՛նչ ուլքյուջուլներ,— իր երգը կտրում է Սարին՝ վրդովված,— երգեցե՛ք ինձ հետ:

Այս միջոցառմանը ելույթ ունեցող երգիչների մեծ մասին ներկայացնում են որպես «մեր գերմանական ֆեդերացիայի երգիչներ», ինչպես Ջան Ջանդարը, որը հասարակ ժողովրդական երգեր է երգում իր սազի նվագակցությամբ: Օզան Չոշգունը իր հագուստով Գորշ Գայլերի աստղ Ազան Արիֆի ոչ շատ հաջող կրկնօրինակն է: Նրա գործը կարելի է նկարագրել երաժշտության վերածված Էմ. Հա. Փե.—ի կարգախոսներ:

Ներկաների ուշադրություն նվաճողն այս երեկո, սակայն,

Մուստաֆա Յիդիզեյի գաղափարն է, որը եկել է Թուրքիայից: Երբ նա սկսում է երգել իր «հիթը»՝ «Թուրքիյեմ...» (Իմ Թուրքիա), ամբողջ սրահը դրդում է:

Բավոհասուսի այս միջոցառումը մի պատահական, առանձին ծրագիր չէ: 1996 թվի գարնանը Եվրոպայի տարածքում միջոցառումների մի ամբողջ շարան է կազմակերպվել: «Թուրքիյե» թերթում ծանուցված հավաքները տարբերվում են մշակութային երեկոներից մինչև «սեմինարներ», ուր Թուրքիայից հրավիրված պրոֆեսորները ելույթ են ունենում:

Գորշ Գայլերը ներկայանում են նախընտրաբար «թուրքական մշակույթի» դիմակի հետև: Թուրք ազգային գաղափարախոսության տեսանկյունից, թուրքական մշակույթն աշխարհում, ուր էլ որ լինի, պետք է պահպանվի: Այլ մշակույթներով տարվելը, թուրքերի համար անթույլատրելի է: Այնուհետև, մշակույթն օգտագործվում է թուրքերին՝ ազգայնամուլ գաղափարի կողմ շահելու համար: Երաժշտությամբ, պրոպագանդա ու հեթափաթներով ջանում են համակրողների շարքերն ընդարձակել: Այսպիսով, չարաշահվում է հասարակ թուրք մարդկանց՝ հարագատ ավանդույթներ ու սովորություններ կիրառելու պահանջը:

Այս իդեալիստներն իրենք խոսում են «մշակութային պատերազմի» մասին: Բաշբուր Թուրքեշի «Թեմել Գյորուշլեր» գրքում կարդում ենք՝ «Հենց այսօր մեր օրերին, երկրագնդի ամբողջ տարածքում մղվում է չհայտարարված, բայց ահավոր մի պատերազմ՝ տարբեր ազգերի միջև, պատերազմ մշակույթների միջև: Կարելի է մի ազգից բազմաթիվ բերդեր ու ամրոցներ գրավել, բանակին բազմիցս պարտության մատնել, բայց այնքան ժամանակ, որ նրա սիրտն ու հոգին չես գրավել, այդ ազգն անվաճելի է: Անժխտելի իրականություն է, որ մարդ այն ազգի մասն է կազմում, որին ինքը նախընտրում է պատկանել: Մշակութային պատերազմում յուրաքանչյուր ազգ ջանում է ուրիշ ազգերի լեզուն, կրոնը, ավանդույթները, ազգային ու հոգեկան արժեքները ոչնչացնել և դրանք փոխարինել իր մշակութային արժեքներով»:

1 մի տեսակ գլխարկ, որ գործածում են աղոթելու ժամանակ:

V. Բազմաֆունկցիա մզկիթ

«Անհավատների շրջանակից հեռու մնացեք»

Մզկիթը քաղաքական գործունեության վայր

Ապօրինի մնացողներ

Սափրիչը մազերդ կտրում է մի տասանոցի
համար

Մարդկանց ապօրինի տեղափոխում

Մատաղի տոն Չեչնիայի համար

Բավոհաուսի «տոնական միջոցառման» ընթացքում, Ուլու Ջամի մզկիթի Իմամ Աբդուլլահը կարդում էր Դուրանից: Իրականում, Ուլու Ջամի մզկիթը գտնվում է հենց թուրքական ֆեդերացիայի շենքում: Մի ուրբաթ՝ ճաշից հետո, Մեհմեթը որոշում է գնալ ու քարոզը լսել:

Այդ ուրբաթ, մոտավորապես երկու հարյուր տղամարդ ծնկաչոր նստած են մզկիթի կանաչագույն գորգի վրա:

— Բոլոր իրերն ու կենդանիները ստեղծվել են մարդ արարածի համար, և մարդն ստեղծվել է մարգարեին երկրպագելու համար,— ասում է Իմամ Աբդուլլահը: — Նրանք, որոնք չեն երկրպագում մարգարեին, անասուն են: Նրանց և անասունների մեջ տարբերություն չկա, քանզի անասունն էլ ուտում, խմում ու բազմանում է: Սիրելի՛ հավատացյալներ, ես ձեզնից խնդրում եմ հեռու մնաք այն մարդկանցից, որ Մեծ մարգարեին չեն երկրպագում:

Մի շաբաթ հետո, Իմամն իր քարոզում հայտարարում է, որ Ամստերդամում թուրքական ֆեդերացիայի ու թուրքական մշակութային կենտրոնի համատեղ համահավաք է տեղի ունենալու:

— Յուրաքանչյուր մուսուլման պետք է այս հավաքին մասնակցի,— ասում է Իմամը:— Պետք է ջանանք, որ մեր կանայք, մայրերն ու աղջիկներն էլ կանանց համար նախատեսված հավաքին մասնակցեն:

Ուլու Ջամի մզկիթի սրահում կախված են Էմ. Հա. Փե.—ի իրեններ՝ դրոշակներ, ցուցապատառներ ու պլակատներ, Օսմանյան կայսրության մի քարտեզ, Էմ. Հա. Փե.—ի ղեկավար Թուր-

քեշի ու Չեչնիայի ղեկավար Դուդանի միատեղ քաշած լուսանկարներ, թերթերի կտրոններ Թուրքեշի մասին, Բաշբուրի իմաստալից խոսքեր ու «Մեծ ղեկավարի» դիմանկարը: Սրճարանի բոլոր սեղանների վրա դրված է Գորշ Գայլերի պարբերաթերթ «Ուլքյու օջախի» համարները: Բոլոր այցելուները չէ, որ գոհ են մզկիթում առկա կացությունից: Երբ մի օր էլ Էմ. Հա. Փե.—ի հասցեին գովաբանական ճառ են ասում մզկիթում, քառասունյա մի լուրջ տղամարդ այսպես է արտահայտվում. «Ես մզկիթ չեմ գալիս կուսակցական քարոզություն լսելու»:

— Միանգամայն համաձայն եմ,— ասում է իր հարևանը:

Երբ բողոքողին համակրող ձայները շատանում են, մզկիթի պաշտոնյաներից մեկը միջամտում է.

— Սա մզկիթ է, այստեղ քաղաքականության հետ գործ չունեն:

— Այն դեպքում ի՞նչ գործ ունեն այստեղ Գորշ Գայլերի դրոշակներն ու պլակատները ու այս Թուրքեշի դիմանկարը,— ասում է բողոքող քառասունյա մարդը,— դա քաղաքականություն չի, բա ի՞նչ է:

— Մրանք թուրք ազգի սիմվոլներն են,— ասում է մզկիթի պաշտոնյան:— Այս դրոշակը մի կուսակցության չի պատկանում, դա օսմանյան ժամանակվա դրոշակն է:

— Էմ. Հա. Փե.—ի դրոշակը Էմ. Հա. Փե.—ինն է: Ինչքանով որ գիտեմ, օսմանցիներն էլ մի այսպիսի դրոշակ ունեցել են, բայց հիմա դու ինձ ուզում ես ասել, որ Թուրքեշը օսմանյան մի սուլթան էր, և որ այստեղ գտնվող Էմ. Հա. Փե.—ի պլակատներն ու թերթերն էլ այն ժամանակ գոյություն ունեին:

Մզկիթի պաշտոնյան պատասխան չունի տալու: Կատարյալ լռություն է տիրում:

— Ինչպես երևում է՝ դու օսմանցիներին չես սիրում,— ճգնում է տհաճ կացությունից դուրս գալ մզկիթի պաշտոնյան:

— Մխավում ես, ես ասում եմ, որ կրոնը չպետք է օգտագործվի քաղաքական նպատակների համար:

— Բայց չէ՞ որ շատերն են դա անում:

— Դուք էլ նրանցից եք:

— Գլխիցդ դուրս ես տալիս, եթե այսպես ես մտածում, ուրեմն այստեղ քո տեղը չի:

— Եթե չեմ սխալվում, այս մզկիթը բոլորի համար է:

— Այո՞, բայց պետք է ենթարկվել կանոններին:

— Այդ դեպքում այս վերջին անգամն է, որ այստեղ ոտք եմ դնում:

Նորից տիրում է չարաբաստիկ լռությունը, մինչև որ մզկիթի մի բարձր պաշտոնյա, որը կոչվում է Ուչլեր Աբոչ, ներս է մտնում: Գնում է դեպի սեղանը, ուր նստած է խնդրահարույց այցելուն:

— Ի՞նչ է պատահել,— հարցնում է նա, թեև արդեն տեղյակ է, քանզի առանց պատասխանի սպասելու, ցույց է տալիս մի ծանուցատախտակ, որի վրա նշված է. «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է – Մզկիթի վարչություն»:

— Հետո՞,— հարցնում է «խոռվարարը»:

— Դա ինքնին խոսում է իր մասին:

— Դուք ինձ մեղադրում եք այն բանում, որ հենց ինքներդ եք անում:

— Ինձ մեղադրելու ոչինչ չկա այստեղ: Այն բոլորն, ինչ այստեղ կախված են, թուրք ժողովրդի սիմվոլներն են. վերջ վիճաբանության:

— Եթե դուք եք անողը, դա կարելի է, իսկ եթե մեկը համաձայն չի, պետք է խեղդվի ու ձայն չհանի, տեսեք, հա՞:

Չայրացած դուրս է գնում մզկիթից:

— Արդյոք մզկիթում կարելի՞ է կուսակցական քարոզչություն տանել,— հարցնում է այցելուներից մեկը Իմամին, որը ներս է մտնում սրահ:

Իմամի պատասխանը. «Մզկիթը քաղաքական պրոպագանդայի տեղ չէ: Սակայն, եթե մի կուսակցություն լավ նպատակներ ունի ու լավ աշխատում է մեր ժողովրդի համար, մենք պետք է նրան պաշտպանենք: Այդպիսի մի կուսակցություն ոչ թե իր շահերը, այլ իր ժողովրդի շահերն է, որ միշտ իր աչքի առաջ ունի: Սա արդեն վեր է քաղաքական քարոզչությունից: Որպես մուսուլմաններ՝ մենք չպետք է դեմ կանգնենք ճշմարտության, որ կողմից էլ, որ դա ասվի»:

Ուլու Ջամիի նախկին վարչության անդամներից մեկը, որ տակավին կանոնավոր կերպով այցելում է մզկիթ, վերհիշում է. «Այս մզկիթում քաղաքականությունը երկար տարիներ ոչ մի

դեր չի ունեցել: Էմ. Հա. Փե.—ի դրոշակներն ու Թուրքեշի դիմանկարները սկսեցին երևալ այն ժամանակից, երբ հիմնադրվեց Քրդական արտոյալ պառլամենտը: Սա մեծ ցույցերի ու քայլարշավների ժամանակ էր»:

1995 թ. ապրիլի 23–ը այն պատմական օրն էր, երբ Գորշ Գայլերը դարձյալ իրենց թաքստոցից դուրս եկան: Այդ ամիս Հոլանդիայում մեծ աղմուկ էր բարձրացել Քրդական արտոյալ խորհրդարանի շուրջ, որն իր հիմնադրման համաժողովը կայացրեց Հաագա քաղաքում: Գորշ Գայլերն էլ հարմար առիթ տեսան բացարձակ ազիտացիայի համար: Այդ օրը Հաագայում թուրքերը ցույց կատարեցին այս լոզունգով. «Իմ Թուրքիա, ես քո կողքին եմ կանգնած»: Գայլերը հիմնական դեր ունեցան այս ցույցի կազմակերպման մեջ: Քայլարշավի ընթացքում նրանք նույնպես աչքի ընկան իրենց հոծ ներկայությամբ: Կես տարի անց, հոկտեմբերի 7–ին, կայացավ Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի հիմնադրման համաժողովը Հաագայում: Ուլու Ջամի մզկիթն էլ ֆեդերացիայի անդամ դառավ:

Ուլու Ջամին միայն որպես աղոթատեղի չի գործածվում: Մզկիթներն ընդհանրապես ծառայում են նաև որպես հասարակական հանդիպավայր: Ուլու Ջամիում մի խանութ կա, ուր կարող ես մթերք գնել: Այնտեղ կարող ես նստել ու մի բաժակ թեյ խմել, հեռուստացույց դիտել: Միակ հեռուստակայանը, որ այստեղ կարող ես դիտել, Թե. Խե. Էր. Թե–ն է՝ «Թուրքիյե» ազգայնական թերթի կոմերսիալ հեռուստակայանը: Այս թերթն էլ, իմիջիայլոց, միակ թերթն է, որ այստեղ կարող ես կարդալ:

Բուֆետում կա հերթ պահելու մի սարքավորում, որ կարելի է հանդիպել նաև փոստի գրասենյակում: Երբ էլեկտրական ազդանշանը հնչում է, էկրանի վրա երևում է մի համար:

Բոլոր այցելուները բուֆետապան Հուսեյինից ստանում են մի համար: Այդտեղ ներկա բազմությունը մի խառնուրդ է թուրքերից, մարոկկացիներից ու սուրինամցիներից՝ Երբ մեկի հերթը հասնում է, տեղից շարժվում ու անհայտանում է հետևի սենյակում:

Մեհմեթն էլ սպասում է իր հերթին: Երբ իր համարը հայտնվում է էկրանին, ոտքի է ելնում ու ներս մտնում:

Շեկ մազերով մի մարդ՝ քառասունի շուրջ, կանգնած, հենվել

է դռան փեղկասյանը: Չեռները խրել է իր բաց կանաչագույն արտազգեստի գրպանները. զգեստը հիշեցնում է հիվանդանոցի աշխատողի: Մի փոքր սենյակում դրված է մի մեծ հայելի ու սափրվելու համար նստարան:

— Խնդրեմ Ձեր համարը,— ասում է սափրիչը:

— Դուք տարբեր սիստեմ ունեք, այս կերպ ոչ ոք չի կարող իր հերթից առաջ ներս մտնել,— ասում է Մեհմեթը:

— Այո՛, բայց սա դրա համար չի,— պատասխանում է սափրիչը:— Ես աշխատում եմ կոմիսիայով. եկամտի վաթսուն տոկոսը մզկիթինն է: Այդ պատճառով է, որ ամեն մարդ մի համար պիտի ունենա: Այդպիսով մզկիթը կարող է ստուգել, տեսնել մի օրվա մեջ քանի հաճախորդի մազ եմ կտրել: Ամեն գիշեր գալիս եմ իրենց փողը տանում:

— Վաթսուն տոկոս՞. այդ շատ է:

— Հա, բայց ի՞նչ կարող ես անել. ուրիշ ճար չունեմ:

— Կարող ես սեփական խանութ բացել:

— Մի՞թե կարելի է առանց կարգավիճակի:

— Իլեգալ էս:

Լռություն.

— Հա՛, իլեգալ եմ:

Սկրատով խփում է սանրին ու ասում.

— Նստիր, ինչպե՞ս կտրեմ:

Լուռ սկսում է իր գործը:

— Այստե՞ղ ես գործը սովորել, թե կարճ ժամանակով ես Հոլանդիայում գտնվում,— հարցնում է Մեհմեթը:

— Թուրքիայում ես սափրիչ էի: Երբ երեք տարի առաջ Հոլանդիա եկա, հնարավոր եղավ այս մզկիթում աշխատանք գտնել: Հենց միանգամից էլ բնակարան տվին:

— Մզկիթո՞ւմ ես քնում:

— Սեփական տուն ի վիճակի չեմ ունենալու:

— Վարձ է՞լ ես տալիս:

— Մի քիչ:

— Մի բան դուրս գալի՞ս է,— հարցնում է Մեհմեթը:

— Շատ չէ. համարյա ոչինչ չի մնում ինձ: Թուրքիայում կին-երեխա ունեմ: Նրանց փող եմ ուղարկում: Ուզում եմ մի քիչ

խնայել, որպեսզի հետ գնամ. բայց այս պահին դա բոլորովին հնարավոր չի:

— Ամեն ինչ հաճախորդից ինչքա՞ն է մնում քեզ:

— Չորս գուլդեն:

Մեհմեթը նրան տալիս է մի տասանոց, որից վեց գուլդենը ուղղակի մզկիթի կասսայի մեջ է գնում:

Երևում է սափրիչը միակ իլեգալը չի, որ Ուլու Ջամի մզկիթում աշխատում է: Մզկիթի խանութի աշխատողն ու հավաքարարը նույնպես ասում են, որ կեցության իրավունք չունեն: Նրանք աշխատում են ու ապրում մզկիթում:

Մի երեկո ճաշարանի դռանը հայտնվում է մի կին: Բոլորը լռում են: Բացի մի երկու սուրիմամցի՝ մայրերից, որոնք իրենց երեխաներին բերում են սափրիչի մոտ, մզկիթում երբեք կին ոտք չի դնում:

Մզկիթի պաշտոնյա Ուչլեր Աքոչը շտապում է դեպի կին այցելուն.

— Ո՞ւմ հետ գործ ունեք:

— Ես իլեգալ եմ, խնդրում եմ, ինձ օգնեք,— ասում է կինը:

— Ումի՞ց ես ստացել մեր հասցեն,— հարցնում է Աքոչը:

Կինը ուսերը վեր է քաշում. «Ես ոչ մի ապաստարան չունեմ, փող էլ չունեմ. ինձ օգնեք»:

Աքոչը ներս է հրավիրում կնոջն ու առաջնորդում դեպի հետևի սենյակներից մեկը:

Երկու օր հետո:

— Մի համեղ պատառ ձեռքից տվինք,— ասում է խանութի աշխատողը Մեհմեթին:

— Ո՞նց թե:

— Կարծում էինք, թե կմնա: Բայց երբ հարցը լուրջ կետի հասավ, թողեց ու փախավ:

Տակավին օրեր դեպքից հետո, սուրիմամցի կինը խուժանային զրույցի հաճելի առարկա էր մզկիթում:

Մի օր, առավոտյան, հեռախոսը զանգում է: Գծի այն կողմից մի հոգի ասում է. «Ամստերդան-Օստում գտնվող մի մզկիթ ապօրինի մարդ է տեղափոխում: Նրանք իմ ծանոթներից մեկին սահմանից անց են կացրել»:

Մի երկու օր հետո, տեղեկատուն նոր բաներ է հաղորդում: Նա պնդում է, որ խնդրո առարկա մզկիթը Ուլու Ջամին է:

— Այնտեղ փող մուծես, քեզ Հոլանդիայից Անգլիա կտեղափոխեն: Կարճ ժամանակ առաջ, իմ ծանոթին դա հաջողվեց: Նա ուզում էր Անգլիա գնալ: Մի հոգի մզկիթից դա կազմակերպեց: Մի շաբաթ հետո, նա արդեն Անգլիայում էր:

Ըստ տեղեկատուի, իր ծանոթը հինգ հազար գուլդեն փող էր տվել այդ ապօրինի տեղափոխման համար: Տեղեկատուն նշում է ինչ-որ Դուրսում անունով մեկին՝ որպես Ուլու Ջամի մզկիթում գործին վերաբերող կապ:

Մենք ճանաչում ենք Դուրսում կոչվող մեկի: Նա մզկիթի բարձր պաշտոնյաներից է:

Փորձում ենք մեր լսածների ճշտությունն ստուգել: Մեհմեթը գտնվում է մզկիթի ճաշարանում: մոտենում է Դուրսումին:

— Կարո՞ղ եմ հետդ խոսել:

— Ասա տեսնենք, ի՞նչ ես ուզում:

— Իմ ծանոթներից մեկն այստեղ առանց քրթի է: Ուզում է գնալ Անգլիա: Կարելի՞ է մի բան դասավորել:

— Իհարկե, կարելի է: Բայց այս պահին հարմար ժամ չի այդ մասին խոսելու:

Դուրսումը պետք է շտապ մեկնի:

Երեկոյան կողմ, Մեհմեթը զանգահարում է մզկիթ:

— Այո՛, — ասում է Դուրսումը գծի այն կողմից:

— Դուրսում, Մեհմեթ — Ալին է խոսում: Չանգահարում եմ մեր՝ այսօր առավոտվա զրույցի մասին:

— Ինչի՞ մասին էր:

— Այդ իմ իլեգալ ծանոթի մասին, որ ուզում է Անգլիա գնալ:

— Մեկ բոպե սպասիր, գիծը միացնեն իմ սենյակին, — հետո վերսկսում է զրույցը, — հիմա կարող ենք հանգիստ խոսել: Ասա տեսնենք, ի՞նչ կա:

— Այս իմ ծանոթը ուզում է Անգլիա գնալ: Կարո՞ղ ես մի բան անել նրա համար:

— Ումի՞ց իմացար իմ մասին:

— Միառժամանակ առաջ, սրճարանում պատահաբար լսեցի: Երկու իլեգալներ քո մասին էին զրուցում:

— Այդ մարդիկ միշտ գիտեն, թե որտեղ ի՞նչ կա. իսկույն հոտն առնում են:

— Դե, էլ ի՞նչ պիտի անեն, — ասում է Մեհմեթը: — Ուրիշ ճար չունեն: Այստեղ հո աշխատելու հնարավորություն չկա: Դե, եթե մի հաջող բան է կատարվում, բոլորն էլ աշխատում են առիթը բաց չթողնել:

— Այդ ընկերդ փող ունի՞, — հարցնում է Դուրսումը:

— Վստահ: Համենայնդեպս, գիտի, որ այսպիսի մի ծառայության համար փող պիտի վճարել:

— Առաջվա նման հեշտ չի: Մահմաններն ավելի խիստ են իսկույն, — ասում է Դուրսումը: — Այս քիզնեսում աշխատողներից շատերը դուրս են ընկել: Նրանք էլ, որ մնացել են, փող են ուզում տեսնել:

— Քո անունի՞ց ես խոսում, թե՞ ուրիշ մեկն է գործն անում:

— Մի հոգի է, որ ես ճանաչում եմ:

— Ինչքա՞ն է ուզում:

— Հինգ հազարից պակաս չի անում:

— Իսկ դու ի՞նչ դեր ունես այս մեջտեղում:

— Ես մանր գործերն եմ անում: Մեր հայրենակիցները դժվար կացության մեջ են. ես աշխատում եմ իրենց օգնել: Էլ սրանից ավել ի՞նչ պիտի իմանաս: Ես միջնորդ եմ միայն:

— Իսկ վճարո՞ւմը:

— Ընկերդ վճարում է գումարի կեսը մեկնման պահին: Մյուս կեսը պետք է մուծի, երբ նավը ճանապարհին է:

— Ինչպե՞ս պիտի վստահ լինել, որ Անգլիա է մտնելու:

— Հարյուրին հարյուր տոկոս երաշխիք երբեք չես կարող տալ, — ասում է Դուրսումը: — Բայց մեր տեղափոխումների հարցում մինչև հիմա ո՛չ մի պրոբլեմ չի եղել:

— Քանի՞ հոգու տեղափոխման մասին ես խոսում:

— Բավական մեծ թվով, կարող եմ ասել:

— Լավ է հնչում: Մանրամասները ընկերս ու դուք կզրուցեք ու կպայմանավորվեք:

— Եղավ: Թող այստեղ գա, զրուցի: Այս օրերին դարձյալ մի խումբ մեկնելու է:

Այն մասին, թե Դուրսումը գործ է ուզում անել, կասկած չունենք: Վստահության համար, սակայն, մի ուրիշ մեկի հանձնա-

րարում ենք, որ որպես Մեհմեթի «իլեգալ ծանոթ», զանգահարի Դուրսումին:

— Հա, ապեր, հիմա ասեմ, թե ինչպես է կատարվում այդ բռնությունը,— ասում է Դուրսումն ու շարունակում,— քեզ այստեղից վերցնում են ու հետո Բելգիայում կամ Ֆրանսիայում մի նավի մեջ են դնում: Այսքանը երաշխավորված է: Իսկ թե Անգլիա ապահով կհասնե՞ս, թե՞ ոչ, այդ չենք կարող երաշխավորել: Հասկանում եմ, սա երևի մի քիչ անսպասելի է, բայց այս է, որ կա: Եթե սահմանի վրա բռնվես, պիտի դիմես ապաստանության: Մի կարճ հարցաքննություն կունենաս ու հետո կթողնեն, որ գնաս: Մեր մարդիկ քեզ նախապես կասեն, թե այսպիսի մի դրության մեջ ի՞նչ պիտի անես: Եթե ներվային լարվածության պատճառով այդ բոլորը մոռանաս, քեզ չկորցնես, դա մի մեծ պրոբլեմ չի, պարզապես կասես, որ քյուրդ ես: Հենց կարճ ժամանակ առաջ մի խումբ մարդկանց տեղափոխեցինք: Բոլորն էլ հիմա Անգլիայում են: Ծիշտն ասած, վեց հազար գուլդեն է ծախսը, բայց եթե նեղ դրության մեջ ես, համաձայնվում են մի կերպ. հինգ հազարն էլ լավ է: Կեսը՝ մուծում ես նախքան մեկնումը, կեսը՝ ճանապարհին՝ նավի մեջ:

Ուլու Ջամիում պատրաստություններ են տեսնում Մատաղի տոնի համար: Սա իսլամական ամենակարևոր տոնախմբություններից մեկն է: Այն հաավտացյալները, որ կարողության տեր են, այս տոնի առիթով ոչխար են մորթում: Մատաղի մսի մի մասը տրվում է չքավորներին:

Ինչպե՞ս են տոնելու այս տոնը Ուլու Ջամի մզկիթում: Չէ՞ որ Գորշ Գայլերն այնքան խիստ հավատացյալներ էլ չեն: Իսլամի մասին էմ. Հա. Փե. կուսակցական ծրագիրը բավական լիբերալ բնույթ է կրում: Ըստ դրա, ամեն ոք ազատ է մի կրոնի հետևել կամ չհետևել: Ոչ ոք իրավունք չունի հավատքի պատճառով մեկ ուրիշի նեղել ու ճնշել: Կրոնի մասին այս դիրքորոշման հասնելը պատմական մի պրոցեսով է անցել: Նախկին պանթուրքիստները խստաբարո մուսուլմաններ չէին: Նրանց համար ազգայնական—նացիոնալիստական գաղափարը՝ բոլոր թուրքերի միավորումը մի պետության մեջ, առաջնակարգ կարևորություն ուներ: Գորշ Գայլերից ոմանք նույնիսկ խորշում են ընդունել արաբերենը՝ որպես Դուրանի լեզու: 1995—ին,

Անկարայի նախկին գլխավոր դատախազ և էմ. Հա. Փե.—ի խորհրդարանական թեկնածու Նուսրեթ Դեմիրելը առաջարկեց գործածել թուրքերենը՝ որպես Դուրանի լեզու: Այդ գաղափարը նույնիսկ էմ. Հա. Փե.—ականների համար անընդունելի էր:

Դրանով հանդերձ, հարկ է, որ Գորշ Գայլերը ներկայացան որպես լավ մուսուլմաններ: «Գոհակով Ալին», ինչպես անվանվում է տիպիկ մի Գորշ Գայլ, կրոնին համակրում է: Իրենց նացիոնալիստական իդեալի համար ավելի մեծ թվով մարդ հավաքագրելու համար, Գորշ Գայլերն իրենց սիմվոլներին մի որոշ կրոնական երանգավորում են հաղորդում: Այսպես, Հոլանդիայում վաճառվող էմ. Հա. Փե.—ի թերթ «Օրթադոլուն» արտատպում է մի սյունակ «Հեթալունից», որը միայն Թուրքիայում է լույս տեսնում: «Դրոշակ, հայրենիք և Աստված» խորագրի տակ, էմ. Հա. Փե.—ի սիմվոլ երեք կիսալուսինների իմաստն այսպես է բացատրվում. «Երևում է շատերը տեղյակ չեն մեր կուակցության խորհրդանիշի՝ երեք կիսալուսինների առավել խորը իմաստի մասին: Դրոշի վրա այդ երեք կիսալուսինները դարեր շարունակ Օսմանյան կայսրության սյուներն են հանդիսացել: Այս դրոշակը փողփողել է ամեն մի ամրոցի ու բերդի վրա: Յուրաքանչյուր կիսալուսնի մասին կարելի է մեծածավալ մի գիրք գրել: Այդ երեք կիսալուսինները խորհրդանշում են Աստված, Հայրենիք ու Դրոշակ: Աստված ինքը կամեցել է, որ թուրք ազգն ազատ ու անկախ ապրի»:

Բացի այդ, մրցակցության պատճառով ֆեդերացիան պետք է մաքուր կրոնական դիմագծով ներկայանա: Այսպես, 1992 թվին, Թուրքիայում հրապարակ իջավ մի մրցակից խմբակցություն՝ Բոյուկ Բիրլիկ Փարթիսի (Բե. Բե. Փե.), Մեծ միության կուսակցություն անունով: Այս խմբակցությունը, որն անջատվել էր էմ. Հա. Փե.—ից, վերջինին բավարար չափով մուսուլման չէր գտնում: Բե. Բե. Փե.—ն Եվրոպայում, ինչպես նաև Հոլանդիայում, իր մասնաճյուղերն ունի, որը թուրքական ֆեդերացիայի մրցակիցն է համարվում և կոչվում է ԱՆԱՖ (Ավրոպա Նիզամի—Ալեմ Ֆեդերասիոնու), «Միջազգային կարգ» եվրոպական ֆեդերացիա:

Նույնպես էմ. Հա. Փե.—ի զորավոր մրցակիցն է համարվում «Ռիֆահ Փարթին»՝ արմատական² իսլամականների կուսակ-

ցությունը: Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հոլանդիայում, Ռ-իֆահն ավելի շատ համակրող ունի, քան Էմ. Հա. Փե-ն: 1995 թվի ընտրություններին Թուրքիայում Էմ. Հա. Փե-ին ձայն տվին քվերակուների 8,5 տոկոսը, մինչդեռ Ռ-իֆահը կարողացավ ձայների 1 տոկոսը իրեն հատկացնել: Հոլանդիայում Ռ-իֆահ կուսակցությունը գործում է «Միլլի Գյորուշ» շարժման անվան տակ: Ըստ այս շարժման խոսնակ Յու. Կաբակթեփեի, իրենք Հոլանդիայում առնվազն 40 հազար համակրող ունեն: Գայլերը գանգատվում են, որ «Միլլի Գյորուշը» քարոզչության ու բնակարանային միջոցների համար ավելի շատ փող ունի, քան իրենք:

Իրոք, Ամստերդամի Այա-Սոֆիա մզկիթը, որը պատկանում է «Միլլի Գյորուշին», Ուլու Ջամիից ավելի մեծ է ու առավել շքեղորեն կահավորված: Իսկ ուրբաթ երեկոյան, աղոթքների ժամանակ, քարոզիչն այստեղ ավելի խիստ գաղափարական դիրքերից է խոսում, քան Ուլու Ջամիինը: Այսպես, ամռան մի տոթ օր մզկիթ ներս մտած հավատացյալների հոծ բազմությանը, Իմամը քարոզում է, որ տնից դուրս չգնան, «քանզի դրսում կհանդիպեք ամառային բաց շորերով հագնված հոլանդացի կանանց: Նրանց մերկ մարմիններին նայելու զայթակղությունը գորեղ է: Իսկ եթե անպայման դուրս պիտի գաք, գնացեք մի ուրիշ տղամարդու ուղեկցությամբ, որպեսզի մեկդ մեկին հսկի»:

Ուլու Ջամիում Իմամ Աբդուլլահը քարոզում է իսլամական Մատադի տոնի առթիվ: Մատադի տեղ նա այլ բան է առաջարկում. «Կարիք չկա Մատադի օրը մի կենդանի մորթել: Դրա փոխարեն կարող եք նաև դրամական օգնություն ցուցաբերել ձեր մյուս մուսուլման եղբայրներին: Չեչնիայում մեր եղբայրները դժվար կացության մեջ են: Մենք պետք է նրանց օգնենք»:

Նրա կոչն աստիճանաբար ավելի պարտադրող բնույթ է ընդունում. «Ամենից ճիշտն այն է, որ անասուն մորթելու տեղ, դրա գինը փոխանցենք Չեչնիայի մեր եղբայրներին: Մեր թուրքական ֆեդերացիան ձեռնարկել է ակցիա՝ «Օգնենք Չեչնիային» անվան տակ: Բոլոր մուսուլմանները պարտավոր են աջակցել այս ակցիային: Այն ժամանակ վստահաբար Աստծու մոտ մի տեղ կունենանք»:

Փող ժողովելու կամպանիան տեղի է ունենում Եվրոպայի

տարածքով: Դա պատահական չէ: Իննսունական տարիներին Չեչնիայի «թուրքական հանրապետության ազատագրումը» Էմ. Հա. Փե.-ի սիրված թեման է:

Իր «Թեմել Գյորուշեր»³ աշխատությունում, այսպես կոչված «դրսի թուրքերի» (Դիշ Թյուրքլերի) մասին այսպես է գրում Բաշբուրը. «Թուրք նացիոնալիստների համար յուրաքանչյուր մի թուրք կարևոր է աշխարհի որ տեղում էլ, որ նա լինի: Յուրաքանչյուր թուրք նացիոնալիստի պարտականությունն է՝ մշտապես պաշտպանել դրսի թուրքերին»:

Թուրքական ֆեդերացիային կից բոլոր կազմակերպությունները մասնակցում են Չեչնիայի համար դրամի հանգանակման ակցիային: Ֆեդերացիան արդեն իսկ ակցիայի հաջողությունն ապահովել է՝ յուրաքանչյուր դրամական օգնություն պետք է առնվազն երկու հարյուր գուլդեն (մոտ հարյուր եվրո) լինի, այլապես՝ նվերը չի ընդունվելու:

Ուլու Ջամի մզկիթի աշխատողները այցելուներին շարունակաբար հիշեցնում են ակցիայի մասին: Ռոտերդամի ՎԵՐ-ՍԱՄ-ում ու Ամստերդամի Թե. Դե. Ե. Վե. երիտասարդական միությունում օգնություն ցուցաբերած մարդկանց անվանացանկը կախված է պատից: Ուլու Ջամի մզկիթում այսպիսի մի ցուցակ չկա և սակայն, ծանուցատախտակի վրա փակցված է հետևյալ կոչը. «Նրանք, որոնք ցանկանում են օգնել Չեչնիայի, Դրիմի ու Ադրբեջանի մեր եղբայրներին, կարող են կապվել Բ. Բոզբուրթի և Մ. Քարամանի հետ»:

Մեհմեթը գնում է կացությունը մոտիկից քննելու: Բուֆետի կառավարիչ Հուսեյինին ասում է, որ ուզում է դրամական օգնություն տալ Չեչնիայի համար և որ արդյո՞ք պարոնայք Բոզբուրթը կան Քարամանը ներկա են: Հուսեյինն ասում է, որ նրանք այժմ ներկա չեն, բայց Մեհմեթն իր օգնությունը կարող է իրեն էլ տալ, և ինքն անպայման մի ստացական կրերի ու կտա Մեհմեթին:

— Այդ մարդիկ շնորհակալ աշխատանք են տանում,— ասում է Մեհմեթը,— այդ պատճառով ուզում են անձամբ իրենց տեսնել ու հետները ծանոթանալ:

— Վաղը նրանք այստեղ կլինեն,— ասում է Հուսեյինը: Համենայնդեպս, մի հոգի մզկիթի վարչությունից լինելու է:

Ապա մի դարակից դուրս է հանում մի անվանացանկ ու

ցույց տալիս Մեհմեթին: Մզկիթ հաճախողներից արդեն մի քանասուն հոգի դրամական նվիրատվություն են արել:

— Իհարկե, ֆեդերացիային կից մյուս միություններն էլ մասնակցում են դրամահավաքին,— ասում է Հուսեյինը:— Բոլոր անդամ միությունները պարտավոր են ֆեդերացիայի որոշումները կատարել:

Ռոտերդամի ՎԵՐՍԱՄ-ն արդեն մի տաս հազար գուլդեն ժողովել է:

Դրամահավաքի ակցիան ամեն տարի կրկնվում է:

— Հավաքված գումարը ֆեդերացիայի մարդիկ անձամբ տանում հասցնում են, ուր որ հարկն է,— վստահեցնում է Հուսեյինը:

Նա ներողություն է խնդրում Մեհմեթից ու մտնում աղոթարան: Քիչ հետո վերադառնում է մոտ հիսուն տարեկան թվացող ճաղատ մի մարդու հետ: Մեհմեթին ասում է, որ իր հարցերը կարող է ուղղել Ջևդեթին: Այս վերջինը Հոլանդիայի դրամահավաքի ակցիայի պատասխանատուն է:

Ջևդեթը հրավիրում է Մեհմեթին աղոթարան, ուր նստած են հինգ առավել տարեց տղամարդիկ: Նրանք, իրենց ուշադրությունը կենտրոնացրած, զբաղված են կարդալով: Ջևդեթը ցույց է տալիս մի անվանացանկ. «Այստեղ նշված են բոլոր մզկիթ այցելողների անունները, որոնք օգնություն են տվել»:

— Երկրի տարածքով ինչպե՞ս է ընթանում դրամահավաքը,— հարցնում է Մեհմեթը:

— Դրամահավաքը մի շաբաթ էլ շաբուճակվելու է, սակայն արդյունքներն արդեն իսկ գերազանցում են անցյալ տարիների դրամահավաքներին:

— Սա Հոլանդիայի՞ կազմակերպությունների նախաձեռնությունն է:

— Ո՛չ, Եվրոպայի թուրքական ֆեդերացիան է կազմակերպողը:

— Ինչպե՞ս է փողը հասնում իր հասցեատիրոջը:

— Թուրքիայում կա մի հաստատություն՝ Չեչնիայի օգնության համար: Բոլոր օգնությունները հավաքվում ու կենտրոնացվում են այնտեղ: Հետո դա ուղարկվում է Չեչնիա: Մեկ շաբաթից ես մեկնելու եմ Թուրքիա՝ Հոլանդիայում ժողոված օգնությունները հանձնելու:

— Ի՞նչ երաշխիք կա, որ օգնությունն, իրոք, հասնելու է իր նպատակակետին:

— Այդ հաստատությունից մենք ստանում ենք մի ստացական: Դա դու էլ կարող ես տեսնել: Բայց այդքան կասկածամիտ էլ չպիտի լինես: Օգնություն տալով, որպես մուսուլման մի թուրք, բարի գործ ես կատարում: Եթե երբևիցե մի տեղ մի բան սխալ կատարվի, սխալ թույլ տվողներն այն աշխարհում պատասխանատվության են կանչվելու:

— Այս պահին բավական փող չկա մոտս,— ասում է Մեհմեթը:

— Շաբաթվա մեջ կգաս կրեբես,— ասում է Ջևդեթը:

Երբ Մեհմեթը քանի օր հետո վերադառնում է, Ջևդեթն արդեն մեկնել է Թուրքիա:

1996-ի մայիսի 3-ին, «Թուրքիյեում» կա մի մեծ հայտարարություն՝ թուրքական ֆեդերացիայի անունից: Ամբողջ Եվրոպայում 1133 մարդ մասնակցել է դրամահավաքին: Լուրին հաջորդող տեքստում, սակայն, մեզ մատուցվում է մի անակնկալ: Նախ, գոհունակությամբ նշվում է, որ այս տարվա Մատադի տոնի հասույթը բավականաչափ գերազանցել է անցյալ տարիների դրամահավաքին: Այս առիթով, ֆեդերացիան շնորհակալություն է հայտնում «Եվրոպայում բնակվող մեր եղբայրներին՝ մեր ֆեդերացիայի հանդեպ ցուցաբերած իրենց վստահության համար»: Իսկ հետո «Ժողովված օգնությունը բաժանվել է հետևյալ թուրքական համայնքների միջև՝ Դրիմի թուրքերի (որոնցից շատերն ապրում են իրենց հայրենիքից դուրս), Քիրկուկի (Հյուսիսային Իրաք), Կահիլբեի, Արևմտյան Թրակիայի (Հունաստան) և Ադրբեջանի»:

Իսկ մենք կարծում էինք, թե օգնում ենք Չեչնիայի՝ «մեր մուսուլման եղբայրներին»:

- 1 Սուրինամ – Դոլանդիայի նախկին գաղութ՝ Ամերիկայի մայրցամաքում
- 2 կրոնական դոգմաների ծայրահեղ պաշտպանություն
- 3 «Դիմնական սկզբունքներ»

VI. Բաշքուղը ժամանում է Բելգիա

«Մենք կամավոր զինվորներ ենք»

Երկու ատրճանակ ուղղված Մեհմեթին
Ֆաթման այլևս չի ուզում թարգմանել

«Դուք գտնվում եք կուսակցության
համաժողովում»

Խոսք է առնում Բաշքուղը

Թիկնապահ Ալին գաղտնիքներ է բացահայտում

«Բաշքուղ Թուրքե՛շ, Բաշքուղ Թուրքե՛շ»:

«Զորս հազար տղամարդ, կին ու երեխա բռայեներ շարունակ գոռում ու անընդհատ նույն լոզունգն են կանչում՝ «Բաշքուղ Թուրքե՛շ» (մեծ ղեկավար Թուրքե՛շ), «Մեզ միայն ասա, որ մեռնենք՝ կմեռնենք, ասա, որ սպանենք, կսպանենք»:

Բարձրանում են իրենց նստարաններին, թափահարում են ձեռքի դրոշակները, Գորշ Գայլի բարև են բռնում՝ բազուկները բարձրացնում են վեր, ճկույթով ու ցուցամատով գայլի ականջներ են ձևացնում:

Այստեղ Բելգիա է, Հասելք քաղաքի Խրենսլանդիալեն կոչվող սրահը, որում այժմ ասեղ օգելու տեղ չկա: Մի երիտասարդ աղջիկ իրեն փաթաթել է դրոշակի մեջ:

— Փե. Քա. Քա՞, ես,— հարցնում է նա Ստելլային:

— Ո՛չ, իսկ դո՞ւ:

— Իհարկե ոչ, այդ տեռորիստները փոքր աղջիկներին սպանում են: Քրիստոսի ազգի՞ ես:

— Այո՛, իսկ դո՞ւ:

— Ես Ալլահի ազգից եմ:

1996-ի մայիսի 11: Բելգիայի թուրքական ֆեդերացիայի, այսինքն՝ այդ երկրի Գորշ Գայլերի միության հինգերորդ համագումարը իր թեժ ընթացքի մեջ է: Հոլանդիայից, Գերմանիայից ու Բելգիայի տարբեր վայրերից թուրքերն այստեղ են եկել՝ ունկնդրելու իրենց ղեկավար Թուրքե՛շին:

Այս համագումարի առթիվ, Ամստերդամի թուրքական մշակութային կենտրոնում՝ Ուլու Ջամի մզկիթում, ինչպես նաև թուր-

քական Երիտասարդական դեմոկրատական միությունում պլակատներ էին փակցված: Ռոտերդամի թուրքական ՎԵՐ-ՍԱՄ միությունում նույնպես պաստառներ ու ծանուցումներ կան, որոնցում կոչ էր արվում Բելգիա գնալ, քանզի «թուրք աշխարհի ղեկավար Թուրքե՛շն այնտեղ խոսելու է»:

Որոշում ենք այս նախապես հայտարարված միջոցառմանը ներկա գտնվել: Սակայն ինչպե՞ս: Արդեն միառժամանակ է, որ Մեհմեթն այցելում է Հոլանդիայի Գորշ Գայլերի չորս կազմակերպություններ՝ առանձին-առանձին: Ի նկատի առնելով, որ Հասելքում բոլոր կազմակերպություններից ներկայացուցիչներ կլինեն, հավանական մի առերեսում ծանոթ մի դեմքի հետ կարող է անցանկալի կացություն ստեղծել:

Ի վերջո, որոշում ենք, որ Մեհմեթը ծայտված ներկայանա միջոցառմանը: Գրիմյոր Ժաքն ու վարսավիր Հարին սկսում են Մեհմեթին կերպարանափոխել: Մորուքով, կեղծամով ու ակնոցով, նա արդեն անճանաչելի է:

Մաստրիխտ քաղաքից քշում ենք դեպի Բելգիա, Հասելք: Ճանապարհին մի անգամ էլ կրկնում ենք մեր պատրաստած պատմությունը:

— Ի՞նչ է անունը, Մեհմեթ,— հարցնում է Ստելլան:

— Մեհմեթ-Ալի Ջամ:

— Շատ լավ, բայց ես հենց իմ անունով եմ ներկայանալու: Ոչ ոք ինձ չի ճանաչում: Հարկ եղած դեպքում էլ կարող եմ անճանաթուղթ ցույց տալ:

— Ի՞նչ պիտի ասենք, եթե հարցնեն, թե ի՞նչ գործ ունենք այնտեղ:

— Ես կասեմ՝ հետաքրքրված եմ թուրքերեն լեզվով ու մշակույթով:

— Իսկ ես էլ քո թուրքերենի ուսուցիչն եմ:

Մոտավորապես ժամը երեքն անց կես հասնում ենք Խրենսլանդիալեն: Երկու երիտասարդ կանգնած են ճանապարհի եզրին: Ամեն մի մեքենավարի, որ մոտենում է ավտոկայան, Գորշ Գայլի բարև են տալիս:

Գայլիս են մեքենաները՝ դրոշակները պատուհաններից պարզած: Ավտոկայանը լցված է ավտոբուսներով: Նրանցից շատերն ունեն հոլանդական համարանիշ:

Մուտքի մոտ տոմս ենք գնում, սակայն մեզ նկատում են: Մարդիկ այստեղ գալիս են խմբերով: Մենք երկուսով ենք՝ մի քուրք տղամարդ ու մի եվրոպացի կին: Հայացքները սևեռվում են մեզ վրա:

Պետք է իրարից անջատվենք ու առանձին ներս մտնենք: Տղամարդիկ ու կանայք առանձին են խուզարկվում: Երբ խուզարկումն ավարտվում է, մի հաղթանդամ մարդ՝ թեթև մորուքով, Մեհմեթին կանգնեցնում է:

— Սպասիր,— ասում է նա,— ո՞ր կազմակերպությունից ես:

— Ես ոչ մի կազմակերպությունից չեմ,— պատասխանում է Մեհմեթը,— ես պարզապես հետաքրքրված եմ:

— Որտեղի՞ց իմացար այս հավաքի մասին:

Մեհմեթը գրպանից հանում է «Թուրքիյեի» հայտարարությունը:

— Այստեղից:

— Իսկ ո՞վ է այս տիկինը,— հարցնում է նա:

— Ընկերուհիս է, հետաքրքրված է թուրքական մշակույթով:

Մարդը ոտքից գլուխ գնում է Մեհմեթին: Հետո հեռանում է:

— Ինձ վրա կասկածում են,— փսփսում է Մեհմեթը Ստեյլայի ականջին:

Մարդը վերադառնում է. «Անճաթուղթ ունե՞ս»:

Մեհմեթը պրպտում է իր վերարկուի գրպանները. մի փոքր հուշատետր է հանում, բայց ոչ անձնագիր:

— Ո՛չ, չունեմ:

— Իսկ դո՞ւք, տիկին, դուք փաստաթուղթ ունե՞ք ձեզ մոտ:

Ստեյլան ցույց է տալիս իր անձնագիրը:

Մեհմեթին թույլ չեն տալիս ներս մտնել: Ստեյլային՝ նույնպես:

— Դուք պետք է նորից խուզարկվեք, տիկին, հետո կսպասեք ինձ:

— Իսկ դո՞ւ, դու ինձ հետ դուրս ես գալիս,— ասում է մարդը Մեհմեթին:

— Եթե քեզ ներս թողեցին, դուրս գալուց ինձ կսպասես,— կամաց ասում է Մեհմեթը Ստեյլային:

Երբ Մեհմեթին դուրս են տանում, վերադարձնում են իրեն իր մուծած մուտքի փողը: Հետո հաղթանդամ մարդը բռնում է նրա

օձիքից ու ասում. «Այստեղ սպասիր»: Ապա կանչում է կարգապահներից մեկին ու հրամայում. «Մրա մոտ կանգնիր, հիմա գալիս եմ»: Մեհմեթն ահով նկատում է, որ ծանոթ դեմքեր են իր մոտից անցնում: Մրանց մեջ է Ամստերդամի Ուլու Ջամի մզկիթի Իմամ Աբդուլլահը: Իր գլուխը շուտ է տալիս, որպեսզի իրեն չնկատի: Հաղթանդամ մարդը վերադառնում է երեք ուրիշ տղամարդու ուղեկցությամբ:

— Ավտոյիդ բանալին տո՛ւր,— հրամայում է նա:

— Ի՞նչ գործ ունեք իմ ավտոյի հետ:

— Պե՛տք է խուզարկենք:

— Ես կգամ ձեզ հետ:

— Տո՛ւր բանալին:

— Տեսե՛ք, դուք ինձ չեք թույլ տալիս ներս մտնեմ, բարի, ես էլ վերադառնում եմ, էլ ի՞նչ եք ուզում:

Անցորդները նայում են հետաքրքրված: Նրանց շուրջ կազմվում է մի օղակ:

— Ի՞նչ է անունդ:

— Մեհմեթ—Ալի Ջան:

— Որտեղի՞ց ես:

— Ուտրեխտից:

— Այնտեղի մեր կազմակերպությունից որևէ մեկին ճանաչո՞ւմ ես:

— Ոչ:

— Ո՞վ է այդ տիկինը, որ հետո է:

— Մի ընկերուհի, որ հետաքրքրված է թուրքական մշակույթով:

— Այս մարդը ծանոթ է ինձ,— կանչում է դիտողներից մեկը:

Կայծակի արագությամբ ղեկավարը մի ատրճանակ է հանում ու փողը սեղմում Մեհմեթի վզին:

— Շարժվի՛ր դեպի մեքենան:

Մյուս երկուսը բռնում են նրա թևերից: Ճամփեզրից նրան տանում են դեպի ավտո՝ ատրճանակը մեջքին սեղմած: Չորս տղամարդկանցից մեկը խուզարկում է մեքենան: Մի պատանի հետաքրքրված մոտենում է: Ջարմացած նայում է ատրճանակին:

— Հեռացի՛ր,— գոչում է ղեկավարը:

Պատանին բերանը բաց շարունակում է նայել:

— Ասում եմ՝ հեռացիր այստեղից:

Այն մեկը, որ մեքենան խուզարկել էր, վերադառնում է:

— Նախագահ, ավտոյի մեջ ոչինչ չկա:

— Թղթերը լավ նայեցի՞ր:

— Հա, ոչինչ չկա:

Մեհմեթին տանում են մի սպիտակ միկրոբուսի մեջ: Նրանցից մեկը մնում է դուրս՝ պահակ կանգնելու: Մյուսները ներս են մտնում: Եվս մի ատրճանակ ուղղվում է Մեհմեթի կողմը:

Նորից սկսվում է հարցերի տարափը: Նրանցից մեկը բռնում է Մեհմեթի մորուքն ու պոկում:

— Ասա՛, ո՞վ ես, թե չէ քեզ կվերացնենք:

— Մեհմեթ—Ալի Ջան:

— Տեռորի՞ստ ես:

— Իհարկե ո՛չ:

— Ինչի՞ ես առանց փաստաթղթի Հոլանդիայից եկել Բելգիա:

— Պայուսակս մոռացել եմ:

Մեքենայի բանալիները վերադարձնում են իրեն ու ասում. «Եթե որևիցե բան այս մասին մի տեղ ասես, քեզ կվերացնենք, հինա հասկացա՞ր, թե ում հետ գործ ունես»:

— Կորի՛ր այստեղից, անմիջապես, — հրամայում է ղեկավարը:

Մեհմեթը նստում է մեքենա ու քշում ղեպի Մաստրիխտ՝ իր ընկերների մոտ, որոնք իրեն կերպարանափոխել էին: Սպասում է, որ Ստեյլան իրեն զանգահարի:

— Նա պետք է, որ վերադառնա, այլապես մի բան պիտի պատահած լինի նրան, — ինքն իրեն մտածում է Մեհմեթը:

Հեռախոսը չի զանգում:

Իսկ ի՞նչ պատահեց Ստեյլային:

Ինչպես կարգապահն էր պահանջել, Ստեյլան թողնում է, որ կրկին իրեն խուզարկեն: Հետո նրան ասում են, որ մի անկյունում սպասի: Երբ մի մեծ խումբ տղամարդ ու կին իր մոտից անցնում են, առիթից օգտվում է ու խառնվում նրանց մեջ: Այդպես, միջանցքից նրանց հետ քայլելով՝ դուրս է գալիս Խրենգ-

լանդ կոչվող սրահ: Սրահը լիքն է խանդավառված այցելուներով, որոնք անհամբեր սպասում են Բաշբուդի ժամանմանը: Ստեյլայի առաջին կարևոր գործը մի թարգմանիչ գտնելն է: Փորձում է մի քանի թուրք կանանց, սակայն նրանց մեծամասնությունը ֆրանսերեն է պատասխանում: Երեք բելգիացի թուրք պատանի՝ ուրախ տրամադրությամբ, պատրաստակամություն են հայտնում իր համար թարգմանել: Նրանք, սակայն, մոռացել են, որ այստեղ տղամարդիկ ու կանայք առանձին են: Հենց որ մի կարգապահ նրանց մոտից անցնում է, նկատում է ու զգուշացնում. «Չի թույլատրվում կանայք ու տղամարդիկ մեկտեղ լինեն: Կանոններին հակառակ գնալ չի կարելի»: Կանանց բաժնում, Ստեյլան, ի վերջո, գտնում է մի երիտասարդ կին՝ Հոլանդիայի սահմանամերձ շրջանից: Անունը Ֆաթմա է, 28 տարեկան, ունի երկու երեխա:

— Երբ 13 տարեկան էի, եկա Հոլանդիա, — ասում է նա: — Դեռևս կարգին հոլանդերեն չեմ խոսում:

— Ինչո՞ւ, — հարցնում է Ստեյլան:

— Հարկ չէին գտնում, որ ես դպրոց գնամ:

— Ովքե՞ր, ծնողներ՞դ:

— Ո՛չ, դասատուներս:

Ֆաթման փաթաթում է մի ծխախոտ:

— Իսկ դա այստեղ կարելի՞ է:

— Ես եմ որոշողը, — ասում է Ֆաթման:

— Չէ՞ որ այստեղ խիստ են, — ասում է Ստեյլան: — Տեսնո՞ւմ ես, տղամարդիկ ու կանայք առանձին են:

— Փյիի՛, — բացականչում է թուրք կինը, — դա նրա համար է, որ Բելգիայում ենք: Այս երկիրը հետամնաց է:

Հանկարծ հայտնվում է պահակը, որ մուտքի մոտ ինքնուրթյան փաստաթուղթ էր պահանջել: Նրան ընկերակցում է մի թարգմանիչ, որ ֆլամերեն՝ է խոսում:

— Ինչո՞ւ համար ես եկել այստեղ, — հարցնում են նրան:

— Ես հետաքրքրված եմ թուրքական լեզվով և մշակույթով: Լսեցի, որ այստեղ մի տիպիկ թուրքական տոնախմբություն է տեղի ունենալու:

— Ո՞վ էր այդ տղան, որ քեզ հետ էր:

— Իմ թուրքերենի դասատուն:

— Երկա՞ր ժամանակ է իրեն ճանաչում ես:

— Ոչ:

— Ինչպե՞ս ես ծանոթացել հետը:

Իրենց շուրջ ներկա գտնվող այցելուները ուշադրությամբ ականջ են դնում հարցերի տարափին:

— Ցավում եմ, տիկին, ձեր ընկերը ներս մտնել չի կարող,— ասում է մարդը,— նա ոչ մի փաստաթուղթ չունի, և մորուքն էլ կեղծ է: Հավանական է, որ Փե. Քա. Քա.—ից լինի:

Պահակն ու քարգմանիչն ապա թուրքերեն ինչ—որ բաներ են ասում իրար ու հեռանում:

Ֆաթման ամեն ինչ լսել է:

— Այստեղ ոչ մեկից ինքնության թուղթ չեն ուզում, իսկ քո ընկերոջից պահանջե՞լ են, զարմանում եմ:

Շուտ է գալիս ու հրաժարվում է քարգմանելուց:

Բեմահարթակի վրա նստած են կոստյում հագած մի քանի տղամարդ: Մի հոգի բարձրախոսով շրջում է ու շարունակ գոռում միկրոֆոնի մեջ այնքան բարձր, որ ոչ ոք ոչ մեկի ձայն չի լսում:

Բեմահարթակի վերից կախված են դրոշակներ: Նախկին Խորհրդային Միության հանրապետությունների մի ամբողջ շարան է դա՝ Ադրբեջան, Թուրքմենստան, Ղազախստան, Ուզբեկստան և Կիրգիզիա: Դրանք հանրապետություններ են, ուր ապրում են թուրք—թրքալեզու ժողովուրդներ և, որոնք ըստ Գորշ Գայլերի, Մեծ Թուրանի բաղկացուցիչ մասն են կազմում: Այդ դրոշակների շարանի ներքո կախված են էմ. Հա. Փե.—ի դրոշակը երեք կիսալուսնով, Թուրքիայի ու Բելգիայի դրոշակները, Բելգիայի ու Եվրոպայի թուրքական ֆեդերացիաների դրոշակները: Պատերի վրա փակցված են Բելգիայի Գորշ Գայլերի բաժանմունքների՝ Բերգհեմի, Դիեստի, Հաուսիլենի, Գենթի, Անտվերպենի, Լաուկի ու Չաթելետի ցուցապաստառները:

Բեմահարթակից տրվում են լոզունգներ՝ «Ազրբեջան», «Չեչնիա»:

— Դուդան, Դուդան,— գոռում է բազմությունը:

Արդյոք այստեղ հոլանդերեն խոսելո՞ւ են:

Մի հոլանդախոս բելգիացի² բարձրանում է ամբիոն: Դա Գենթի քաղաքապետ, Սե. Վե. Փե.³—ի անդամ Ջեֆ Գաբրիելզն է:

— Բարի գալուստ եմ մաղթում Բելգիայի թուրքական ֆեդե-

րացիային,— սկսում է նա:— Ֆեդերացիան մեծ աշխատանք է կատարում մշակույթի բնագավառում: Բելգիայի թուրքերի համար կարևոր է, որ նրանք իրենց մշակույթի ու իրենց ծննդավայրի երկրի հետ կապ պահպանեն: Սակայն, ֆլամական մշակույթն էլ կարևոր է, դրան էլ կարիք ունեք: Այստեղ գործ ունենք մշակութային փոխազդեցության հետ:— Չեզ հայտնեմ, որ Բելգիայում, վերջերս դեկրետ է ընդունվել այն միությունների ֆինանսավորման մասին, որոնք կատարում են փոքրամասնությունների համար մշակութային զարգացման աշխատանք,— շարունակում է նա:— Շնորհիվ այդ դեկրետի, փոքրամասնությունների կազմակերպություններն այժմ նպաստի իրավունք են ձեռք բերել: Ես կարծում եմ, որ ձեր ֆեդերացիան նույնպես ի նկատի կառնվի նպաստի համար:

Ուժեղ ծափահարություն:

Ջեֆ Գաբրիելզն հրավիրել են Գենթի թուրքական միությունները, որոնք անդամ են թուրքական ֆեդերացիային: Քաղաքապետն, ի դեպ, տեղյակ էր, որ նա հրավիրվել է խոսելու «նացիոնալիստական տենդենցներով մի համահավաքում», ինչ, որ նա խոստովանում է միջոցառման ավարտից հետո: Ջեֆ Գաբրիելզն ասում է, որ նա էմ. Հա. Փե.—ին չի համակրում:

— Բայց զիտե՞ք, որ Ռիֆահ կուսակցությունը, որն արմատական մուսուլմանների կուսակցությունն է, ավելի մեծ՝ սպառնալիք է,— ասում է Ջեֆը:

Իսկ ինչի՞ համար է նա այստեղ գտնվում, հարցնում ենք:

— Հարցը վերաբերում է ինտեգրացիային: Հարկավոր է, որ իրենց հետ սերտ կապ ունենանք, որպեսզի հնարավորին չափ կապվեն մեր մշակույթի հետ: Ահա այդ պատճառով եմ ես այստեղ գտնվում:

Ըստ Գաբրիելզի, «այս մարդկանց մեկուսացնելն իմաստ չունի, դա պատճառ կղառնա, որ մեզնից ու մեր հասարակությունից օտարվեն: Նրանք Գենթ քաղաքի բնակիչներ են: Գենթում բնակվող թուրքերի մի քանի տասնյակ տոկոսը համակրում են էմ. Հա. Փե.—ին»:

Միայն քաղաքապետը չէ, որ Գորշ Գայլերի համագումարի հյուրն է: Բելգիայի թուրքական դեսպանության մշակութային կցորդ Թուգա Յարմանն էլ ներկա է սրահում: Պարզվում է, որ

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի նախագահ Հիքմեթ Յիլդիզդեմիր Բելգիայի թուրքական ֆեդերացիայի նոր ընտրվող վարչության ընտրական հանձնախմբի անդամ է:

Բեմ է բարձրանում Ասլանբեյ Կադիյևը: Նա Չեչնիայի դիմադրության ներկայացուցիչն է Եվրոպայի տարածքում: Խոսք է առնում անգլերեն լեզվով: Նախ ներողություն է խնդրում, որ թուրքերեն չգիտի ու այսպես շարունակում:

— Շատերի համար հարցական է, թե մենք ինչպե՞ս ենք կարողանում դիմադրել ռուսների՝ բազմիցս ավելի մեծ ուժերին: Շատ պարզ պատճառով՝ «մենք Ալլահին ենք հավատում: Նրանց տեխնիկան չի կարող մեր հավատքին պարտության մատնել»:

Ծափահարություն:

— Շնորհակալություն Բելգիայի ու Հոլանդիայի օգնության համար:

Ծափահարություն:

— Դուդա՛ն, Դուդա՛ն, — գոռում է բազմությունը:

— Մի՛ հավատացե՛ք ռուսներին, որ ասում են, թե մենք զոհեր ենք տվել, — բղավում է Կադիյևը լուսնագների տարափի տակ: — Դա սուտ պրոպագանդա է:

Երկու պատանիներ անցնում են առաջ: Թափահարում են իրենց դրոշակներն ու կանչում. «Չե՛չնիա, Չե՛չնիա»:

— Ի՞նչ, թարգմանե՞մ համարդ. հարց չկա. ի՛նչ հրաշալի է այստեղ, տես ինչքա՛ն մարդ կա:

Ստեյլայի նոր թարգմանիչը մոտ տասնհինգ տարեկան բարյացակամ մի աղջիկ է: Իր գլխին կրում է վարսերիզ՝ այս տեքստով՝ «Բոզբուրք», որը նշանակում է Գորշ Գայլ:

— Ո՞ւմ են պատկանում այս դրոշակները:

— Դա մեր կուսակցությանն է՝ Էմ. Հա. Փե.—ինը:

— Ի՞նչ է ուզում այս կուսակցությունը:

— Մենք խաղաղություն ենք ուզում:

Աղջիկն ասում է, որ ինքն անդամ է, և դրա պատճառն էլ իր հայրն է:

— Հայրս երկար ժամանակ է, որ անդամ է: Հեռուստացույցում գեղեցիկ պատկերներ տեսա մեր կուսակցությունից ու մտածեցի՝ ինչո՞ւ ես էլ անդամ չդառնամ:

Նա բնակվում է Գենթում ու հաճախում է առևտրի դպրոց: Թեպետև, սահուն ֆլամերենով է խոսում, սակայն ասում է՝ ֆլամս չի. «Ես թուրք եմ»:

Իր հինգ տարեկան քույրն էլ գլխով է անում. «Ես էլ թուրք եմ»:

— Մեր հարևանները մեզ հայիոյում են ու «կեղտոտ թուրք» անվանում, — շարունակում է Ստեյլայի թարգմանիչը: — Բայց մենք կեղտոտ չենք: Մենք նախքան աղոթելը լվացվում ենք: Քրիստոնյաները դա չեն անում: Բայց բելգիացիները մեծ մասամբ լավ մարդիկ են: Նույնիսկ ոմանք մեզ լավ են հասկանում: Իմ դասատուներից մեկը ուսումնասիրել է մեր հավատը: Նա նույնիսկ կրոնափոխ է եղել և հիմա մուսուլման է:

Երեխաները պտտվում են հողանդացի հյուրի շուրջը:

— Կուզե՞ս քեզ սովորեցնենք՝ ինչպես Գորշ Գայլի բարև տաս, — ասում են ու Գորշ Գայլի բարև բռնում:

Բազմությունն արեկոծվում է:

— Գալիս է, գալիս է:

Շրջապատված իր քիկնապահներով՝ Ալփարսլան Թուրքեշը մտնում է սրահ:

— Ալփարսլան Թուրքեշ, Ալփարսլան Թուրքեշ, — գոռում են մարդիկ, բարձրանում են իրենց նստարանների վրա կամ խոնկվում առաջ, որպեսզի իրենց Բաշբուդին մոտիկից տեսնեն:

Թուրքեշը քայլում է դեպի առաջ, դեպի բազմոցը, որ հենց իր համար բեմահարթակի առջև է դրված, ու փռվում մեջը: Նա նստած է այնպես, որ իր քիկունքը դեպի բազմությունն է, այնպես որ, ոչ ոք իրեն չի կարող տեսնել:

Բեմահարթակին մի հոգի գոռում է, որ այսօր իր կյանքի ամենաերջանիկ օրն է, որ իր իղձն իրականացվեց, Բաշբուդ Թուրքեշն այստեղ եկավ:

Ստեյլան փորձում է հնարավորին չափ դեպի առաջ գնալ, սակայն Թուրքեշն անտեսանելի է: Երբ նա փորձում է մի նստարանի վրա նստել, մի կարգապահ մոտենում է իրեն:

— Ներեցե՛ք տիկին, այս շարքերն ապահովված են, — ասում է նա հողանդերենով:

Բարի երիտասարդ է երևում:

Հնչում է երաժշտություն: Բազմությունը խելագարվում է երգիչ Յիլդիզ Դոզանի երաժշտությամբ: Երիտասարդներն իրենց

աթոռների վրա վեր են ցատկում, մարդիկ թափահարում են դրոշակները, ամենուրեք վեր են ցցվում Գորշ Գայլի ականջներ: Յիլդիզ Դոզանի երգերը Թուրքիայի մասին է: Իր համբավի համար նա պարտական է իր ամենահայտնի համարին՝ «Կամ սիրում ես Թուրքիան, կամ թե չէ կորի՛ր, հեռացի՛ր»:

Բեմահարթակից մի մարդ սկսում է բարձրաձայն կանչել: Մի խումբ մարդիկ, որոնք իրենց ձեռքերում ծրար են կրում, շարքով անցնում են դեկավար Թուրքեշի առջևից: Նրանք հանձնում են ծրարները բարձրախոսի հետևում կանգնած մարդուն:

Ստեյլան դարձյալ փորձում է շարժվել ևս մի քայլ դեպի առաջին շարքերը: Այնտեղ դարձյալ կանգնած է երիտասարդ պահակ-կարգապահը:

— Շատ հետաքրքրված ես երևում:

— Ի՞նչ են անում այդ մարդիկ բեմահարթակում,— հարցնում է Ստեյլան:

— Ինձ հետևիր,— ձեռքով է անում պահակ-կարգապահը:

Նրան առաջանորդում է մի ցուցապաստառի հետև: Այնտեղ գրուցելն ավելի քիչ ուշադրություն կգրավի:

— Եվրոպայի թուրքական ֆեդերացիայի համար փող են հավաքում. դա Եվրոպայի բոլոր թուրք ֆեդերացիաների համադրող կազմակերպությունն է,— բացատրում է պահակը:— Ծրարների վրա, որ նրանք հանձնում են, նշված են իրենց անունը, մասնաճյուղն ու նվիրատվության գումարը:

Ամստերդամ ու Արնհեմ անունները հաճախակի են լսվում: Հարկավ, այդ բաժանմունքները շատ առատաձեռն են:

— Ինչի՞ ես այստեղ եկել,— հարցնում է պահակը:

— Ես հետաքրքրված եմ թուրքական մշակույթով:

— Իմ անունն Ալի է,— ասում է պահակը:— Հետո, «երբ այս բոլորը վերջանա, մի հանգիստ շունչ կքաշեմ: Արդեն ժամը ինն է, որ ոտքի վրա եմ: Ոչ սուրճ, ոչ մի կտոր հաց, ոչինչ չեն տվել մեզ:

— Ինչո՞ւ չես նստում:

— Անկարելի է, դա ընդունելի չէ իրենց համար,— Ալին ապա մի ծխախոտ է վառում:— Այս ամենը անում են անվճար: Որպես Թուրքեշի քիկնապահ՝ իր հետ գնացել եմ Չեչնիա ու Ադրբեջան այնտեղի մարդկանց օգնելու համար: Ճանապարհաձախար

ինքս եմ վճարել: Դա անում եմ գաղափարի համար: Մարդս պիտի մի գաղափար ունենա, այլապես կյանքն իմաստ չունի: Բայց գալիս է մի պահ, որ այլևս ի վիճակի չես տակից դուրս գալ:

— Ինչի՞ համար է այսքան դրոշակ այստեղ կախված:

— Դե, մենք Էմ. Հա. Փե.—ից ենք, ընկերուհի, Գորշ Գայլերի կուսակցությունից. սա կուսակցական համագումար է:

— Ի՞նչ է ասում Էմ. Հա. Փե.—ն:

— Մենք ուզում ենք հին թուրքական կայսրությունը վերականգնել:

— Ուրեմն, նախկին սովետական հանրապետություններն էլ պահանջո՞ւմ եք:

— Հա՛, իհարկե՛, դրանք բոլորը մերն են:

— Իսկ դու ի՞նչ գործ ունես այդ հարցերի հետ. չէ՞ որ դու ապրում ես Բելգիայում:

— Հա, քեզ համար դժվար է հասկանալ,— ասում է Ալին:— Իմ ներսում ես թուրք եմ:

Նա ցույց է տալիս բեմը.

— Տես, Թուրքեշն է այնտեղ նստածը, նա մեր դեկավարն է: Կուզե՞ս Թուրքեշին մոտիկից տեսնել:

— Այո՛:

— Ինձ հետ արի,— հետո՝ մի քիչ կասկածանքով,— դու վստահելի ես, չէ՞:

Երբ Ստեյլային պահակների շրթայից ներս է առաջնորդում, իր ընկերներն սկսում են քթի տակ բողոքել:

Ահավասիկ, Ալփարսլան Թուրքեշը:

Առաջին հայացքից կարելի է ասել, որ նա հրեա է: Աչքի են ընկնում մաշկի կնճիռները: Ծրթունքները դեպի ներս են սեղմված, ոնց որ տառապի շնչահեղձությունից: Փոքր դեմքի վրա իշխում են մեծ հոնքերը: Մոայլ հայացքը սևեղծված է բեմահարթակի վերևում կախված դրոշակներից: Ալեհեր ծերուկ՝ բազմած իր գահին: Ալիի գործընկերները նշան են անում. «Վերադարձե՛ք»: Հետո Ալին Ստեյլային տալիս է մի կտոր թուրք՝ հեռախոսահամարով. «Կզանգահարես, կուզեմ խոսել հետդ: Կարևոր է»:

Ժամը յոթն է: Թուրքեշը դեռևս բեմ չի բարձրացել: Համագումարի մասնակիցներին, թվով մոտ չորս հազար, նախապատրաստում են լոզունգներով, բղավոցներով ու երաժշտու-

թյամբ: Ոմանք իրենց ժամանակն սպանում են միջանցքներում թրև գալով կամ սեղանիկների շուրջ պտտվելով, որտեղ վաճառվում են էմ. Հա. Փե.-ի գրքեր, Գորշ Գայլի պատկերով «թի-շր-թեր»⁴, բրիլյակներ, փոքր գորգեր, կցասեղներ, վարսերիզներ, դրոշիկներ, շնորհավորական բացիկներ:

Կանանց զուգարանը ծխախոտի ծխից կապտին է տալիս: Գլխակապով կանայք շտապ ծխում են: Մի հարկ վերև աղոթարան են պատրաստել: Այստեղ շատ մարդ չկա: Բազմության մեջ մի հայր իր երեխային գրկել ու բարձրացնում է: Երեխայի ձեռքին տալիս են մի դրոշակ: Հետո նա Գորշ Գայլի բարև է բռնում: Այդպես էլ իրեն լուսանկարում են: Բեմահարթակին ընտրական հանձնախումբը հայտարարում է Բելգիայի թուրքական ֆեդերացիայի նորընտիր վարչության անդամների անունները:

Ժամը ութն է:

— Բաշբուղ Թուրքեշ:

Բաշբուղը բարձրանում է բեմ:

Մարդիկ դարձյալ թռչում են իրենց աթոռների վրա կամ խոնկվում են առաջ: Սրահի աջ անկյունում մի քանիսը խոսափողով պտտվում են ու աշխույժ ձեռքերը թափահարում: Այս անկյունից է, որ դեկավարվում են լոզունգները:

— Թուրքիան այստեղ է, ո՞ր է Փե. Բա. Բա.—ն:

— Մենք կամավոր զինվորներ ենք, կպայքարենք Փե. Բա. Բա.—ի դեմ:

— Չեչնիան ռուսների գերեզմանն է լինելու:

— Թուրքիան Ապոյի գերեզմանն է լինելու: (Ապոն Փե. Բա. Բա.—ի դեկավար Աբդուլլահ Օջալանի մականունն է):

— Թուրքեշ վարչապետ:

— Թուրքեշ, ուր էլ գնաս, մենք քեզ հետ ենք:

Համահավաքում ներկա գտնվող մի շարք թերթերի լրագրողներ, ինչպես «Հյուրիյեթ» (1 մայիսի 1996) և «Թուրքիյե» (1 մայիսի 1996), այսպես են գեկուցել Ալփարսլան Թուրքեշի խոսքերն իր ելույթում՝ «Ժամանակն ապացուցել է ձեր դեկավարի իրավացիությունը: Այն բոլորն, ինչ ես մինչ այժմ ասել եմ, հատիկ առ հատիկ կատարվել է: Աշխարհը կառավարվում է վայրի անտառի օրենքներով: Միացյալ ազգերի և այլ միջազգային կազմակերպությունների գոյությամբ հանդերձ, Բոսնիայում,

Չեչնիայում ու Ադրբեջանում դաժանություններ են տեղի ունենում, ու մարդիկ խոշտանգվում են: Իսկ մեզ մոտ չարական բանդաները, որ նպատակադրված են մեր հայրենիքին հարվածելու, ճգնում են մեր միասնականությունը խափանել:

Համաձայն հենց նույն լրագրողների, երբ Թուրքեշն իր ճանում այստեղ հասավ, բազմությունն սկսեց բարձրաձայն գոռալ:

— Ասա՛ մեռնենք, ու կմեռնենք, ասա՛ սպանենք, ու կսպանենք:

— Թուրքիան այստեղ է, ո՞ր է Ապոն:

— Թուրքիան Ապոյի գերեզմանն է լինելու:

— Մենք կամավոր զինվորներ ենք, մենք կփշրենք Փե. Բա. Բա.—ին:

Թուրքեշը շարունակում է.

— Ես չեմ ասում, որ դուք պետք է մեռնեք կամ սպանեք: Ես ասում եմ, որ դուք պետք է ապրեք: Էմ. Հա. Փե.—ն մի կուսակցություն է, որ նացիոնալիզմի գաղափարը դարձրել է իր քաղաքական հիմնական սկզբունքը: Մենք մեր պայքարը կշարունակենք օրենքի սահմաններում ու դեմոկրատական կարգով: Դժբախտաբար, մեր երկրում չարական ուժերն այժմ հզոր դիրքերում են գտնվում, իսկ բարի ուժերը՝ թույլ դիրքերում: Երբ մենք իշխանության գլուխ գանք, դրությունը հիմնովին փոխվելու է: Չարական ուժերը նահանջելու են, իսկ բարի ուժերը իշխող դիրք կգրավեն:

Եթե ուզում ենք, որ մեր իրավունքները, ինչպես նաև մարդու իրավունքները մեր հայրենիքում մշտապես պաշտպանվեն, որիչ ճար չունենք, բացի այն, որ ջանանք, որ մի գորեղ հասարակություն, զորեղ մի ազգ և զորավոր պետություն ստեղծենք: Այդ բանին հասնելու համար պետք է կարողանանք տնտեսապես մեր ոտքի վրա կանգնել և գիտության ու նորագույն տեխնոլոգիայի բնագավառում, աշխարհի առաջատար ուժը դառնանք: Մենք պահանջում ենք, որ նրանք, որոնք իրավունքի տեր են, իրենց իրավունքն ստանան: Մենք պահանջում ենք, որ օրենքը, արդարությունն ու մարդու իրավունքներն, ամենուրեք, ամբողջ աշխարհում իրականացվեն: Այդ բանն իրագործելու համար բացարձակապես անհրաժեշտ է, որ մենք տնտեսապես ուժեղ և զարգացած մի երկիր դառնանք: Մենք՝ Էմ. Հա. Փե.—ականներս,

ամեն ինչ անում ենք, որպեսզի մեր երկիրն այդտեղ հասնի: Մեր քափած ջանքերը, մինչև այստեղ, վատահարյար ապարդյուն չեն անցել: Այն ժամանակ, երբ Թուրքիան սովետների կրակի տակ էր գտնվում և մարքսիստական իդեոլոգիան կազմակերպված ձևով մեր ժողովրդին իր ահաբեկչական հարվածների տակ էր առել, մենք այս սպառնալիքին դեմ հանդիման կանգնեցինք՝ էմ. Հա. Փե.—ին ու շարժմանը զորաշարժի ենթարկելով: Մեզնից շատերն իրենց կյանքը տվին, որպեսզի Թուրքիան էլ նույն ճակատագրի գոհը չդառնա, ինչ որ Աֆղանստանին եղավ: Այժմ մեր այսօրվա նպատակն այն է, որ արդարությունն ու մարդու իրավունքներն իրականացնենք ու այն երաշխավորենք: Հիմա մենք պայքարում ենք այդ նպատակի համար: Շնորհիվ ձեզ, այսօր այսչափ հոծ թվով ազնիվ մարդիկ հավաքվել են այստեղ: Նրանք առաջամարտիկներն են մեր սուրբ գործի և այն ամեն ինչի, որ դա ապագայում մեզ կպարզկի:

Մենք արդարության համար ենք պայքարում և միշտ պատրաստ ենք ոտքի ելնել այն պաշտպանելու: Մեր առաջխաղացումը դեպի արդարություն ոչ ոք չի կարող կասեցնել: Մենք թուրք ազգի զավակներս, ներկայացնում ենք մի քաղաքակրթություն, որը դարեր շարունակ ծառայել է մարդկությանը: Մեր մեջ վառվում է գորավոր ազգ ու պետություն ստեղծելու փափագը՝ ազգ ու պետություն, որ աստվածավախ ու բարձր բարոյականության տեր են: Այս նպատակի համար մենք անդուլ ու անդադար աշխատում ենք ու այդպես էլ կշարունակենք աշխատել: Ոչ մի արգելք չի կարող մեր առաջն առնել, ոչ մի ուժ չկա աշխարհում, որ մեզ կարողանա արգելել մեր սուրբ նպատակին հասնելուց: Այդպիսի մի ուժ երբեք չի եղել ու երբեք էլ չի լինելու:

Թուրքեշն ավարտում է իր խոսքը: Պատրաստվում է մեկնելու: Երբ նա սկսում է քայլել, հիստերիա է առաջանում բազմության մեջ: Մասսան խուժում է դեպի այն կողմ, ուր նա գտնվում է: Մարդիկ ոտքի տակ են ընկնում, ոմանք շնչահեղձ են դառնում, աթոռները վայր են ընկնում, երեխաներն սկսում են ճչալ ու լացել:

Մրահը արագորեն դատարկվում է:

Մի թուրք մոտենում է Ստեյլային ու գերմաներենով ասում. «Վիր զինդ այնե նացիոն, ունդ վիր քեմֆըն ֆյուր ունգերե նացիոն»⁵: Ժպտում է ու հեռանում:

Համագումարում կարգապահ Ալին մի հեռախոսահամար էր տվել Ստեյլային: Հոլանդիայից Ստեյլան զանգահարում է: Գծի այն կողմը հենց ինքն՝ Ալին է:

— Կուզեի խնդրել, որ Բելգիա գաս. բաներ ունեմ քեզ ասելու,— ասում է Ալին:

— Ինչի՞ մասին:

— Հեռախոսով չեմ կարող ասել:

Ստեյլան տատանվում է. գնա՞, թե՞ չգնա:

Արդյո՞ք սա մի թակարդ չի:

Չի թվում: Ալին այն տպավորությունը չթողեց, որ զենքով է իրեն դիմավորելու:

Բելգիա. Լոկերեն: Պիցցայի մի ճաշարանում պիտի հանդիպի Ալիին: Երբ ներս է մտնում Ստեյլան, Ալին մեկ ուրիշ մեկի հետ այնտեղ նստած է: Ալին փակում է դռան կողպեքը: Հետո բացատրում. «Խանութը դեռևս փակ է. այլապես հաճախորդները ներս կմտնեին ու կխանգարեին»:

Ալին ասում է, որ ինքն այդ պիցցերիայի պարտյորն է: Իր հոլանդացի հյուրի համար սկսում է պիցցա պատրաստել: Հետո անցնում է բուն հարցին:

— Համագումարում ես քեզ շարունակ աչքի տակ էի պահում,— ասում է Ալին:— Շատ հեշտ չէր գործս, դու ամեն տեղ գլուխ էիր քաշում:

— Իսկ ինչո՞ւ պիտի ինձ աչքի տակ պահեիր:

— Որովհետև այն մարդը, որ քեզ ընկերակցում էր, Փե. Քա. Քա.—ից է: Առնվազն, մենք այդպես ենք ենթադրում: Ո՞վ է նա իսկապես, և ո՞վ ես դու: Դա մենք ուզում ենք իմանալ:

Ստեյլային հաջողվում է Ալիին համոզել, որ նա «այդ մարդուն» համարյա չի ճանաչում և նրան այլևս չի էլ տեսել, որ ինքը պարզապես հետաքրքրված է թուրքական մշակույթով:

— Այդ մարդն ինձ ասաց, որ գնալու ենք տիպիկ թուրքական մի տոնախմբության: Որտեղի՞ց գիտենալի, որ դա կուսակցական համագումար է:

Ալին բացվում է: Ասում է, որ Անթվերպենի Գորշ Գայլերի բաժանմունքի վարչության անդամ է: Միությունն ունի մոտ եր-

կու հարյուր անդամ: Պատկառելի քանակ: Սակայն, անդամների «որակն ու մակարդակը» իրեն մտահոգում է:

— Մեր Անթվերպենի անդամներից միայն վեցն են վստահելի,— ասում է նա մռայլ:— Այս վեցից էլ պահանջվում է ծառայել որպես Թուրքեշի քիկնապահ:

— Ինչո՞ւ մյուս անդամները վստահելի չեն,— հարցնում է Ստեյլան:

— Մենք ունենք թմրամոլության պրոբլեմ: Մեր երիտասարդ անդամներից շատերը թմրամոլ են: Դրանով հանդերձ, մենք նրանց կուսակցությունից չենք վտարում: Այնքան ժամանակ, երբ սիրում են իրենց հայրենիքը, ժողովուրդն ու դրոշակը, պահում ենք իրենց:

— Շատ նախանձելի կացության մեջ չես երևում:

Ային գլխով է անում:

— Դրանից բացի, մեր կուսակցությունը ֆինանսապես տկար է: Ռիֆահ կուսակցությունը, որին երևի ճանաչում ես, արմատական մոսուլմաններին են ասում, ընդհակառակն, հարուստ է: Իբր թե դա բավական չէ, Անթվերպենում Ռիֆահը մեզ սևացնելու կամպանիա է տանում:

Քննդատությունների շարանը բազմանում է: Ինքը շատ գոհ չի իր ղեկավար Բաշբուղ Թուրքեշից:

— Մարդը զառամյալ է դարձել,— ասում է Ային:— Իրեն շրջապատել է անբան, ապիկար մարդկանցով:

— Ինչպե՞ս թե անբան:

Ըստ Այիի, Թուրքեշն ու իր վստահված անձինք շատ փափուկ են:

— Մենք կարիք ունենք երիտասարդ ու վճռական մեկի: Մենք ուզում ենք մարտի մեջ մտնել, սակայն Թուրքեշը դա արգելում է: Նա այլևս ուժի կիրառում ու բռնարարք չի թույլատրում: Ցավալի է, որովհետև մենք միայն մի նշանի ենք սպասում իրենից:

— Մի նշա՞ն:

— Այո՛, այն ժամանակ Թուրքիայում արյան հեղեղ կհոսի: Ես ի նկատի ունեմ անջատողականներին,— բացատրում է Ային: Նա վախենում է Քրդական բանվորական կուսակցության Փե. Քա. Քա.-ից, «որն ուզում է երկիրը կտոր-կտոր անել»:

— Մենք պետք է Փե. Քա. Քա.-ին ջնջենք,— ասում է նա:— Մենք ուզում ենք մարտի մեջ մտնել: Նույնիսկ այստեղ՝ Բելգիայում, ուզում ենք իրենց հարվածել: Ես՝ ինքս, մի անգամ ընդհարվել եմ իրենց հետ:

Մանրամասնությունների մեջ չի ուզում մտնել:

— Բացի Փե. Քա. Քա.-ից, ուրիշ թշնամիներ էլ ունե՞ք:

— Ալկիթները, կոմունիստներն ու հրեաները:

— Հրեաների հետ ի՞նչ թշնամություն ունեք,— հարցնում է Ստեյլան:— Չէ՞ որ իսլամի ու հրեականության մեջ շատ ընդհանրություններ կան:

Խորշանքով երեսը թեքում է. «Ես չա՛տ գիտեմ»: Չի էլ ուզում գիտենա: Իր ամենամեծ սերը Բաշբուղ Թուրքեշն է, նրանով հանդերձ, որ նա շատ է ծերացել:

— Գիշերները նրան եմ երազում: Հաճախ մտածում եմ մեր՝ Չեչնիա կատարած այցի մասին: Այնտեղ գաղտնի կռվում են հինգից վեց հարյուր էմ. Հա. Փե.-ի անդամներ:

— Ինչպե՞ս է դա տեղի ունենում:

— Չեմ կարող ասել: Մենք էլ մեր գաղտնիքներն ունենք:

— Ի՞նչն է քեզ քաշում դեպի Գորշ Գայլերը:

— Չգիտեմ ինչպե՞ս քեզ բացատրեմ,— ասում է Ային՝ որոնելով բառեր:— Ինձ համար միայն թուրք ժողովրդի ազատությունն է կարևոր: Ամեն ազգ, ինքն իր գլխի ճարը պիտի տեսնի. համաձայն չե՞ս:

Հրաժեշտի ժամանակ, Ստեյլային է հանձնում մի ծաղկեփունջ:

— Մրանք հատկապես քեզ համար եմ գնել հանգստարանից,— ասում է նա ու հարցնում, թե Ստեյլան դարձյալ իր մոտ՝ Անթվերպեն կգա՞. իր կազմակերպությունն էլ, իմիջիայլոց, այնտեղ է:

— Ինչո՞ւ դու Հոլանդիա չես գալիս:

Ային մի պահ լռում է ու խոկում:

— Ես Հոլանդիայում չմուծված երթևեկության տուգանքներ ունեմ: Արագ եմ քշել: Բելգիայի ոստիկանության մեջ մեր էմ. Հա. Փե.-ի անդամներն ինձ խորհուրդ են տալիս այդ տուգանքները չմուծել, որովհետև հոլանդացիներն էլ այստեղ նույնն են անում: Դու եկ Անթվերպեն:

Ալիի բերանից բոցրած խոսքը այն մասին, թե ինքը մի անգամ Փե. Քա. Քա.—ի ահաբեկիչների հետ ընդհարվել է, հավանաբար վերաբերում է 1994 թվի Բրյուսելի Մինք-Յոստեն-Նոդե քաղաքամասի խռովություններին: Այդ թվականի հունվարի սկզբին, թուրքերը հարձակվեցին քաղային մշակութային մի տան վրա, որտեղ հավաքվել էին մոտավորապես հարյուր հիսուն քյուրդ մտավորականներ: Քրդերը դիմեցին փախուստի: Դրան հաջորդող օրերին, մի քանի հարյուր թուրք երիտասարդ, քրդական խանութներն ու սրճարանները քաղանքին ու տակնուվրա արին: Իսկ սրան հաջորդող բողոքի ցույցի ընթացքում, դարձյալ թուրքերը հարձակվեցին քրդերի վրա: Եղան վիրավորներ: Այդ դեպքերից կարճ ժամանակ անց, Բելգիայի արագործնախարար Տոբաքը հայտարարեց, որ խռովությունները Գորշ Գայլերի գործն է եղել:

Բելգիայի ժողովրդական միության (Վոլկս-ունի) կուսակցության անդամ սենատոր Վիլի Կայպերզը ավելի առաջ է գնում: Նա ասում է, որ Բելգիայում գործող թուրքական հյուպատոսարանի մի անդամ՝ Օսման ծածկանունով, հրահրողներից մեկն է եղել:

— Այդ մարդուն ես տեսել եմ գործը կատարելիս: Ըստ իմ աղբյուրների, այս Օսմանը դիվանագիտական կարգավիճակ ունեցող մեկն է,— ասում է Կայպերզը:

— Ովքե՞ր են ձեր աղբյուրները,— հարցնում ենք:

— Մարդիկ են դիվանագիտական շրջանակներից: Ցավում եմ, որ անուններ չեմ կարող տալ,— պատասխանում է Կայպերզը:

1 Բելգիայում խոսվող հոլանդերեն լեզվի տարբերակը:
2 Բելգիայի բնակչության մի մասը ֆրանսախոս է, մյուսը՝ ֆլամախոս:
3 Christelijke Volkspartij (Թրիստոնյա-ժողովրդական) բելգիական կուսակցություն
4 Կարճ թևով փակ վերնաշապիկ
5 «Մենք մեկ ազգ ենք և պայքարում ենք մեր ազգի համար»

VII. Գառնուկները դառնում են գայլեր

«Մենք Ձեր գործն իրականացնող մեքենան ենք այստեղ»

Թուրքական ֆեդերացիան ինքն իրեն քողագերծում է

Ֆուտբոլը որպես Գայլերի հոգեբուժման միջոց

Կանանց ազատագրում, թե՞...

Չոհվածների ոգեկոչում

«Նարնջագույն առյուծ»՝ Դորդրեխտում

Ալևիքները կարո՞ղ են վերադառնալ

«**11** մայիսի, 1996 – մշակութային միջոցառում»: Այս տեղեկանք–հայտարարությունը մենք կարողանում ենք գտնել թուրքական ֆեդերացիայի գործունեության պլանի ցանկում: Արդյո՞ք ֆեդերացիան ի նկատի ունի Բելգիայի Հասելթում տեղի ունեցած համագումարը:

Հարցը պարզելու համար դիմում ենք ֆեդերացիայի վարչությանը:

— Որտե՞ղ է տեղի ունեցել այս միջոցառումը,— ուղղակի անցնում է հարցին Ստեյլան:

— Դորդրեխտում,— պատասխանում է կոորդինատոր Էքենը:

— Ուրեմն ո՞չ Հասելթում,— հարցնում է Ստեյլան:

— Բեր այստեղ գործունեության պլանը,— ասում է Էքենին՝ նախագահ Յիլդիզելին: Էքենը հանձնում է նրան ֆեդերացիայի գործունեության պլանը:

— Իրո՞ք Հասելթում չի եղել,— նորից հարցնում է Ստեյլան:

— Ոչ,— ասում է Էքենը:

— Վստա՞հ ես:

Էքենը վարանում է. «Համենայն դեպս այդ օրը Հասելթում էլ, ինչպես շատ տեղեր, մշակութային ձեռնարկ տեղի ունեցած կլինի»:

— Հասելթի մասին է հայտարարությունը,— ասում է Յիլդիզելին, իր ֆեդերացիայի գործունեության պլանը քերթելուց հետո: Եվ, իրոք, իրենք էլ այդ օրն այնտեղ են եղել:

— Ինչպիսի՞ միջոցառում էր դա,— հարցնում է Ստեյլան:

Էքենը պատասխանում է.

— Դա մշակութային մի ձեռնարկ էր: Ներկա էին ժողովրդական պարախմբեր: Ասմունքային ելույթներ էին տեղի ունենում:

— Թուրք երգիչները երգում էին,— վերհիշում է Յիլդիզելին:

— Կուսակցական համահավաք չէ՞ր դա,— հարցնում է Ստեյլան:

— Ոչ:

— Բայց չէ՞ որ Ալփարսլան Թուրքեշը պատվո հյուր էր,— ասում է Ստեյլան:

— Բոլոր քաղաքական կուսակցությունները հրավիրված էին,— ասում է Էքենն ու շարունակում,— զարմանալին այն է, որ մեծ մասամբ էմ. Հա. Փե.—ն է, որ ներկայացուցիչ է ուղարկում. շատ զարմանալի է, նույնը տեղի է ունենում նաև Հոլանդիայի՝ մեր մշակութային միջոցառումներում:

— Ինչպես նաև ձեր 1995 թվի հիմնադիր համաժողովո՞ւմ: Ըստ ձեր գործունեության պլանի, այն ժամանակ էլ հրավիրվել էր Թուրքեշը,— ասում է Ստեյլան:

Էքենը պատասխանում է.

— Բայց հրավիրվել էր նաև Թանսու Չիլերը: Թուրքիայում, մենք անձամբ հրավիրագիր ենք հանձնել իրեն: Թուրքեշինը փոստով ենք ուղարկել:

— Մեր առաջին համագումարին մենք հրավիրել ենք Հոլանդիայի բոլոր նախարարներին, կուսակցություններին ու պետական հաստատություններին: Ոչ ոք չներկայացավ:

— Միայն Թագուհուց մի հեռագիր ստացանք:

— Հասելթում ես էլ ներկա էի,— ասում է Ստեյլան:

Երկու զույգ աչքեր զարմանքով նայում են նրան:

Էքենը կոտրում է լռությունը.

— Ուրեմն ամեն ինչ տեսել ու լսել ես:

— Հասելթում բոլորն ինձ ասում էին, որ ես գտնվում եմ Էմ. Հա. Փե.—ի կուսակցության համաժողովում,— ասում է Ստեյլան:

— Ոչ:

Երբ խոսքը գնում է Էմ. Հա. Փե.—ի մասին, Յիլդիզելին ու Էքենը իրար խոսքի մեջ են մտնում:

— Գորշ Գայլն ամբողջ թուրքական աշխարհի համար մի

անմեղ խորհրդանիշ է և ոչ միայն Թուրքիայի համար,— ասում է Յիլդիզելին,— կուգես, արի գնանք Ղազախստան, Ադրբեջան, Թուրքմենստան:

— Այն ժամանակ կտեսնես, թե ինչպես Գորշ Գայլին այնտեղ իրենց գլխի վրա են դնում,— լրացնում է Էքենը:

— Թուրքմենստան, Ղազախստան... այս բոլոր թուրքական երկրները,— միջամտում է Յիլդիզելին:

— Թրքալեզու հանրապետություններ,— ուղղում է նրան Էքենը,— այնտեղ նույնիսկ պետական հաստատությունների պատից Գորշ Գայլի նշան է կախված:

— Հասելթի սրահը ողողված էր դրոշակներով, որոնք կրում էին երեք կիսալուսնի նշանը: Դա էմ. Հա. Փե.—ի խորհրդանիշն է, մի՞թե չէ:

Յիլդիզելին գլուխը թափահարում է.

— Այդ սիմվոլը հարյուրավոր տարիների պատմություն ունի, դա գալիս է Օսմանյան կայսրության ժամանակներից:

Իսկ իրականությունն ի՞նչ է: Մի գրքույկում, որ էմ. Հա. Փե.—ն հրատարակել է ընտրությունների հանգամանքով, տեղեկացնում է, որ կուսակցությունը բացառիկ արտոնագիր ունի երեք կիսալուսին նշանի, ինչպես նաև «Բոզքուրթ» (թուրքերեն՝ Գորշ Գայլ) տերմինի գործածման համար:

— Դա թուրք լինելու սիմվոլ է: Դու թուրք ես, թուրքի մշակույթ ունես. դա մի սիմվոլ է միայն, տիկի՛ն,— քմծիծաղում է Էքենը:— Հերոսության, վճռականության ու բարության նշան է: Հոլանդիան էլ ունի իր Նարնջագույն առյուծի սիմվոլը՝ Գիտե՞ս, թե այդ երեք կիսալուսիններն ինչ են նշանակում:

Թղթի վրա նկարում է.

— Առաջին կիսալուսինը նշանակում է հավատք: Երկրորդը՝ ազնվություն: Երրորդը խորհրդանշում է լավ գործ:

Էքենը ռաքի է ելնում ու հետո գալիս է՝ մի գիրք ձեռքին: Կազմի վրա նշված է՝ «Իրականությունը Գորշ Գայլի մասին»: Պարզ ու հասկանալի լեզվով գրված մի գիրք չէ դա: Գորշ գայլի իմաստը բացատրվում է, օրինակ, այս տեսակ շարադրանքներով. «Գորշ Գայլերի մասին լույս տեսած հրատարակություններում, անանուն գրողներ, Գորշ Գայլին մեծ մասամբ սերտ կապի մեջ են դնում Էմ. Հա. Փե. թուրք քաղաքական կուսակցության, այդ

կուսակցության ծրագրի ու նրա ղեկավարի հետ: Այդ պատճառով, հիշյալ գրողները էմ. Հա. Փե.-ի անդամներին ու համակրողներին ներկայացնում են Գորշ Գալեր: Սույն գրողի դատողությունը էմ. Հա. Փե.-ի մասին, նմանապես հիմնված է այդ անանուն գրողների սուբյեկտիվ ըմբռնումների վրա»:

Գիրքը մեկն է հրատարակությունների այն մեծ շարանից, որ լույս է ընծայում «Թուրքական մշակույթի ու պատմության հաստատությունը»: Էքենի ասելով, սա մի հաստատություն է, որ ուսումնասիրություն է կատարում Հոլանդիայի թուրք հասարակությանը կապվող իրական հարցերի մասին, «հատկապես այն հարցերի ու նյութերի մասին, որ բացասական են անդրադառնում և կամ սխալ պատկերացում են տալիս թուրք պատմության, մշակույթի ու Թուրքիայի մասին»:

Որտե՞ղ է հաստատված այս հաստատությունը: Նույնիսկ Էքենի համար դա հանելուկ է:

— Եթե չեմ սխալվում, Դեն-Բոս քաղաքում, բայց ես իրենց հեռախոսահամարը չունեմ,— ասում է Էքենը: Հաստատության մի ուրիշ հրատարակության վրա նշված է միայն մի փոստարկղ՝ Ամստերդամում:

«Թուրքական մշակույթի ու պատմության հաստատության» հրատարակություններից են՝ Բրդերի ծագումը, Ռեակցիա «Ֆան Թրա» պառլամենտական զեկույցի մասին, Իրականությունը Փե. Բա. ԲԱ.-ի մասին – I, Իրականությունը Փե. Բա. Բա.-ի մասին – II:

Գրքույկներն ու պամֆլետները մասսայաբար ուղարկվում են թուրքական ու հոլանդական հաստատություններին:

Մի օր էլ մեր ձեռքն է ընկնում մի անվանացանկ՝ թուրքական ֆեդերացիային կից կազմակերպություններից: Յանկը պատրաստված է ներվարչական օգտագործման համար միայն: Անվանացանկը, սակայն, չի համապատասխանում ֆեդերացիայի գործունեության ծրագիր-պլանում նշված 55 անդամ կազմակերպությունների ցանկին:

Օրինակի համար, Արնհեմ քաղաքի «Ահմեդ Եսկի» կոչվող մշակութային կենտրոնը նշված չէ գործունեության պլանի ցանկում, մինչդեռ վերը նշված ներքին անվանացանկում հանդիպում ենք այդ անվանը:

Չանգահարում ենք ներքին ցանկի վրա նշված Ահմեդ Եսկիի համարը:

— Այլո,— լավում է գծի մյուս ծայրից:

Պարզվում է, որ մենք զանգահարել ենք մի մզկիթ, որը կցված է թուրք կառավարության կրոնական հարցերի պետական վարչությանը՝ «Դիանեթին»:

— Բայց ես խոսում եմ Ահմեդ Եսկիի հետ, այսպես չէ՞,— հարցնում է Մեհմեթը:

— Դուք որտեղի՞ց դա գիտեք,— հարցնում է մարդը:— Ինչպե՞ս եք մեր հեռախոսահամարը գտել:

— Փոստից:

— Դա հնարավոր չի,— ասում է մարդը:

— Ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու:

— Փոխնախագահի, բայց իմ անունը քեզ չեմ ասի:

Փոխնախագահը չի ուզում Ահմեդ Եսկիի մասին խոսել:

Հարցը պարզելու համար դիմում ենք Արնհեմի քաղաքապետարան, բայց այն էլ մեզ չի կարողանում օգնել: Քաղաքապետարանի իզական մի պաշտոնյա մեզ ասում է միայն, որ իրենք Ահմեդ Եսկի անունով մեկի չեն ճանաչում:

Դրանով հանդերձ, Ահմեդ Եսկին ներկա էր Բելգիայի համագումարում: Այնտեղ «Արնհեմի բաժանմունքը» շուքով ներկայացավ Բաշբուդին ու մի մեծ գումար փող նվիրաբերեց «բարի նպատակի» համար:

Մյուս կողմից, Ամստերդամի տասնվեց կազմակերպություններից, որոնք նշված են պաշտոնական ցանկում, միայն չորսին ենք կարողանում գտնել ներքին ցանկի մեջ: Պարզվում է, որ պաշտոնական ցանկում գտնվող մեծ թվով կազմակերպություններ այլ կազմակերպությունների բաժանմունքներն են: Ներքին ցանկը 36 անդամ-կազմակերպություն պակաս ունի պաշտոնական ցանկից:

Երբ թերթում ենք Ամստերդամի ընկերությունների գրանցման (առևտրի) պալատի թղթապանակները, հանդիպում ենք թուրք հաստատությունների մի անտառի: Միևնույն անունները կրկնվում են մի քանի տեղ, և ոչ սակավ, ամբողջ ընտանիքներ զբաղեցնում են վարչական ֆունկցիաներ և կամ այդ ֆունկցիաներն իրար մեջ փոխանակում են:

Այդ կազմակերպությունների մեծ մասը հաստատված են Ամստերդամ քաղաքի երկու հասցեում. փողոցների անունները՝ Ջեյբուրխտերդեյկ ու Յոհանես Պոստսթրաթ: Այս վերջինում է գտնվում Մասջիդի Ակսա մզկիթը:

Այս մզկիթին մենք հանդիպել ենք նախապես ոստիկանական «Էկստրյուս» գործողությունն ուսումնասիրելիս: Մզկիթից կատարվող հեռախոսագանգերը վերաբերում են Բաշբուլի գալուն ու նաև այն մասին, թե ինչպե՞ս կարելի է բաժանորդագրվել «Օրթադոլլու»-ին, այսինքն՝ այն թերթին, որ առնչվում է Էմ. Հա. Փե.-ի հետ:

Մերվեթ Յե-ն նույնիսկ պատվեր է ստանում Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի նախագահ Թուրքմեն Օնուրից ձևակերպելու կանոնադրություն չորս-հինգ հաստատությունների համար, որ պետք է շուտով հիմնադրվեն: Մեջբերում. «Մերվեթը պետք է նախապես ինվեստացիայի մի շարք հնարավորություններ գտնի, որոնք պետք է Ահմեդ Չե. Սե-ի հետ միասին իրագործի: (...): Թուրքմենն ուզում է իմանալ, թե արդյոք արտասահմանյան մի հաստատություն կարո՞ղ է անշարժ գույք գնել և թե արդյոք Բելգիայի կամ Լյուքսեմբուրգի մի հաստատություն կարո՞ղ է մի շենք կամ անշարժ գույք Հոլանդիայում նվիրաբերել մի հաստատության, թե՞ ոչ»:

Եվ ահա մի օր Ջելալ Ա-ն՝ թուրքական ֆեդերացիայի այժմյան փոխնախագահներից մեկը, զանգահարում է Էմ. Հա. Փե.-ին՝ Անկարա:

«Իրեն ներկայացնում է որպես «Ջելալ Ա. Հոլանդիայի կազմակերպություններից մեկի ներկայացուցիչ»: Նրան միացնում են Էմ. Հա. Փե.-ի բարձր պաշտոնյաներից մեկի՝ Անկարայի Քեչիորեն շրջանի քաղաքապետ Թուրգուր Ալթինոկի հետ:

Ջելալ Ա-ն տեղեկություններ է ուզում Ադրբեջանում տեղի ունեցող դեպքերի մասին: Նախագահ Էլչիբեյը պաշտոնանկ է եղել: Ալթինոկն ասում է, որ այդ բանում թուրք ժողովրդի թշնամիներն են մեղավոր: Էլչիբեյն ինքն էլ սխալներ է թույլատրել և օրինակ, կառավարական ապարատում կոմունիստներին ու դավաճաններին չի վերացրել:

— Ինչպե՞ս է դրությունը Հոլանդիայում, — իր հերթին հարցնում է Ալթինոկը:

Ջելալ Ա-ն ասում է, որ իրենք այստեղ խիստ աշխատում են և, որ դրությունը «շատ լավ է»: Հեռախոսագանգը բառացի այսպես է ընթանում. «Մենք ձեր հավատարիմ գործակիցն ենք: Այսօր առավոտից այստեղ նստած ենք ինֆորմացիա ըը... բան անելու... հավաքելու... ըը, բոլորս.. ըը, այստեղ մի կապի օդակ ենք, ձեր գործը իրականացնող մեքենան ենք այստեղ: Հիմա այս ինֆորմացիան, որ ձեզնից ստացա, կփոխանցեմ մեր բոլոր ընկերներին ... ինչքանով, որ կարողանամ»:

— Թուրքական ֆեդերացիան ջանում է արտադպրոցական աշխատանքների հնարավորություններ ստեղծել, — ասում է կոորդինատոր Էքենը: — Մի տեսակ ուսումնարան՝ վերահսկողական ֆունկցիայով, ուր թուրք երիտասարդները կարող են միաժամանակ դասընթացների հետևել թե՛ հոլանդերեն լեզվով և թե՛ իրենց մշակույթով: Եթե պրոբլեմներ ունենան, այնտեղ իրենց կօգնեն: Այսպիսով, ջանք է տարվում երիտասարդներին հեռու պահել հանցագործություններից:

— Իսկ հիմա ի՞նչ է դրությունը, — շարունակում է Էքենը: — Երբ դպրոցն ավարտում է, երեխան գնում է փողոց: Փողոցում թրև են գալիս իր մնան անգործ պատանիներ: Եթե մենք՝ ֆեդերացիային կից կազմակերպություններս, նրանց ընդունենք ու տեղ տանք, այն դեպքում նրանք հսկողության տակ կլինեն: Այսպիսի մի հանրակացարանում օրենքները հարմարեցվում են թուրքական կարգ ու ձևին ու իրենց մշակույթին: Իրենց համար բացատրվում է, թե ի՞նչ է թույլատրելի և, օրինակ, այն, որ մյուսների նկատմամբ հանդուրժող պետք է լինեն ու հարգանք ցուցաբերեն:

Պետական հասարակական հաստատություններն ի վիճակի չեն այս երիտասարդներին օգնելու, թեպետև նրանցում աշխատում են մեծ թվով միգրանտ աշխատողներ, կոորդինատորներ և փոքրամասնություններից կին աշխատողներ: Իսկ ես գիտեմ, թե թուրք երիտասարդներին որտե՞ղ պիտի գտնել: Ես գնում եմ սրճարանները, խոսում եմ իրենց հետ և իրենց գրավում դեպի մեր աշխատանքները: Ես գիտեմ ինչպես վարվել նրանց հետ: Ես գիտեմ, թե ամենից առաջ ո՞ր պատանու հետ պիտի խոսեմ. խոսում եմ նրանց հետ, որ իրենք իրենց հերթին մյուս պատանիներին էլ դեպի մեր կողմը քաշեն:

Օրինակ՝ նայիր մեր երիտասարդական կազմակերպության

նը: Այնտեղ գործում են օրենքներ և կանոններ, որոնք պետք է հարգվեն: Ով այնտեղ է գալիս, պետք է մասնակցի մի աշխատանքի. ասել է պետք է ֆուտբոլ խաղա:

Մոտավորապես ամեն մի միություն, որ կապված է Գորշ Գայլերին, ունի իր ֆուտբոլի խումբը. հաճախ մեկից ավել: Դա, իհարկե, չի նշանակում, որ բոլոր խաղացողներն այդպիսի մի քիմում Թուրքեշի համակրող են: Նրանց մեծ մասը սպորտի համար է գնում ակումբ:

— Ես միայն ուզում եմ ֆուտբոլ խաղալ. ուրիշ բանի հետ գործ չունեմ,— ասում է Չվեյնդրեխտի Գորշ Գայլերի ֆուտբոլի ակումբի մի խաղացող: Չի ուզում իր անունը տալ:

— Սա միակ ակումբն է, ուր ես կարող եմ գնալ, խաղալ: Ուրիշ ընտրանք չունեմ: Հոլանդական ակումբների մասին այլևս չեմ մտածում,— ասում է նա:— Մի երկու շաբաթ գնացի հոլանդական մի ակումբ: Ասացի, որ ուզում եմ խաղալ, բայց ոչ ոք ուշադրություն չդարձրեց: Հիմա արդեն պետք էլ չի:

Իր թուրքական ֆուտբոլի ակումբի մասին էլ նա շատ խանդավառված չէ:

— Շարունակ պրոպագանդա եմ անում Գորշ Գայլերի մասին: Երբեմն ստիպված գնում ես ժողովների: Ես աշխատում եմ տակից փախչել, բայց միշտ չի, որ հաջողվում է: Նրանք այդ ժողովները կոչում են տոնական երեկոներ, բայց դրանք քարոզչական ձեռնարկներ են էմ. Հա. Փե-ի համար: Ստիպված ես ականջ դնել ճառերին: Երաժշտություն էլ կա, բայց դրանք բոլորը Գորշ Գայլերի երգեր են: Բաժանում են էմ. Հա. Փե-ի դրոշակներ ու նշաններ: Այս ամառ Դորդրեխտում տեղի ունեցավ մի մեծ մրցաշար: Ես էլ մասնակցում էի: Դա նույնպես Գորշ Գայլերի մի մեծ շոու էր: Բայց ես՝ մեկս, ֆուտբոլ եմ խաղում միայն:

Ֆուտբոլի մրցաշարը, որը տեղի էր ունեցել 1966-ի հունիսի 9-ին՝ Դորդրեխտում, կազմակերպել էր թուրքական ֆեդերացիան: Պարզվում է, որ Գորշ Գայլերի շոուն չի սահմանափակվում մարզադաշտում: Այդ օրը քաղաքի փողոցներում քշում էին իրենց ավտոները Գորշ Գայլերն ու պատուհաններից թափահարում իրենց դրոշակները:

Այսպես է գրում Բաշբուդն իր «Թեմել Գյորուշլերում» (Հիմնական սկզբունքներ). «Ստեղծելու համար առողջ, խիզախ ու

որակյալ թուրք երիտասարդ սերունդ, պետք է օգտագործել սպորտի հրաշալի միջոցը: Ապա այսպես է շարունակում. «Յուրաքանչյուր թուրք պատանի, որ հրաժարվում է նոր հասարակություն, նոր ազգ և նոր պատմություն ստեղծելու իր պատասխանատվությունից, պետք է իմանա, որ նա դավաճանում է այս երկրի մայրերին, նրա զավակներին ու թուրք ազգի իդեալին: Թուրք երիտասարդությունը պետք է որպես առաջնորդող ուժ, թուրք ժողովրդին իր հետևից քարշ տա»:

Գնում ենք թաղային մի կենտրոն, ուր կա նաև մի մարզաբահ: Տնօրեններից մեկը, որը չի ուզում անունը նշվի, ասում է, որ ծայրահեղ աջակողմյան տենդենցներով մեծ թվով թուրք երիտասարդներ գալիս են իր մարզաբահը՝ ֆուտբոլ խաղալու: «Նրանք շարունակ պատերին էմ. Հա. Փե-ական լոզունգներ են գրում և կամ Գորշ Գայլ նկարում: Ես աշխատում եմ այդ լոզունգները մաքրել: Սակայն, նրանք թշնամանում են ինձ հետ»: Տնօրենը ցույց է տալիս մեզ ձեռքով գրված մի նամակ, որի բովանդակությունը հետևյալն է. «Եթե շարունակես մեր լոզունգները մաքրել, մեզ հետ պրոբլեմ կունենաս»: Սպառնալիքները չեն սահմանափակվում նամակով: «Այդ տղաները շարունակ ինձ զգուշացնում են. «Քեզ ասում ենք մեր լոզունգները չջնջես: Դու գիտես, թե մենք ով ենք»»:

Մի իրավարար, որ երբեմն վարում է «Գորշ Գայլ» ակումբների ֆուտբոլային մրցությունները, ասում է, որ այդ ակումբները գնալով ավելի ու ավելի են հասարակության աչքից ընկնում: «Աստիճանաբար ավելի մեծ թվով ակումբներ հրաժարվում են նրանց հետ խաղալուց՝ հիշյալ խմբերի կոպտության պատճառով»: Նրանց համարյա բոլոր մրցությունների ընթացքում վեճ է ստեղծվում, և հարցը նույնիսկ հասնում է ծեծի ու ջարդի: Մի անգամ նույնիսկ մի հոլանդացի իրավարարի ուժեղ ծեծի ենթարկեցին:

Ուտրեխտի «Թուրքիյեմսփոր» ֆուտբոլի ակումբը, մոտավորապես երկու հարյուր խաղացողներով, այս բնագավառում մեծ համբավ է վայելում: Մի ականատես այսպես է վկայում. «Խաղացողներին զրգոում է իրենց մարզիչը. «Ես ձեզ կջարդեն»,— ասում է նա իր տղաներին կամ այլ ձևով կոպտում: Նկատելի է, որ խաղացողներն էլ այդ ոճը յուրացնում են: Հա-

մարյա ամեն խաղի կոիվ է ծագում ու մինչև իսկ՝ ծեծի ու ջարդի հասնում»»։ Մեհմեթն ուզում է մի անգամ անցնել Ուտրեխտի Թուրքիյեմսփոր ակումբը։ Մի հարմար առիթ է առաջանում։ 1997 թվի հունիսի 15-ին կազմակերպվում է տոնական մի ավարտախաղ՝ սեզոնի մրցաշարի կապակցությամբ։ Հրավերի ներքևում նշված է. «Ես թուրք եմ։ Իմ պատիվը թուրք լինելու մեջ է։ Դրա համար ես պատրաստ եմ իմ կյանքը զոհել։ Թուրքիյեմսփորը իմ պատիվն է։ Մենք չպետք է մոռանանք, որ թուրք ենք։ Մենք պետք է միանանք ու մեկ լինենք»։

«Նետվերկ» հեռուստածրագրի ֆոտոլրագրողի ընկերակցությամբ Մեհմեթը մեկնում է։ Իրենց ապահովության համար ֆոտոլրագրողն իր հետ գաղտնի վերցնում է մի ֆոտոապարատ։

Երբ երկուսը մտնում են խաղադաշտ, Մեհմեթը տեսնում է թուրքական ֆեդերացիայի վարչության անդամներից մեկին։ Վարչության անդամն էլ իր հերթին ճանաչում է Մեհմեթին ու տեղեկացնում Թուրքիյեմսփորի նախագահին։

Մի նիհար մարդ, բեղով ու սև ակնոցով, մոտենում է նրանց։

— Ինձ դուր չեն գալիս լրագրողները,— ասում է նա,— ես ձեզ չեմ հրավիրել։

— Մարզադաշտը ազատ վայր է բոլորի համար,— ասում է Մեհմեթը,— եթե չեմ ուզում գնալ, ուրեմն չեմ գնա։

Նախագահը սպառնացող դիրքով գնում կանգնում է Մեհմեթի առաջ։

— Նայի՛ր աչքերիս,— բղավում է նա,— ե՛ս եմ այստեղի մեծը, ե՛ս եմ որոշում, թե ով ինչ է անում։

Վերջ այցելության։

— Բոլորովին բացառված չէ, որ մենք մի կին պրեզիդենտ ունենանք,— ասում է թուրքական ֆեդերացիայի կոորդինատորը։— Տիկին Չիլերը հրաշալի է աշխատում։

— Մենք կողմնակից ենք կանանց վիճակի բարելավմանը,— ասում է ֆեդերացիայի նախագահը։— Ըստ զործունեության ծրագրի, թուրքական ֆեդերացիան ջանում է, որպեսզի «ֆեդերացիայի կամ նրա բաժանմունքների վարչության մեջ կանանց մասնակցությունը ոչ մի խոչընդոտի չհանդիպի»։

Հոլանդիայում Գորշ Գայլերի միությունների ու ակումբների մեջ հազվադեպ ես հանդիպում կանանց։ ԷԼԻՖ հաստատու-

թյունը կանանց վիճակը բարելավելու նպատակով է ստեղծվել։ Նրա վարչության հինգ անդամներից երկուսը տղամարդ են։ Խաղը հավաքների ժամանակ նրանք նստում են կանանց բաժնում։ Գորշ Գայլերի կանայք իրենց առանձին կազմակերպություններն ունեն։

Ով Գայլերի գրավոր աշխատություններում կանանց մասին ազատամիտ ու լիբերալ տեսակետ է փնտրում, ապարդյուն գործ է անում։ Եթե այդտեղ կանանց մասին որևէ բան գրվում է, դա վերաբերում է նրա մայրական սուրբ պարտականությանը, այսինքն «զինվորի մայր լինելու» մասին։ Նրա պարտականությունն է, որ հնարավորին չափ մեծ քանակով երեխաներ աշխարհ բերի, որպեսզի, ինչպես Բաշբուղն է ասում. «Թուրքական ցեղն արագորեն աճի»։ Այդ իսկ պատճառով Բաշբուղը դեմ է հակահղիության միջոցներին։

Էմ. Հա. Փե-ի 1993 թվականի կուսակցական ծրագրում, որը հաստատեց կուսակցության համաժողովը, դարձյալ կանանց հարցի նկատմամբ որևէ ուշադրություն չի դարձվում, բացառությամբ երեք կետի. աքաջինը՝ Ֆեմինիզմը՝ վտանգավոր է, որովհետև դա պատճառ է դառնում, որ ընտանիքը քայքայվի։ Երկրորդ՝ Էմ. Հա. Փե.-ն (տակավին) դեմ է հակահղիական կանխամիջոցների, «որովհետև Թուրքիան չի որդեգրել բնակչության աճի հսկման քաղաքականություն»։ Եվ երրորդ՝ Էմ. Հա. Փե.-ն դեմ է վիժմանը։

1997-ի ապրիլի 20-ին, Գորշ Գայլերի կանանց կադրը Ռոտերդամում ժողով է գումարում։

Անշուք մի սրահում, որը գտնվում է ՎԵՐՍԱՄ միության կենտրոնատեղիի մոտակայքում, նստած են մոտավոր թվով հարյուր կին։ Ոմանք իրենց ձեռքում պատրաստ ունեն մի հուշատետր։ Ստեյլան էլ նստած է այնտեղ։

Բեմահարթակին նստած են երեք մարդ՝ մի սեղանի շուրջ։ Չախ կողմը Թուրքիո հյուպատոսն է, աջ կողմը՝ Յիլդիզելին, ու այս երկուսի մեջտեղում նստած է մի ամրակազմ կին՝ կարճ մազերով։ Նրան ներկայացնում են որպես Անկարայի համալսարանի ադրբեջանցի պրոֆեսոր, ազգանունը՝ Հալիմլու։

Խոսք է առնում պրոֆեսոր Հալիմլուն։ Նախ ներողություն է խնդրում ադրբեջանական բարբառով թուրքերեն խոսելու համար։

— Միայն Սովետական Միության փլուզումից հետո մենք հնարավորություն գտանք թուրքերեն խոսելու, — ասում է նա: Իր ելույթում նա տալիս է պատմական ակնարկ՝ կանանց ձեռք բերած իրավունքների մասին. «Օսմանյան կայսրության ժամանակ սուլթաններն արդեն հարգանք էին ցուցաբերում կանանց նկատմամբ: Իսլամը նույնպես մի շարք իրավունքներ է պարգևել կանանց: Այդպիսով վերջ տրվեց՝ աղջիկներին կենդանի թաղելու սովորությանը: Իսկ Աթաթուրքն այդ պրոցեսը առավել զարգացրեց: Երեսնական թվականներին Աթաթուրքը կանանց քվեարկելու իրավունք շնորհեց»:

Պրոֆեսորն աստիճանաբար անձնականացնում է հարցը:

— Ադրբեջանում մենք հարկադրված ծանր պայքար մղեցինք ռուսների դեմ: Մենք իրավունք չունեինք ասելու, թե թուրք ենք: Հատկապես կանայք ռուսների ժամանակ ծանր վիճակի մեջ էին գտնվում: Ռուսները կանանց բոլորովին չեն հարգում: Նրանց կանայք հարկադրված են աշխատել նույնիսկ քիմիական ֆաբրիկաներում, — ասում է տիկին պրոֆեսորը:

Իր ունեցած ծանր փորձանքների հակառակ պատկերը տիկին պրոֆեսորը գտնում է Հոլանդիայի թուրք կանանց մոտ, որոնք, իր կարծիքով, շատ արտոնություններ ունեն:

— Դուք ապրում եք ազատ մի երկրում, — ասում է նա: — Օգտագործեք այդ ազատությունը և ստացեք ձեր իրավունքները: Ես ի նկատի ունեմ ձեր ընտանիքին կապվող իրավունքները: Տղամարդիկ, կանայք ու երեխաները պետք է միշտ միասնաբար աշխատեն: Կանայք պետք է լավ կրթություն ստանան, որպեսզի օտարոտի հասարակության մեջ իրենց ճանապարհը կարողանան գտնել ու նաև կարողանան իրենց երեխաներին լավ դաստիարակել:

Արտասահմանում ապրող թուրք կանանց համար տիկին պրոֆեսորը կարևոր մի պարտականություն է սահմանում՝ մշակութային ժառանգության փոխանցումը մատաղ սերնդին:

— Չեր երեխաներին լավ դաստիարակեք, քանզի երեխաների ապագան իրենց ծնողների ձեռքումն է, — ասում է նա: — Թուրքական հարուստ մշակույթի փոխանցումը երեխաներին՝ մի՛ թողեք միայն դպրոցի ուսերին: Ամեն մարդ իրավունք ունի իր մշակույթը պահպանելու: Մի՛ թաքցրեք ձեր թուրքական ինքնությունը: Համակերպվելը չի նշանակում, որ մենք մեր նորմա-

ներն ու արժեքները պետք է մոռանանք: Մեր երեխաները պետք է իրենց մշակույթը յուրացնեն: Դրանում հասարակությունն էլ շահագրգռված է: Եթե մի երեխա իր մշակույթը ճանաչում է, մյուս մշակույթներն էլ նա կարող է ճանաչել ու հասկանալ: Մենք պետք է մեր երեխաներին դաստիարակենք թուրքական ինքնությամբ: Մենք թե՛ մուսուլման ենք, թե՛ թուրք: Չենք կարող ասել, որ միայն մուսուլման ենք, քանզի այդ դեպքում նույնը կլինենք, ինչ որ, օրինակի համար, իրանցիներն են: Ո՛չ, մենք թուրք ենք: Նրանք, ովքեր չեն ուզում ցույց տալ, որ թուրք են, հերքում են իրենց ինքնությունը: Թուրքական մշակույթը հարուստ մշակույթ է, բայց ափսոս, որ մենք զարգացման պրոցեսում հետ ենք մնացել: Ահավասիկ, այդ պատճառով պետք է ջանք չխնայենք բացը լրացնելու համար:

Վերջում նա շնորհակալություն է հայտնում կանանցից՝ իրենց նվիրատվությունների համար Մատաղի տոնի առթիվ:

— Դրանը, որ ուղարկվել է Ադրբեջան, Բոսնիա ու Չեչնիա, ճիշտ տեղ է հասել, — ասում է նա: — Այդ դրամի կարիքը շատ կա, այնպես որ մենք ավելի առատաձեռն պետք է լինենք: Ադրբեջանը ձեր աջակցության կարիքն ունի: Իհարկե, դա միայն փողով չի լինում, — հարմարեցնում է նա իր խոսքը: — Օրինակ՝ հենց մի բացիկ ուղարկելն էլ լավ է: Այնքանով, որ մենք զգանք՝ դուք մեր մասին մտածում եք:

Հավաքում ներկա տիկիններն ապա հարցեր են տալիս: Հարցերն ուղղված են հատկապես պարոն հյուպատոսին: Արդյո՞ք հյուպատոսարանն զբաղվում է դպրոցներում՝ թուրքերեն լեզվի դասընթացները բարելավելու գործով: Թուրքերենի ուսուցիչներն անորակ են, ասում են նրանք, ի՞նչ է անում հյուպատոսարանն այս ուղղությամբ:

Պարոն հյուպատոսը, որին աջակցում է նախագահ Յիլդիզելին, ամփոփում է իր պատասխանը այս հայտարարությամբ. «Պետությունն, իհարկե, օգնում է և շահագրգռված է այս հարցով, բայց նախաձեռնությունը ձեր կողմից պիտի լինի»:

Մի կին հանկարծակի ոտքի է ելնում: Երևում է՝ հուզված է:

— Մենք՝ կանայք, ուզում ենք մեր դիրքը բարելավել, բայց տղամարդիկ մեզ դեմ են կանգնում: Ինչո՞ւ դուք այդ ուղղությամբ ոչինչ չեք անում:

Ուժեղ ծափահարություն:

Թուրքական ֆեդերացիայի գործունեությունների ծրագրում, որպես աշխատանք, ի շարս այլոց, նշված է. «Ազգային համագումար՝ մայիսի 4-ի և 5-ի իմաստը հոլանդացիների համար»³ թեմայով:

— Ի՞նչ է իրենից ներկայացնում այս համագումարը,— հարցնում ենք կոորդինատորից:

— Մայիսի 4-ին բոլոր տեղական թուրքական կազմակերպությունները մասնակցում են ոգեկոչման տոնին: Անցյալ տարի էլ Ամստերդամում արել ենք... այնտեղ, ուր ծաղկեփունջ են դնում...

— Դոկվերկերում,— օգնում է իրեն Ստեյլան:

Կոորդինատորը գլուխը շարժում է:

— Հա, այնտեղ մենք ծաղկեփունջ դրինք ու հինգ թույն լուռ կանգնեցինք: հետո վերադարձանք ու մարդկանց բացատրություն տվինք այդ օրվա մասին:

— Եկե՞լ էին մարդիկ:

— Թուրքեր էին:

Փորձում ենք ճշտել: Դոկվերկերում ծաղկեփունջ գետեղել ու ապա հինգ թույն լուռություն պահպանե՞լ: Երևի առանձին լրացուցիչ արարողություն է եղել Ոգեկոչման տոնի առթիվ: Բայց արի ու տես, թե շան գլուխը որտեղ է թաղված: Երբ ստուգում ենք ֆեդերացիայի գործունեության ներքին ծրագիր-պլանը, տեսնում ենք հետևյալը. «Մայիսի 3-ին և 4-ին ֆեդերացիան տոնում է «Թուրքչուլեր Բայրամը», այսինքն՝ Թրքասերերի տոնը: Դա 1944 թվի մայիսի 3-ի տարեդարձն է, երբ 23 պանթուրքիստներ, ներառյալ Բաշբուր Թուրքեշը, դատի կանչվեցին:

1997 թվի մայիսի 4-ին Նեյմեխեն քաղաքի արվարձանում գտնվող Բարենդոնկ ավանի այգում, տոնում են մայիսի 4-ը:

Այգու տարածքում, ուր ֆուտբոլ են խաղում, մոտ տասը վրան են զարկել: Վրանների կողքին ծխում է խորոված-քյաբաբը: Նախագահների համար հատուկ վրան է պատրաստվել:

Աչքի են խփում Ամստերդամի թուրքական մշակութային կենտրոնի ու Արնհենի Ահմեդ Եսևի կենտրոնի ցուցապաստառները: Կան նաև մեծ թվով դրոշակներ Գորշ Գայլի ու երեք կի-

սալուսիսների նշաններով, ինչպես նաև նախկին Խորհրդային Միության բրբալեզու հանրապետությունների դրոշակները:

Ներկա է Եվրոպայի թուրքական ֆեդերացիայի նախագահ, պրոֆեսոր Օմեր Աքսանը: Նախագահ Յիլդիզելին ուղեկցում է նրան:

Մեհմեթի հարցին, թե ի՞նչ է տեղի ունենում այդտեղ՝ այդ օրը, թուրք պատանիները պատասխանում են. «Մենք տոնում ենք պանթուրքիստների օրը»: Ջրույցը, զնալով, լարված տոն է ընդունում, մինչև որ ամստերդամցի մի թուրք երիտասարդ, մոտիկից զննելով Մեհմեթին, ճանաչում է նրան.

— Եկել ես մեզ մոտ լրտեսելո՞ւ,— հարցնում է նա:

Ապա վազելով՝ կանչում է. «Ահմեդ Բաշկան, նախագահ Ահմեդ»:

Քիչ հետո երևում է թուրքական ֆեդերացիայի փոխնախագահ «Ահմեդ Բաշկանը» կամ Ահմեդ Ջեյհանը: Վերջերս մենք հայտնագործել ենք, որ Ջեյհանը Հոլանդիայում քաղաքական ֆունկցիա էլ ունի: Նա Ամստերդամի Խոզենֆելդ-Սլոտերմիլ շրջանի քաղային խորհրդի անդամ է և ներկայացնում է տեղական պրոգրեսիվ մի կուսակցություն, որը կոչվում է ՆԻՎՈ:

Կամ միգուցե Մեհմեթը սխալվում է:

— Ես Ահմեդ Յիլդիզն եմ,— ասում է Ահմեդ Ջեյհանը: Նա Մեհմեթին այլևս մի թույն միայնակ չի թողնում ու հետաքրքրված երիտասարդներին հեռացնում է նրա մոտից: Ամբողջ օրվա ընթացքում, երբ «Ահմեդ Յիլդիզը» խոսքի մեջ իրեն է ակնարկում, ասում է. «Ես՝ Ահմեդ Ջեյհանս...»:

Վերջապես խոստովանում է.

— Դիշտ է, ասել եմ, որ անունս Ահմեդ Յիլդիզ է, բայց ես Ահմեդ Ջեյհանն եմ:

— Ինչի՞ համար ուղղակի անունդ չես ասում,— հարցնում է Մեհմեթը:

— Որովհետև չեմ վստահում,— ասում է նա:

Ջեյհանը փորձում է Մեհմեթին համոզել, որ նա պարզապես մի պիկնիկում է գտնվում. «Մովորական մի զբոսախնջույք է»:

— Իսկ այս Էմ. Հա. Փե-ի դրոշակներն ի՞նչ են անում այստեղ:

— Մենք չենք կարող մարդկանց արգելել, որ իրենց հետ դրո-

շակ չբերեն: Անկասկած, այցելուների մեջ Գորշ Գայլերի համակիրներ կլինեն,— ասում է Ջեյհանը:— Իմիջիայլոց, դրանք էմ. Հա. Փե-ի դրոշակներ չեն. դրանք օսմանյան պետության դրոշակներ են,— ավելացնում է նա:

Նույն պահին, երբ Ջեյհանը ջանում է փաստել, որ սա մի սովորական դաշտագնացություն է, բեմահարթակ է բարձրանում Բելզիայից ժամանած մի հաղորդավար՝ Յիլմազ անունով: Նա հայտարարում է. «Ամեն ինչ սկսվեց սրանից 53 տարի առաջ: Ամբողջ աշխարհում թուրքերն այս օրը տոնում են»: Միջոցառման մի այլ պահին նա կարդում է մի բանաստեղծություն՝ «Թուրքերի պատվարժանությունը»:

Հակառակ Ջեյհանի, Յիլմազը անպարարություն չի անում: Բղավում է. «Բաշբուլ Թուրքեշ, Բաշբուլ Թուրքեշ»:

1996 թվի օգոստոսի վերջերին, «Դը Դորդթենար» թերթում, որը հրատարակվում է Դորդրեխտ քաղաքի ու շրջակայքի համար, լույս է տեսնում հետևյալ հայտարարությունը. «Դորդրեխտի և մուսուլման երիտասարդների համագործակցության միություն ՎԵՐՍԱԴ—ը բացօթյա մի միջոցառում – մանիֆեստացիա է կազմակերպում: Մուտքը ազատ է բոլոր դորդրեխտցիների, հատկապես՝ հոլանդացիների համար:

Հայտարարությունը կարդալիս դեռևս չգիտենք, որ «ՎԵՐՍԱԴ»-ը չորրորդ անունն է, որով Դորդրեխտի Գորշ Գայլերը իրենց ներկայացնում են դրսի աշխարհին:

Միջոցառումը տեղի է ունենում Մերվելանդեն մեծ այգում: Մուտքը զարդարված է թուրքական դրոշակներով: ՎԵՐՍԱԴ-ի անդամները բարի գալուստ են մաղթում այցելուներին: Նրանցից մեկը Մեհմեթին տալիս է մի տոմս:

— Ինչի՞ համար է սա,— հարցնում է Մեհմեթը:

— Անվճար ճաշի համար:

— Ձե՞ռք ես առնում ինձ:

— Չէ:

— Ի՞նչ է, ավել փողե՞ր ունեք:

— Մենք՝ թուրքերս, հյուրասեր ժողովուրդ ենք: Մեզ մոտ եկող հյուրը ճաշում է մեզ հետ. դա ես քեզ չպիտի բացատրեն:

Այս մարդու դեմքը Մեհմեթի հիշողությունն արթնացնում է: Նրան շարունակ տեսել է «իդեալիստների» հավաքներում:

Ներկա են շուրջ հարյուր հիսուն մարդ: Կանայք ու երեխաներն առանձին են նստած: Տղամարդիկ խումբ-խումբ կանգնած են մարզագետնի վրա: Այգում՝ ավելի բարձր մի հարթության վրա, զարկել են մի վրան: Իսկ քիչ այն կողմ պատրաստել են մի բեմահարթակ՝ բարձրախոսերով:

Վրաններից մեկի կողքերը բացել են: Ներսում նստած են թուրքական ֆեդերացիայի նախագահ Հիքմեթ Յիլդիզելին ու ֆեդերացիայի երկրորդ մարդը՝ Ահմեդ Ջեյհանը: Ներկա են նույնպես թուրքական վիցեկոնսուլ Բորա Քերիմոլուն և Արդուլլահ Սարին, որը միաժամանակ թուրքական ֆեդերացիայի վարչության անդամ, Թե. Դե. Ե. Վե. երիտասարդական միության նախագահ և ԹՈՍ-ի (թուրքական ռադիոհեռուստակայանի) նախագահ է:

Երկու երիտասարդ քայլում են դեպի Մեհմեթը: Իբր թե անտարբեր կանգ են առնում նրա մոտակայքում, ապա շնորհքին մոտենում են նրան: Նրանցից մեկն ասում է. «Այստեղ նկարահանել չի կարելի»: Արդյոք Մեհմեթի թիկնապայտուսա՞կն է կասկած առաջացրել:

— Ո՞նց թե նկարահանել չի կարելի:

— Նախագահի պատվերն է:

Բայց չէ՞ որ սա ազատ մի միջոցառում է:

— Մեզնից մի՛ հարցրու. մենք նախագահի պատվերն ենք կատարում:

— Ինչո՞ւ եք կարծում, որ ես ուզում եմ նկարահանել:

— Կարծում ես քեզ չե՞նք ճանաչում:

Ասում են ու հեռանում:

Մի քանի րոպե հետո Հիքմեթ Յիլդիզելին հրավիրվում է բեմ: Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի նախագահը ողջունում է ներկաներին. «Այս բացօթյա միջոցառումն, իհարկե, ազատ է բոլորի համար»: Իսկ հետո, ինքն իրեն հակասելով, ավելացնում է. «Սակայն, այստեղ ներկա են նաև մարդիկ, որոնք չեն հրավիրված: Ես ձեզ բոլորից խնդրում եմ լավ վարվեք նրանց հետ: Թողեք լավ ուտեն: Թողեք տեսնեն, թե մենք՝ թուրքերս, ինչպիսի հյուրասեր ժողովուրդ ենք»:

Այա քեմ է բարձրանում Արդուլլահ Սարին: Նա սկսում է երգել հեղափոխական երգեր ու ներկաներին ղեկավարում է: Երգում են «Շանի Բոյուք Օսման Փաշա» և «Թուրքիյեմ Օլուրում» («Իմ Թուրքիա, ես պատրաստ եմ մեռնել քեզ համար»): Երգելու ժամանակ, Սարին իր թևերը պարզած, Գորշ Գայլի բարև է բռնում:

Սրան հաջորդում է մի ճառ՝ ՎԵՐՍԱԴ-ի նախագահ Իբրահիմ Չազլայանի կողմից՝ թուրքերեն: Հոլանդացի ներկաների համար մի թարգմանիչ են բերել:

Սակայն, այստեղ էլ նկատում ենք մի աճաբարություն: Թարգմանիչը պարզապես իր ուզած ձևով է թարգմանում: Չազլայանի «Մեր իդեալիստ երիտասարդների միություն» բառերը նա թարգմանում է «Դորդրեխտի և մուսուլման երիտասարդների համագործակցության միություն»: Հոլանդախոս հյուրերին հրամցվում է. «Թուրք երեխաները խնդիրներ ունեն դպրոցում: Այս առթիվ մի բան պիտի արվի»: Մինչդեռ նախագահն ասել է. «Դորդրեխտում ինչքան շուտ, թուրքական մի համալսարան պիտի բացվի»:

Միջոցառմանը, ձրիաբար ցրվող «Մերվեսթեյն» թերթի մի լրագրողուհի, հարցազրույց է անցկացնում նախագահ Իբրահիմ Չազլայանի հետ:

— Գորշ Գայլի սիմվոլը մեզ համար նույնն է, ինչ որ Նարնջագույն առյուծը հոլանդացիների համար (տե՛ս ծանոթ. 1),— ասում է նա:

«Դը Դորդրենար» թերթը հաղորդում է այս դեպքի մասին: Խնդրո առարկա հողվածում շեշտը դրվում է ՎԵՐՍԱԴ-ի և Գորշ Գայլերի միջև գոյություն ունեցող կապերի վրա: ՎԵՐՍԱԴ-ի նախագահ Չազլայանը տեղական մամուլում հերքում է այդ կապերի գոյությունը: Նրա ռեակցիան. «ՎԵՐՍԱԴ-ը միմիայն զբաղվում է թուրքական մշակույթի քաջալերմամբ ու այս կերպով ջանում է մի կամուրջ կառուցել հոլանդական ու թուրքական համայնքների միջև»:

Ի հետևումն սույն հողվածի հրատարակման, Դորդրեխտի թուրքական բանվորական միությունը (Դորդրեխտ Իշիլեր Դերենեզի — Դ. Ի. Դ.) մի բողոքագիր է հղում քաղխորհրդին: Հարցը

դրվում է օրակարգի մեջ՝ 1996 թվի հոկտեմբերի 29-ի քաղաքապետարանի վարչական հարցերի հանձնախմբի փակ ժողովում:

Հանձնախմբի անդամները գալիս են այն եզրակացության, որ «այն, ինչ մեր երկրում օրենքով թույլատրված է հոլանդացիների համար, օտարների համար էլ, որոնք այս երկրում են բնակվում, թույլատրելի է»: Ըստ ոչ հրապարակելի արձանագրության, «այնքան ժամանակ, որ փաստեր չկան, որ տվյալ մի կազմակերպություն արգելված է, շատ բան հնարավոր չի անել»: Հանձնախմբում ներկա միլիցիոներն էլ չի ասում, որ ՎԵՐՍԱԴ-ի դեմ դիմելու է օրինական քայլերի: Ըստ արձանագրության, «նա ապացույցներ չունի, որ վերջին տարիներում դրությունը վատթարացել է կամ ծայրահեղ դարձել»:

Հանձնախմբի անդամները համաձայնվում են մի առաջարկի՝ բացահայտ դիրքորոշում ընդունել ռասիզմի՝ ցեղապաշտության դեմ: Քաղխորհրդի Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության ներկայացուցիչ պրն. Կոնինգը, սակայն, դեմ է կանգնում առաջարկին: Համաձայն ժողովի արձանագրությունների, նա Գորշ Գայլերին «լավ հայրենասերներ» է անվանում: Ըստ մեր աղբյուրների, պրն. Կոնինգը նույնիսկ ասել է, որ շատ լավ է, որ նրանք իրենց երկիրը սիրում են, «առնվազն այն պատճառով, որ մի գեղեցիկ օր կվերադառնան այդ երկիրը: Թողեք իրենց կապը պահպանեն իրենց երկրի հետ»:

Որպես հետևանք Դ. Ի. Դ.-ի բողոքագրի, «Դը Դորդրենար» թերթը մի ընդարձակ հողված է տպագրում «Ֆաշիստական Գորշ Գայլի համակիրները աճում են» անվան տակ:

Դորդրեխտի երկու Գայլեր, որոնց մեջ ՎԵՐՍԱԴ-ի նախագահ Իբրահիմ Չազլայանը, գնում են Դորդրեխտի բանվորական միության (Դ. Ի. Դ.-ի) նախագահին անձամբ «զգուշացնելու»: Նրան ասում են՝ «լավ կանես, որ այլևս բացասական պրոպագանդա չտարածես»:

Թուրքական ֆեդերացիայի նախագահ Յիլդիզելին ուղղում է պահանջում թերթից: Թերթին հղած իր նամակում նա գրում է. «Այս ամբողջ հարայ-հրոցը հիմնված է Դորդրեխտում ծայրահեղ ձախակողմյան մի կազմակերպության՝ Դ. Ի. Դ.-ի միակողմանի ու ֆանատիկական տեսակետների վրա: Դորդրեխտի ամբողջ թուրքական համայնքում գիտեն, որ այս կազմակեր-

պությունը սերտ կապեր ունի Փե. Բա. Բա.-ի, Դե. Հա. Բա. Սե.-ի ու Դև Սոլ տեռորիստական կազմակերպությունների հետ, որոնք ճանաչված են իրենց հանցագործություններով»:

«Երանի թե օսմանցիները, դեպի արևմուտք կատարած իրենց արշավանքների ժամանակ, Իրանն էլ գրաված լինեին: Մենք այլևս գործ չէինք ունենա մեր՝ արևելքում ծվարած այս բուֆերային երկրի հետ: Այն ժամանակ մեր տարածումը դեպի կենտրոնական Ասիայի թուրքական հանրապետություններ, ավելի հեշտ կլիմեր: Նրանք պետք է, որ մեր ազգային արժեքներին ավելի շատ կարևորություն տային, քան՝ իսլամական արժեքներին»: Այս խոսքերով, օրվա հյուր պրոֆեսորը, որը պատկանում է Թուրքիայի Ալկիթ փոքրամասնությանը, պարզ ու հստակ իր ունկնդիրներին հասկացնել է տալիս, որ շիա Իրանի հետ ոչ մի առնչություն չունի: Ներկաները թեթևացած շունչ են քաշում: Ուրեմն «լավ Ալկիթներ» էլ կան: Դասախոսությունը տեղի է ունենում Հիլվերսում՝ քաղաքի սրահներից մեկում, 1997-ի մարտի 12-ին: Չրույցի թեման է. «Ալկիթներն ու Բեկթաշիները»:

Դասախոսությունը մասն է կազմում մի շարք միջոցառումների, որը կազմակերպել է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան՝ 1997 թվի գարնանը՝ ամբողջ երկրի տարածքով: Ըստ թուրքական ֆեդերացիայի պատասխանատու անձանց, ֆեդերացիան ջանում է «միասնություն ստեղծել» թուրքական համայնքի մեջ՝ ուժեղ մի բռունցք ստեղծելու համար: Նրանց ասելով՝ իրենք զիջողական դիրք են ընդունել Ալկիթների նկատմամբ:

Ալկիթներին Գորշ Գայլերը չեն սիրում: Այս փոքրամասնությունը ազատամիտ մի հոսանք է իսլամի ներսում: Դարեր շարունակ նրանք համարվել են անվստահելի տարր ուղղափառ մուսուլմանների, այսինքն՝ սուննիների կողմից: Օսմանցիների ժամանակ Ալկիթները հետապնդվում էին: Ժամանակակից Թուրքիայում տակավին նրանք անվստահելի տարր են համարվում: Դիշտ է, Թուրքիայի Հանրապետությունում կրոնն ու կառավա-

րությունը պաշտոնապես իրարից անջատված են, սակայն գործնականում կառավարությունը սուննի աղանդին գերիշխող դիրք է վերագրում: Ալկիթներին հաճախ կասկածում են ձախակողմյան կամ քրդասիրական համակրանք ունենալու մեջ:

Սրա հետևանքն այն է, որ նույնիսկ մեր ժամանակներում նրանք ենթակա են դաժան ճնշումների: Ամենահայտնի օրինակը Դերսիմ նահանգի ընդվզող Ալկիթների զանգվածային ջարդն էր 1938 թվին: 1978 և 1979 թվերին նույնպես Թուրքիայի տարբեր քաղաքներում տեղի ունեցան պոգրոմներ, որոնց ընթացքում զոհվեցին հարյուրավոր Ալկիթներ: Դրդիչները Ուլքյուջու Գորշ Գայլեր էին: Հիշողությունների մեջ դեռևս թարմ է 1992 թվի Սիվաս քաղաքի մի հյուրանոցի հրդեհումը, որում 37 մտավորականներ ու արվեստագետներ, մեծ մասամբ Ալկիթներ, կենդանի վառվեցին, մինչդեռ ոստիկանությունն անհոգ ականատեսի դեր էր խաղում:

Թուրքիան, սակայն, ջանում է կացությունը փոխել: Կառավարությունը գնալով ավելի «զիջողական» կեցվածք է ընդունում Ալկիթների նկատմամբ: Առաջին անգամը լինելով՝ միլիոնավոր Ալկիթներ պաշտոնապես իրենց աղոթարանները բացելու իրավունք են ստացել: Կառավարությունը նույնիսկ հողամաս է տրամադրում այդ նպատակի համար: Չայներ են լավում այն մասին, որ Ալկիթներն էլ ներկայացուցիչ պիտի ունենան Դիանեթում⁴:

Հիլվերսումի միջոցառմանը թվում է, թե Աբդուլլահ Սեզգինը ամենակարևոր դասախոսն է: Սեզգինը Դիանեթի բարձր պաշտոնյա է: Նրա դասախոսությունից, սակայն, ոչ մի զիջողական կեցվածք չի զգացվում Ալկիթների նկատմամբ: Ընդհակառակը, դասախոսը շարունակ հորջորջում է ավանդական մեղադրանքներ «երկրի ներսում գործող խմբակցությունների» մասին, որոնք օգտագործվում են որպես լրտես՝ «օտարերկրյա ուժերի» կողմից: Քաղվածքներ նրա խոսքերից. «Այժմ, երբ Խորհրդային Միությունը փլուզվել է, մինչև թուրքական աշխարհի միավորումն, ահա, բան չի մնացել: Մեծ Թուրանի գաղափարը, որն ի մի է հավաքելու շուրջ 250 միլիոն թուրք բնակչության, մոտալուտ է: Սակայն կան մարդիկ, որոնք ձգտում են մեր առաջխաղացումը խանգարել: Այդ պատճառով նրանք երկպառակու-

բյուն են սերմանում թուրք ազգի մեջ: Այն իրողությունը, որ Ալևիքների մասին շատ ավելի նյութ է լույս տեսնում Ռուսաստանում, քան Թուրքիայում, ինքնին շատ բան է ասում: Ռուսաստանում տրվող տեղեկությունները ճիշտ չեն: Ըիշտ ինֆորմացիան գտնվում է Օսմանյան կայսրության արխիվներում, և այդ արխիվները գտնվում են Թուրքիայում: Այս բոլորի հետին նպատակն այն է, որ կանխարգելի Մեծ Թուրանի իրականացումը: Սակայն դա նրանց չի հաջողի: Թուրքիայում ամեն ոք, նախագահից բռնած մինչև ամենաչքավոր անհատը, լցված է միմիայն մի գաղափարով՝ Մեծ Թուրանի ստեղծում, որը տարածվելու է Ադրիատիկ ծովից մինչև Չինական պարիսպը»:

Հիվանդությունում հյուր է նաև Թուրքիայից ժամանած պրոֆեսոր Սուլեյման Սարիբաշը: Նա սկսում է իր դասախոսությունը այս հաղորդումով, որ նա ինքն էլ Ալևիք է: Սակայն անմիջապես փորձում է իր ցանած պաղ ջրի ազդեցությունը փարատել. «Մենք՝ Ալևիքներս, որպես Ահմեդ Եսկիի սերունդ, գտարյուն թուրք ենք»: Ահմեդ Եսկին Ալևիքիզմի Բեկթաշի ճյուղի նախահայրն էր: Իր գրույցում պրոֆեսորը նշում է նաև Սուլթան Մելիմ Ա-ի անունը. «Սուլթան Մելիմ Ա-ն մեծ դեկավար էր ու նաև հարյուրից հարյուր տոկոս թուրք»: Իրականում, սակայն, տասնվեցերորդ դարում իշխող այս օսմանական սուլթանը իրագործել է Ալևիքների ամենամեծ ջարդերից մեկը թուրքական պատմության մեջ:

Պրոֆեսորը շարունակում է. «Թուրք լինելու իմաստը հարատև շարժման մեջ լինելն է: Մենք՝ թուրքերս, Միջին Ասիայից չենք քոչել երաշտի պատճառով: Մեր նպատակը մեր հորիզոնն ընդարձակելն էր»:

VIII. Գայլերի ոռնոց լեռներում

«Բաշբուլդ, մենք ամբողջ աշխարհը տակնուվրա կանենք»

Հաղթանակի համագումար էրչիյեսուն

Հոլանդական Գորշ Գայլերն էլ աշխատում են լեռը գրավելուց հետ չմնալ

Առանց թշնամու Գորշ Գայլը չի կարող գոյատևել

Բաշբուլդը քաջալերում է

1996 օգոստոսի 2, Անկարայի շրջանային մայրուղի: Հարյուրավոր մեքենաներ, վահանը վահանի դեմ դրած, քաղաքից դուրս են քշում: Մեծ թվով ավտոներ կրում են գերմանական, բելգիական ու հոլանդական համարանիշեր: Ավտոների շլակները բարձրաձայն սուլում են: Նրանց բաց պատուհաններից բազուկներ են դուրս ցցվել, ձեռքի մատներով գայլի գլուխ են ընդօրինակում: Բղավում են. «Մահ Փե. Քա. Քա.-ին, Փե. Քա. Քա. Քա.՝ ոճրագործ»:

Դիմացից քշող ավտոները ոչ մի կողմ չեն կարող գնալ: Ավտոների այդ թափորը կոպտորեն ամբողջ ճանապարհը զբաղեցրել է: Ոստիկանությունը մյուս ճանապարհի օգտագործողներին պատվիրում է՝ մի կողմ քաշվեն:

Գորշ Գայլերի ավտոների այդ թափորը շարժվում է դեպի չորս հազար մետր բարձրությամբ էրչիյես լեռը՝ «Հաղթանակի համագումարին» մասնակցելու համար: Այս համագումարի մասին հայտարարվել էր նաև Հոլանդիայում: Բաշբուլդն այնտեղ ելույթ է ունենալու:

Այս մասին մենք տեղեկացանք Օսթ-Ամստերդամ քաղաքամասի Թե. Դե. Ե. Ֆե. (Թուրք երիտասարդների դեմոկրատական միության) ծանուցատախտակին արված մի հայտարարությունից: Հայտարարության տեքստն էլ այսպես էր՝ «Թուրքական ֆեդերացիան դարձյալ կազմակերպում է լեռնագնացություն-տոնահանդես Թուրքիայում: Ովքեր ցանկանում են Հոլանդիայից հատուկ վարձված չվերթով այնտեղ մեկնել, հարկ է ժամանակին դիմեն: Հավելյալ տեղեկությունների, ինչ-

1 Հոլանդիայի գերբը: Համեմատությունն այստեղ ճիշտ չէ:

2 Կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների պաշտպանություն

3 Մայիսի 4-ը և 5-ը Հոլանդիայում հիշատակվում է որպես II աշխարհամարտում զոհվածների ոգեկոչման օր:

4 Կրոնական հարցերով զբաղվող պետական մարմին Թուրքիայում:

պես նաև արձանագրվելու համար, դուք կարող եք դիմել ֆեդերացիայի անդամ որևէ կազմակերպության: Հաղթանակի համագումարը տեղի է ունենալու օգոստոսի 3-ին և 4-ին»:

Մեհմեթն էլ ուզում է զնալ: Մակայն այնտեղ ի՞նչ է սպասում իրեն: Որոշում է՝ նախ ուսումնասիրել դրությունը: Տեղեկություններ ձեռք բերելու համար դիմում է լրագրող Թանիլ Բորային, որը միաժամանակ Թուրքիայի իդեալիստներ-Գորշ Գայլերի մասնագետ է:

Անկարայի՝ իր գրասենյակից Թանիլ Բորան զգուշացնում է Մեհմեթին՝ Էրչիյեսի համագումարի մասին:

— Անսովոր բաներ են տեղի ունենում այնտեղ,— ասում է նա,— երբեք չհեռանաս մյուս լրագրողների մոտից:

Մի՞թե ոստիկանությունը դրությունն իր հսկողության տակ չունի,— հարցնում է Մեհմեթը:

— Կարող են ենթադրել, որ Եվրոպայից ես,— ասում է Բորան,— ոստիկանությունն այնտեղ գործ չունի: Այնտեղ ուլքյուջուներն են, որ իշխում են: Նրանք նույնիսկ ի վիճակի են հանրային կյանքն իսպառ կանգնեցնելու: Կրակում են իրենց ավտոմատներով:

Բարեբախտաբար, մի քուրք լրագրող պատրաստակամություն է հայտնում Մեհմեթին ուղեկցել:

Ճանապարհին նրանք կանգ են առնում մի լցակայանում: Լցակայանը լիքն է մեքենաներով: Հարյուրավոր պատանհներ քուրքական շուրջպար են պարում:

— Գնում ենք Էրչիյես լեռը գրավենք,— ասում է թի-շըրթով՝ մի երիտասարդ, որի շապիկի վրա նախշված է գայլի գլուխ: Նա իրեն ներկայացնում է որպես Այհան:

— Մենք՝ ուլքյուջուներս, միշտ մասնակցում ենք մեր Հաղթանակի կոնգրեսին,— բացատրում է Այհանը:— Ամեն տարի աշխարհի բոլոր ծայրերից քուրք նացիոնալիստները Էրչիյեսում հավաքվում են իրար շուրջ: Թուրքական աշխարհի մեծերն այնտեղ ելույթ են ունենում: Իհարկե, առաջին հերթին Բաշբուրդն է խոսում,— ասում է նա՝ ջարդված քուրքերենով:

Այհանը ծնվել ու մեծացել է Գերմանիայում:

— Ես միայն մի տարի է, որ Թուրքիայում եմ ապրում: Դրա

համար է, որ լավ քուրքերեն չեմ խոսում: Ինձ պետք է անցյալում լսած լինեիր: Այն ժամանակ շատ ավելի վատ էի խոսում:

Իր գերմանացի քուրք ընկերներն էլ են գալիս:

— Արձակուրդի ու համագումարին մասնակցելու համար մեկ զնդակով երկու նշան,— ասում է նա:

— Իդեալիստ ընկերներ, պետք է շարժվենք,— դղրդում է բարձրախոսի ձայնը,— մտե՛ք ձեր ավտոները:

Թափորը դեռևս մոտ երեք հարյուր կիլոմետր ճանապարհ ունի կտրելու: Դեպի Կայսերի, դեպի քաղաքը, որը ծվարած է Էրչիյեսի լանջին:

Արդեն գիշեր է, երբ հարյուրավոր մեքենաներ Կայսերի են հասնում: Ճանապարհի կողքին դիրք բռնած կանգնած են երկու ոստիկանության ավտո: Մի քիչ վեր կանգնած են մի խումբ տղամարդ՝ Էմ. Հա. Փե.—ի ու Գորշ Գայլերի դրոշակներով:

Միլիցիոները կանգնեցնում է Մեհմեթի ավտոն. «Ձեր ինքնության քուրքը, խնդրեմ»:

Մեհմեթը հանձնում է իր հոլանդական անձնագիրը:

— Քո քուրքական անձնագիրը տուր:

— Չունեն:

— Ո՞նց թե, քուրք ես, չէ՞:

— Ես հոլանդացի եմ:

— Պորտոլ այնտե՞ղ են կտրել,— բացականչում է միլիցիոները,— տեսե՛ք այս քուրքին, որ իր երկրում իր ինքնությունը դրժում է: Սրան կասեն՝ կամավոր քրիստոնյա շուն: Տո՛ւր ինձ քուրքական անձնագիրդ:

— Իրոք չունեն:

— Ուրեմն ի՞նչ գործ ունես այստեղ:

— Բախտի բերմամբ հենց այս կողմերն եմ ծնվել,— ասում է Մեհմեթը:

Միլիցիոներն անմիջապես ստուգում է: Իրոք, ծնվել է Կայսերիում:

— Բացի այդ, եկել եմ Հաղթանակի համագումարին մասնակցելու,— ավելացնում է Մեհմեթը:

— Ա՛յ մարդ, ինչի՞ առաջուց չես ասում,— հետո ավելի մեղմ տոնով ասում է,— քեզ մի խորհուրդ տամ: Էստեղ էլ երբեք այդպիսի հիմարություն չանես ու մեկին ասես՝ գյավուր ես:

— Ես միայն ասացի՝ Հոլանդիայի քաղաքացի եմ:

— Դա հենց նույնն է:

Հաջորդ առավոտ Կայսերից շարունակվում է ուղևորությունը: Մոտենում ենք Էրչիյեսին: Ճանապարհի ամբողջ լայնքին՝ մինչև Թալաշ քաղաքը, կախված են ցուցապաստառներ. «Թալաշը բարի գալուստ է ասում Բաշբուղին»: Շենքերի ճակատները համարյա անտեսանելի են դարձել. լրիվ ծածկված են դրոշակներով:

Թալաշից հետո սկսում է զառիվեր ճանապարհի դեպի Թեքիր անցքը: Մի նեղ ճանապարհ է, որ ոլորապտույտ վեր է բարձրանում: Էրչիյեսը հեզմական ժպիտով դիմավորում է մեզ: Սարալանջի թեք հարթություններից մեկի վրա կավե վիթխարի տառերով գրված է. «Բաշբուղ, քո ցանկությունը մեր օրենքն է»: Նույնիսկ ամռան այս տոթ ժամանակ Էրչիյեսի կատարին ձյուն կա: Մառախլապատ է: Վահան վահանի սեղմած՝ շարժվում են մեքենաները, ավտոբուսները, տաքսիներն ու «դուլմուշները», ինչպես որ կոչում են միկրոբուսներին:

Ճանապարհի եզրին կանգնած է մի լքված զինվորական բեռնատար ավտո:

Մայթին նստած են ութ անհոգ զինվորներ: Քիչ այն կողմ՝ գետնի վրա, դրված են նրանց ավտոմատները: Հենց որ Մեհմեթի ավտոն մոտենում է, ցատկում են ոտքի: Մեհմեթն ու իր ընկերը պետք է ավտոն կանգնեցնեն:

— Դուք ուլբուջու՞ եք, — հարցնում է զինվորներից մեկը:

Պարզ է, որ ավտոյի զարդարված չլինելը կասկած է առաջացրել: Համարյա բոլոր մեքենաների կապոտները զարդարված են Էմ. Հա. Փե.—ի դրոշակներով և կամ թե չէ՝ պատուհանի հետևից կախված է մի գայլի գլխիկ:

— Ոչ, մենք ուլբուջու չենք, — պատասխանում է Մեհմեթը:

— Այստեղ ի՞նչ գործ ունեք:

— Այդ երբվանի՞ց ուլբուջու պիտի լինես այստեղ գալու համար: Սա ազատ տարածք է, չէ՞, եկել ենք նայեմք:

— Դո՛ւրս եկեք:

Զինվորները ավտոն խուզարկում են, սակայն կասկածելի ոչինչ չեն գտնում: Թողնում են, որ անցնենք:

Տոնախմբության տարածքը ուրվագծվում է մեր առջև: Այն-

պես ես զգում, կարծես օլիպիադայի մարաթոնյան վազքն ես ավարտել: Մուտքը զարդարված է մի ցուցապաստառով՝ «Բաշբուղ, դու միայն մի՛ բառ ասա, մենք աշխարհը տակնուվրա կանենք»:

Բավական ընդարձակ մի հարթության վրա շարժվում է մի բազմություն՝ լի եռուզեռով: Մեջտեղում տեղադրված է մի բեմահարթակ: Ամենուրեք կան վրաններ ու գովազդեր, որոնք գովազդում են հեռուստացույցի մակնիշներ, ճամփորդական բյուրոներ, հրատարակչական գրասենյակներ, հացի խանութներ և այլն: Գերմանիայի Քյոլն քաղաքում հաստատված «Էգեթուրք» մսավաճառի ֆիրման այստեղ այսպես է գովազդում իրեն՝ «Նույնիսկ թուրքական կոնգրեսում կգտնենք Էգեթուրքին»:

Սարալանջի ոլորաններից մեկը զարդարված է Էմ. Հա. Փե.—ի դեկավար Թուրքեշի դիմանկարով, որը տասնյակ մետր բարձրություն ունի: Հարյուրավոր սայլակ-սեղանիկներ, որոնք կրում են ուտեստեղեն և Էմ. Հա. Փե.—ի էժան գովազդեր ու զարդեր, կանգնած են այստեղ ու այնտեղ: Հազարավոր մեքենա կատարածքում: Նրանց մեջ կան պետական պաշտոնյաների, քաղաքապետների ու նահանգապետների մեքենաներ՝ պաշտոնական համարանիշով:

Ուր աչք ես թեքում, դրոշակ ես տեսնում: Դրոշակներ Գորշ Գայլի, երեք կիսալուսնի և կամ Թուրքեշի գլխի նկարով:

Այստեղ հավաքված են տասնյակ հազարավոր, և ըստ Էմ. Հե. Փե.—ի պաշտոնաթերթ «Օրթադողուի», հարյուր հազարավոր Գորշ Գայլեր: Այցելուներից շատերը եկել են արտասահմանից, ամբողջ «թուրքական աշխարհից»: Ապահովության համար Մեհմեթը գնում է մի Էմ. Հա. Փե. նշանով գոպակ ու մի սև ակնոց: Այս համառ մանրուք վաճառողները վերջապես մի բանի պետք եղան:

Մի ատենախոս բարձրանում է բեմահարթակ:

— Էրչիյես լեռը իր սեզոնյամբ չի զիջում թուրք ազգին, — բղավում է նա, — բայց մենք եկել ենք ու հասել այստեղ՝ Թեքիրի բարձրավանդակը՝ ծովի մակերեսից 2150 մետր բարձրության վրա: Մեր նպատակն այն է, որ նույն ձևով մնացած ամբողջ թուրքական աշխարհը գրավենք:

Սարալանջում ու լեռան կիրճերում արձագանքում է մարդ-

կային կոկորդով արձակած գայլերի ոռնոց: Հոլանդիայի թուրք պատվիրակությունը հավաքվել է բենահարթակի հետև: Այստեղ երևում են Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի, Անստերդամի թուրքական մշակութային կենտրոնի, Արնհեմի Ահմեդ Եսևի մշակութային կենտրոնի ու Ջվելլոյի թուրքական մշակութային կենտրոնի ցուցապաստառները:

Մոտ 40 տարեկան մի մարդ բարձրացրել է թուրքական ֆեդերացիայի ցուցապաստառը: Մեհմեթը մոտենում է նրան:

— Ամբողջ Հոլանդիայից թշել, եկել ես այստե՞ղ,— հարցնում է Մեհմեթը:

— Հա, ի՞նչ է որ,— պատասխանում է մարդը՝ միջին-անատոլական ծանր ակցենտով:

— Ես հարազատ ունեմ Հոլանդիայում,— ասում է Մեհմեթը:

— Վստահ ուլքյուջու է:

— Էդ չգիտեմ:

— Գիտե՞ս ինչ, եթե իրենց հասցեն տաս, երբ վերադառնանք, մի անգամ կգնանք այցելության:

— Զգիտեի, որ ուլքյուջուները Հոլանդիայում այդպիսի լավ կապեր ունեն:

— Մենք միակ թուրքական կազմակերպությունն ենք, որ այնտեղ մի բան անում է, ամեն տեղ ունենք մասնաճյուղեր:

— Ուրեմն Հոլանդիայից մեծ քանակով պատվիրակ կա:

— Իհարկե, իմ ասածը փաստ չի, բայց ես կարծում եմ, մի հազար հինգ հարյուր, երկու հազար մարդ կլինի,— ասում է նա:

— Կազմակերպությունների միջոցո՞վ են եկել:

— Մի մասն այո: Բայց, մեծ մասամբ իրենց միջոցներով են ճամփորդել: Արձակուրդի ժամանակ է, չէ՞, ով ասես չի գալիս Թուրքիա:

— Դու ինքդ ինչպե՞ս իմացար այս համագումարի մասին,— հարցնում է Մեհմեթը:

— Շնորհիվ լավ կազմակերպվածության: Կուսակցությունը հայտնում է ֆեդերացիային: Այս ձևով մենք տեղեկանում ենք. հետո, գիտես, թե ինչ պիտի անես:

Նրանց մոտակայքում լավում է բղավոց: Միաբերան գոչում են. «Հոլանդիա՛, Հոլանդիա՛»:

Բենահարթակի վրա կանգնած ատենախոսը շնորհակալու-

թյուն է հայտնում Եվրոպայի թուրքերին՝ իրենց զանգվածային մասնակցության համար: Նա զովաբանական խոսքեր է շոայլում այդ թուրքերին ու նրանց կազմակերպություններին՝ համագումարում իրենց «կարևոր ներդրման» համար:

Մեհմեթը արագ մոտենում է բղավող երիտասարդներից մեկին:

— Դուք բոլորդ Հոլանդիայի՞ց եք եկել,— հարցնում է նա:

— Մենք մոտավորապես հազար հոգով ենք: Զեիք պատկերացնում, չէ՞:

— Այստեղ գիշերելո՞ւ եք:

— Բա ո՞նց. ես չեմ ուզում մի վայրկյանը ձեռքից բաց թողնել: Այսքան մարդ իրար շուրջ, այսքան խանդավառություն, այսպիսի լավ մթնոլորտ, այսպիսի բան ես երբեք չեմ տեսել:

— Նույնիսկ Հոլանդիայո՞ւմ:

— Նույնիսկ Հոլանդիայում: Էսպիսի բան ո՛չ մի տեղ չես գտնի: Աշխարհում էլ ո՞վ կարող է էսպիսի բան սարքել: Վստահ իմացիր, եթե մենք Հոլանդիայում էսքան մարդ ունենայինք, արդեն շատուց երկիրը մերն էր:

Երիտասարդը տասը տարեկան է եղել, երբ Հոլանդիա է եկել:

— Մեր տանը ոչ ոք ուլքյուջու չի,— ասում է նա:— Նրանք սկի էլ չգիտեն, որ ես էստեղ եմ: Սկզբում չէին ուզում, որ ես էդ մասին մի բան իմանամ: Բայց դպրոցում էդ հոլանդացի քաֆիրներն ինձ նեղացնում էին, որովհետև լեզուն լավ չէի խոսում: Ես միայն թուրք ընկերներն ունեի: Էս ձևով մտա թուրքական միությունների մեջ: Էնտեղ բոլորն էլ իմ մնան են: Հետո իմացա, որ մենք՝ թուրքերս, պետք է իրար պաշտպանենք: Իսկ որպես ուլքյուջու, արդեն գիտեմ, որ թուրք ժողովրդի մնան ավելի հին ու ավելի լավ ժողովուրդ չկա:

Բենահարթակի վրա մեկը բարձրաձայն հայտարարում է, որ վերջին ժամանակներում «տեռորիստների» դեմ պայքարելիս Կայսերի քաղաքի քանի զավակներ են զոհվել: Նրա ասելով, Կայսերին տվել է 117 «գոհ»:

Սկսում է անասելի մի գոռում-գոչյուն: Թեքիր բարձրավանդակը դղրդում է իր հիմքերից: Տասնյակ հազարավոր կոկորդներ վրեժխնդրություն են գոռում. «Մենք արյուն ենք ուզում թափել: Կորչի՛ Փե. Զա. Զա.—ն... Ափո՛, մարդասպան»:

Գոռգոռոցը շարունակվում է ու տևում բոլորները:
Յուրաքանչյուր ելույթի մեջ դրսևորվում է «Փե. Քա. Քա. տե-
ռորիստների» դեմ ատելությունն ու ցասումը:

Գորշ Գայլերը բարգավաճում են՝ շնորհիվ մի թշնամու գո-
յության: Ավելի ճիշտ, նրանց գոյությունը կախված է այդ թշնա-
մուց: Մինչև ութսունական թվականների կեսերը, Էմ. Հա. Փե.-ն
հիմնականում հետապնդում էր այս նպատակը՝ «պայքար կո-
մունիզմի դեմ՝ ի շահ ազգի միասնականության ու հայրենիքի»:

Իզուր չէ, որ Էմ. Հա. Փե.-ի արմատները գալիս են հիսունա-
կան թվականներում ստեղծված «Կոմունիզմի դեմ պայքար
Միությունից»: Այս միությունը՝ Թե. Քա. Էմ. Դե. (Թուրքիյե քո-
մունիզմի մուջադեիլե դերնեդի), ուներ մասնաճյուղեր ամբողջ
Թուրքիայում: Միությունը պաշտապանում էր Ալփարսլան
Թուրքեշին, երբ այս վերջինը նախագահն էր Չե. Քա. Էմ.
Փե.-ի, այսպես կոչված «Գյուդացիների ազգային հանրապե-
տական կուսակցության»:

Կարճ ժամանակ իր հիմնադրումից անց, Թե. Քա. Էմ. Դե.-ն
հետևյալ կոչն է հղում իր «ազգապաշտ ընկերներին». «Առավել
նպատակասլաց կոմունիստների դեմ պայքարելու համար մենք
հիմնադրել ենք Թե. Քա. Էմ. Դե.-ն: Խիտ միասնական մի ճա-
կատ կազմելով՝ մենք կդառնանք մի բռունցք այլասերման, ա-
նարխիայի ու դավաճանության դեմ: Դուք նույնպես կարող եք
այդպիսի մի բռունցք կազմել ու հարվածել: Չեր բոլորի ջանքե-
րով այս օրինյալ կազմակերպությունը աճելու ու մեծանալու է,
որպեսզի իր պարտականությունները կարողանա կատարել:
Պատրաստ եղեք ձեր պարտքը կատարելու»:

Այսպես կոչված իդեալիստների՝ «Ուլբյուջու» շարժումը
հիմնավորված է «ազգի միասնականությունը և հայրենիքի ամ-
բողջականությունը» պահպանելու համար մղվող պայքարում:
Ով որ այս գործը խանգարում է կամ այդ բանում կասկածվում
է, պետք է իր դեմ պայքարել: Վերջին տարիներում Էմ. Հա.
Փե.-ն պայքարում է այս կարգախոսով. «Կամ սիրում ես Թուր-
քիան, կամ թե չէ՝ կորի՛ր, հեռացի՛ր» («Թուրքիյեյի յա սեվ, յա
թերքեթ»):

Թե ինչպե՞ս այս ռիսերին թշնամու դեմ պիտի պայքարել,
Բաշբուղ Թուրքեշը գրում է իր «Թեմեկ Գյորուշերում». «Մի-

ջազգային կոմունիզմը նպատակադրված է վերջին անկախ
բուրք պետությունը կործանել և այդ բանը նա իրականացնում
է հայրենիքի դավաճանների օգնությամբ, որոնք իրենց հոգին
ծախել են իրեն: Այս դավաճանները թիրախ են դարձրել մեր
ժողովրդի ու երկրի միասնականությունը: Նրանց ձեռքերը
պետք է ջարդել, ինչ գնով էլ, որ լինի: (...): Մեր պարտականու-
թյունն է՝ այս դրախտ երկիրը պահենք ու պաշտպանենք, և եթե
պետք է, մեռնենք նրա համար: Քանզի, ինչպես բանաստեղծն է
ասում, «մի կտոր հող հայրենիք է կոչվում այն ժամանակ
միայն, երբ արյուն է թափվել նրա համար»»:

Ուրեմն, ըստ Բաշբուղի պատվերի, պետք է պատրաստ լի-
նես հայրենիքիդ համար կյանքդ զոհելու: Սակայն, այս պատ-
վեր արձակողներն իրենք ինչպե՞ս են վարվում: Փորձը ցույց է
տալիս, որ «Թուրք ազգի պահպանները» առավել ընդունակ
են հենց իրենց հայրենակիցների կյանքը խլելու, քան իրենցը
զոհելու հայրենիքի համար:

Հատկապես յոթանասունական թվերի վերջերին այս տեսա-
կետից նրանք «փայլեցին»: «Կոմտրզերիլա» (հակապարտի-
զանական) այսպես կոչված իդեալիստները բազմաթիվ մարդ-
կանց սպանեցին: Բերենք միայն մի քանի օրինակ: 1978 թվի
միայն սեպտեմբերին՝ 120 սպանված: Նույն տարվա հոկտեմբե-
րին՝ 106 սպանված: 1979 թվի փետրվարից մինչև մայիսը՝ 127
սպանված: Նույն թվականի հունիսից մինչև սեպտեմբեր՝ 504
սպանված: Իսկ 1980-ի ապրիլին՝ 38, մայիսին՝ 24 և հունիսին՝ 34
սպանված: Բոլորն էլ հրապարակավ, օրը ցերեկով: Այս տվյալ-
ները վերցված են «Սեմիհ Հիշիլմազի Սոսուրլուր վե քոնթրզե-
րիլա Գերչեզի» գրքից («Իրական պատմությունը Սոսուրլուկի
ու կոնթրզերիլայի», հրատարակված 1997-ի մարտին):

— Այս համոզումը, որ «կարմիր վտանգը» պետք է սանձա-
հարվի, Գորշ Գայլերին դարձրել է այն, ինչ որ այսօր իրենցից
ներկայացնում են,— ասում է Մերվեթ Ավչին:

Ավչին մինչև մի երկու տարի առաջ համազործակցում էր Էմ.
Հա. Փե.-ի հետ: Նա, ի շարս այլոց, նախագահն էր Գորշ Գայ-
լերի երիտասարդական բաժնի (Ուլբու Օչաքլարի):

Ավչիի հետ նստած ենք իր Անկարայի գրասենյակում:

— Ինձ համար հարց է՝ Ուլբյուջուն գոյության ի՞նչ իրա-

վունք կունենար, եթե ձախակողմյան շարժում ընդհանրապես գոյություն չունենար: Մենք ո՞ւմ պետք է թիրախ դարձնեինք: Միակ բանը, որ մենք անում էինք, ձախերին հարվածելն էր: Բայց, իհարկե, նրանք էլ մի բաներ անում էին մեր դեմ: Իրակա-նում նրանք չէին հասկանում, որ մենք իրենց գլխին խաղ ենք խաղում: Իրենց ցույց տված ռեակցիաներով մեր ասածներն ա-վելի համոզիչ էին դարձնում մարդկանց համար: Այդպիսով, նրանք մեր գործը պրոպագանդում էին: Ուլքյուջու շարժման անման և ուժեղացման մեջ ձախ հոսանքներն իրենք մի դեր ու-նեցել են,— շարունակում է:— Ձախակողմյան շարժումների դեմ պայքարելու համար օգտագործվում էին տարբեր մեթոդ-ներ: Մեր սիրված տակտիկան այն էր, որ նրանց զրգոենք ու դր-դենք մի բանի, որպեսզի մեր կողմից հասցվող առավել հուժկու հարվածը արդարացվեր:

Մերվեթ Ավչին ասում է, որ Գորշ Գայլերը, համենայն դեպս, դժվարությունների հանդիպեցին: «1980 թվականի պետական հեղաշրջումից հետո, ձախակողմյան շարժումից արդեն բան չէր մնացել: Ձախերի համար լավ ժամանակներն անցել էին: Միտք չունեի այլևս մեր ուժն ու կարողությունը նրանց վրա վատնել: Այդպիսով, մենք նրանց միայն նորից կուժեղացնեինք: Նրանց տեղը, սակայն, բռնեց Փե. Բա. Բա.-ն: Առանց Փե. Բա. Բա.-ի, Ուլքյուջու շարժումը երբեք ի վիճակի չէր լինի ութու-նական թվականների վերջերին այդպիսի մի գորեղ վերադարձ արձանագրել: Այն իրողությունը, որ Ուլքյուջու շարժումն այդ-պես արագ իր անցյալ ուժը վերստին ձեռք բերեց, մեծ մասամբ պարտական է Փե. Բա. Բա.-ի գոյությանը: Կառավարությունը լիովին պաշտպան կանգնեց Գորշ Գայլերին, քանի որ նա էլ նույն նպատակն էր հետապնդում՝ պայքար Փե. Բա. ԲԱ.-ի դեմ: Պատահական չէ, որ Օզել թիմերը (Օզել ջոկատներ) մեծ մասամբ կազմված են էւ. Հա. Փե.-ականներից»:

Այս Օզել կոչվող ջոկատները զինվորական միավորներ են, որոնք հատուկ մարզվում են Փե. Բա. Բա.-ի պարտիզանների դեմ կռվելու համար: Տարիներ շարունակ, թուրքական մամու-լում խոսվում էր բանակի այս տխրահռչակ բաժնի էւ. Հա. Փե.-ական համբավի մասին:

էւ. Հա. Փե.-ի ընտրական կոորդինատոր Ե. Սելիմ Դեմի-

րագի հետ արդեն 1995-ի դեկտեմբերին, այս մասին ունեցել ենք գրույց: Դեմիրագը էւ. Հա. Փե.-ի և Օզել ջոկատների միջև կապերը համարում է «բնական»: «Այս ջոկատները կյանքի են կոչվել անջատողականության ու ահաբեկչության դեմ պայքա-րելու համար: Պարզ չէ՞, որ հենց ազգապաշտ անձնավորու-թյուններն են, որ իրենց պարտավոր են զգում միանալու նրանց: Այս հարցում ոչ մի անսովոր վատ բան չկա: Դուք գործ ունեք մի տեսակ պայքարի հետ, որ ամենաժանր պայմանների մեջ է մղ-վում: Դա ամեն մարդու գործ չի: Դրա համար պետք է ոգեշնչ-ված նացիոնալիստ լինես, քանզի այսպիսի մեկը մի հստակ նպատակի համար է կռվում»:

Փե. Բա. Բա.-ի դեմ կռիվ մղողները չեն խորշում նաև ծանր ոճի ճարտասանություն կիրառելուց: Այսպես, պրոֆ. Թունչեր Գյուլենսոյը էւ. Հա. Փե.-ի օրգան «Օրթադողու» թերթի 1994-ի փետրվարի 22-ի համարում գրում է. «Այս դավաճանները, ո-րոնք իրենք իրենց համար «քյուրդ» անունն են հորինել, նպա-տակադրված են թուրք ազգին վերացնել և Թուրքիան վերածել մի կրակարանի: Այս ոճրագործությունների համար նրանք բա-ցարձակապես պետք է պատժվեն: Ինչպե՞ս: Նախ և առաջ, նրանք պետք է հայերի, հույների ու հրեաների նման փոքրա-մասնության կարգավիճակ ստանան ու արգելվեն պասիվ կամ ակտիվ ընտրական իրավունքից, ինչպես նաև զինվորական ծառայության իրավունքից: Նրանց նույնպես պետք է արգելել կառավարական օրգաններում ծառայելուց. այդպիսի օրենք գոյություն ունի նույնիսկ Միացյալ Նահանգների սահմանադ-րության մեջ»:

Գորշ Գայլերի ատելությունն, իհարկե, չի սահմանափակ-վում միայն քրդերի դեմ: Յուրաքանչյուր փոքրամասնություն, որ խափանում է նրանց այն պատրանքը, որ Թուրքիան միա-տարր ազգության երկիր է, իրենց աչքի փուշն է: Թուրքիայում բոլորը պետք է թուրք լինեն: Վերջ: Ինչպես թուրք հայրենիքի հայր Աթաթուրքն է ասում. «Նե մութլու քյուրքում դիենե» (Երա-նի նրան, ով ասում է՝ ես թուրք եմ):

Այսպես, Գյուլենսոյի մատնանշած հայ փոքրամասնությու-նը ատելության կրակի հարատև թիրախ է, թեև քանակային տեսակետից ընդամենը մի երկու հազար², Թուրքիայում մեծ

բան չի ներկայացնում: Հայերի հանդեպ Գորշ Գայլերը շատ հետաքրքրված չեն եղել: Նվաստացման օրինակով, սակայն, նրանք հաճախ քրդերին ու Փե. Բա. Բա.—ին «հայ ստրուկներ» են անվանում: Թուրքեշը նույնիսկ բերնից բաց է թողել, որ Արդուլլահ Օչալանը քյուրդ չէ, այլ հայ է և իր իսկական անունն էլ Ակոփ Արթինյան է:

1994-ի վերջերը Ուլքյու Օչաքլարին՝ Մտամբուլում մի թուրքիկ բաց թողեց հայ բնակչության հասցեին հետևյալ տեքստով. «Դուք՝ պարագիտներդ, որ ձեզ այս երկրի քաղաքացի եք կարծում, դուք և մնացած բոլոր հայերդ, դարեր շարունակ մեր երկիրը շահագործել եք: Այսբանից հետո, դուք դեռ չեք սովորել ձեր դասը: Դուք տակավին շարունակում եք վարվել այնպես, ինչպես անցյալում: Օսմանցիների ժամանակից սկսած՝ դուք մեզ շահագործել եք ու արյան հեղեղներ հոսեցրել. այդ բոլորի դիմաց, մենք՝ թուրքերս, ձեզ հետ միշտ մեր հանրահայտ բարյացակամությամբ ենք վերաբերվել: Այո, այս բոլորի դիմաց մինչև հիմա աչք ենք գոցել, սակայն դուք արդեն չափն ու սահմանն անց եք կացրել: Մեր համբերության բաժակը լցվել է: Իսկ թե ի՞նչ է պատահել, հիմա մենք ձեզ կբացատրենք: Դարաբաղում, Լաչինում, Շուշիում, Չանգելանում և շատ ուրիշ վայրերում, որոնց բոլորի անունը չենք տալիս, դուք հազարներով սպանել եք մեր թուրք եղբայրներին: (...): Եվ հետո մեզ հետ նստում եք մեկ սեղանի շուրջ, կարծես թե ոչինչ չի պատահել, իսկ միաժամանակ օգնում եք մեր բնաջնջմանը: Այսպես, դուք վարվել եք շատ երկար ժամանակ, բայց այժմ դրան վերջ պիտի տրվի: (...): Այն, որ դուք կարողացել եք ամենալավ դիրքերը ձեռք բերել, դա եղել է շնորհիվ մեր բարեսրտության և, սակայն, դուք շարունակում եք ձեր հնամենի դավադիր վերաբերմունքը մեր հայրենիքի հանդեպ: Ինչո՞ւ պիտի մենք արժանի լինենք այսպիսի մի վերաբերմունքի: Այսպիսի բան ո՞վ կարող է անել մի ժողովրդի հանդեպ, ինչպես մերն է: Այն ժամանակները, երբ կարելի էր թուրք անվան ու ինքնության հետ խաղալ, անցել են: Անցյալի ու ներկայի բոլոր բաց մնացած հաշիվները մենք ձեզ հետ մաքրելու ենք: Թուրքիան պատկանում է միայն թուրքերին, դա ձեր ականջների մեջ լավ տեղ տվեք: Մեր Բաշբուրդի վառ օրինակով, մենք ոտքի ենք ելել, որպեսզի ազատագրենք Թուր-

քիան՝ շահագործումից: Եթե չեք ուզում, որ ձեզ քշենք, թափենք Երևան, լավ կանեք՝ ինչքան շուտ կորչեք ու հեռանաք այստեղից: Քանզի այնպես, ինչպես մեր հարզեղի վարչապետն է ասել, այս գործը մենք ինչ կերպ եղել է, գլուխ կբերենք: Կարևոր չի՝ ինչ ձևով: Սա մեր վերջին զգուշացումն է: Թուրքիան պատկանում է միմիայն թուրքերին և ոչ թե ձեզ նման իժերի: Չհամարձակվեք մոռանալ դա»:

Երկրորդ օրը Էրչիյես լեռան տոնախմբության տարածքն այլ պատկեր է ներկայացնում: Ամենուրեք խարույկի մնացորդներ: Օդում առկա է մի յուրահատուկ հոտ. մրգեղենի ու կանաչեղենի բուրմունքը խառնվել է կենդանիների փորոտիքի հոտին: Քայլելիս պետք է զգուշ լինես՝ որտեղ ես ոտք դնում: Այստեղ ու այնտեղ գետնի վրա մարդիկ պառկել ու քնել են: Ամենուրեք լսվում է բարձր խոռոցի ձայն: Նրանք, որոնք արդեն արթնացել են, մոլորվածների նման պտույտ են գալիս: Առանց քաշվելու հորանջում են ու, արևածագի լույսից աչքերը կկոցելով, փակում: Ցուցապաստառներն ու դրոշակները, որոնք երեկ այդպես հպարտորեն օդի մեջ ճոճվում էին, փռվել են գետնին: Միայն Կանայք ու աղջիկներն են, որ արթնացել են ու անցել գործի: Ցուրաքանչյուր վրանի առաջ զբաղված են նրանք. փռում են մի-մի ծածկոց գետնին ու նրա վրա շարում նախաճաշը: Երեկվա թեժ ու բարձր տրամադրությամբ ողողված մթնոլորտից նշույլ չկա: Բարձրախոսներից հնչում է մեղմ երաժշտություն: Անցյալ օրվա գոռացող հռետորներն անհայտացել են և միակ ձայնը, որ լսելի է, հաց վաճառող պատանիների կանչն է:

Հետո հայտարարվում է, որ «Թուրք ժողովրդի ղեկավար, մեր առաջնորդ Բաշբուրդ Թուրքեշը ճանապարհին է. մեկ ժամից նա մեր մեջ է լինելու»:

Ամեն ոք տեղից վեր է թռչում: Ոմանք նույնիսկ իրենց մեջ ուժ են գտնում միասնաբար «Բաշբուրդ, Բաշբուրդ» գոռալու: Լսվում է շշակների ձայն, թմբուկի հարվածներ, սուլոց ու շվոց: Երբ նա ժամանում է, շատերը գրոհում են դեպի տարածքի մուտքը: Ուզում են Թուրքեշի մուտքը տեսնել:

— Ի՛նչ Բաշբուրդ, բարով ես եկել մեր համագումարին. ինչպիսի՞ պատիվ է սա մեզ համար,— լսվում է բոլոր բարձրախոսներից:

Ուղեկցվելով իր թիկնապահների կողմից՝ Թուրքեշն ուղղությամբ
վերցնում դեպի բեմահարթակ: Թիկնապահները ճզնե-
լով ճանապարհ են բացում բազմության միջից:

Մարդիկ խելագարվել են: Ամեն ոք ուզում է Թուրքեշին դիպ-
չել, մեծ առաջնորդի հետ միավորվել, նրա փառքը կիսել:

— Բաշբո՛ւղ, Բաշբո՛ւղ, Բաշբո՛ւղ, Բաշբո՛ւղ...

Շուրջ մի քառորդ ժամ է տևում, մինչև որ Թուրքեշին հաջող-
վում է հասնել բեմահարթակի հարևանության ՎԻՊ⁴-ի բաժի-
նը:

Հայտնվում է բեմահարթակի վրա, սակայն շրջապատված է
այնչափ մարդկանցով, որ ոչ ոք իրեն տեսնել չի կարող:

Վերջապես խոսք է առնում Թուրքեշը:

Էմ. Հա. Փե.—ի օրգան «Օրթադողլուն» բառացիորեն տպագ-
րում է նրա ելույթը:

— Ինձ համար մեծագույն երջանկություն ու պարծանք է, որ
այս Էրչիյեսի նվաճման յոթերորդ համագումարին ձեր մեջ ներ-
կա եմ գտնվում: Ո՛չ մի ուրիշ տեղ թուրքական բարոյական ար-
ժեքներն ու թուրքական առաքինությունը այսպես գեղեցիկ կեր-
պով չեն միավորված իսլամի բարձր արժեքների հետ:

Լսվում է գոռոց. «Բաշբո՛ւղ, քո ցանկությունը մեր օրենքն է»:

Բազմությունը խռնվում է բեմահարթակի շուրջ՝ ինչպես ծա-
րավ մի ոչխարի հոտ, որը վերջապես հասել է ջրի և ուզում է հա-
գեցնել իր ծարավը: Ճնշումը հետևից այնքան շատ է, որ
առջևում գտնվող մարդիկ արդեն շնչահեղձ են լինում:

Բաշբուղը շարունակում է.

— Ուրիշ ո՛չ մի տոնախմբություն չկա, որ այս միավորումն
այսպիսի գեղեցիկ կերպով տեսանելի դարձնի: Այս բանում ես
համոզված եմ: Այս տոնախմբության ոգով ահա ես ձեզ բուրբիդ
սիրով ու հարգանքով ողջունում եմ: Օրհնյա՛լ լինի այս յոթե-
րորդ համագումարը:

— Բաշբո՛ւղ, ասա՛ մեռի՛ր, մենք կմեռնենք, ասա՛ սպանի՛ր,
մենք կսպանենք,— գոռալով վանկարկում է բազմությունը:

Արդեն ոմանք ուժով փորձում են իրենց համար մի ճանա-
պարհ բացել դեպի առաջ: Ոմանք բարձրանում են իրենց առաջ
գտնվողի ուսերին, որպեսզի Բաշբուղի երեսը, թեկուզ մի վայր-

կյան, տեսնեն: Լսվում է երեխաների ճշոցի ու լացի ձայն, որոնք
մարդկանց ոտքի տակ են ընկնում:

Բաշբուղը շարունակում է.

— Ինչպես գիտեք, օգոստոս ամիսը թուրք ազգի հազարա-
վոր տարիների պատմության ընթացքում եղել է հաղթանակի
ամիս: Թուրք ազգը անթիվ ու անհամար հաղթանակներ է տա-
րել՝ Խաղաղ օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոսի միջև
ընկած լայնածավալ տարածքում:

— Կեցցե՛ Էմ. Հա. Փե.—ն:

— Այս համագումարը մենք կազմակերպում ենք արդեն յո-
թերորդ հաջորդական տարվա համար՝ Էրչիյեսի Թեքիր բարձ-
րավանդակի վրա, այսինքն մի լեռան, որը հենց ուղղակիորեն
Անատոլիայի սրտից է վեր բարձրանում: Իզուր չէ, որ այս հա-
մագումարը մկրտել ենք Հաղթանակի կոնգրես անունով: (...):
Թուրք մեծ ազգն իր կրոնական ու բարոյական բարձր հատկու-
թյուններով փայլուն հաղթանակներ է տարել, հաղթանակներ,
որոնք արդյունքն են նրա ստեղծած քաղաքակրթության: Այսօր
մենք հավաքվել ենք այստեղ թուրքական այդ մեծ հաղթանակ-
ները տոնելու և դրանց հիշատակը վառ պահելու:

— Կեցցե՛ մեծ Թուրանը:

— Թուրք մեծ ազգին փայլուն ապագա է սպասում: Մենք
կվերացնենք բոլոր խոչընդոտները և կոչնչացնենք երկառա-
կություն սերմանողներին, անջատողականներին ու դավադիր-
ներին: Մենք կիրականացնենք այս մեծ առաջադրանքը, որ մեզ
է հանձնարարել մեծ Մարգարեն: Ողջո՛ւյն բուրբ այս հողագն-
դի վրա գտնվող թուրքերին: Մենք կիսում ենք Ղրիմի մեծ զա-
վակ Գասայիրալի Իսմայիլ բեյի կարգախոսը. «Մեկ լեզու, մեկ
գաղափար, մեկ գործ: Միրո այս կրակով մենք կրում ու առաջ
ենք տանում մեր իդեալի դրոշը: Ահա ծագում է մեր ազգի եր-
ջանկության շրջանը»:

— Մահ Փե. Բա. Բա.—ին:

— Երբ մենք իշխանության գլուխ գանք, Թուրքիան ամբողջ
թուրք աշխարհի շարժիչ ուժն է լինելու՝ սկսած Բալկաններից
մինչև Միջին Արևելք: Մենք ամեն ինչ արել ու պատրաստել ենք,
որպեսզի Թուրքիան վերստին ճիշտ ուղիով ընթանա: Բավա-

կան է միայն մի ակնարկ ձգեք այս հոյակապ կոնգրեսին, որ-
պեսզի ըմբռնեք, թե մենք միասնաբար ինչե՞ր չենք կարող անել:

— Բաշքուղ, դու միայն ասա, մենք ամբողջ աշխարհը տակ-
նուվրա կանենք:

Բաշքուղն ավարտում է իր խոսքը:

Ոմանք սկսում են իրենց հրազենով կրակել օդի մեջ: Ռազ-
մադաշտի պատկերն արդեն ամբողջական է:

Հակառակ անցյալ տարիների, այս անգամ վրիպող զնդակ-
ները ոչ ոքի չեն դիպչում:

IX. Ներթափանցում քաղաքական շրջանակներում

«Մեզնից յուրաքանչյուրը ոսկե մի թևնոց է»

Գորշ Գայլը տեղական առաջադիմական
կուսակցության մեջ

Գորշ Գայլերի հավաքագրում Յուլանդիայի
Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության
շարքերում

Բաշքուղը կոչ է անում Գայլերին զբաղվել
դիվանագիտությամբ

Բանվորական կուսակցության քաղխորհրդի
թուրք անդամը հայտնվում է քրեական գործում

«Քաուկի» քրիստոնյա-դեմոկրատ
կուսակցության վարչությունը փակում է աչքերը
իրականության դեմ

Բեյվերվեյկի Բանվորական կուսակցության
անդամը շահում է դատը

Ամստերդամի Բանվորական կուսակցության
մասնաճյուղը սպասում է գրքի
հրատարակմանը

«Մեզ՝ թուրքերիս, այստեղ տարբեր անուններով են
կանչում: Մեզ կոչում են միգրանտ, փոքրամասնու-
թյուն, ազգային փոքրամասնություն, մուսուլման և այլն: Այս
անվանումներից ո՛չ մեկը, սակայն, չի հասցնում լրիվ իմաստը:
Թուրքական ֆեդերացիան արդեն մի քանի տարի սրանից ա-
ռաջ ընտրեց «Եվրոպայի թուրք» տերմինը: Մենք ջանում ենք
այս անվանումը մեր սեփականությունը դարձնել: Կան խմբեր,
որոնք նախընտրում են՝ իրենց «Եվրոպայի մուսուլմաններ»
անվանել: Սրան էլ մենք դեմ ենք: Մենք նախ թուրք ենք և ապա՝
ուրիշ բան»:

Բեմահարթակի վրա ճառ ասողը թուրքական ֆեդերացիայի
փոխնախագահ Ահմեդ Ջեյհանն է: 1996 թվի մայիսի 18-ն է, Օս-
քաղաքի սրահներից մեկում: Այս օրը թուրքերը հիմնադրում են
մի նոր միություն:

1 Տե՛ս զլ. VI. ծանոթ. 4

2 Միսլվունք է թույլ տրվել: Թուրքահայ բնակչության թիվը նվազագույնս
հաշվվում է 50,000 մարդ:

3 Գորշ Գայլերի երիտասարդական բաժինը Թուրքիայում:

4 Կարևոր հյուրերի համար պատրաստված հատուկ տեղ կամ մուտք:

Ջեյհանը զբաղվում է նաև քաղաքականությամբ: Նա Ամստերդամի Խոզենֆելդ-Սլոտերմիթ քաղաքամասի խորհրդի անդամ է և ներկայացնում է «ՆԻՎՈ» կոչվող շրջանային պրոգրեսիվ մի կուսակցություն:

— Մեզնից՝ եվրոպական թուրքերից յուրաքանչյուրը մի-մի ոսկե քննոց է իր հայրենի Թուրքիայի համար,— շարունակում է Ջեյհանը:— Թևնոցի գեղեցկությունը երևում է, սակայն այն ժամանակ, երբ նա թևիդ ես գցում: Այժմ Հոլանդիայում կա երեք հարյուր հազար թուրք, որոնք երկիրի ամենամեծ ազգային փոքրամասնությունն են կազմում: Դրանով հանդերձ մենք չունենք ոչ մի ներկայացուցիչ խորհրդարանում: Այդ ոսկի քննոցն այստեղ ոչ մի տեղ չի երևում: Պատճառը մեր ներքին անմիաբանությունն է: Մենք՝ թուրքերս, պետք է, որ մեր տարածայնությունները ի շահ մեր համայնքի ու մեր հայրենի Թուրքիայի, մի կողմ դնեք: Մենք պետք է այդ տարածայնությունները, մեր մեջ լուծենք և դրսի աշխարհին, որպես մի միասնական ուժ, ներկայանանք:

Մի որոշակի նախանձով Ջեյհանը մատնանշում է, որ խորհրդարանում կան երեք մարոկկացիներ, «մինչդեռ մարոկկացիների թիվն ավելի քիչ է թուրքերից»:

Ջեյհանը խորհուրդ է տալիս իր թուրք հայրենակիցներին՝ հույներին օրինակ վերցնել:

— Ամերիկայի հույն համայնքի միջոցով Հունաստանը մեծ ազդեցություն է ներգործում Ամերիկայի քաղաքական կյանքի վրա, որը հասնում է մինչև Կոնգրես,— ասում է նա:— Այդպիսով, Հունաստանին հաջողվում է խոչընդոտել Թուրքիային տրվելիք զինվորական ու տնտեսական օգնությունները: Նրանք օգտագործում են անհիմաստ հարցեր, ինչպիսին են՝ քրդական հարցը և մարդու իրավունքների հարցը: Ահա այդ պատճառով, հույժ կարևոր է, որ թուրքերն ակտիվման Հոլանդիայի քաղաքական համակարգում: Կարիք չկա, որ անպայման թուրքական ֆեդերացիայի անդամ լինես. ով որ բարի նպատակի համար է աշխատում, կստանա մեր միանշանակ օժանդակությունը:

Օրվա հյուր Դերման Օզալփը, որն այս միջոցառման համար Գերմանիայից ժամանել էր Օս, համաձայն է Ջեյհանի հետ: Սակայն, նա զգուշացնում է, որ ամեն թուրք հարմար չէ խորհրդարանի համար:

— Գերմանիայի խորհրդարանում էլ մի այսպես կոչված թուրք կա,— ասում է Օզալփը: Նա նկատի ունի «Կանաչների միություն – 90»՝ կուսակցության անդամ, ազգությամբ թուրք Ջեմ Օզդեմիրին, որը Գերմանիայի խորհրդարանի միակ թուրք դեպուտատն է:

— Նա իրեն թուրք է անվանում,— շարունակում է Օզալփը,— բայց միակ բանը, որ նա անում է թուրք ժողովրդին ու Թուրքիային, սևացնելն է: Օրինակի համար, նա շարունակ խոսում է մարդու իրավունքների մասին: Այսպիսի թուրքերի կարող են մեզնից գողանալ ու տանել: Այն, ինչ մենք կարիք ունենք, իսկական թուրք դիվանագետներ են, որոնք, ինչպես պարոն Ջեյհանն արդեն նշեց, ամեն բանից առաջ մեր ժողովրդի ու հայրենիքի շահերն աչքի առաջ ունեն:

Սակայն, ինչպե՞ս եղավ, որ Ահմեդ Ջեյհանը Ամստերդամի Խոզենֆելդ-Սլոտերմիթ քաղաքի խորհրդի անդամ դարձավ և այն էլ՝ շրջանային առաջադեմ մի կուսակցության՝ ՆԻՎՈ-ի կողմից: 1997 թվի փետրվարին այս հարցը դրինք թաղխորհրդի մյուս անդամներ Հանս Սթափհորսիուս և ՆԻՎՈ կուսակցության ֆրակցիայի նախագահ Ինգե Վիլեմս ֆան Բրևերենի առաջ: Ահմեդ Ջեյհանի հետ միասին, նրանք թաղխորհրդում կազմում են հիշյալ կուսակցության ֆրակցիան:

Հանս Սթափհորսիուսն ու Ինգե ֆան Բրևերենը տակավին հիշում են, որ Ահմեդ Ջեյհանն իրենց ասել էր, որ ինքը «Չախ – կանաչների»² անդամ է:

— Դա մի պլյուս էր նրան կուսակցության մեջ ընդունելու համար,— ասում է Սթափհորսիուսը:

Բանն այն է, որ նրանք չեն ստուգել, թե Ջեյհանն, իրոք, «Չախ-կանաչների» անդամ եղե՞լ է, թե՞ ոչ: Այնպես որ, երևում է՝ չի էլ եղել: Այս վերջինի՝ «Չախ-կանաչների» նախագահ Ադ Հարենյը մեզ հայտնում է, որ 1997-ի մարտին, Ջեյհանն իր կուսակցության անդամ չի եղել և այնքանով, որ ինքն ստուգել է, երբևէ էլ չի եղել:

— Մեր կուսակցության ներսում ոչ ոք նրան չի ճանաչում: Ստացվում է, որ նա մեր կուսակցության անունը չարաշահել է,— ասում է Հարենյը:

Երբ Ձեյհանից այս մասին հարցնում ենք, այսպես է պատասխանում.

— Ես մի տարի ու կեսից մինչև երկու տարի «Չախ-կանաչների» անդամ եմ եղել: Իսկ ինչո՞ւ հենց այդ կուսակցության, որովհետև այդ կուսակցությունը արտասահմանցիներին շատ ուշադրություն է դարձնում:

Նա իր անդամակցությունը չեղարկում է, «քանի որ ժամանակ չունեմ աշխատելու կուսակցության համար»:

Խոզենֆելդ-Սլոտերմիր քաղխորհրդի ընտրապայքարի ժամանակ հիշյալ քաղաքամասում ցրվում էր թուրքերեն լեզվով մի ծանուցատետր: Ծանուցատետրում ասվում էր. «Ներկայումս Ձեյհանը թուրքական մշակութային կենտրոնի նախագահն է և միաժամանակ՝ Ամստերդամի քաղաքապետարանում թուրքերի գործով խորհրդատու հանձնախմբի փոխնախագահ: Բացի այդ, նա պաշտոնավարում է փոստ ծառայությունում: Նա ՆԻՎՈ կուսակցության թուրք թեկնածուն է՝ Խոզենֆելդ-Սլոտերմիր քաղխորհրդի անդամակցության համար: Մեր այս թեկնածուն իր բոլոր ֆունկցիաներում, որ մինչ այժմ զբաղեցրել է, հրաշալիորեն ծառայել է մեր ժողովրդին, և մենք համոզված ենք, որ նա իր ապագա ֆունկցիաներում էլ այդպես կծառայի: Ի նկատի ունենալով խաղաղության ու ապահովության կարևորությունը մեր քաղաքում, հույժ կարևոր է, որ Ձեյհանն ընտրվի որպես մեր քաղխորհրդի անդամ: Հավատացած ենք, որ նրա ջանքերով մեր ցանկացած խաղաղությունն ու ապահովությունը մեր քաղաքամասում իրականություն կդառնա: Այն, ինչ մենք պետք է անենք, մեր քվեատոմսերում նրա անվան առաջ քառակուսին կարմիրով նշելն է: Ոչ մի ուրիշ կուսակցություն մեր քաղաքամասում թուրք թեկնածու չունի ...»: Ծանուցատետրում ո՛չ մի նշում չկա ուղարկողի հասցեի կամ անվան մասին: 1994 թվի մարտին, արտոնյալ քվեներով՝ Ձեյհանն ընտրվեց քաղխորհրդի անդամ:

Ինճե Վիլենս ֆան Բրեվենը նրա մասին այսպես է ասում.

— Ահմեդ Ձեյհանը սակավ էր մի բան ասում: Մենք հաճախ ենք մեր օգնությունն առաջարկել իրեն՝ իր գործը կատարելու, ինչպես, օրինակ, նամակները կարդալու համար: Սակայն նա չէր ընդառաջում: Նա միշտ բացակայելու մի պատրվակ ուներ: Հաճախ զանգում էր ու հայտնում, որ ժողովին չի մասնակցելու:

Երբ մենք նրանց ասում ենք, որ Ահմեդ Ձեյհանը Գորշ Գայլերի ակտիվ համակիր է, զարմանքից ապշում են: Ինճեն մի նամակ է հանում Ձեյհանի հրաժարման հարցի մասին ու ասում.

— Իր անգործունեության պատճառով, արդեն 1995-ին մենք այն եզրակացությանը հասանք, որ ավելի լավ կլինի, որ նա հրաժարական տա: Մեր դիտավորությունն իրեն հայտնելուց հետո, նա մեզ ասաց. «Դեռևս չեմ ուզում որոշում կայացնել, նախ խորհրդակցեմ»: «Ո՞ւմ հետ. տիկնո՞ջդ հետ»,— հարցրինք մենք: «Այո»,— հաստատեց նա: Իսկ միայն 1996-ին պարզվեց, թե ո՞ւմ հետ պետք է խորհրդակցի: «Պետք է խորհրդակցեմ իմ գործընկերոջ՝ Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության Բոս-Էն-Լոմերի շրջխորհրդի թուրք անդամի հետ»:

— Երբ Ձեյհանը վեց ամիս քաղխորհրդի ժողովներից բացակայեց, 1997 թվի մարտի սկզբին մի նամակ ուղարկեցինք իրեն, որում մի ժամանակաշրջան նշեցինք իր մեկնման համար: Այդ նամակին նա դեռևս չի պատասխանել,— ասում է Վիլենս ֆան Բրեվենը:

Իսկ արդյոք կուսակցության ֆրակցիայի նախագահը գիտի՞, թե Ձեյհանը քաղաքամասում ի՞նչ գործերով է զբաղվում:

— Այդ մասին նա երբեք մեզ բան չի ասել,— պատասխանում է ֆան Բրեվենը,— սակայն, թվում է, թե կապեր ունի մի մզկիթի հետ, որ գտնվում է Յոհանես Պոստստրաթում (դա Մեսչիդ-ալ-Ալսա մզկիթն է): Մենք մի անգամ հրավիրվել ենք այնտեղ ընթրիքի: Ես երկու անգամ այնտեղ եմ եղել: Երևում էր, որ Ձեյհանն այնտեղ ճանաչված անձ է:

1997-ի ապրիլին ՆԻՎՈ-ն պորբլեմի առաջ է կանգնում: Ահմեդ Ձեյհանը հայտնում է, որ քաղխորհրդում այլևս ՆԻՎՈ-ի անունից չի մասնակցելու, այլ որպես անկուսակցական: Այդպիսով, ՆԻՎՈ-ն մի աթոռ ձեռքից տալիս է:

Ապրիլի 1-ի քաղխորհրդի ժողովում Ձեյհանը հայտարարում է.

— Ես այս ֆրակցիայի գործերի հետ համաձայն չեմ: Ընդդիմություն իմ տեսակետից, չի նշանակում՝ միանշանակ դեմ քվեարկել:

«Դը Վեսթըրփոստ» քաղային թերթում, Ձեյհանը հայտարարում է, որ իր ընտրողներն իրենից պահանջել են, որ նա որպես անկուսակցական, իր գործը շարունակի:

Երբ հարցնում ենք Ահմեդ Ջեյհանին, թե արդյո՞ք ինքը Գորշ Գայլ է, թե՞ ոչ, նա հերքում է այդ:

— Ես էմ. Հա. Փե.—ի անդամ չեմ, ոչ էլ որևէ մի ուրիշ կուսակցության՝ Թուրքիայում,— ասում է նա Ամստերդամի իր բնակարանում, ուր կա մի պահարան՝ լի Ուլքյուջու (այսպես կոչված «խղեալիստների») գրքերով:— Ես Թուրքիայի հետ ո՛չ մի կապ չունեմ: Ես բնակվում եմ Հոլանդիայում, կողմնակից եմ ինտեգրացիայի ազգային ինքնության պահպանմամբ: Ի՞նչ վատ բան է քո ինքնությունը պահպանելը: Հոլանդացիներն էլ հպարտանում են իրենց Ֆուլենդամով: Ես քաղաքականության հետ գործ չունեմ, ես միայն սոցիալական ու մշակութային հարցերով եմ զբաղվում: Դա նշանակում է, որ ես աշխատում եմ Հոլանդիայի թուրքերի խնդիրները լուծել, ինչպես օրինակ՝ երիտասարդներին ու պատանիներին, որոնք այլևս լավ հարաբերություն չունեն իրենց ծնողների հետ: Ծնողները պետք է կարողանան իրենց զավակներին ճիշտ ուղղություն ցույց տալ, որպեսզի նրանք երկու մշակույթների մեջ իրենց չկորցնեն...:

Ջեյհանը ներվային է դառել և խոսում է լարված: Թվում է, թե գրույցը ծանր է նստում իր վրա:

— Ես անձնական պատճառներով եմ հեռացել ՆԻՎՈ-ից,— ասում է և անմիջապես իրեն ուղղում,— դե, իհարկե, քաղաքական պատճառներ էլ կար: ՆԻՎՈ-ն ամենուրեք դեմ էր քվեարկում:

Այն հարցին, թե արդյո՞ք ինքը Հիլալ հուղարկավորության ֆոնդի նախագահն է եղել, թե՞ ոչ, նա պատասխանում է «ոչ-ով»: Այս ֆոնդը կապվում է թուրքական ֆեդերացիային, և նրա նախագահն է տխրահռչակ Սերվեթ Ե-ն:

— Բայց քո անունը նշված է վարչության անդամների շարքում: Դա արձանագրված է առևտրի ու ընկերությունների գրանցման պալատի մատյանում:

— Հա, հիմա հիշեցի: Ես նախագահ էի:

Հոլանդական Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցության (Սե. Դե. Ա.) կողմից Բոս-Էն-Լոմեր քաղխորհրդի թուրք անդամը, որի հետ Ջեյհանը պիտի խորհրդակցեր, Իբրահիմ Չիթիլն է: Նա ներկայացնում է վերոհիշյալ կուսակցությանը՝ Բոս-Էն-Լոմեր քաղային խորհրդում:

Թաղխորհրդի գրասենյակից ձեռք են բերում սույն խորհրդի անդամ Իբրահիմ Չիթիլի հեռախոսահամարը: Երբ Մեհմեթը համարը հավաքում է, գծի այն կողմից իրեն ասում են, որ թուրքական մշակութային կենտրոնն է: Արդյոք սխա՞լ է հավաքել:

— Ո՛չ,— ասում են այն կողմից,— Իբրահիմն այսօր այստեղ չի, վաղը զանգահարեք:

Հաջորդ օրը Մեհմեթը զանգահարում է թուրքական մշակութային կենտրոն: Իրեն ներկայացնում է որպես մի ուսանող, որ դիսերտացիա պիտի պատրաստի Հոլանդիայի թուրք քաղաքական գործիչների մասին: Եթե ասի, որ լրագրող է, Չիթիլը շատ բան դուրս չի տա:

— Ինչպե՞ս ես քաղաքականության մեջ մտել,— հարցնում է Մեհմեթը:

— Մարդիկ դիմել են ինձ և ցանկացել, որ ես ինձ թեկնածու հայտարարեմ,— ասում է Չիթիլը:

— Ինչի՞ համար են հենց քեզ դիմել:

— 1991-ից սկսած ես աշխատում եմ Հոլանդիայի ամենահին և ամենամեծ թուրքական կազմակերպության համար: Ամեն օր ես գործ ունեմ տասնյակ մարդկանց հետ: Մրանց ես աշխատում եմ օգնել: Այդ մարդկանց ցանկությունն էր, որ ես ավելի բարձր պաշտոն ունենամ: Ես էլ ինձ թեկնածու հայտարարեցի:

— Արդյոք Սե. Դե. Ա.-ն քեզ չի՞ մոտեցել:

— Ոչ, ես ինքս եմ դիմել Սե. Դե. Ա.-ին: Յուրաքանչյուր կուսակցություն ձգտում է քվե հավաքել: Միայն այդ պատճառով ուզում եմ քեզ իրենց մեջ ունենալ: Այլազգի թեկնածուներն ընտրացանկում միշտ դժվարամատչելի տեղերում են դրվում: Սկզբում ինձ դրին ցանկի ութերորդ շարքում: Չընդունեցին: Բավական քաշքշուկից հետո ինձ հատկացրին չորրորդ տեղը: Ես ձեռք բերի 355 արտոնյալ ձայներ և քաղխորհրդում գրավեցի երկրորդ տեղը: Ինձ միանշանակ քվեարկել էին թուրքերը: Ո՛չ մի հոլանդացի ինձ ձայն չէր տվել: Բայց ահա շնորհիվ այդ քվեների, նրանք խորհրդում ձեռք բերին մի հավելյալ աթոռ:

Արդյո՞ք իր պաշտոնավարության ժամանակաշրջանում կարողացել է իրականացնել այն, ինչ, իրոք, կարելի էր ձեռք բերել: Այդ հարցին Չիթիլը միանշանակ չի պատասխանում:

— Պատճառը լեզվային ու մշակութային տարբերություններն են: Դա հարցը դժվարացնում է:

— Ի՞նչ է Չեր կարծիքը հուլանդական հասարակության մեջ թուրքերի ինտեգրացման մասին:

— Այս բնագավառում նկատելի են դրական զարգացումներ: Մենք այլևս հետ չենք վերադառնալու: Մենք մնալու ենք Հոլանդիայում: Մեզ հաջորդող սերունդները լավ գործերով են զբաղվելու: Սակայն մեր հայրենիքը միշտ Թուրքիան է լինելու, — պատասխանում է Չիթիլը:

— Թուրքական մշակութային կենտրոնի հետ դուք ի՞նչ կապեր ունեք, — հարցնում է Մեհմեթը:

— Այնտեղ ես զբաղեցնում եմ ֆինանսավորված մի աշխատատեղի՝ հատուկ մի նախագծի կադրում:

— Ի՞նչ նախագծի մասին է խոսքը:

— Այդ մասին չեմ ցանկանում շատ խոսել. այսքանը կասեմ միայն, որ ինձ վարձատրում է Ամստերդամի քաղաքապետարանը:

— Ասում եմ, որ թուրքական մշակութային կենտրոնը ուլթյուջուներին պատկանող մի հաստատություն է:

— Դրանք ասեկոսեներ են...», — բղավում է Չիթիլը, — այս բանբասանքները տարածում են նրանք, որոնք ուզում են մեր մեջ երկպառակություն սերմանել: Քեզ ի՞նչ է վերաբերում, թե ո՞վ ի՞նչ քաղաքական համոզմունք ունի: Դու արդեն քո չափն ու սահմանն անց ես կացնում:

— Դուք կապ ունե՞ք թուրքական մյուս կազմակերպությունների հետ:

Չիթիլը բորբոքված պատասխանում է. «Ո՛չ, ես ո՛չ ոքի հետ կապ չունեմ, ո՛չ ոքի հետ»:

— Թուրքական ֆեդերացիայի հե՞տ էլ:

1997 թվի ապրիլի 7-ի թուրքական ֆեդերացիայի երիտասարդական սիմպոզիումում, Չիթիլը ելույթ էր ունեցել որպես ատենախոս:

— Դա քեզ չի վերաբերում:

— Ի՞նչ է ուզում այդ հիմարը, — լսվում է մի ուրիշ ձայն՝ գծի այն կողմից, — ասա ի՞նչ բան ունես ուրիշների գործերի հետ:

Գիծն անջատվում է:

Նախքան իր «Մեկերտ» աշխատատեղին» զբաղեցնելը, Իբրահիմ Չիթիլն ակտիվ էր թուրքական մշակութային կենտրո-

նում: Նա կոորդինացնում էր այնտեղի սոցիալ-մշակութային աշխատանքները և զբաղվում կենտրոնի հրատարակչական գործերով: Բացի այդ, նա հիմնադիրն է եղել թուրք պատանեկան ռադիոհաղորդման հաստատության, որն անդամ է թուրքական ֆեդերացիայի: Իր իսկ ասելով՝ նաև խորհրդատու է ԹՈՍ-ի՝ թուրքական ռադիո-հեռուստահաղորդման հաստատության, որն ամենօրյա հաղորդումներ է արձակում Ամստերդամի ռադիոյից, ինչպես նաև շաբաթական հաղորդումներ Ամստերդամի կաբելային հեռուստացույցից:

ԹՈՍ-ն այս վերջերս ասեկոսի առարկա է դառել: 1990 թվի հոկտեմբերի 7-ին, մի հաղորդման ժամանակ, մի թուրք խոջա կոչ արեց սպանել «բոլոր նրանց, ովքեր դեմ են կանգնում իսլամին»: Ամստերդամի քաղաքապետարանի վարչությունն այդ առթիվ քրեական գործ բացեց դատախազության մոտ: 1991 թվի սեպտեմբերի 5-ին դատախազությունը հրապարակեց իր տեսակետը: Դատախազության կարծիքով քրեական բնույթի հարց չի առաջացել, քանի որ խնդրո առարկա խոջան որոշակի խումբ մարդկանց սպանելու կոչ չի արել: Նա միայն ուզել է իր ունկնդիրներին փաստել, որ ըստ Դուրանի, մահապատիժը օրինական է իսլամի և մարգարեի հակառակորդների նկատմամբ: Այս կապակցությամբ խոջան վկայակոչել է մի տեքստ Դուրանից, ուր ի շարս այլոց, ասվում է. «Նրանք, ովքեր պայքարում են Ալլահի ու մարգարի դեմ և խոռվություն սերմանում երկրում, պետք է սպանվեն»: Մի խոսքով, դատախազության եզրակացությունն այն էր, որ այս կամ այն խումբ մարդկանց նկատմամբ սպանության ոչ մի կոչ չի եղել:

Բաշբուրը կոչ է արել իր հետևորդներին՝ զբաղվել քաղաքականությամբ: Այդ կոչը նա արձակել է 1996 թվի հոկտեմբերին՝ Գերմանիայի Էսեն քաղաքում տեղի ունեցած թուրքական ֆեդերացիայի իններորդ համագումարում:

Էսենում նա պատվիրեց իր ունկնդիրներին՝ ակտիվորեն մասնակցել քաղաքական կուսակցությունների մեջ: Որպես ամենահարմար կուսակցություն՝ Բաշբուրը մատնանշեց Քրիստոնյա-դեմոկրատների կուսակցությունը՝ վարչապետ Քուլի դեկավարությամբ:

Առավել փոքր աջ ծայրահեղական կուսակցությունները,

ինչպիսիք են էն. Դե. Փե. և հանրապետականները, ուշադրության արժանի չեն: Ըստ Բաշբուղի՝ «Նրանք ազդեցիկ կուսակցություններ չեն և բացի այդ, թուրքերի նկատմամբ բացասական վերաբերմունք ունեն»:

— Մենք ջանում ենք մեր համակրողներին քաջալերել, որպեսզի նրանք մասնակցեն քաղաքականության մեջ, — ասում է թուրքական ֆեդերացիայի կոորդինատոր Էքենը: — Մենք նրանց քաջալերում ենք ակտիվանալ մի որևէ կուսակցության մեջ, կարևոր չի՝ որը: Նախքան ընտրությունները, նախապատրաստական աշխատանք ենք տանում: Ժողովրդին ասում ենք. սրանք են կուսակցությունները, այս նպատակներն ունեն, ընտրություն արեք ու անդամ դարձեք:

Էքենն ինքը մի անգամ մման փորձ արել է:

— Ծոցի պատերազմի ճգնաժամի ժամանակ, ես մի տարի անդամակցել եմ Չեյբուրխ շրջանի բանվորական կուսակցության նախագահությանը:

Նա դադարել է անդամակցությունից, «որովհետև ես շատ զբաղված էի և բացի այդ, դա բամբասողների ակումբից ավել մի բան չէր, մինչդեռ կուսակցության նախագահությունը պետք է իր թաղամասի խնդիրները քննարկի», — ասում է նա:

Թաղխորհրդի Բանվորական կուսակցության ֆրակցիան վերհիշում է, որ Էքենը հազվադեպ էր ներկա գտնվում խորհրդի ժողովներին:

Հոլանդիայի քաղաքական կուսակցությունների մասին Էքենը դրական կարծիք չունի:

— Դրանք միայն ընտրությունների ժամանակ են հետաքրքրվում թուրքերով:

Նա տալիս է մի օրինակ. «1994-ի քաղխորհուրդների ընտրություններից առաջ, համարյա բոլոր կուսակցություններից մարդ եկավ ֆեդերացիա: Նրանք ասում էին. «Մենք մի հարմար թեկնածու ենք փնտրում մեր կուսակցության համար: Մե. Դե. Ա.—ն, «Դե-66»⁶—ը և Բանվորական կուսակցությունը ինձ հարցնում էին, թե պատրաստ եմ թեկնածու լինել:

— Այդ երեք կուսակցությունները քեզ հարցնում էին, թե թեկնածու կլինե՞ս:

— Այո:

Իրոք, 1997-ին, Դե. 66-ի Չեյբուրխ քաղաքամասի մասնաճյուղը մոտեցել է Էքենին:

— Ես գիտեմ, թե թուրքերն ինչպիսի՞ ղժվարություններ ունեն քաղաքական կուսակցություններում, — ասում է Էքենը: — Թաղային ֆրակցիայի ժողովների զրույցներից բան չես հասկանում: Զեզ ընդհանրապես խաղ չեն տալիս: Ասում են, թե թուրքերը ոչինչ չեն հասկանում:

Իր ասելով, նա սա շատ լավ գիտի, քանի որ մոտիկից ճանաչում է Բանվորական կուսակցության թուրք մի դիվանագետի:

— Դա Մուստաֆա Ուստալարն է: Նա էլ ղժվարություններ ունի: Մենք օգնում ենք իրեն: Ես առաջարկել եմ իրեն՝ քաղխորհրդի նամակներն ու փաստաթղթերը կարդալ իր համար:

1990 թվից ի վեր, Մուստաֆա Ուստալարը ներկայացնում է Բանվորական կուսակցությունը Չեյբուրխ քաղաքամասի թաղխորհրդում: 1994-ին նա վերընտրվեց արտոնյալ ձայներով: Նախքան այն, որ Ուստալարն իրեն թեկնածու հայտարարեր Բանվորական կուսակցության համար, ասվում էր, թե նրան տեսել են աջակողմյանների շրջանակներում: 1993-ի ապրիլին մի հոդված հրատարակվեց «Նյու Ռևու» թերթում: Հոդվածում նշվում էր, որ Ուստալարը տակավին կապեր է պահպանում ծայրահեղ աջակողմյանների հետ:

Հոդվածը ուղղման ենթարկվեց Ամստերդամի բանվորական կուսակցության ֆրակցիայի նախագահ և փաստաբան պրն. Էքերհարդ ֆան Դեր Լանի օգնությամբ: Չեյբուրխի բանվորական կուսակցության անդամ և թաղխորհրդի ներկա նախագահ Ստեֆան Ստեյնմեթզը վստահ է, որ Մուստաֆա Ուստալարը ոչ մի կապ չունի Գորշ Գայլերի հետ: Ստեյնմեթզն ասում է, որ Ուստալարին լավ ճանաչում է և հաճախ նրա հետ զրուցում: Նա խորհուրդ է տալիս, որ մենք անձամբ զանգահարենք իրեն: Նրանից ստանում ենք Ուստալարի հեռախոսահամարը:

Այդ հեռախոսահամարը մեզ ծանոթ է: Դա Ուլու-Չամի մզկիթի համարն է:

Հավաքում ենք համարը: Ոմն Ուշլեր Ալքոչ վերցնում է խոսափողը:

— Ներկա՞ է Մուստաֆա Ուստալարը, — հարցնում ենք:

— Դուք պետք է երեկոյան ժամը վեցին, յոթին զանգահա-

րեք: Համարյա ամեն երեկո այստեղ է: Այստեղ մի բաժակ թեյ է խմում ու գրուցում,— ասում է Ակբոչը:

Մենք հետ ենք զանգահարում Ստեյնմեթզին. «Համարը ճիշտ եք տվել»:

Ստեյնմեթզը ստուգում է. «Հաստատ. դա նրա տան համարն է»:

— Որտեղի՞ց եք այս համարը վերցրել:

— Թաղխորհրդի անդամների անվանացանկից:

— Բայց գծի այն կողմից մեզ պատասխանեցին ուրիշ քրքախոս մարդիկ...:

— Իր ընտանիքի անդամները եղած կլինեն,— ասում է Ստեյնմեթզը:

Մի երկու օր հետո իրեն ասում ենք, որ իր տված հեռախոսահամարը Ուլու-Ջամի մզկիթի համարն է:

— Երևի անվանացանկը հնացել է,— ասում է Ստեյնմեթզը:

Չեյքուրխի բանվորական կուսակցության ֆրակցիայի նախագահուհի Փեթրա ֆան Մաստրիխտը վերհիշում է, որ մոտավորապես 1994-ին Ուստալարն իր անձնական հեռախոսահամարը փոխեց մզկիթի համարով: Մրա պատճառն այն էր, որ նրա ընտանեկան կյանքի հանգիստն սկսել էր խանգարվել մամուլի և տեղեկատվական միջոցների կողմից, որոնք կարողանում էին նրան որոշակի ժամերում տանը գտնել:

— Նրան շարունակ զանգահարում էին,— ասում է ֆան Մաստրիխտը:

Նա Ուստալարին հարցրել է, թե տակավին մզկիթ հաճախո՞ւմ է: Ուստալարը պատասխանել է. «Վերջին տարիներին երբեք այն կողմ չեմ գնացել»:

Երբ այդ մասին Ուստալարին հարցնում ենք, հերքում է, որ ինքը հաճախ մզկիթում է լինում. «Ես երբեք այնտեղ չեմ գնում: Հետո իր ասածը ինչ-որ չափով փոխում է: «Երբեմն-երբեմն գնում եմ»:

— Թուրքական ֆեդերացիան ասում է, որ քեզ օգնում է. քաղխորհրդի նամակներն ու փաստաթղթերը կարդալու համար քեզ օգնություն են առաջարկել, այդպես չէ՞:

Ուստալարը հերքում է. «Իմ հոլանդերենը բավարար է»: Հետո շարունակում է. «Ես 1988-ից մինչև 1990-ը մզկիթի վարչու-

թյան անդամ եմ եղել: Այժմ, սակայն, կապ չունեմ այնտեղի հետ: Ես խիստ դեմ եմ Գորշ Գայլերին: Եթե առիթն ունենամ, թուրքական ֆեդերացիային ջարդուփշուր կանեմ: Դա վտանգավոր մի հաստատություն է: Նրանք ղեկավարվում են թուրքական ապահովության ծառայության՝ ՄԻԹ-ի կողմից: Ես սրանից ավել բան չեմ կարող ասել, նրանք կարող են ինձ վերացնել»:

Ուստալարն ասում է, որ երբ ինքը 1990-ին քաղխորհրդում տեղ գրավեց, Բանվորական կուսակցությանը տեղեկացրեց, որ Ուլու Ջամի մզկիթը Գորշ Գայլերի որջ է:

— Դա ասացի ժամանակի ֆրակցիայի նախագահ Յան Լուբախին:

— Ներկա նախագահ ֆան Մաստրիխտին ինչպե՞ս, նրա՞ն էլ ասացիր:

— Երևի թե ասել եմ: Համենյանդեպս, կուսակցությունը տեղյակ է այդ մասին: Ես նույնիսկ զանգահարել եմ Չեյքուրխի ոստիկանությանը:

Ֆան Մաստրիխտը, սակայն, այսպիսի բան չի հիշում:

Թուրքական ֆեդերացիայում, երբ կոորդինատոր Էքենը լսում է, թե Ուստալարը ինչպես է արտահայտվել ֆեդերացիայի դեմ, ցասումով լցվում է:

— Ուստալարը մեր հովանավորության շնորհիվ է ընտրվել. նա նույնիսկ մեր մզկիթում ելույթ է ունեցել,— ասում է նա զայրացած:— Հիմա ասում է, թե մեզ հետ գործ չունի, կովի մեկը. մյուս ընտրաշրջանում այլևս իրեն չենք պաշտպանի. վերջացավ:

«Նյու Ռևու» թերթի՝ հետազայում ուղղված հոդվածում, ուր Ուստալարը մեղադրվում է աջ ծայրահեղականների հետ կապ ունենալու մեջ, ևս մի ուրիշ անձնավորություն մեղադրվում էր. դա Սաբան Ջուզունն էր, որն այդ ժամանակ Ամստերդամի Խոզենֆելդ-Սլոտերմիթ քաղխորհրդում ներկայացվում էր բանվորական կուսակցությանը:

Նախքան իր ընտրվելը՝ որպես հիշյալ խորհրդի անդամ, 1990 թվին, Ջուզունը Ամստերդամի Բելամիստրաթ քաղի թուրքական մշակութային կենտրոնի գանձապահն էր եղել, իսկ հետո՝ նախագահը: Երբ նա իրեն Փե. Վե. Դե. Ա. (բանվորական կուսակցություն) կողմից թեկնածու հայտարարեց, Սաբան Ջուզունն այլևս հիշյալ մշակութային կենտրոնի վարչության ան-

դամ չէր: Ուրեմն, «Նյու Ռևու» քերթի պնդումը, որ նա կապեր ունի այժ ծայրահեղականների հետ, պետք է ենթարկվեր ուղղման:

Մոտավորապես կես տարի անց, նոյեմբերի 5-ին, ժամանակի Բանվորական կուսակցության նախագահ Ֆելիքս Ռոտենբերգը մի փակ նամակ է ստանում այն ժամանակվա ազգային ապահովության ծառայության պետ Ա. Դոկտորոզ ֆան Լյունենից: Նամակը վերաբերում էր ապագա թեկնածուներից մեկին՝ Սերվեթ Ե-ին: Այս անձնավորությունը հայտնել էր, որ մտադիր է Փե. Վե. Դե. Ա.-ի կողմից անդամակցել թաղխորհրդում: Դոկտորոզ ֆան Լյունենի նամակում նշվում էր սակայն, որ Սերվեթ Ե.-ն «Թուրքեշի այժ ծայրահեղական շարժման համակիր է», ու նաև կապված է հանցագործ մի կազմակերպության հետ, որը ղեկավարվում է Ահմեդ Ա.-ի կողմից: Նամակը, սակայն, չէր սահմանափակվում Սերվեթ Ե.-ով: Այնտեղ նշվում էր նաև Սաբան Ջուզունի անունը: Նրա մասին նամակում ասվում էր, որ մինչև 1990 թվականը, նա եղել է Թուրքեշի համակիրը, որ Սերվեթ Ե.-ն նրա մասին ակնածանքով է խոսում և, որ նա Սերվեթ Ե.-ի ու նրա ընտանիքի համար չվերթի տոմսեր է ապահովել:

Փե. Վե. Դե. Ա.-ին հաջողվեց հարցը ծածուկ պահել: Կուսակցության Ամստերդամի ֆրակցիայի նախագահ պրն Էբերհարդ ֆան դեր Լանը պատրաստ գտնվեց այդ մասին խոսելու:

— Ի՞նչ պետք է անել: Մենք գիտեինք, որ Ջուզունը օրենքից դուրս գործեր է անում, բայց թե ի՞նչ էր անում, մենք ոչինչ չգիտեինք ու տակավին էլ չգիտենք: Ի վերջո, մենք միջամտեցինք, իրեն ասացինք, որ գալիք ընտրություններին չի կարող թեկնածու դառնալ:

— Իսկ ինչո՞ւ իրեն թույլ տվիք, որ մինչև պաշտոնավարության վերջը մնա:

— Միայն երեք ամիս էր մնացել մինչև նոր ընտրությունները. արդարադատության նախարարությունն էլ մեզ չէր ասել, թե Ջուզունն ի՞նչ գործերով է զբաղվում, ի՞նչ պատճառաբանությամբ կարող էինք նրան վտարել: Բացի այդ, դա մի ընդվզում կառաջացներ: Մենք ստուգեցինք ճշտելու համար, թե արդյոք նա թաղխորհրդին վերաբերող կարևոր ինֆորմացիա ունի՞, թե՞ ոչ: Պարզվեց, որ չունի: Հետո նա չէր մեղադրվում հասարակաց կարգը խանգարելու մեջ:

Իսկ ինչի՞ համար է Ջուզունի անունը հայտնվել ներքին անվտանգության ծառայության թղթապանակի մեջ: Ոստիկանության Էկստրյուս գործողության թղթապանակից կարողանում ենք մի որոշ պարզաբանություն ձեռք բերել: Քրեական հետախուզական ծառայությունն այն կարծիքին էր, որ Ջուզունը, ինչպես Սերվեթ Ե.-ն, կապված են Գորշ Գայլերի «Բռնարարք և քաղաքականություն» ստորաբաժնի հետ: Քրեական փորձագետը, որը պատրաստել էր հիշյալ ստորաբաժնի սխեման, ենթադրում է, որ սխեմայում գտնվող մարդիկ շատ ավելի բարձր կապեր ունեն: Նրա կարծիքով, «Բռնարարք» ստորաբաժնի մյուս ծայրում ինքը՝ Բաշբուրն է:

Հիշյալ քրեական փորձագետը, սակայն, մի բանից տարակուսում է: Թղթապանակի «Բռնարարք» ստորաբաժնին վերաբերող տեքստում նշված է Սաբան (Ջուզուն) և ո՛չ Սաբան Ջուզուն: Ունկնդրված հեռախոսագրույցների մեքենագրված զեկույցներում հանդիպում ենք Սաբան անվանը՝ առանց ազգանունի, որն օգտագործում էր նաև Մեհմեթ Ալթինջափա անունը: Սաբանը, այլ անունով՝ Մեհմեթ Ալթինջափա, հավանաբար զբաղվում էր կեղծ անձնագրերի առևտրով և կապված էր նաև հինգ միլիոն կեղծ շվեյցարական ֆրանկի սպիտակեցման գործի հետ:

Համեմայնդեպս, չարիքն իր կատարողի օձիքը բռնեց: Սաբան (Ջուզուն) անունը նշված էր քրեական փորձագետի սխեմայում: 1994 թվի հուլիսի 8-ի քննչական նիստում, նախնական քննության դատավոր Մեյսադր Ե. Էմ. Ֆերհուլը հարցաքննեց Սերվեթ Ե.-ին՝ որպես վկա Ահմեդ Ա.-ի գործում: Դատավորը Սերվեթին հարցրեց, թե ո՞վ է սխեմայի ներքևի այժ կողմում նշված Սաբան Ջուզունը: Սերվեթ Ե.-ն պատասխանեց. «Նա Փե. Վե. Դե. Ա.-ի կողմից Խոզենֆելդ-Սլոտերմիր թաղխորհրդի անդամ էր. հավանաբար հիմա էլ է: Այդ թաղխորհրդի տարածքում է Յոհանես Փոստտրաթում գտնվող մզկիթը: Ջուզունը շարունակ այցելում էր մզկիթ»:

Բացի դրանից, վերոհիշյալ մզկիթը Բանվորական կուսակցության անդամներին մի անգամ հրավիրել է ընթրիքի. «որպես բարեկամության նշան, Ջուզունը դիմեց ինձ՝ դա կազմակերպե-

լու համար. հավանաբար այն պատճառով, որ ես ի վիճակի էի այդ անելու»:

Փե. Վե. Դե. Ա.—ի հետ իր հարաբերության մասին, Սաբան Ջուզունն այս է ասում. «Մի օր ինձ ասացին, որ ես չեմ կարող վերստին ինձ քեկնածու հայտարարել: Մեր նախագահ Ռոբ Մավադեն ասաց, որ ես չվերթի տոմսեր եմ գնել Սերվեթ Ե.—ի համար և, որ Սերվեթ Ե.—ն հանցագործ է: Նա ինձնից հարցրեց, թե արդյո՞ք ես եմ մուծել այդ տոմսերի գինը: «Իհարկե»,— ասացի ես: Սերվեթ Ե.—ն էլ, իմիջիայլոց, դա հաստատել է:

— Սավադեն ասաց, որ եթե պարզվի, որ ես նրա միջոցով բռնիքի տոմսեր եմ գնել, խնդիրներ կառաջանան,— շարունակում է Ջուզունը:— Ես չգիտեի, որ Սերվեթ Ե.—ն հանցագործ է: Ներքին անվտանգության ծառայության նամակի մասին ինձ ոչինչ չի ասվել: Ինչի՞ համար Փե. Վե. Դե. Ա.—ն այդ ամենն ինձնից թաքցրել է: Եթե ասեր, ես ամեն ինչ կպարզաբանեի:

1997 թվի մարտի վերջին հանդիպում ենք Փե. Վե. Դե. Ա.—ի ֆրակցիայի նախագահ Մեյստըր Էբերհարդին և իրեն ասում. թե ի՞նչ է նշված ոստիկանության թղթապանակում Սաբան Ջուզունի մասին: Այդ ժամանակ մենք դեռևս չգիտեինք, որ ոստիկանության այս տեղեկությունը ճիշտ չէ: Ապրիլի սկզբին, «Կասեցրե՞ք Գորշ Գայլերին» կազմկոմիտեն հրապարակում է մի ծանուցատետր, ուր, ի շարս այլոց, Սաբան Ջուզունն ու Մուստաֆա Ուստալարը ներկայացվում են՝ որպես բանվորական կուսակցության մեջ ներթափանցած Գորշ Գայլեր: Նույն տարվա ապրիլի 9-ին, «Թրաու» օրաթերթում տված մի հարցազրույցում, Ֆան Դեր Լանը հայտնում է, որ Ջուզունի մասին հրապարակված ինֆորմացիան դժբախտաբար ճիշտ է: Հարցազրույցում Ֆան Դեր Լանն ասում է, որ իր հայտարարությունը հիմնված է մի հուլանդացի և մի թուրք լրագրողի տեղեկությունների վրա, որոնք հետազոտություն են կատարում Գորշ Գայլերի մասին: Կարճ ժամանակ սրանից անց, մենք զրուցում ենք Սերվեթ Ե.—ի հետ: Դարձյալ ամեն ինչ փոխվում է: Մեր հարցին, թե արդյոք քրեական հետախուզական ծառայությունում պատրաստած սխեմայի Սաբան (Ջուզունը) նույն Սաբան Ջուզունն է, Սերվեթ Ե.—ն պատասխանում է. «Ո՛չ, դա մի ուրիշ Սաբան էր, որն արդեն վերադարձել է Թուրքիա»:

Իսկ ի՞նչ է ասում քրեական հետախուզական բաժնի սխեմայում «փոփոխության ենթարկված» Սաբան Ջուզունը. «Այս խնդիրը չափազանց վնասակար է: Նախ, 1993-ին, «Նյու Ռևու» թերթն ինձ հանցագործ է ներկայացնում: Հետո, «Թրաուում» կարդում եմ, որ ես Գորշ Գայլ եմ: Իսկ հիմա տեղեկանում եմ, որ անունս նշված է քրեական հետախուզական բաժնի սխեմայում: Իմ մեծագույն հարցը հիմա այս է՝ ինչպե՞ս պիտի իմ վարկը վերականգնեմ: Ես փորձեցի Նորդհոլթի հետ կապվել, բայց նա չուզեց ինձ հետ խոսել»: Ջուզունն ասում է, որ ինքը Գորշ Գայլ չի:

— Անցյալում ես Թուրքեշի ծրագրերից մեկը հավանել էի, այն է՝ գյուղացիներին պաշտպանելու ծրագիրը, սակայն, այդ պաշտպանությունից ոչինչ չեղևաց: Շատ շուտ կարծիքս փոխեցի:

Ջուզունը չի խորշում Թուրքիային քննադատելուց:

— Թուրքիայում մարդու իրավունքները խախտվում են:

— Իսկ դու Ամստերդամի թուրքական մշակութային կենտրոնի գանձապահն ու նախագահն ես եղել, չէ՞:

— Այդ կենտրոնը ոչ մի գործ չունեի Գորշ Գայլերի հետ,— ասում է Ջուզունը:

— Բայց դու նույնպես ելույթ ես ունեցել 1996 թվի թուրքական ֆեդերացիայի կողմից կազմակերպված թուրք երիտասարդների համագումարում:

— Այո, բայց ես այնտեղ ելույթ եմ ունեցել որպես ուսուցիչ—մասնագետ: Լոկ ելույթ ունենալն այնտեղ չի նշանակում, որ ես Գորշ Գայլ եմ:

1990 թվին Բրաբանթս նահանգի Քաուկ քաղաքում տեղի էին ունենում քաղխորհրդի ընտրություններ: Քրիստոնյա—դեմոկրատ կուսակցությունը (Սե. Դե. Ա.—ն) Օմեր Օսման Քալինին իր ընտրացանկի մեջ էր դրել: Երբ «Խելդերլանդեր» թերթը լուր տվեց, որ Քալինը «աջ ծայրահեղական» է, մեծ աղմուկ բարձրացավ: Իսկ Քալինը դա հերքեց:

Թղթապանակներն սկսում ենք մայել: Ներկա թուրքական ֆեդերացիայի նախահայր «Հոլանդիայի թուրք միությունների ֆեդերացիայի» (Հոլանդա Թյուրքդերներելերի ֆեդերասիոնու — Հա. Թե. Դե. Էֆ.) հիմնադրմանը, Քալինը դարձավ փոխնախա-

գահ: Չորս տարի հետո սակայն, նա անցավ Մուսա Սերդար Չելեբիի կողմը, որն Ալիարսլան Թուրքեշի հեղինակությունը չէր ընդունում: Այս հակամարտությունն ավարտվեց 1986-ին, Հե. Թե. Դե. Էֆ.-ի փլուզմամբ: Քալիմը միացավ Գորշ Գայլերի մրցակից Հա. Թե. Ի. Քա. Բե.-ին: Երբ Քալիմն ընտրապայքարի ժամանակ առերեսվում է իր անցյալի հետ, փորձում էր հարցը աննշան ձևացնել: «Խելդերլանդերին» տված հարցազրույցի ժամանակ նա այսպես ասաց. «Որևէ փաստ ունե՞ք Գորշ Գայլերի մասին: Նման բան գոյություն չունի»: Էմ. Հա. Փե.-ի ղեկավար Թուրքեշի մասին նա այսպես ասաց. «Թուրքեշն այժմ ունի մի կուսակցություն՝ թուրքական, իսլամական մի կուսակցություն: Ով Թուրքիայի համար լավ է, լավ գործում է, ես պաշտպանում եմ իրեն: Ինձ համար միևնույն է. լինի Թուրքեշը կամ մեկ ուրիշը»: Նույնպես, դեռևս չկազմալուծված Հա. Թե. Դե. Էֆ. (Հոլանդիայի թուրքական միությունների ֆեդերացիայի) վերջին նախագահ Ջենգիզ Օզդեմիրը խառնվեց այս վիճաբանությանը: Իր ասելով՝ նա իրեն պարտավոր է զգում իր նախկին ռազմակցին պաշտպանել: Մի բաց մամակում, Օզդեմիրը հայտարարեց, որ նախկին Հա. Թե. Դե. Էֆ.-ը որևէ քաղաքական կուսակցության հետ կապ չունի: Այս բոլոր տեղեկություններով ու լուրերով հանդերձ, Սե. Դե. Ա.-ի Քաուկ բաժնի վարչությունն իր կարծիքը քաղխորհրդի քեկնածու Քալիմի մասին չփոխեց և չուզեց նրա մասին քննություն անցկացնել: Սե. Դե. Ա.-ն ավելի լավ կաներ, իհարկե, եթե այդ առթիվ մի որոշ հետազոտություն կատարեր: 1997 թվի մայիսի 4-ին, այսինքն՝ պանթուրքիստների տոնի օրը, հանդիպում ենք Մեհմեթ Քալիմին: Այս օրը թուրքական ֆեդերացիան տոնախմբություն էր կազմակերպել Վեյխեն շրջանի Բարենդոնկի այգում: Քալիմն էլ այստեղ ներկա էր: Քայլում էր՝ ձեռքին բռնած մի դրոշակ, որի վրա Գորշ Գայլերի նշանն էր:

1997 թվի գարնանը, Բեյվերվեյկի քաղխորհրդի անդամ, Բանվորական կուսակցությունը ներկայացնող Ֆայիզ Երլիբուջակը մեղադրվում էր Գորշ Գայլ լինելու մեջ: Մեղադրողները տասներկու անձնավորություններ էին, որոնց մեջ նաև՝ իր իսկ կուսակցության անդամները: Այսպես, Երլիբուջակը, որն, իմիջիայլոց, մի մզկիթի նախագահ էր, երկու դեպքի առթիվ տո-

նախմբություն էր կազմակերպել. առաջինը՝ Թուրքիո Սիվաս քաղաքի հրդեհի առթիվ, որի ընթացքում 37 առաջադեմ մտավորականներ սպանվեցին, մինչդեռ ոստիկանությունը հանդիսատեսի դերում էր մնացել, իսկ մյուսը՝ մի թուրք լրագրող Ուգուր Մումչուի սպանության առթիվ, որը Թուրքիայում հետազոտություն էր կատարում կրոնական արմատականների ու նացիոնալիստների մասին:

Մեղադրանքների հրապարակումից հետո Երլիբուջակը դիմեց դատարանին զրպարտության բողոքով:

Երլիբուջակն իրո՞ք Գորշ Գայլ է: Բեյվերվեյկում ուլքյուջուների կազմակերպությունը կոչվում է թուրքական մշակութային միության կենտրոն: Առևտրի ու ընկերությունների գրանցման պալատում չենք հանդիպում Երլիբուջակի անվանը՝ որպես այս միության վարչության անդամ: Սակայն նա նախագահն էր մի մզկիթի, որը կապված է թուրքական կառավարության կրոնական հարցերի վարչության Դիանեթի հետ: Փե. Վե. Դե. Ա.-ն դիմում է ներքին անվտանգության ծառայությանը հարցի էությունը պարզելու համար: Մեղադրանքները հաստատող փաստեր չկան:

— Դատավորը չուզեց ունկնդրել երկու վկաների, որոնք պատրաստ էին պատմել Ուգուր Մումչուի սպանության առթիվ կազմակերպված տոնի մասին, — ասում է Հոլանդիայի արհմիությունների նախագահ Յան Բերխսհաուսը, որն, իմիջիայլոց, Երլիբուջակին մեղադրողներից մեկն է:

— Դատավորն ասաց, որ սա արագացված մի դատավարություն է և ոչ դատարանային հետազոտություն, դրա համար դուք պետք է մի հիմնական դատական գործ բացեք, — ավելացնում է Բերխսհաուսը: Երլիբուջակը շահում է արագացված դատավարությունը: Թաղխորհրդի անդամ Ահմեդ Ջեյհանն այսպես է արտահայտվում այս հարցի շուրջ՝ «Երլիբուջակը հաճախ է գտնվում մեր միությունում: Սակայն, այդ մեղադրանքները ասեկոսներ են և նպատակ ունեն մեզ դուրս պահել քաղաքականությունից: Այս բանը նախապես տեղի ունեցավ 1993-ին այժմ դա մորից կրկնվում է, քանի որ ընտրությունները մոտենում են»:

Երբ մենք հուլիսի 1-ին բանվորական կուսակցության Ամստերդամի բաժանմունքների նախագահներին տեղեկացնում ենք դեպքերի մասին, միաժամանակ տեղեկանում ենք, որ կուսակցությունն իր թուրք թեկնածուների մասին հավաղեպ է հետազոտություն կատարում:

— Մենք ինչպե՞ս կարող ենք նրանց անցյալը պարզել,— հարցնում է բաժիններից մեկի նախագահը:

— Պարզապես հարցրեք իրենցից՝ ո՞ր (թուրքական) կազմակերպությունների մեջ եք ակտիվ եղել,— պատասխանում ենք մենք:

Պարզվում է, որ կուսակցության մասնաճյուղերը, Հոլանդիայում գործող թուրքական կազմակերպություններից ոչ մի անվանացանկ չունեն:

— Իսկ որտեղի՞ց կարող ենք նման մի ցանկ ձեռք բերել: Չեր գրքի մեջ նշվելո՞ւ է: Շատ լավ, կսպասենք գրքի հրատարակմանը:

1 Grünen/Bündnis – 90

2 GroenLinks

3 Այս պարագայում, երբ տվյալ փոքրամասնությունից ներս մասսայաբար քվեարկում են իրենց թեկնածուին, անկախ շահած ծայների թվային համեմատական արդյունքից, թեկնածուն մուտք է գործում խորհրդարան:

4 Volendam – քաղաք Ամստերդամից վեր, ուր հին հոլանդական առավել պահպանողական սովորությունները, ինչպես կանանց գլխածածկ գործածելը և այլն, պահպանվել են: Իրականում, այս թուրք Գորշ Գայլ-դեպուտատը խեղաթյուրում է հարցը, քանզի հոլանդացիները ոչ թե պարծենում, այլ ընդհանրապես ծաղրում են այս շրջանի բնակիչներին իրենց պահպանողական-արմատական տրադիցիաների համար:

5 Տե՛ս գլուխ 3, ծանոթ. 1

6 "Democraten-66" – Հոլանդական առաջատար կուսակցություններից

X. Բաշբուղը մահանում է

«Մեր "Մեկերտ աշխատատեղի" գրադեցնողները գնացել են նրա հուղարկավորությանը»

Թուրքական աշխարհը սգում է

Պետական կարգի հուղարկավորություն

Արդյո՞ք Գորշ Գայլերի հետևում թաքնված է թուրքական պետությունը

Ո՞վ է Բաշբուղի հետևորդը

Թուրքական ֆեդերացիան վախենո՞ւմ է, թե՞

Բաշբուղը մահանում է 1997 թվի ապրիլի 7-ին, ժամը 22-ն անց 45 րոպեին:

— Ցավակցություն են հայտնում:

— Չեզ և ամբողջ թուրքական աշխարհին ցավակցություն,— ասում է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի մի մարդ, որը գծի այն կողմից վերցնում է լսափողը:

— Որևէ բան կազմակերպելո՞ւ եք,— հարցնում է Մեհմեթը:

— Ապահովում ենք թռիչքի տոմսեր հուղարկավորության համար:

Ամստերդամի Մխիփիոլ օդանավակայան, ապրիլի 6: Ներկա են ութսունից հարյուր թուրքեր: Էմ. Հա. Փե.—ի դրոշակներով հավաքվել են այստեղ և սպասում են ժամը 12⁰⁰-ի չվերթին:

«Նետվերկ» հեռուստակայանի մի ֆոտոլրագրող նկարահանում է՝ հնարավորին չափ ուշադրություն չգրավելով: Նա նկարահանում է թուրքական (ռադիո) հեռուստահաղորդման հաստատության (ԹՈՍ) նախագահ Աբդուլլահ Մարիին: Նույնպես Ամստերդամի թաղխորհրդի անդամ Ահմեդ Ջեյհանը հայտնվում է տեսախցիկի մեջ: Հենց որ նկատում է տեսախցիկը, շտապ հեռանում է վայրից:

— Մենք գիտենք, որտեղ քեզ գտնել,— ասում է ներկաներից մեկը ֆոտոլրագրողին:

Այս օրերին Գորշ Գայլերի կազմակերպություններում լուծություն է տիրում: Երբ Մեհմեթը զանգարահում է ՍՈՅԱԴ հաստատություն, ընկալուչը վերցնողն ասում է. «Մեր. «Մեկերտ

աշխատատեղի» զբաղեցնողները գնացել են Բաշբուլի հուղարկավորությանը»: Ամստերդամի հեռուստակայանից թուրքական հեռուստահաղորդման հաստատությունը (ԹՈՍ-ը) թողարկում է սզո արարողություն հետևյալ խորագրով՝ «Թող որ Ալփարսլան Թուրքեշի հոգին հավիտյան խաղաղ հանգչի»: «Թուրքիյե» թերթում հայտնվում են ամբողջական էջերով ցավակցության ծանուցումներ Եվրոպայի թուրք կազմակերպությունների կողմից: Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան նույնպես մի էջ գնել է իր ծանուցման համար: Մի շարք կազմակերպություններ և նույնիսկ հիմնարկություններ, Հոլանդիայից միասնաբար սզո հայտարարություն են տվել: Ուտրեխտի թուրքական մշակութային կենտրոնի շենքի պատուհանից մի մեծ ցավակցության ծանուցում է փակցվել: Թե. Էռ. Թե. Ինտ., թուրքական պետական հեռուստացույցը, որն հնարավոր է կարելային գծով ընդունել, հեռարձակում է հուղարկավորության արարողությունը Հոլանդիայում՝ ուղղակի հուղարկավորման վայրից: Թանսու Չիլերը, «Արդար ուղի» կուսակցության կողմից, հրապարակավ ցավակցություն է հայտնում: Նույնն է անում «Մայր հայրենիք» (ԱՆԱՓ) կուսակցության կողմից Մեսուք Յիլմազը: Բաշբուլի հուղարկավորությունը միայն էմ. Հա. Փե.-ին պատկանող մի հանգամանք չէ: Պետական կարգի հուղարկավորություն է դա:

Արդյո՞ք Գորշ Գայլերի հետև թաքնված է թուրքական կառավարությունը: Սատարո՞ւմ է կառավարությունը նրանց:

Էմ. Հա. Փե.-ի (Ստամբուլի) գրասենյակում, Յավուզ Սելիմ Դենիրազը այդ հարցում մեզ տարակուսանքից հանեց:

— Մենք ունենք հրաշալի կապեր արտասահմանում՝ մեր ղեսպանատների ու հյուպատոսարանների հետ, — ասում է նա: — Մենք միշտ կարող ենք նրանց զանգահարել: Երբ պետք ենք ունենում որևէ ինֆորմացիայի կամ փաստաթղթի, առանց որևէ խնդրի ստանում ենք իրենցից: Նրանք գիտեն, որ մենք կառավարության շահերը վտանգի չենք ենթարկի: Մեր կողմից էլ, մենք միշտ պատրաստ ենք՝ կատարելու կառավարության որևիցե հանձնարարություն:

1996 թվի ապրիլին, թուրքական ֆեդերացիայի Բաֆոհաուս սրահում կազմակերպված երիտասարդական համահավաքում,

ելույթ ունեցավ Թուրքիայի հյուպատոս Էրբուք Օնարթը: Նրա հայտարարությունները նույնությամբ նշվեցին թուրքական «Հուրրիեթ» օրաթերթի ապրիլի 15-ի համարում. «Այսպիսի համահավաքները մեծ նշանակություն ունեն մեր արտասահմանում բնակվող քաղաքացիների համար: Դրանք հնարավորություն են ընձեռում մարդկանց՝ իրար հանդիպելու և իրենց միասնական հարցերի ու խնդիրների համար լուծումներ գտնելու»:

Թուրքական դիվանագիտական կորպուսը, սակայն, չի բավարարվում միայն այստեղ կամ այնտեղ ելույթներ ունենալով: 1993 թվի թուրքական մշակութային կենտրոնի կողմից Ամստերդամում կազմակերպված գրախոսության մրցության ժյուրիում տեղ էր գրավել թուրքական ղեսպանության կրթության հարցերի գծով կցորդ Փեյմեն Էրենը: Իսկ մրցանակը նվիրելու ժամանակ, Էրենն այսպես արտահայտվեց. «Ով ուզում է լավ ուսանող կամ գրող դառնալ, պետք է իր մայրենի լեզուն սիրի ու հարգի: Պետք է, որ իր ամբողջ կյանքի ընթացքում իր մայրենի լեզվի մասին իր գիտելիքները հարատևորեն ընդարձակի ու դրա մեջ խորանա»: Այս կապակցությամբ կցորդը գովասանքի խոսքեր ասաց թուրքական մշակութային կենտրոնի հասցեին:

— Այս կենտրոնն այժմ մրցություն է կազմակերպել Հոլանդիայի թուրք գրողների համար: Իմ կարծիքով, սա այն հույժ արժեքավոր մշակութային ձեռնարկներից է, որ մարդ կարող է պատկերացնել: Ես շնորհակալություն եմ հայտնում մեր բոլոր գրողներին, որոնք մասնակցել են այս մրցությանը:

Իսկ որտեղի՞ց է ծագում թուրք հյուպատոսարանի հետաքրքրվածությունը Գայլերի այս համահավաքների նկատմամբ: Այս հարցին այսպես է պատասխանում թուրքական հյուպատոսը: «Մենք ուզում ենք թուրք համայնքի հետ կապ պահպանել: Համայնքում կան շատ կազմակերպություններ: Այդ պատճառով մենք կապ ենք պահում այդ կազմակերպությունների հետ»:

Թուրքիան լավ գիտի, որ արևմտյան երկրներում բնակվող թուրքերը ինչքան կարևոր են իր համար, հատկապես՝ որպես վալյուտայի աղբյուր: Եվրոպայում բնակվող թուրքերը մեծ գումարներ են ուղարկում Թուրքիա: Ըստ պահպանողական հաշվարկումների, դա հասնում է տարեկան մոտ հինգ միլիարդ եվրոյի: Բացի այդ, նրանք Թուրքիայում ներդրումներ են անում

հյուրանոցներում, բնակարաններում, հիմնարկություններում ու հողատարածքներում: Նույնպես զինվորական ծառայության գնումը կազմում է կարևոր լրացուցիչ մի աղբյուր երկրի գանձարանի համար, քանզի այդ ծառայությունը պարտադիր է Եվրոպայում ապրող բոլոր թուրք երիտասարդների համար:

Սակայն, փողը շահագրգռվածության միակ պատճառը չէ: Թանսու Չիլերը բազմիցս արտահայտվել է այն մասին, որ թուրքական կառավարությունը պետք ունի լոբիական՝ միջոցների՝ արտասահմանում իր շահերը պաշտպանելու համար: Այդ լոբիական ուժը, ըստ Չիլերի, Եվրոպայի թուրքերը կարող են լինել:

Իսկ «իդեալիստներն» էլ իրենց հերթին հավատարիմ են թուրքական կառավարությանը: Ուրեմն պատահական չէ, որ արտասահմանից դուրս, ներառյալ Հոլանդիայում, գտնվող թուրք նախարարներն ու բարձրաստիճան պաշտոնյաները, Գորշ Գայլերի կազմակերպած ձեռնարկումների ու միջոցառումների հարգարժան հյուրերն են:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան իր գործունեության ծրագիր-պլանում նշել է, որ ֆեդերացիան իր հիմնադրման փուլում մի համագումար է կազմակերպել, ու «Թուրքիո նախագահի խորհրդատուն» ներկա է եղել համագումարում՝ որպես ատենախոս:

Ո՞վ էր այս խորհրդատուն:

— Նամիկ Քեմալ Չեյրեկը,— պատասխանում է ֆեդերացիայի նախագահ Յիլդիզելին:

Չեյրեկը էմ. Հա.Փե.-ի նախկին անդամ, ինչպես նաև մշակույթի նախկին նախարարն էր, իսկ այժմ խորհրդարանի անդամ է Դե. Ե. Փե.-ի կողմից:

— Եվրոպայում բնակվում են շուրջ չորս միլիոն թուրքեր: Չեյրեկը ուշադիր է նրանց նկատմամբ: Նա լավ է հասկանում մեր խնդիրները,— բացատրում է Յիլդիզելին:

Ուրսունականի տարիներին, Թորգոս Օզալի «Մայր հայրենիք» կուսակցության կառավարության ժամանակաշրջանում, Հոլանդիայի Գորշ Գայլերին այցելության եկան նախարարներ Հալիլ Շիվզինն ու Մուստաֆա Թաշարը: 1991-ից ի վեր Դե. Ե. Փե.-ն («Արդար ուղի» կուսակցություն) տևականորեն մասնակցել է Թուրքիո կոալիցիոն կառավարությունների մեջ: Այդ ժամանակներում Եվրոպայի Գորշ Գայլերին այցելության էին

գալիս հիշյալ կուսակցության նախարարները: Ինչպես Շիվզինն ու Թաշարի, այնպես էլ Չեյրեկի քաղաքական արմատները էմ. Հա. Փե.-Ուլբյուջու շարժման մեջ էր:

1995 թվի Եվրոպայի թուրքական ֆեդերացիայի տասնութերորդ համագումարում, ոչ պակաս բարձրագույն մի թուրք պաշտոնյա, քան Տիկին Թանսու Չիլերը, որը պատկանում է Դե. Ե. Փե.-ին («Արդար ուղի» կուսակցություն), մի պատգամ հղեց համագումարին: Այն ժամանակ Չիլերը Թուրքիո վարչապետն էր: Նրա պատգամը հետևյալն էր. «Ողջունում եմ իմ բոլոր հայրենակիցներին, որոնք մասնակցում են թուրքական ֆեդերացիայի համագումարին: Ես իմ սիրո ու հարգանքի խոսքն եմ հղում ձեզ ու Ձեզ՝ բոլորիդ, սեղմում կրծքիս: Ձեր և արտասահմանում բնակվող Ձեր բոլոր հայրենակիցների միջոցով, որոնք հավատարիմ են իրենց հայրենիքին, իրենց պետությանն ու ժողովրդին, ամբողջ աշխարհը և հատկապես Գերմանիան ծանոթացել են թուրքերի բնածին հատկություններին, ինչպիսին են՝ ազգասիրությունը, շիտակությունը, հավատարմությունը, ժրջանությունն ու ստեղծագործական ոգին: (...) Դուք մեկնել եք արտասահման՝ որպես բանվոր: Արտասահմանում, դուք առանց ձեր ազգային ինքնությունը կորցնելու, զարգացել, աճել ու դարձել եք գործատեր ու տնօրեն: Այդպիսով, դուք համոզիչ կերպով փաստել եք, թե ինչպիսի ինտելիգենտ ու ստեղծագործ մարդիկ են թուրքերը: Դուք ամբողջ աշխարհին ցույց եք տվել, որ մենք խորը արմատներով մի ժողովուրդ ենք, որն ունի յուրահատուկ պատմություն, որ այդ պատմության ընթացքում դարեր շարունակ իշխել ենք տարբեր ազգերի, ռասաների, կրոնների, լեզուների ու գաղափարների տեր մարդկանց վրա՝ Հնդկական օվկիանոսից մինչև Միջին Եվրոպա: Մենք միայն կարող ենք հպարտանալ ձեզանով: (...) Այն, ինչի մենք այժմ ձգտում ենք, զարգացած, նորարար ու վեհապանձ մի թուրք հասարակություն է, որ հավատարիմ է իր մշակութային արժեքներին և Արևմուտքի ու արևմուտքիների նկատմամբ ստորադասության զգացում չունի: Ես համոզված եմ, որ ամենամեծ օժանդակությունն այս խնդրում Ձեր կողմից կլինի»:

Բաշբուրի «պետական հուղարկավորությունից» հետո, Չիլերի Դե. Ե. Փե. կուսակցությունը ներկայացնող խորհրդարանի

երկու դեպուտատներ անցնում են Էմ. Հա. Փե.—ի կողմը: Սակայն, կարճ ժամանակ Բաշբուղի մահից անց, այս վերջինի շարքերում էլ իրարանցում է առաջանում: Քանզի ո՞վ պիտի Բաշբուղի տեղը գրավի:

Մայիսի 18-ին, Անկարայում տեղի է ունենում Էմ. Հա. Փե.—ի համագումարը: Սկզբում իրենց թեկնածու են հայտարարում բազմապիսի անձնավորություններ՝ Թուրքեշի զավակ Թուրքուլ Թուրքեշը, Դևլեթ Բահչելին, Էնիս Օկսուզը, Ռամիզ Օնգուն, Մուհարրեմ Շենսեքը և Իբրահիմ Չիֆթչին: Այս վերջին երեքն իրենց թեկնածությունը հանում են՝ հոգուտ Բահչելիի: Թագածառանգ Թուրքուլը իրեն երեւակայում է մրցանակակիր, մինչև որ քվեարկման ընթացքում պարզվում է, որ պարտվելու է: Թուրքուլի հետևորդներն այլևս չեն կարողանում իրենց զսպել: Նրանք պատռում են քվեատոմսերը և հետո բարձրախոսները վայրից հեռացնում: Կարճ ժամանակ անց սեղաններն ու աթոռները թռչում են օդ: Ծեծ ու ջարդ է սկսվում ու կրակում են օդում: Համագումարի նախագահը այլընտրանք չունի. համագումարը հետաձգվում է: Թուրք տեղեկատվական միջոցները փորձում են «կարծրերի» ու «փափուկների» միջև մի հակամարտություն նշմարել: Սակայն, թեկնածուների ելույթների բովանդակության մեջ ոչ մի տարբերություն չկա: Բոլորն էլ ուզում են, որ թուրքական աշխարհին, համաձայն Թուրքեշի երազանքի, գորեղ և ամուր առաջնորդել դեպի նոր դար:

Խափանված համագումարից հետո, Բահչելիի հետևորդներին թույլ չեն տալիս մուտք գործել կուսակցության Անկարայի կենտրոնատեղի: Կուսակցության բաժանմունքներում մեծ լարվածություն է առաջանում:

— Էմ. Հա. Փե.—ն վերադառնում է իր դաժան անցյալին, — հաղորդում են տեղեկատվական միջոցները:

Ինչպես յոթանասունական թվականներին էր, այժմ էլ Էմ. Հա. Փե.—ի մոտ խոսում են զենքերը: Եվրոպայի թուրքական ֆեդերացիայի մի պատվիրակություն մեկնում է Անկարա՝ միջնորդության համար: Պատվիրակության ղեկավարն է Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի նոր նախագահ Մեհմեթ Էրդոգանը: Կացությունը խաղաղվում է: Հուլիսի 6-ին, երբ վերստին տեղի է ունենում համագումար, մասնակցողներն իրենց հանգիստ են պահում: Նույնիսկ Թուրքուլ Թուրքեշը շնորհավորում

է Բահչելիին: Թուրքուլ Թուրքեշը պիտի սպասի մինչև հաջորդ համագումարը, որը կլինի հոկտեմբերին: Այն ժամանակ նա իրեն դարձյալ թեկնածու կհայտարարի:

— Քաղաքականությունը երկար մի ճանապարհ է, չպետք է շուտ մի կողմ քաշվել, — ասում է նա՝ իր մամուլի ասուլիսում:

Կուսակցության նոր նախագահ Բահչելին ծնվել է 1948-ին՝ Օսմանիա նահանգում և իր պատանի տարիքից հարել է Ուլքյուջու գաղափարներին: 1967-ին նա հիմնադրել է Էմ. Հա. Փե.—ի երիտասարդական բաժին՝ Ուլքյու Օջակլարին (Իդեալիստական օջախ): Ավելի ուշ, սկսել է դասավանդել հասարակական գիտություններ՝ Ղազի համալսարանում: Իսկ 1987-ին թողել է համալսարանի իր պաշտոնը՝ իրեն լիովին կուսակցության գործին նվիրելու համար:

Նա դասավանդել է նաև տխրահռչակ Գայլ Աբդուլլահ Չեքլիին, որն սպանվեց Սուսուրլուկի ավտովթարի ժամանակ:

Արդյո՞ք Էմ. Հա. Փե.—ի խոսվածությունների քամին Հոլանդիա էլ է հասել:

— «Թան»՝ հոլանդացի նախկին թուրք միլիցիոները, որը պատրաստ է մեռնել իր գաղափարի համար, իհարկե, ներկա է եղել Թուրքեշի հուղարկավորմանը: Սակայն նա ասում է. «Մենք մի տասը հոգի էինք: Նստեցինք հնարավորին չափ հեռու՝ ֆեդերացիայի վախկոտներից»:

— Վախկո՞տ:

— Այդ թուրքական ֆեդերացիայի տղաները շատ փափկամորթ են: Շատ խոսում են, բայց ոչինչ չեն անում: մենք պետք է թուրք երիտասարդներին ավելի լավ կազմակերպենք, — ասում է Թա—ն: Նրա կարծիքով, Հոլանդիայում էլ կազմակերպությունը պետք է ունենա մի նոր նախագահ, «մի անձնավորություն Սերվեթ Ե.—ի նման»:

Սերվեթ Ե.—ն միլիցիայի Էկսոդյուս գործողության թրթապանակում նշված դեմքն է: Իսկ ի՞նչ է մտածում այս մասին թուրքական ֆեդերացիայի ներկա նախագահ Յիլդիզելին:

— Յիլդիզելին այժմ գտնվում է Թուրքիայում, — ասում է կողորդինաառը Էքենը: — Նա արձակուրդի կարիք ունի: Նա մեզ այլևս պետք չի: Նա շատ խոսում է ու բան չի անում: Մենք մեկի պետք ունենք, ինչպես Սերվեթ Ե.—ն է:

— Իսկ գիտե՞ք, որ Սերվեթ Ե.—ն գրադվել է քմրեցուցիչների առևտրով՝ Ամհեղ Ա.—ի բանդայում,— հարցնում է Ստելլան:

— Դա անկարելի է:

— Նա նույնպես կապված է եղել հինգ միլիոն կեղծ շվեյցարական ֆրանկի սպիտակեցման գործին:

— Անկարելի է:

— Թուրքական ֆեդերացիան Սերվեթ Ե.—ի ղեկավարությամբ, դա կնշանակի, որ ֆեդերացիան բացարձակապես մի «քողարկող կազմակերպություն» է Էմ. Հա. Փե.—ի համար,— ասում է Ստելլան:

— Ա՛յ քեզ բան,— ասում է կոորդինատորը:

Դա նույնիսկ թուրքական օրենքով էլ թույլատրված չէ: Այդ օրենքը քաղաքական կուսակցություններին արգելում է արտասահմանում մասնաճյուղեր ունենալ:

Երբ մենք զանգահարում ենք Անկարա, մեզ ասում են, որ Յիլդիզելին երևացել է կուսակցության գրասենյակում: Իսկ դրանից հետո իրեն այլևս չեն տեսել:

Իսկ Թա—ն ի՞նչ ունի այս մասին ասելու.

— Յիլդիզելին փորձել է Սերվեթ Ե.—ին շարքից դուրս հանել: Նա մի ֆաքս (լուսապատճեն) է ուղարկել կազմակերպություններին այն բովանդակությամբ, որ Սերվեթը վտարվել է կազմակերպությունից և ոչ մի տեղ չախտի ներս թողնվի: Սակայն դրանից արդյունք չստացավ: Նույն օրը Սերվեթը առողջ—փառքը նստել էր թուրքական ֆեդերացիայում: Դրանից հետո Յիլդիզելին հեռացավ:

Իսկ Սերվեթ Ե.—ն այսպես է արտահայտվում.

— Ֆեդերացիան շատ թույլ է: Յիլդիզելին միայն խոսում է ու ոչինչ չի անում: Հիմա պետք է մի բան անել, այլապես ուշ է: Մենք պետք է թուրք երիտասարդների ինքնությունը Հոլանդիայում փրկենք: Մենք նրանց կկազմակերպենք, մենք ցույց կտանք, քե՛ն ո՞վ ենք:

1 Lobbying — արտասահմանյան խորհրդարաններում կամ օրենսդիր մարմիններում ազդեցություն ներգործելու աշխատանք՝ տվյալ մի երկրի կամ խմբի շահերն ապահովելու համար:

Վարագույրի հետևում աշխատում են Գորշ Գայլերը՝ Հոլանդիայի ներսում «թուրքական մի պետություն» ստեղծելու համար: Այս կարգախոսի տակ, որ ինքնությունը պետք է պահպանվի, նրանք պահանջում են, որ թուրք մանուկները մեծանան ու դաստիարակվեն առանձին թուրքական մանկամսուրներում, թուրքական դպրոցներում ու ֆուտբոլի ակումբներում:

— Թող բոլորին պարզ լինի, որ երրորդ սերունդը, որն հիմա աճում ու մեծանում է, ինչպես նաև նրան հաջորդող սերունդները, վտանգված են: Նրանք կանգնած են մեծ վտանգի առաջ՝ ինտեգրացիայի ու ասիմիլիացիայի,— այսպես է արտահայտվում Հիքմեթ Յիլդիզելին՝ Հոլանդիայի Գորշ Գայլերի ներկա նախագահը:

Գորշ Գայլերը կոչ են անում թուրք հայրենակիցներին՝ մասնակցել քաղաքական կյանքին՝ Թուրքիայի ու թուրքերի շահերը պաշտպանելու համար:

— Մենք՝ Եվրոպայի թուրքերս, յուրաքանչյուրս մի ոսկյա քննոց ենք մեր հայրենի Թուրքիայի համար: Իսկ քննոցի գեղեցկությունը երևում է այն ժամանակ միայն, երբ նրան քնդ են գցում, — այսպես է ճառաբանում Ամստերդամի քաղխորհրդի անդամ Ահմեդ Ջեյհանը:

Գորշ Գայլերի կազմակերպություններում երիտասարդ թուրքերին հաղորդվում է միայն մի պատգամ. «Չնայած այն իրողությանը, որ դու ապրում ու մեծանում ես Հոլանդիայում, դու թուրք ես և թուրք էլ պիտի մնաս: Գյավուրներից, անհավատներից հեռո՛ւ մնա: Եթե հնարավորություն ունենաս, միայն մի բանի պիտի ծառայես, այն է՝ թուրք մեծ ազգի շահերին»:

Հանգուցյալ Բաշբուղ Արփարսլան Թուրքեշը 1996-ի օգոստոսին, Թուրքիայի Էրչիյես լեռան վրա ելույթ ունեցավ տասնյակ հազարավոր Գորշ Գայլերի համար, որոնցից շատերը եկել էին Եվրոպայից: Նա այսպես հայտարարեց. «Թուրք մեծ ազգին փայլուն ապագա է սպասում: Մենք կվերացնենք բոլոր խոչընդոտներն ու հաշվի կնստենք երկպառակություն սերմա-

նողների ու դավաճանների հետ: Մենք կիրականացնենք Մեծ մարզարեի կողմից մեզ վստահված այս մեծ առաջադրանքը»:

Հոլանդիայի, ինչպես նաև Բելգիայի և Գերմանիայի թուրք երիտասարդների համար գրավիչ է Թուրքիայի հզորացման, նրան աշխարհի առաջին գերուժը դարձնելու և Օսմանյան կայսրության վերականգնման երազը, կայսրություն, որը «տարածվում էր Ադրիատիկ ծովից մինչև Չինական պարիսպները»: «Իդեալիստները», (Գորշ Գայլերը սիրում են իրենք իրենց այդպես անվանել) իրենց կենտրոններում թուրք երիտասարդներին խրախուսում են, որ տոնեն պանթուրքիստների օրը և պայքարում են իրենց «ոխերիմ թշնամու», այսինքն՝ Փե. Զա. Զա.-ի դեմ:

Ցավալի է, որ թուրք երիտասարդությունը կլանվում է ոչ միայն Գորշ գայլերի, այլ նաև «Միլի Գյորուշ» կազմակերպությունների միջոցով: Այս վերջինը թուրք արմատական-խլամական մի շարժում է Եվրոպայի տարածքում: Ըստ Միլի Գյորուշի և Գորշ Գայլերի հաղորդած տվյալների, նրանք յուրաքանչյուրն ունեն համապատասխանաբար 40 000 և 32 000 համակիր Հոլանդիայում: Եթե այս տվյալները ճիշտ լինեն, ուրեմն թուրք փոքրամասնության մոտավորապես մեկ քառորդը համակրում է կրոնական-արմատական և կամ ազգայնամոլական գաղափարներին:

Ինչ վերաբերում է Գորշ Գայլերի համակրողների քանակին, մեր կարծիքով 12000-ը առավել հավանական թիվ է: Համենայնդեպս, դա մի թիվ է, որ մեծ մտահոգություն պիտի պատճառի, առավել այն պատճառով, որ Գորշ Գայլերը գիտեն՝ ինչպես ակտիվ ու ջանասեր երիտասարդներին հավաքագրել:

Սակայն այդ ինչպե՞ս է, որ թուրք երիտասարդը, որ ծնվել ու մեծացել է այստեղ, կողմնորոշվում է դեպի Թուրքիա: Արդյո՞ք դա նշանակում է, որ շուրջ 300000 թուրքերի հարմարեցումն ու մերումը հոլանդական հասարակության մեջ ձախողվել է: Նշաններ կան, որ դա այդպես է: Այդպես է ազդարարում նաև Հոլանդիայի ներքին անվտանգության ծառայությունը (Բե. Ֆե. Գե.-ն) իր՝ 1996 թվի տարեկան զեկույցում: Ի դեպ, այս զեկույցում նշվում է միայն Միլի Գյորուշը և ո՛չ Գորշ Գայլերը:

— Կան հստակ նշաններ այն մասին, որ տարբեր իսլամական կազմակերպություններում, գնալով ուժեղանում են հակաարևմտյան ու հակաինտեգրացիոն հոսանքները, – ասվում է զեկույցում: Հուսախաբվածություն սոցիալ-տնտեսական լճացումից և անճարակության զգացում, որով տառապում են մեծ թվով ազգային փոքրամասնական քաղաքացիներ. կարևոր պատճառներ են հոլանդական հասարակության դեմ ունեցած նրանց օրավուր աճող հակակրանքի համար: Բացի դրանից, զգալի թվով մուսուլման միգրանտներ, որոնք սեկուլյար, և թերևս իրենց մերժող մի հասարակության մեջ փորձում են վերագտնել իրենց կրոնական ինքնությունը, շատ արագ ապակողմնորոշվում են: Այստեղ ներսի, ինչպես նաև դրսի ուղղապաշտ և կրոնական-արմատական ուժերը սկսում են չարաշահել առիթը:

Ով մի լավ աշխատանք կամ լավ եկամուտ ունի, շատ արագ չի տրամադրվի գայլոջույն տալու: Սակայն թուրքերից շատերի համար, ինչպես ընդհանրապես մյուս փոքրամասնությունների պարագայում, խնդիրներ շատ կան: Համաձայն կենտրոնական վիճակագրության բյուրոյի (Սե. Բե. Էս.), արդեն ութսունական թվականների սկզբից, փոքրամասնությունների վիճակն աշխատանքի բնագավառում ընդհանրապես վատացել է: Իսկ թուրքերն ու մարոկկացիները ելարանի ներքևի աստիճաններին են գտնվում: Ըստ Սե. Բե. Էս.-ի «Փոքրամասնությունները Հոլանդիայում 1996-ին» զեկույցի, «Թուրքերի ու մարոկկացիների բաժինը վճարովի աշխատանքի շուկայում շատ ավելի ցածր է, քան մյուս բոլոր փոքրամասնությունների միջինը: 1995-ին, թուրքերի միայն 30 տոկոսը և մարոկկացիների միայն 28 տոկոսն են աշխատանք ունեցել»: Ուսման բնագավառում նմանապես նույն անհուսալի պատկերն է տիրում: Որպես օրինակ նշենք, որ հոլանդացի դպրոցականներից միայն 8 տոկոսն է, որ տարրականից հետո այլևս ավարտական չի ձեռք բերում, մինչդեռ այդ թիվը թուրքերի ու մարոկկացիների օրիորդաց պարագայում հասնում է 28 տոկոսի:

Ըստ սոցիալական հարցերի ու աշխատանքի նախարարության «Չբավորության մասին» զեկույցի, ազգային փոքրամասնությունները, որոնք բնակվում են, այսպես կոչված, համա-

կենտրոնացված՝ քաղամասերում, չքավորության ռիսկային խմբեր են համարվում. «Նրանք համարյա չունեն որևէ միջոց, որպեսզի իրենց դիրքը հասարակության մեջ բարելավեն»: Համաձայն գեկույցի, այս համակենտրոնացման պրոցեսն իր հերթին առաջացնում է «անջատվածություն-ջոկոտություն»:

Մինչև հիմա, ո՛չ հոլանդական կառավարությունը, ո՛չ էլ ինքը՝ թուրք համայնքը, չեն կարողացել լուծում գտնել այս հարցերի համար: Միայն վերջին ժամանակներից է, որ Հոլանդիան սկսել է նորեկներին ընդունել՝ լեզվի ու մշակույթի յուրացման պայման դնելով: Այնքանով, որ վերաբերում է հոլանդերեն լեզվի սովորելուն, մեծ թվով թուրքեր թերացել են այդ հարցում:

Սակայն թուրք երիտասարդության աճող ազգայնամոլության պատճառը միայն ներքին անվտանգության ծառայության (Բե. Ֆե. Դե.—ի) մատնանշած սոցիալ-տնտեսական լճացումը չէ: Մեր ժուռնալիստական հետազոտությունները պարզել են, որ մեծ թվով Գորշ Գայլերի երիտասարդ համակիրներ «պատահաբար» նրանց ծուղակի մեջ չեն ընկել: Նրանցից շատերն ասում են, որ նախ դիմել են հոլանդական սպորտի կամ մի այլ հասարակական կազմակերպության, բայց այնտեղ իրենց շատ սրտաբաց չեն ընդունել:

— Մի երկու շաբաթ հաճախեցի հոլանդական մի ակումբ: Ինձ բանի տեղ չդրին: Հետո այդ մասին ինչ—որ բան էլ ասացի, բայց ոչ մի բան չարվեց: Հետո արդեն պետք էլ չէր, — ասում է Չվեյնդրեխտ քաղաքի Գորշ Գայլերի ֆուտբոլի հավաքականի մի մարզիկ:

Պատճառներից մեկ ուրիշը երիտասարդության համար ժամանցի հնարավորությունների պակասն է: Նրանց ասելով՝ ժամանցի ու լիցքաթափման կենտրոններ քիչ կան: Այնպես է ստացվում, որ Գորշ Գայլերին պատկանող ժամանցի կենտրոնը միակ տեղն է, ուր թուրք երիտասարդն իր թաղամասում կարող է հաճախել, ասենք՝ հենց մի ժամ սեղանի ֆուտբոլ խաղալու համար:

— Ես այստեղ եմ գալիս, որովհետև այս թաղամասում ուրիշ տեղ չկա գնալու, — ասում է Ամստերդամի Չեյքբուլիս թաղամասի Թե. Դե. Ե. Վե. Գորշ Գայլերի երիտասարդական միության պատանի այցելուներից մեկը, թեև պատանուն դուր չի գալիս իր

այցելած միության գաղափարաբանությունը: Թուրքական մամուլը նույնպես դերակատար է՝ թուրք երիտասարդներին լիովին դեպի Թուրքիա կողմնորոշելու հարցում: Հետազոտությունից պարզվում է, որ թուրք հեռուստացույց դիտողների 70 տոկոսը դիտում է թրքալեզու հաղորդումներ: Հավանաբար, արդեն նրանց կեսից ավելին ունեն արքանյակային ընդունման միջոց: Թուրքական հեռուստակայաններում, ինչպես օրինակ, թուրքական պետական հեռուստացույց ԹԵ. Էր. ԹԵ. Ինտ. կայանում, որն ընդունվում է հոլանդական հեռուստաալիքի վրա, միանշանակ Թուրքիայի մասին է լուր հաղորդվում: Նույնպես լայնորեն ընթերցվում են թուրքական (թրքալեզու) թերթերը, որոնք կարելի է գնել Հոլանդիայի մամուլի կրպակներից: Թուրքական մամուլի միջոցով թուրք պետությունն իր ձեռքի մեջ է պահում օտարության մեջ գտնվող «իր հպատակներին»: Այս հարցում Թուրքիան շահագրգռված է այն առումով, որ այս հպատակները վայրուտայի կարևոր աղբյուր են իր համար: Ըստ զուշավոր հաշվարկումների, Եվրոպայի թուրքերը տարեկան շուրջ հինգ միլիարդ եվրո են փոխադրում Թուրքիա: Իհարկե, դրանք միակ պատճառը չէ Թուրքիայի շահագրգռվածության համար: Այն ժամանակ, երբ դեռ Թանու Չիլերն էր Թուրքիո նախագահը, շեշտում էր, որ իր հպատակները Եվրոպայում պետք է ի շահ Թուրքիայի, լոբիական՝ աշխատանք տանեն:

Արտառոց երևույթ է, որ փոքրամասնություններին նպաստ տրամադրելու մեր քաղաքականությունը օգնել է Գորշ Գայլերին՝ կառուցելու իրենց կազմակերպությունները Հոլանդիայում: Այսպես, Ամստերդամի քաղաքապետարանը օգնել է Գորշ Գայլերին՝ առնվազն կես միլիոն եվրոյով: Այս տարօրինակ կացության պատճառը միայն այն չէ, որ Գորշ Գայլերը ճարպիկ են խարդախության մեջ: Նրանք, իհարկե, գրում են ապակողմնորոշող ծրագրեր—պլաններ՝ ներկայացնելու հոլանդական մարմիններին, սակայն, իրականում այդ մարմինների անփույթ կեցվածքն է, որ պատճառ է դառնում նպաստների չարաշահմանը: Պատասխանատու մարմինները հիմք են ընդունում այդ ներկայացված ծրագիր—պլանները ու իրենց նեղություն չեն տալիս հետազոտելու, թե ովքե՞ր են դրանց հետև թաքնված, ինչպե՞ս են կազմակերպվում աշխատանքները և ի՞նչ նպա-

տակներով: Նույնիսկ, երբ քաղաքապետարաններին զգուշացնում են իրենց նպաստներով ֆինանսավորված ու Գորշ Գայլերի միջոցով կազմակերպված մի աշխատանքի մասին, պատասխանատու մարմիններն ասում են՝ ապացուցիր. «Նպաստի համար աշխատանքն է կարևոր և ոչ թե քաղաքական դիրքորոշումը»: Վստահ, այս հայտարարությունը քրիստոնյա-դեմոկրատների դուրը կգա, բանի որ բավական է միայն քեզ անվանես մշակութային միություն, կազմակերպես, այսպես կոչված «մշակութային աշխատանքներ», և անմիջապես նպաստներն ու «մեկերտ» կոչվող աշխատատեղիները կսկսեն ներս հոսել:

Այս անփույթ կեցվածքն, իմիջիայլոց, ընտրովի է, նայած պարագային: Երբ խոսքը գնում է հոլանդական աջ-ծայրահեղականների մասին, հաճախ մեծ վիճաբանություն է տեղի ունենում: Իսկ թուրք աջ-ծայրահեղականների մասին խուսափում են բան ասելուց: Թվում է, թե թուրքական աջ-ծայրահեղականությունը Հոլանդիայում անտեսության տրվող մի արատ է, կամ միգրացե անուղղակի խտրականության հարց կա այստեղ: Քանզի ասում են. «Թողեք այդ թուրքերին՝ իրենք իրենց գործերով զբաղվեն»: Արդյո՞ք որոշ հոլանդացիներ «անկողմնակալ» ձևանալու չափ ու սահմանը չեն անցկացրել: Արդյունքում փոքրամասնությունը դառնում է անձեռնմխելի, և ոչ ոք չի համարձակվում քննադատական խոսք ասել ռասիստ-ցեղապաշտ պիտակվելու վախից:

Բանն այնտեղ է հասել, որ Գորշ Գայլերը նույնիսկ հոլանդական քաղխտրիություններում աթոռներ են գրավել: Արդյո՞ք մեր քաղաքական կուսակցություններն այնքան են տարվել քվե որսալու տենդով, որ մի թուրք թեկնածուի անցյալն արդեն կարևոր չէ, որ ոչ ոք իրեն նեղություն չի տալիս՝ տվյալ թեկնածուի կենսագրությունն ուսումնասիրելու: Իսկ երբեմն նույնիսկ ձայն որսալու հարցն էլ անկարևոր է դառնում: Այդ ժամանակ երեսիդ են շարտում այս կարգախոսը՝ «մեր թուրքերը թող մի քիչ էլ հիմար մնան»:

Արդյոք մենք դե՞մ ենք այն բանին, որ թուրք գաղթականներին օգնություն ցուցադրվի իրենց թուրքական ինքնությունը պահպանելու համար: Ամենևին ո՛չ: Այս հարցում շահավետ

աշխատանք է կատարել լեզվագետ Ե. Ալիմին: Նրա հետազոտությունից պարզվում է, որ հակառակ տարածված կարծիքի, միաժամանակ տարբեր մշակույթներով ապրելը չի հանգում բարդությունների: Ընդհակառակն, «բազմամշակութային» մարդն ընդհանրապես իրեն երկու մշակույթներում էլ իր տանն է զգում: Նա իր մեջ միավորում է երկու մշակույթները: Դանրան ի վիճակի է դարձնում խնդիրները հարաբերականացնել, զիջումների գնալ և միջմշակութային հակադրություններն ու խնդիրները լուծել: Իր համընդհանուր մշակութային մտահայեցողությամբ, ո՞ր և երբ որ հարկն է, կամուրջ է կառուցում երկու մշակույթների միջև: Ալեմիի հետազոտությունը հստակ ցույց է տալիս այն դրական արդյունքները, որ բազմամշակութայնությունից կարելի է ստանալ: Սակայն մենք գտնում ենք, որ թուրք միգրանտների պարագայում, հարցը չպիտի մնա իրենց իքնությունը պահպանելու վրա միայն: Եվ վստահաբար դա չպետք է հասնի հանցագործ ազգայնամոլության: Դրանից ոչ ոք չի շահում: Միգրանտներն այդպիսով առավել մեկուսանում են: Գաղթականի ընտանիքի ու դպրոցականի մթնոլորտի միջև ճեղքը լայնանում է, և փորձը ցույց է տալիս, որ դա երեխաների դպրոցական աշխատանքի վրա վատ է ազդում: Իսկ դա էլ հանգում է այն բանին, որ երիտասարդ միգրանտների ապագայում հաջողության հասնելու կարողությունները նվազում են, և այդպիսով գոյանում է սոցիալական մի ցածր դասակարգ:

Ազգայնամոլությունը, որ կողմից էլ, որ լինի, վտանգավոր է: Ամենալավ լուծումն այն է, որ այն կանխարգելվի: Դրան կարելի է հասնել՝ վերացնելով դրան կերակրող հողը, այսինքն՝ հասարակական մեկուսացումը:

Այդ մասին, սակայն, հազիվ թե խոսվում է: Այսպես էր, օրինակ՝ 1997 թվի մարտի 5-ի գիշերվա շշմեցուցիչ ահաբեկչության պարագայում: Ահաբեկչությունը տեղի ունեցավ Հաագայում, Քեռշեդախ կոչվող թուրք ընտանիքի դեմ, որի հետևանքով հինգ երեխաներ իրենց մոր հետ զոհվեցին: Գորշ Գայլերն անմիջապես հայտարարեցին, թե «դա Փե. Քա. Քա.-ի գործն է»:
Բանից պարզվեց, սակայն, որ դա անձնական վրիժառության հարց է եղել: Իսկ որ դա անմիջապես չարաշահվեց քաղաքա-

կան հետին նպատակների համար, ինքնին ցույց է տալիս, որ թուրքական համայնքի ներսում լարվածություն կա: Գորշ Գայլերից ու Փե. Բա. Բա. -ից բացի, այժմ հրապարակ է իջել նաև «Միլի գյորուշ» կրոնական-արմատական խմբակցությունը, որն էլ իր հերթին սաստկացրել է այդ լարվածությունը:

Այս լարվածությունը քննարկելու և դրանց մեղմացնելու ելքեր գտնելու համար, արտգործնախարար Դեյկատալը խորհրդակցական զրույցներ է ունեցել թուրքական կազմակերպությունների հետ, որի մասին պատրաստվել է զեկույց: Չեկույցից այսպես է հասկացվում, որ նա հարցի լուծումը իսլամի մեջ է փնտրում: Ըստ Դեյկատալի ու իր պաշտոնյաների, շնորհիվ իսլամի, մուսուլմանները կզարգանան ու կինտեգրացվեն հոլանդական հասարակության մեջ: Ըստ զեկույցի եզրակացությունների, հոլանդացիները նույնպես պետք է ավելի շատ կապ պահպանեն մզկիթի հետ, այսինքն ավելի հաճախ խորհրդակցեն հոգևոր առաջնորդների հետ՝ թմբիթի խնդրից բռնած մինչև դպրոցից բացակայողների հարցերում և մզկիթներին ներգրավեն սոցիալ-հասարակական աշխատանքների մեջ:

Իրո՞ք այս հարցերի լուծումը պետք է թողնել մզկիթներին: Ինչո՞ւ հոլանդական կառավարությունը թուրքական համայնքի հիմնական խնդիրների լուծման բեռն իր իսկ ուսերի վրա չի վերցնում: Այն, որ աշխատանքի շուկայում, ուսման ու կրթության բնագավառում և կամ բնակության շրջապատում տարբերություն է տեղի ունենում, ծանոթ հարցեր են, քանզի դրանք վաղուց լայնորեն ուսումնասիրվել են:

Իսկ եթե Հոլանդիայի պատասխանատու անձինք այս հարցերի դիմաց միայն իրենց ուսերը թափ տան, վստահաբար այդ անտարբերության զինն էլ մենք կվճարենք: Այն ժամանակ գործ կունենաք թուրք երիտասարդ մի սերնդի հետ, որ եվրոպական ո՛չ մի արժեք ու հեղինակություն չի ճանաչելու: Երիտասարդություն, որը ղեկավարվելու է միայն իր Բաշբուղով: Արդեն Բելգիայի Անտվերպենում Գորշ Գայլ Ալին այսպես ասաց.

— Մենք կարիք ունենք համարձակ երիտասարդ մեկի: Մենք ուզում ենք հրապարակ իջնել, բայց Թուրքեշը դա արգելում է: Թուրքեշն այլևս բռնարարք, ուժի գործադրում չի թույլատրում, ավստ՝ս, քանի որ մենք սպասում ենք իր՝ մի ազդան-

շանի միայն: Այնժամ, Թուրքիան ողողելու ենք արյան հեղեղով: (...): Բելգիայում նույնպես մենք հաշվի ենք նստելու Փե. Բա. Բա. տեռորիստների հետ:

Իսկ նրանց համար տվյալ անձնավորություն կարող է «Փե. Բա. Բա. տեռորիստ» լինել: Քանի որ վերջին հաշվով յուրաքանչյուր անձ, որ դեմ է Մեծ Թուրանի ստեղծման գաղափարին, Փե. Բա. Բա. ահաբեկիչ է:

Եվս վերջին մի դիտողություն, որ հույսով մեր ընթերցողի համար ավելորդ չի լինի: Այս գրքում մենք լայնորեն անդրադարձանք անգիջող նացիոնալիզմի հետևանքով թուրք համայնքի ներսում առկա, կամ սպասվող լարվածություններին: Բնականաբար, կարելի է գրել համայնքում տեղի ունեցող դրական դեպքերի մասին նաև: Միգրանտների ինտեգրացիայի քաջալերման առումով, դա պակաս կարևոր չէ: Միայն թե դա մեր հետազոտության ոլորտից դուրս էր: Բացի այդ, թերությունների մատնանշումը անուղակիորեն աստարում է այն բոլորին, ովքեր դրական աշխատանք են տանում: Ահա այդ բոլոր դրական աշխատանք տանողներին է, որոնց ձոնում ենք այս գիրքը, բայց առաջին հերթին նվիրում ենք դա Մեթին Գեռքեփեփին: Այս թուրք լրագրողն սպանվեց Թուրքիայում, 1996 թվի հունվարի 8-ին՝ ոստիկանության ձեռքով: Մեթինը հետաքրքրված էր այս գրքով, ավստս, որ չտեսավ նրա հրատարակումը:

Շնորհակալությանը՝

*Յորիս Բրոննին
Նաջի Դեմիրբաշին
Քարին Հախելսթեյնին
Հարի Հարմանսին
Վիլկո ֆան Հերփենին
Մեմիհ Հիչիլմազին
Վիմ Իդինգին
Ռենե ֆան Նիրին
Ժաք Օքերեյին
Յան ֆան Սլոբեյին
Խերարդ ֆան Վեսթերվոյին*

Միրյամին
Նուրիին
«Սարահին»,

ինչպես նաև՝ անանուն մի փաստագրողի, բոլոր Գորշ Գայլերին, որոնք պատրաստ գտնվեցին խոսելու և բոլոր նրանց, ովքեր սատարեցին մեր գործին և, սակայն, չկամեցան անունով նշվել:

1 Թաղամասեր, ուր առավելաբար բնակվում են նույն ազգային փոքրամասնության պատկանող մարդիկ:

2 Տես զլ. 10, ժանոթ. 1

Թուրք ծայրահեղ աջակողմյանների մաֆիան՝ սփռված աշխարհով մեկ

Օրալ Չելիկ – Ալաթին Չաքըջը – Ուզեյիր Բայրակլի ու Ռիֆաթ Յիլդիրիմ–Նուրեթին Գուվեն

Արդյո՞ք էմ. Հա. Փե.–ն թմրանյութերի առևտուր է անում.

Ալի Ռեզա Գուրբուզ – Թուրքուլ Թուրքեշ Արդյո՞ք թուրքական կառավարությունն օգնում է Գորշ Գայլերին:

Յոթանասունական թվականների վերջին և ութսունականների սկզբին, այն բանից հետո, երբ Օրալ Չելիկը վերջին անգամ Թուրքիայում տեսնվել էր, նա իր գործունեությունների վայրը տեղափոխեց Եվրոպա: Ութսունական թվականների կեսերին, նա Հոլանդիայում ստեղծեց Գայլեր–մաֆիա» բանդան: 1986–ին նա ձերբակալվեց Ֆրանսիայում՝ հոլանդական համարանիշով «Մերսեդես» մի ավտոյի մեջ: Թմրի-րի առևտրի մեղադրանքով, Ֆրանսիայում նա դատապարտվեց ութ տարվա ազատազրկման: Շվեյցարական իրավապահ մարմինները նույնպես հետևում էին նրան: Ի վերջո, նա ձերբակալվեց Շվեյցարիայում և 1996 թվի սեպտեմբերի 14–ին հանձնվեց Թուրքիային: Մի կարճ ժամանակ նրան նստեցրին Մագնալջիլար բանտում: Այնտեղ նա սկսեց բանտարկված թուրք ազգայնամուլներին կազմակերպել: Այնուհետև նրանք հարձակումներ սկսեցին բանտում գտնվող քյուրդերի դեմ ու սպանեցին ոմանց:

Ինչպես Արդուլահ Չաթլին, այնպես էլ Օրալ Չելիկը, պաշտպանվում էր բարձր պաշտոնյաների կողմից: Այսպես Չելիկը, Մեհմեթ–Ալի Ակչայի հետ միասին, հայտնվել էր «Իֆեկչի մարդասպանության գործում»: Դա վերաբերում էր լրագրող Արդի Իֆեկչիի 1979–ի փետրվարի 1–ի սպանությանը: Սակայն, գործի հիմնական վկան անսպասելիորեն իր՝ նախապես տրված մեղադրական ցուցմունքները հետ վերցրեց: Նա հայտարարեց, որ Չելիկին չի ճանաչում, որի հետևանքով այս

վերջինն ազատ արձակվեց: Մի այլ գործում, որը կապվում էր մի ուսուցչի սպանությանը, գործի փաստաթղթերը անբացատրելի կերպով անհետացան: Դատավորը որոշեց փաստերի չգոյության պատճառով Չելիկին ազատ արձակել: Բանտից արձակվելիս նրան սպասում էր Էմ. Հա. Փե.–ի բարձր պաշտոնյաներից բաղկացած ընդունման մի հանձնախումբ:

Թուրքիայում, Սուսուրլուկ սկանդալին կապվող խորհրդարանական հարցաքննությունների ժամանակ, Օրալ Չելիկն ունկնդրվում էր որպես վկա: Նա իր ցուցմունքն այսպես հայտարարեց. «Ես ու Աբդուլլահ Չաթլին երկար ժամանակ գործել ենք պետության պատվերով»:

Չելիկն ազատ արձակվեց:

Ալաթին Չաքըջը մի այլ տխրահռչակ Գորշ Գայլ է, որն զբաղվում է թմրանյութի առևտրով: Նրա անվանը հանդիպում ենք անցյալ գլուխներում նշված պառլամենտական «Ֆան–թրա» կոչվող թղթապանակում: Թղթապանակի զեկույցում կարդում ենք. «Թուրքիայից դուրս՝ հատկապես Գերմանիայում, Ֆրանսիայում ու Հոլանդիայում, կարելի է հանդիպել Գորշ Գայլերի: Ըստ որոշ ձախակողմյան թերթերի, բայց նաև «Հուրրիեթի», Չակըջըն օգտագործում է դիվանագիտական անձնագիր (գնդապետի կարգի), որը նա ստացել էր թուրքական կառավարությունից: Նա իր առաքելությունն է համարում «քաղաքակրթություն տարածել» և շարունակ հայտարարում է, որ արտասահմանում նա կատարում է թուրք ազգի պատվերը»:

Չաքըջընի ծագումը նկարագրվել է Թե. Բորա և Բա. Բանի՝ «Դևլեթ Օչակ Դերգահ» գրքում: Չաքըջըն ծնվել ու մեծացել է Պոլսի Գյուլթեփե չքավոր թաղամասում, որը Ուլքյուջու շարժման բույնն է:

— Կարճ ժամանակում նա կարողացավ մաֆիոզ շրջանակներում իր տեղը զբաղել ու այս բնագավառում ճանաչված անուններից արագորեն առաջ անցնել: Նրա ուժի հիմքը «անդրաշխարհում» (ապօրինի գործարքների աշխարհում) կազմում էին մի խումբ մարդիկ, որոնց նա հավաքել էր իր շուրջ: Այս խումբը մեծ մասամբ կազմված էր ուլքյուջու–«իդեալիստներից»: Չաքըջըն չէր թաքցնում, որ ինքն էլ Գորշ Գայլ է: Մաֆիոզ շեֆերի մեջ նա առաջինն էր, որ դա չէր թաքցնում: Այս

ձևով «Ուլքյուջու–մաֆիա» պիտակումն էլ առաջին անգամ մտավ գործածության մեջ:

Չաքըջըն ներկայացնում է մաֆիոզների մի նոր սերունդ: Ութսունական թվականների կեսերին թուրք հասարակաց կարծիքն առաջին անգամ լսեց Ուլքյուջու–մաֆիայի մասին: Մինչև այս ժամանակները, հիշյալ մաֆիայի գործունեությունը սահմանափակվում էր «գանձման գործերով»: Ուլքյուջուները վարձվում էին, որպեսզի բաց մնացած հաշիվները փակեն, և դատելի էր ունենում կոպիտ միջոցների կիրառումով: Այն, որ ուլքյուջուները վերջապես անցնելու էին առավել շահավետ թմրեցուցիչների առևտրին, ժամանակի հարց էր միայն: Թե ինչպե՞ս տեղի ունեցավ այդ փոփոխությունը, նկարագրել է աջ ծայրահեղական հանցագործ Հաքան Չեշնիզիլը 1988–ին՝ «Նոկթա» շաբաթաթերթում:

Այն բանից հետո, երբ այս անձնավորությունը ձերբակալվեց, սկսեց «Նոկթայում» իրենց գաղտնիքները դուրս տալ:

— 1980 թվի պետական հարվածից հետո կազմակերպությունը (կարդա՝ Ուլքյուջուլեր) ժամանակի պետք ուներ, որպեսզի ինքն իրեն վերականգնե: Երբ այդ գործն ավարտվեց, ուլքյուջուներն ավելի հաճախակի սկսեցին երևալ մաֆիական շրջանակներում: Նրանք օգտագործում էին իրենց լայն ծանոթություններն ու կապերը, որ նախկինից ունեին: Ես համոզված եմ, որ սա մտածված մի ստրատեգիա էր և հենց իր՝ Թուրքեշի միջոցով ծրագրված: Այսպես, Էմ. Հա. Փե.–ի նախկին պարագլուխները հանկարծ հայտնվեցին մի նոր «մաֆիոզ» շեֆի շուրջ: Նրանք օգտագործում էին իրենց դիրքը՝ գործի գաղտնիքները սովորելու համար:

Երբ գործի գաղտնիքները յուրացրին, այլևս ժամանակ չկորցրին: Անմիջապես իրենց համար գործի անցան: Այսպիսով, առաջացավ «Բաբաների» մի նոր սերունդ:

Գերմանիայում ակտիվ են Ուզեյիր Բայրաքլին և Ռիֆաթ Յիլդիրիմը, երկու՝ «իդեալիստներ», որոնք արդեն Թուրքիայում պատասխանատվություն են կրում մեծ թվով հանցագործությունների համար:

Այն բանից հետո, երբ Յիլդիրիմը 1978–ին Թուրքիայում կասկածի ենթարկվեց մի ուսուցչի սպանության մեջ, փախավ

Եվրոպա: Նրա մասին այսպես է գրում 1993 թվին սպանված թուրք լրագրող Ուզուր Մումչուն. «Թուրքիայում Ռ. Յիլդիրիմը Ուզեյիր Բայրաքլիի հետ միասին իրականացրեց Մեհմեթ Կարաբուլուքի սպանությունը: Այս երկուսը նույնպես իրականացրին համալսարանի դասատու Բեդրեթին Ջոնեթի սպանությունը, այս անգամ Էրդալ Սոլակի համագործակցությամբ: Դրանից հետո Յիլդիրիմը Ֆրանսիայի ճանապարհով անցավ Գերմանիա: Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում նրան օգնեց Սերդար Չելեբին՝ ապահովելով նրա համար բնակարան և գործ: Այստեղ Յիլդիրիմը ստեղծեց մի բանդա, որն զբաղվում էր զինված գողությամբ: 1982-ին նա դատապարտվեց մեկ տարվա բանտարկության՝ կեղծ փաստաթղթեր սարքելու համար: Երկու տարի հետո նա ստացավ յոթը տարի բնաջնջման առթու վաճառքի մեղադրանքով: 1984-ին նրա հետ ձերբակալվեց նաև Մուստաֆա Էրդենը: Մեր հետազոտությունների ընթացքում պարզվեց, որ Էրդենը բնակվում էր թուրքական ֆեդերացիայի շենքում»: Մումչուն, իհարկե, ի նկատի ունի Գերմանիայի թուրքական ֆեդերացիան:

— Հարցաքննության ժամանակ Յիլդիրիմը հայտարարեց միլիցիային, որ ինքը գործել է կազմակերպության հրահանգով, — ասում է Մումչուն:

Գերմանիայում Յիլդիրիմն ու Բայրաքլին դատապարտվեցին ազատազրկման, «սակայն դատարանի մեղմ լինելու պատճառով շատ երկար չնստեցին», — գրում են գերմանացի լրագրողներ Յուրգեն Ռոթն ու Մարկ Ֆրեյր: Երկու Գորշ Գայլերն այժմ դարձյալ ազատ քայլում են իրենց համար:

— Նրանք դարձյալ հենց նույն գործերով են զբաղվում, ինչ որ նախօրոք՝ դրամաշորթություն, ծեծ ու ջարդ և մարդասպանություն: Իսկ գերմանական ոստիկանությունը տակավին չգիտի, թե նրանց հանցագործությունները քաղաքակա՞ն շարժառիթներ ունեն, թե՞ ոճրագործական:

Անգլիան իր հերթին, իր տարածքում պահ է տվել Նուրեթին Գյուլենին: Այս 39 տարեկան ֆուտբոլիստը ամբողջ Թուրքիայում ճանաչված էր որպես «Մալաթիա» ֆուտբոլային ակումբի նախագահ: Աստիճանաբար նա աճեց ու դարձավ Թուրքիայից դեպի Եվրոպա՝ հերոյինի արտահանման կենտրոն-

նական դեմքը: Սրա համար Ֆրանսիայում նա դատապարտվեց տասնվեց տարվա ազատազրկման: Գյուլենը, սակայն, ֆրանսիացիներից ավելի ճարպիկ գտնվեց: Գնաց Անգլիա ու հաստատվեց այնտեղ: Սկստվեց Յարդի (անգլիական հետախուզական ծառայություն) մի խոսնակ «Մանդեյ Թայմզում» հայտարարել է, որ իրենց ջանքերը Գյուլենին ձերբակալելու համար, միշտ հանդիպում են «բյուրոկրատական խոչընդոտների»: Այժմ Գյուլենն ապրում է Լոնդոնի շքեղ թաղամասերից մեկում՝ իր անգլիացի կնոջ հետ:

— Էմ. Հա. Փե.—ի համար քննությունները եկամտի ամենակարևոր աղբյուրներից են: Ես դժվար կարող եմ պատկերացնել, որ կուսակցության պարագլուխներն այս մասին ոչինչ չգիտեն, — ասում է Սերվեթ Ավչին՝ իր Անկարայի գրասենյակում:

Ավչին նախագահն էր Էմ. Հա. Փե.—ի երիտասարդական բաժնի Ուլքյու օջաքլարի, այսպես կոչված «իդեալիստների օջախի»: Նա այն անձնավորություններից է, որ 1992-ին Էմ. Հա. Փե.—ից հեռացավ մի նոր կուսակցություն հիմնադրելու համար: Այս կուսակցությունը կոչվում էր Բոյուք Բիրլիք Փարթիսի (Մեծ միություն): Ավչին նրա երկրորդ քարտուղարն է:

— Եթե տակավին Էմ. Հա. Փե.—ի մեջ լինեիր, դարձյալ այսպես բացահայտ կխոսեի՞ր այսպիսի մի կարևոր հարցի մասին, — հարցնում է Մեհմեթը:

— Իհարկե ո՛չ: Դրա հնարավորությունը ես չեի ունենա: Էմ. Հա. Փե.—ում նրանք են քեզ համար մտածում: Այնտեղ չես կարող ազատ խոսել:

— Իսկ ինչպե՞ս կարող ենք վստահ լինել, որ դու այս բաները չես ասում քո նախկին կուսակցությունը սևացնելու համար: Չի՞ կարող պատահել, որ դու մեզ ձեռք ես գցել:

Ավչիի դեմքի գծերը քաշվում են: Հանդիմանողաբար ասում է.

— Ես տակավին ուլքյուջու եմ: Իմ ներկա կուսակցությունը հետևում է Ուլքյուջու գաղափարներին: Մենք բացի մեր շարժման հաջողությունից, ուրիշ բան չենք ուզում: Սակայն, արդեն մեծ թվով Էմ. Հա. Փե.—ականներ կան, որոնք ձերբակալվել են քմբիրով զբաղվելու պատճառով: Դա այլևս պատահական երևույթ չի կարելի համարել: Նայիր, օրինակ, այս Գյուրբուզին:

1996-ի վերջին Շվեյցարիայում ձերբակալվեց Ալի Ռեզա

Գյուրբուզը: Նա իր հետ ուներ քառասուն կիլո հերոյին: 1995 թվի Թուրքիայի ընտրություններում նա Էմ. Հա. Փե.-ի թեկնածուն էր Իզմիրի համար:

Նրա ձեռքակալումը շատերի համար զարմանալի բան չէր: 1995-ի դեկտեմբերի 6-ին, նախքան ընտրությունները, Իզմիրի «Էվրենսել» օրաթերթը, որն այժմ Էմեք է կոչվում, տեղեկացրեց, որ Էմ. Հա. Փե.-ն Ուլքյուջու թմբիրի մաֆիայի անդամներից մեկին թեկնածու է հայտարարել: Այս կապակցությամբ նշվել էր Ալի Ռեզա Գյուրբուզ անունը:

Լուրը գրել էր «Էվրենսելի» լրագրողներից մեկը: Էմ. Հա. Փե.-ի տեղական մասնաճյուղը այս լրագրողին «հրավիրեց» կուսակցության գրասենյակ:

Էմ. Հա. Փե.-ականները նրանից պահանջեցին լուրի ուղղումը: Տպագրվելիք տեքստը նրանք արդեն պատրաստել էին: Թերթը չպետք է համարձակվեր նույնիսկ մեկ բառ փոխել, այլապես լրագրողի հաշվին կնստեին. «Եթե կյանքդ սիրում ես», — սպառնացել էին նրանք: Յույց տալու համար, որ իրենց սպառնալիքը լուրջի պիտի տալ, կուսակցության տեղական շեֆերը կրում էին զենք:

Փետրվարի 9-ին «Էվրենսելը» տպագրեց մի «ուղղում». «Մեր թերթում նախապես տրված լուրը հետևյալ վերնագրով՝ «Էմ. Հա. Փե.-ն մասնակցում է ընտրություններին իր մաֆիայով», հիմնված չէ իրականության վրա: Այդ բոլորը հիմնված է մեր ֆանտազիայի վրա»: Այնուհետև տպագրվել էր նաև այն բոլորն, ինչ տեղի էր ունեցել կուսակցության գրասենյակում և ավելացվել՝ «Էմ. Հա. Փե.-ականները ատրճանակով սպառնացին մեր լրագրողին»: Այս բանը պատճառ դարձավ նոր սպառնացումների:

Մոտավորապես երեք ամիս հետո Գյուրբուզը ձեռքակալվեց հանցագործության պահին՝ հերոյին տեղափոխելու ժամանակ: Էմ. Հա. Փե.-ի հանգուցյալ ղեկավար Թուրքեշը ձեռնպահ մնաց որևէ լուսաբանությունից, սակայն իր երկրորդ քարտուղար Աքբան Մուվերը հետևյալ հայտարարությունն արեց՝ «Ոչ մի օրենք չկա, որ մի կուսակցություն իր թեկնածուներից նախապես երաշխիք պահանջի իրենց ապագա վարմունքի մասին»:

Առանց պատճառի չէր, որ Թուրքեշն իր բերանը չբացեց:

Քանզի հենց կուսակցության բարձր ղեկավարությունն էր, որ համառոտն պահանջել էր Գյուրբուզի թեկնածությունը: Այդ առթիվ եղած բողոքներին ու զգուշացումներին լսող ականջ չէր եղել: Էմ. Հա. Փե.-ի վարչության նախկին անդամներից մեկը, որը չի ցանկանում անունը նշվի, այս մասին «Ջումհուրիյեթ» թերթում այսպես է արտահայտվել՝ «Իզմիրի մասնաճյուղի կուսակցական վարչությունից մի քանի հոգի վտարվեցին, քանզի նրանք դեմ էին, որ այսպիսի մարդիկ առաջադրվեն որպես թեկնածու: Կուսակցության տեղական նախագահությունը զոհի սեղանին դրվեց այդ թեկնածուների համար: Սա հենց կուսակցության վերին իսկ խավի պատրաստած քանապուրն է: Իսկ վերին խավ ասելով պիտի հասկանալ՝ Թուրքեշ, Ռեզա Մուֆթուլու և Մերվեթ Թուրգուր»:

Էմ. Հա. Փե.-ի ձեռքակալված թեկնածու Ալի Ռեզա Գյուրբուզը առաջին Էմ. Հա. Փե. պարագլուխը չէ, որ զբաղվում է թմրանյութերի առևտրով: Առաջիններից մեկը Կուրդեթ Բեյհամն էր: Նա անդամ էր Թուրքիո սենատի, որ, ի դեպ, այլևս գոյություն չունի: 1972-ին Բեյհամը ձեռքակալվեց գերմանա-ֆրանսիական սահմանն անցնելիս: Նրա մոտ գտնվել էր 146 կգ չմշակված մորֆին:

Լոքման Քունդաչին, որը 1979-ին հիմնադրել էր Գերմանիայի թուրքական ֆեդերացիան, խոստովանեց, որ իր հիմնադրած «կազմակերպությունը զբաղվել է հերոյինի մաքսանենգությամբ»: Իսկ իր գործընկեր, Գերմանիայի ֆեդերացիայի նախկին անդամ Ալի Յուրթասլանը այսպես արտահայտվեց.

— Դրամական միջոցները մեծ մասամբ գոյանում էր Էմ. Հա. Փե.-ի ակտիվիստների գործունեությունից, որոնք արտասահման էին գործուղվում: Այս մարդկանց օգնությամբ հերոյին ու այլ թմրանյութերն արտասահման էին տեղափոխվում: Այս թմրանյութերի վաճառքից գոյացած հասույթը կազմում էր մեր կուսակցության եկամուտների ամենակարևոր մասը:

Նույնիսկ հանգուցյալ Ալփարսլան Թուրքեշի զավակ Թուրուլ Թուրքեշը գործ է ունեցել թմրանյութերի առևտրի հետ: Դա ասում է ազգությամբ քյուրդ Հուսեյին Բայբաշինը՝ Եվրոպայում թմրանյութերի առևտրի նախկին պարագլուխներից մեկը: Բայ-

բաշինն ասում է, որ ինքը երկար տարիներ համագործակցել է թուրք կառավարության հետ:

— Հերոյինը արտահանվում է Աֆղանստանից: Դա փոխադրվում է Թուրքիա՝ Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Ադրբեջանի ճանապարհով: Թուրքուլ Թուրքեշը գնում գալիս էր այս ճանապարհով: Այն ժամանակահատվածում, երբ Թուրքիոն պաշտպանությունը վայելող Էլչիբեյը Ադրբեջանի նախագահն էր, Թուրքուլի գործերը ծաղկեցին: Երբ Թուրքուլը Բաքվում հանդիպեց Էլչիբեյին՝ բանակցելու թմրանյութերի ու նավթի ապօրինի արտահանման մասին, ես նրա հետ էի: Բացի այդ, իմ ընկերներից մեկը մի քանի անգամ հանդիպել է Թուրքուլին՝ Աֆղանստանի Մեզարե շարիֆ քաղաքում և նրա հետ թմբիրի ու զենքի առքուվաճառք կատարել,— ասում է Բայբաշինը:

Բայբաշինը չի ուզում ասել, թե ո՞վ է այս ընկերը, սակայն ասում է հետևյալը.

— Թուրքիայում ես հաճախ եմ խոսել Թուրքուլի ու նրա գործընկեր Շևքեթ Չուբուքի հետ: Նրանք զբաղվում էին կեղծ ամերիկյան դոլարի ու գերմանական մարկի առևտրով: Այնքանով որ գիտեմ, նրանք տակավին զբաղվում են այդ գործով: Շևքեթ Չուբուքը մեծ մասամբ կազմակերպում էր թմրանյութերի փոխադրումը Թուրքուլի համար: Պատահական չէր, որ թմբիրներ փոխադրող Լաքի-Էս կոչվող նավի նավապետը Չուբուքի հայրն էր: Այս նավը ճանապարհին կանգնեցվել էր թուրքական իշխանությունների կողմից:

Իսկ Էմ. Փե. Հա.—ն հրաժարվում է այս պնդումների մասին որևէ բան ասելուց:

Լաքի-Էս տախտակամածի վրա առգրավված տասնչորս տոննա հերոյինը թմրանյութի միակ մեծ որսն է, որով Թուրքիան կարող է հոխորտալ: Իսկ 1992-ի Քիսմեթին-1-ի վրա առգրավված երեք տոննա թմրեցուցիչը կարելի չէ հաշվի մեջ առնել, քանզի այդ նավը հենց իր նավակազմի միջոցով ջրասուզվեց Միջերկրական ծովում:

Իսկ Թուրքիոն հետախուզական ծառայությունների գործունեության աննշան արդյունքը կարելի է բացատրել հետզհետե բազմացող այն նշաններով, որ թուրքական կառավարությունը ինքը կապված է թմրեցուցիչների առևտրի հետ: 1997-ին,

Ֆրանկֆուրտ քաղաքի շրջանային դատարանը տպավորիչ մի եզրակացության հասավ առ այն, որ թուրքական իշխանությունները հովանավորում են թմրեցուցիչների մաքսանենգերին և այն, որ Թուրքիոն ժամանակի արտագործնախարար Թամսու Չիլերը կապված է թմբիրի առևտրով զբաղվող միջազգային մաքսանենգերի հետ: Սա դատարանի գրավոր հայտարարությունն էր: Ըստ այդ հայտարարության, թմբիրի առևտրով ճանաչված երկու բանդա ազդեցություն են ներգործում Թուրքիոն կառավարության ամենաբարձր շրջանակներում:

1997 թվի սկզբին, Անգլիոն փոխնախարար Տոմ Սակվիլը հայտարարեց, որ իրենք հստակ նշաններ ունեն, որ թուրք իշխանությունները կապված են այս առևտրի հետ: Շատ հաճախ հանցագործների ձերբակալումը անհնար է դառնում: Ըստ այս փոխնախարարի, երբ անգլիացիները գաղտնի ինֆորմացիա են փոխանցում թուրք իշխանություններին, հաճախ այդ ինֆորմացիան նրանց միջոցով հասնում է թմբիրի մաֆիայի շեֆերին:

Հոլանդական «Դը Ֆուքսկոնանթ» օրաթերթին տված իր հարցազրույցում Հուսեյին Բայբաշինը հայտարարել է, որ թուրք կառավարության բարձր պաշտոնյաները կապված են թմրանյութերի առևտրի հետ:

Ըստ Հուսեյին Բայբաշինի, ութսունական թվականների սկզբին, երբ ինքը թուրք կառավարության պատվերով զբաղվում էր թմրանյութերի առևտրով, այս հարցում կարևոր դեր էր խաղում փոխզեներալ Դոզան Բայազիթը: Իսկ մինչև կարճ ժամանակ առաջ, այս փոխզեներալը կարևոր պաշտոն էր զբաղեցնում Թուրքիոն ամենազորավոր հաստատության՝ Ազգային ապահովության խորհրդի մեջ:

Բայբաշինը շարունակում է.

— Բելգիայում թմրանյութի առևտրի համար պատասխանատու էր նույնիսկ ՆԱՏՕ-ի թուրք մի հրամանատար, որը կոչվում էր Թյուֆեքչիօղլու: Անգլիայի պատասխանատուն էր Էրթուրուլ Թուրքբիլեզին, նախկին մի զինվորական, որն այժմ Լոնդոնում թուրքական մի դպրոցի տնօրեն է: Եվրոպայի այլ երկրներում գործը վարում էր Բայրակ ընտանիքը: Այս ընտանիքը սեփականատերն էր Մանջակ ավիաուղիների, որը գործում էր Գերմանիայում: Գործը կոորդինացվում էր դեսպա-

նատների և հյուպատոսարանների կողմից հատուկ նշանակված մարդկանց միջոցով: Ութսունական թվականների սկզբին որոշում կայացվեց, որ թմրանյութի առևտուրը ինտեգրացվի թուրք համայնքի մեջ: Դրա արդյունքն այն էր, որ մենք թմրանյութի առևտրից ձեռք բերած շահույթն օգտագործում էինք եվրոպական տարբեր երկրներում մշակութային միություններ, մարզակումբներ ու մզկիթներ ֆինանսավորելու, և կամ հարկ եղած դեպքում՝ հիմնադրելու համար:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի հայտարարությունը

Ստելլա Բրամի և Մեհմեթ Ուզերի հրատարակած գրքում այստեղ ու այնտեղ նշվում է Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի անունը: Այդ էջերում Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի լավ անունը սևացվում է: Ֆեդերացիայի վարչությունը, անդամներն ու համակիրները դա համարում են իրենց դեմ ուղղված զրպարտչական կամպանիա: Ժամանակի սղության պատճառով և, հատկապես, հարգելով անհատի ազատ արտահայտման իրավունքը, Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան ձեռնպահ է մնում գրքի դեմ իրավական գործ բացելուց:

Գրքի բովանդակությունը հեղինակների անձնական վերացական կարծիքներն ու դատողություններն են: Մենք դիմում ենք գրքի ընթերցողներին, որպեսզի քննադատական ու առարկայական մոտեցումով գիրքն ընթերցեն և անձնական կարծիք կազմելու համար չապավինեն հեղինակների կանխակալ կարծիքներին և դատողություններին, այլ բացատրությունների համար դիմեն Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի վարչությանը:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան նախկինում գոյություն ունեցած որևիցե կազմակերպության շարունակությունը չէ, այլ բացարձակապես նոր և անկողմնակալ մի հաստատություն:

Թուրքական ֆեդերացիան բացարձակապես չի ընդունում գրքում առաջ քաշված ամբաստանություններն այն մասին, որ ֆեդերացիան կապված է որևիցե տոտալիտար, ահաբեկչական կամ ծայրահեղական խմբավորման հետ: Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան խստորեն դեմ է ռասայականությանը, կրոնամոլությանը, ֆաշիզմին, հանցագործությանն ու սպառնացման պրակտիկային: Ֆեդերացիան խորապես հարգում է անհատի ազատության, կարծիքի ազատ արտահայտման իրավունքը և պատրաստ է համագործակցելու ցանկացած կազմակերպության հետ պայքարել այն ամեն ինչի դեմ, որ խանգարում է հասարակության կարգն ու անդորրը:

Այսու, հերքում ու անհիմն ենք համարում գրքում բերված

այն բոլոր մեջբերումները, որոնցում նշվում են Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի, վարչության անդամների և անհատ անձնավորությունների անունները, և որոնց վերագրվում է կապ որևէ անձի կամ կազմակերպության հետ, որոնց վստահելիության, շիտակության և օրինականության մասին ամենաչնչին կասկած գոյություն ունի: Որևէ անձի կողմից գրքում նշված որևէ արտահայտություն արտացոլում է արտահայտվողի անձնական կարծիքը, և ո՛չ Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի տեսակետը:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի վարչություն

Անջատված կազմակերպություններ

1986 թվին տեղի է ունենում մի մեծ ճեղք՝ Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի կառուցվածքում: Այս ֆեդերացիան Թուրքիայից դուրս, Գորշ Գայլերի ամենամեծ կազմակերպությունն է: Կազմակերպության նախագահ Մուսա Սերդար Չելեբին մի օր հանկարծ թողնում ու հեռանում է կազմակերպությունից: Նրա հետ հեռանում են նրա ոչ աննշան թվով համակիրները: 1988-ին Չելեբին հիմնադրում է մի նոր կազմակերպություն՝ Թուրք իսլամ քուլթուր դերենքլերի բիրլեբի, համառոտ՝ ԹԻՄ-ԿԱՄ – «Թուրք-իսլամական սշակության կազմակերպությունների միավորում» անունով: Այս կազմակերպությունն ունի նաև ազգայնական հակումներ, սակայն առավել զնահատում է իսլամական արժեքները:

Գերմանիայում տեղի ունեցող այս զարգացումներն իրենց արտացոլումն են գտնում նաև Հոլանդիայում: Հա. Թե. Գե. Էֆ.-ի կողմից 1986-ի նոյեմբերի համար ծրագրված համագումարը վերջին պահին չեղարկվում է: Կազմակերպության ժամանակի նախագահ Չենգիզ Օզդեմիրը հետևելով Չելեբիի օրինակին, հրաժարվում է Հա. Թե. Գե. Էֆ.-ից: 1988 թվին, Օզդեմիրն իր ընկերների հետ միասին իր կազմակերպությունն է հիմնադրում Չելեբիի «Միավորումի» օրինակով՝ թուրք-իսլամական սշակության կրթության ու հրատարակչական հաստատություն (Թուրք-իսլամ քուլթուր վե Յային Վակֆը): Չենգիզ Օզդեմիրի ղեկավարած հոլանդական այս մասնաճյուղն այժմ կոչվում է Հոլանդիայի թուրք-իսլամական հաստատությունների միավորում (Հոլանդա թուրք իսլամ քուլթուրլարի բիրլիդի):

Մուսա Սերդար Չելեբին՝ կազմակերպության ճեղքվածքի հետև կանգնած այս տաղանդը, սովորական մի մարդ չէ: Իր վայելած համբավը նա մասամբ ձեռք է բերել շնորհիվ իր ունեցած հավանական դերի համար՝ Ալի Ակչայի միջոցով Պապի դեմ իրագործված ահաբեկչության մեջ: Ալի Ակչան նույնպես մի Գորշ Գայլ էր: Այս գործի կապակցությամբ, Չելեբին Իտալիայում երեք տարի բանտ նստեց, մինչև որ փաստերի չգոյության պատճառով ազատ արձակվեց: Թե ինչի՞ համար նա

1986 թվին հեռացավ թուրքական ֆեդերացիայից, նա երբեք այդ մասին որևէ հայտարարություն չի արել:

Սերվեթ Ավչին, որը միառժամանակ նախագահում էր Էմ. Հա. Փե.-ի երիտասարդական բաժինը՝ Ուլքյու օջախլարին, Թուրքիայում մեզ տալիս է հետևյալ բացատրությունը Չելեբիի մեկնման մասին. «Համաձայն մեր այն ժամանակվա տեղեկությունների, Եվրոպայի թուրքական ֆեդերացիան այն ժամանակ իր տրամադրության տակ ուներ երկու միլիոն գերմանական մարկ: Թուրքերը, որը ջանում էր Էմ. Հա. Փե.-ին վերստին իր ոտքի վրա կանգնեցնել, պահանջում էր այս գումարը: Չելեբին պարզապես մերժեց նրա պահանջը և հետո էլ հրաժարվեց նախագահությունից: Որևէ գաղափարախոսական տարածանության հարց չի եղել, այլապես մենք ևս այստեղ՝ Թուրքիայում, դա պիտի նկատած լինեինք»:

Մուսա Սերդար Չելեբիի թուրք-իսլամական միավորումը ճյուղավորված է ամբողջ Եվրոպայի տարածքով: Այդ կազմակերպության ներսում գործում են ուրիշ ճանաչված նախկին Էմ. Հա. Փե.-ականներ, ինչպիսին է Ալի Բաթմանը: Կազմակերպության համակիրների թիվն էլ սակավ չէ: Նրա նախագահն է Հա. Իբրահիմ Էմիլին: Բելգիական քույր կազմակերպությունը կոչվում է թուրք իսլամ ֆեդերասիոնու՝ թուրք-իսլամական ֆեդերացիա: Եվրոպայի մայր կազմակերպություն ԱԹԻԲ-ը (Ավրուփա թուրք իսլամ բիրլիդի - Եվրոպայի թուրք-իսլամական միավորումը) 1996 թվի դեկտեմբերին կազմակերպեց իր իններորդ համագումարը Գերմանիայի Դորտմունդ քաղաքում: Համագումարին մասնակցեց երկու հազար մարդ:

1992-ին դարձյալ մի ճեղքվածք բացվեց Գորշ Գայլերի շարքերում: Այս անգամ սա տեղի ունեցավ «Մայր հողում»: Մի խումբ մարդիկ հեռացան Էմ. Հա. Փե.-ից ու հիմնադրեցին մի նոր կուսակցություն՝ Բույուք բիրլիք փարթիսի - Բե. Բե. Փե. (Մեծ միավորման կուսակցություն) անունով: Էմ. Հա. Փե.-ի թուրքական ֆեդերացիայի օրինակով, Բե. Բե. Փե.-ականներն էլ Եվրոպայում հիմնադրեցին իրենց ԱՆԱՑ-ը, Ավրուփա նիզամի ալեմ ֆեդերասիոնու («Համաշխարհային կարգ» եվրոպական ֆեդերացիա):

Հոլանդիայում Գորշ Գայլերի կազմակերպությունը Հոլան-

դիայի թուրքական ֆեդերացիան է: Այս ֆեդերացիան հիմնադրվել է 1995 թվի հոկտեմբերին, սակայն ֆեդերացիային կցված Գորշ Գայլերի կազմակերպությունների մեծ մասը գոյություն ունեին դրանից շատ առաջ:

Եվրոպայի թուրքական ֆեդերացիան այն օղակն է, որ իրար է կապում Եվրոպայի տարբեր երկրների (Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Բելգիայի, Անգլիայի, Շվեդիայի, Դանեմարքայի, Հոլանդիայի ու Ֆրանսիայի) թուրքական ֆեդերացիաներին: Եվրոպայից դուրս գոյություն ունեն ֆեդերացիայի անդամ կազմակերպություններ, ինչպես Կանադայում, Միացյալ Նահանգներում, Սաուդի Արաբիայում, Եգիպտոսում ու Ավստրալիայում: Այս բոլոր կազմակերպությունների «մայր կազմակերպությունն» արդեն գոյություն ուներ յոթամասուն թվականների վերջերից: Նրա լրիվ անունն է Եվրոպայի թուրք դեմոկրատ-իդեալիստական միությունների ֆեդերացիա (Ավրուփա դեմոքրաթիկ ուլքյուջու թուրք դերներլերի ֆեդերասիոնու):

ԳՈՐԾԱԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- ADÜTF** – Ավրուփա դեմոքրատիկ ուլքյուջու թուրք դերնեքլերի ֆեդերասիոնու (Եվրոպայի թուրք դեմոկրատ-իդեալիստ միությունների ֆեդերացիա)
- Anadolou** – Հիլվերսունի և շրջակայքի թուրք մշակութային կենտրոն
- ANAF** – Ավրուփա Նիզամի ալեմ ֆեդերասիոնու (Եվրոպայի «Համաշխարհային կարգ» ֆեդերացիա)
- ANAP** – Անավաթան փարթիսի (Մայր հայրենիք կուսակցություն)
- ATIB** – Ավրուփա թուրք իսլամ բիրլիղի (Եվրոպայի թուրք-իսլամական միավորում)
- Baba** – Բաբա՝ մաֆիոզ պարագլուխ
- Ba^obuğ** – Բաշբուղ՝ մեծ ղեկավար, էմ. Հա. Փե.-ի ղեկավար Ալփարսան Թուրքեշի տիտղոսը
- Ba^okan** – Բաշկան՝ նախագահ
- BBP** – Բույուք բիրլիք փարթիսի (Մեծ միավորման կուսակցություն – էմ. Հա. Փե.-ից անջատված կազմակերպություն)
- Bozkurtlar** – Բոզբուրթլար՝ Գորշ գայլեր»
- CKMP** – Ջումհուրիյեթի Քյոյլու միլլեթ փարթիսի (Գյուղացիական ազգային հանրապետական կուսակցություն – էմ. Հա. Փե.-ի նախակարապետը)
- Dev Sol** – Դերիմջի Սոլ (Ձախակողմյան հեղափոխական շարժում)
- DHKC** – Դերիմջի հալք բուրթուլուշ ջեբհեսի (Ազգային ազատագրման հեղափոխական ճակատ)
- DID** – Դորդրեխտ իշչիլեր դերնեղի (Դորդրեխտ քաղաքի բանվորական միություն)
- Diyanet** – Դիանեթ (Կրոնական հարցերով զբաղվող թուրք պետության վարչություն)
- DYP** – Դորդու Յոլ փարթիսի (Ուղիղ ճանապարհ կուսակցություն, որի ղեկավարն էր սկզբում նախագահ Դեմիրելը, իսկ հետո՝ վարչապետ Թանսու Չիլերը)
- ELIF** – Թուրքական ֆեդերացիային կից կանանց կազմակերպություն

- Gavur** – Գյավուր՝ անհավատ
- HTDF** – Հոլանդա թուրք դերնեքլերի ֆեդերասիոնու (Հոլանդիայի թուրքական միությունների ֆեդերացիա – Գորշ Գայլերի կազմակերպության նախկին համադրող կազմակերպություն)
- HTIB** – Հոլանդիա թուրքիյելի իշչիլեր բիրլիղի (Հոլանդիայի թուրք բանվորների միություն)
- HTIKB** – Հոլանդա թուրք իսլամ քուրուլուշլարի բիրլիղի (Հոլանդիայի թուրք իսլամական հաստատությունների միավորում – Գորշ Գայլերի անջատված կազմակերպություններից, որի ղեկավարն է Ջենգիզ Օզդեմիրը)
- Kubra** – Քուբրա – թուրքական ֆեդերացիային կից կանանց կազմակերպություն
- MHP** – էմ. Հա. Փե.– Միլլիյեթի հարեթեթ փարթիսի (Ազգայնական շարժման կուսակցություն – Գորշ Գայլերի մայր կուսակցությունը Եվրոպայում)
- Milli Görüş** – Միլլի Գյորուշ (Կրոնական արմատական շարժում Եվրոպայում – Ռիֆահ՝ Բարեկեցություն կուսակցության համակիրները)
- MIT** – Միթ – Միլլի իսթիհարաթ թեշքիլաթի (թուրք պետության անվտանգության ծառայություն)
- MTIB** – Միլլիյեթի թուրք իշչիլերի բիրլիղի (թուրք ազգային բանվորական միություն – Գորշ Գայլերի նախկին համադրող կազմակերպություն Գերմանիայում)
- NIVO** – Առաջադիմական թաղային կուսակցություն Ամստերդամում
- OTID** – Օս Թուրքիյելի իշչիլեր դերնեղի (Օս քաղաքի թուրք բանվորական միություն – պրոգրեսիվ թուրքերի կազմակերպություն)
- ÖZEL TIM** – Չինվորական ջոկատներ, որ հատկապես մարզվում են Փե. Քա. Քա.–ի դեմ պայքարելու համար
- PKK** – Փե. Քա. Քա. – Փարթիյե քարգերանե Քուրդիստան (Քյուրդիստանի բանվորական կուսակցություն – Փե. Քա. Քա.–ն պահանջում է ինքնավարություն Թուրքիայի քրդերի համար)
- Refah** – Ռեֆահ փարթիսի (Բարեկեցություն կուսակցություն – արմատական մուսուլմանների կուսակցությունը Թուրքիայում)

- SOYAD** – ՍՈՅԱԴ – թուրքական ֆեդերացիային կից հաստատություն
- TDJV** – Թուրք դեմոկրաթիք գեներլիք դերնեղի – Ամստերդամի թուրք դեմոկրատական երիտասարդական միություն
- TGRT** – «Թուրքիյե» նացիոնալիստական թերթի կոմերսիալ հեռուստակայան
- TIKDB** – Թուրք իսլամ քուլթուր դերնեղլերի բիրլիղի (թուրք իսլամական մշակութային միությունների միավորում Գորշ Գայլերի անջատված կազմակերպություններից, որի ղեկավարն է Մուսա Սերդար Չելեբին)
- TISN** – թուրք իսլամ քուլթուր վե եային վակֆը (թուրք իսլամական մշակույթի, կրթության ու հրատարակչական հաստատություն, HTIKB–ի նախակարապետը)
- TKMD** – Թուրքիյե քոմունիզմլե մուջադեելե դերնեղի (Կոմունիզմի դեմ պայքարի միություն)
- TOS** – ԹՈՍ – Թուրքական ռադիո–հեռուստակայան
- TRT** – թուրքական պետական հեռուստակայան
- Tükem** – թուրքական ֆեդերացիան կից կազմակերպություն
- Turk Islam Federasyonu** – թուրք իսլամ ֆեդերասիոնու (թուրք իսլամական ֆեդերացիա – TIKDB–ի քույր կազմակերպությունը Բելգիայում)
- Ülkü Ocakları** – Ուլքյու Օջակլարի (Գորշ Գայլերի երիտասարդական բաժինը Թուրքիայում)
- Ülkücüler** – Ուլքյուջուլեր «իդեալիստներ» – Գորշ Գայլերը սիրում են իրենք իրենց այդպես անվանել
- ÜTİD** – Ուլքյուջուլե թուրք իշխիլերի դերնեղի – թուրք իդեալիստ բանվորական ընդհանուր միություն, Գորշ Գայլերի առաջին համադրող կազմակերպությունը Յուլանդիայում
- VERSAD** – ՎԵՐՍԱԴ – դորդրեխտ քաղաքի իսլամական ու հոլանդական երիտասարդների բարեկամության միություն
- VERSAM** – ՎԵՐՍԱՄ – Ռոտերդամ քաղաքի հոլանդական ու իսլամական երիտասարդների բարեկամության միություն

«ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐԻ» հրատարակումից հետո

2003 թվականին, սույն գրքի համահեղինակ Ստելլա Բրամը հրատարակել է մի նոր աշխատություն՝ «Խենթերի ու խուցերի մեջ» խորագրով: Այդ գրքի 6–րդ հատվածը վերաբերում է «Գորշ Գայլեր» գրքի հրատարակմանը հաջորդող դեպքերին ու իրադարձություններին: Ստորև տալիս ենք այն:

Թարգմանիչ

«Դու պարտադիր ես խոսելու»

1997 թվի հոկտեմբերի մի ուշ երեկո է: Միլիցիայից ինձ ասել են, որ բնակարանս պիտի բողոքեմ ու թաքնվեմ: Մի միլիցիոներ կրում է հեռապատճենիս սարքը՝ աստիճաններից ցած: Դրսում երկու ոստիկան պահակ են կանգնած: Դռանս շեմին թափված են նամակներս, սակայն ես իրավունք չունեմ դրանք հավաքել՝ կարելի է նամակների մեջ ռուսք լինի:

«Գորշ Գայլեր – հետազոտություն թուրք աջ ծայրահեղականների մասին» գրքի հրատարակումից հետո, որը գրեցի լրագրող Մեհմեթ Ուլգերի հետ, իմ կյանքը տակնուվրա է եղել: Ամստերդամի հետախուզական «Նետաղեղ թիմ» կոչվող հատուկ խմբակի հրահանգով, մենք պետք է թաքնվեմք, եթե սիրում ենք մեր կյանքը:

Ամստերդամի սրտից տեղափոխվում եմ գավառային մի վայր: Թաքստոցս, որտեղ մնում եմ, գյուղական մի ագարակ է, որտեղից երևում են կաղնու ծառեր և արածող կովեր: Երբեմն դիմացից անցնում է մի տրակտոր: Գիշերները մեռյալ դրություն է տիրում:

— Պատերազմի՜ ժամանակ էլ այստեղ մարդիկ են թաքնվել, — ասում է ինձ տանտիրուհին: — Վերջերս եկել էին իրենց նախկին թաքստոցն այցելելու՝ նոստալգիայից:

Թաքստոցին կարոտե՞լ: Դե, իհարկե, դա պատերազմ էր, իսկ հիմա՞: Որպես լրագրող, բերանդ պիտի փակես ու չխոսես: Ամեն օր հիշեցնում են, որ ապահով չես: Այլապես, ինչո՞ւ պիտի տուն ու տեղդ բողոքես ու փախչես:

Գորշ Գայլերը կատաղած են:

— Լի՛րք, քեզ համար այլևս ետդարձ չկա. գնդակն արձակված է, շան սատակ ես լինելու, — լսվում է հեռախոսիս ինքնապատասխանիցից:

Շուրջ մեկուկես տարի ես և Մեհմեթը զբաղվեցինք «Ուլքյուջուլերի», այսպես կոչված իդեալիստների մասին հետազոտությամբ: Գորշ Գայլերը սիրում են իրենք իրենց այդպես անվանել: Նրանք ղեկավարվում են Էմ. Հա. Փե.–ի, Միլլիեթ Հարեբեթ Փարթիսի, Ազգայնական շարժման կուսակցության կողմից, որը թուրքական ցեղը բարձրագույնն է համարում: Նրանք խոսում են «Ասիլ թուրքլերի»՝ «ազնվացեղ թուրքերի» մասին, ո-

րոնք իրենց կարծիքով, աշխարհի ամենաազնիվ ազգն են և հետևաբար կոչված են մյուս ժողովուրդներին իշխելու: Բոլոր թրքախոս ժողովուրդները՝ Կովկասից բռնած մինչև Կենտրոնական Ասիա, պետք է միավորվեն Մեծ Թուրան պետության մեջ: Նախկին խորհրդային հանրապետությունները, ինչպիսիք են Ադրբեջանն ու Ղազախստանը, նույնիսկ Չեչնիան, պետք է ընդգրկվեն այս պետության մեջ: Ըստ Էմ. Հա. Փե.–ի, որն ակտիվորեն պաշտպանում է Չեչնիայի պայքարը ռուսների դեմ, չեչեններն էլ թուրք են:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան (Թե. Էֆ. Էք.–ը) հանդիսանում է Գորշ Գայլերի գլխավոր շտաբը մեր երկրում: Ֆեդերացիայի գրասենյակը գտնվում է Ամստերդամում: Մոտավորապես հիսուն կազմակերպություններ՝ երկրի հարավից մինչև հյուսիս ու կենտրոն, այս ֆեդերացիայի անդամ են: Իրենց համակիրների թիվը Հոլանդիայում, ըստ իրենց հայտարարության, հասնում է 60000-ի: Այս թիվը, սակայն, չափազանցված է թվում: 10000-ը կարելի է ավելի իրական թիվ համարել:

Երիտասարդները հավաքագրվում են երիտասարդական կազմակերպություններում, մշակութային կենտրոններում և ֆուտբոլի մրցաշարերում: Անբավարար կրթության ու ուսման պատճառով թուրք երիտասարդները հեշտությամբ որսվում են: Նրանք ապագայում պատվարժան աշխատանք գտնելու հնարավորություն չունեն: Բացի այդ, նրանց համար առողջ զբաղմունքի ու լիցքաթափման հնարավորություններ էլ չկան:

Մի շարք թուրք միություններ քաղաքապետարանից ստանում էին ֆինանսական նպաստ: Միմիայն Ամստերդամը Գորշ Գայլերի կազմակերպություններին օգնել է շուրջ մեկ միլիոն գուլդենով: 2002 թվին էլ շարունակվել է օգնությունը այդ կազմակերպություններին: Նույնն է իրավիճակը Հաագա ու Ռոտտերդամ քաղաքների պարագայում: Քաղաքապետարանները շատ հաճախ հետաքրքրություն ցույց չեն տալիս ազգային փոքրամասնությունների խմբակցությունների քաղաքական էությանը: Հետևանքն այն է, որ թուրք երիտասարդները Հոլանդիայի կառավարության նպաստով ստանում ու կարդում են Ալփարսլան Թուրքեշի Ուլքյուջուլե նոթլար («Ծանոթագրություն-

ներ իդեալիստների համար») գիրքը: Ըստ նրա ուսուցումների, բարձրագույն նպատակը պիտի լինի «մի ազգային (իմա՝ թուրքական) պետության հիմնադրումը, որը պատրաստ է մի թուրքի մազի համար ամբողջ աշխարհը զոհել»: Եվ «ազգապաշտ թուրքը բարձրագույն մարդ արարած «Գերմարդն» է, որի համար բացի թուրքից, ուրիշ ազգ չկա աշխարհում»:

Գորշ Գայլերի համահավաքներում թնդում է «Մենք թուրքերս» լուզուզը: Գորշ Գայլերը պայքարում են քրդերի, հայերի, հրեաների, ալևիթների ու անհավատ «գյավուրների» դեմ: Նրանց առաջնորդ Ալփարսլան Թուրքեշը, որին կոչում են Բաշբուղ (հրամանատար) և, որը մահացավ 1997 թվի ապրիլի 4-ին, պատվիրել է Եվրոպայի իր համակիրներին՝ թափանցել Եվրոպայի քաղաքական շրջանակների մեջ: Անցյալ տասնամյակի ընթացքում տասնյակ Գորշ Գայլեր հետևել են նրա պատվերին: Նրանք մասնակցում են բոլոր ընտրություններին և ոմանց հաջողվել է քաղխորհուրդներում աթոռ գարվել:

Գորշ Գայլերը ինտեգրացիայի դեմ են: Նրանք ուզում են ունենալ առանձին թուրքական մանկապարտեզ, դպրոց, համալսարան:

— Մեր երեխաները պետք է դաստիարակվեն իսլամով և սովորեն իրենց (թուրքական) ազգային պատմությունը, որպեսզի կարողանան հակազդել եվրոպական կուլտուրայի քրիստոնեական ուսմունքներին, — ասել է Թուրքական ֆեդերացիայի նախկին նախագահ Հիքմեթ Յիլդիզելին 1993-ին, մի ելույթի ժամանակ:

Մեզ հաջողվում է ձեռք գցել քրեական գաղտնի մի թղթածրար: Թերթելով այն՝ հանդիպում ենք Գորշ Գայլերի մաֆիական ճյուղավորմանը՝ Հոլանդիայում: Թղթածրարը պարունակում է 2000 էջ տեքստ և վերաբերում է միլիցիայի 1993 թվի «Էկստրյուս» գործողությանը: Իսկ գործողությունը կապվում է Ամստերդամի Մերկատոր թաղամասի հանցագործ Ահմեդ Ա-ի բանդային, որն զբաղվում է թմրանյութերի առևտրով: Այսպիսով, հասնում ենք հենց նույն քաղաքում Մերվեթ կոչվող մի այլ հանցագործի հետքերին:

Մերվեթը պատկանում է բանդայի իսկական կորիզին: Նա ուղղակի կապի մեջ է Էմ. Հա. Փե. մայր կուսակցության պա-

րագուխների հետ: Առևտրի ու ընկերությունների գրանցման պալատում Մերվեթը գրանցված է որպես Հոլանդիայի թուրքական ֆեդերացիային կից երեք կազմակերպությունների նախագահ: Ազգային անվտանգության ծառայությունը (Բե. Ֆե. Դե.), ներկայիս՝ Ա. Ի. Ֆե. Դե.-ն նրան համարում է աջ ծայրահեղական մի հանցագործ: Արդեն իսկ վերոհիշյալ ոստիկանական «Էկստրյուս» թղթապանակում նշված է, որ Մերվեթն աշխատել է Ահմեդ Ա-ի բանդայի հետ Գորշ Գայլերի «Բռնարարք և քաղաքականություն» ստորաբաժնում: Մերվեթը մեղադրվել է հանցագործությամբ, բայց իրավական փաստերի չգոյության պատճառով հետապնդումից զերծ մնացել:

Նույնպես տեղեկանում ենք Մերվեթի մոտիկ գործակից Թահսինի մասին: Սա Ուտրեխտ քաղաքի ոստիկանության նախկին աշխատող է և երդվյալ Գորշ Գայլ: Թահսինը Մերվեթից պատվեր է ստացել «գրքի» առաջն առնել: Բազմաթիվ անգամներ նա մեզ սպառնացել է սպանությամբ:

Գրքի համահեղինակ Մեհմեթը նույնպես թաքնված է: Իսկ իմ քարտուղարուհի Անյային հանկարծակի, առանց նախկին տեղեկացման, այցելության են գալիս երկու բեղավոր թուրք և հայտարարում. «Անյա, լավ կանես դադարես այդ գրքի համար աշխատելուց, այլապես կարող է մի բան պատահել երեխայիդ»:

«Հեթ Փարոլ»³ օրաթերթի 1997-ի հոկտեմբերի 23-ի համարում, Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի մի խոսնակ հայտարարում է. «Սպասեք դեռ, դատական գործերի մի հեղեղ է սկսվելու նրանց դեմ»: Նրանք հերքում են Էմ. Հա. Փե.-ի հետ իրենց կապերը, քանզի ինչպես շատ թուրք կազմակերպություններ վախենում են զրկվել իրենց ստացած նպաստից: Ֆեդերացիան զանազան թուրքիկներ է տարածում, որոնց մեջ մեր գիրքը նկարագրվում է որպես զրպարտչական կամպանիա: Փորձում են հավաստիացնել, որ խնդրո առարկա սպառնալիքները մտացածին են: Ասում են, թե մենք թուրք կազմակերպություններին սև գույնով ենք ներկել և թե Գորշ Գայլը ոչ այլ ինչ է, քան թուրք ժողովրդի անմեղ խորհրդանիշը:

Մեհմեթին անվանում են «ակտիվ համակրող՝ տեռորիստական մի կազմակերպության», այսինքն՝ Փե. Զա. Զա.-ի, որը

պայքարում է քրդերի ինքնավարության համար: Ինձ նույնպես դասում ենք Փե. Քա. Քա.—ի վարձկանների ցանկում: Փա՞ստը. ««Բուրդիստան» թերթում, որը Փե. Քա. Քա.—ի խոսափողն է, հողվածներ է գրում ուն էլենի Բրամ: Շատերի կարծիքով էլենի Բրամն ու Ստեյլա Բրամը նույն անձնավորություններն են», հայտարարում է բռուցիկներից մեկը՝ (16 նոյեմբեր, 1997) ԲՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ խորագրով: Թռուցիկն ուղարկում են նաև խորհրդարան:

Հազիվ թե մեր գիրքը ցրվել է գրախանութներում, երբ զանգահարում է Սերվեթը: Նա պնդում է, որ ինքը թաքնված է:

— Իմ անունը երբեք չպիտի նշեիր գրքում: Հիմա ես էլ վտանգի մեջ եմ,— ասում է նա:— «Կաֆե – 2001»-ի տերն արդեն լիկվիդացվել է և դրա համար դո՛ւ ես պատասխանատու, քանզի գրքումդ նշել ես նրա անունը, սրճարանը, ամեն ինչ...

— Ֆաթիհը լիկվիդացվե՞լ է,— հարցնում եմ ես շշմած:

Արդյո՞ք նա ի նկատի ունի Ֆահրի Է-ին, որը Գորշ Գայլերի կաֆեի շեֆն է: Ճիշտ է, որ գիրքն սկսվում է Ֆահրիով: Գրքի առաջին էջում խոսվում է նրա մասին՝ Ֆաթիհ ծածկանունն օգտագործելով:

— Այս լիկվիդացիայի առաջին պատասխանատուն դու ես և դրա հետևանքներն էլ կտեսնես,— ասում է Սերվեթը:

Իրոք, «Կաֆե – 2001»-ի տերը մեկ շաբաթ մեր գրքի լույս տեսնելուց հետո սպանվել է: Սակայն, ո՞ր տիրոջ մասին է խոսքը, չէ՞ որ կաֆեն ունի երկու սեփականատեր: Ֆահրի Է-ն, որի մասին խոսվում է գրքում, ողջ և առողջ քայլում է փողոցներում: Լիկվիդացված սեփականատերը իր եղբայր Ֆահզան է:

Ամստերդամի հետախուզական «նետաղեղ թիմի» երկու անդամներ Արենդոն ու Հենքը, որոնք գտնվում են իմ բնակարանում, չափազանց երկմիտ են: Նրանք ճանաչում են Սերվեթին ու Թահսիմին՝ որպես մուլեռանդ Գորշ Գայլեր:

— Նման են աղանդավորների, որոնք չեն խորշում դաժանություն կիրառելուց:

Այս միլիցիոներները մեզ ընկերակցում են մեզ սպառնացող վտանգը կանխելու համար:

1997-ի սեպտեմբերի վերջին, նախքան մեր գրքի հրատարակումը, վերոհիշյալ միլիցիոներներն այցելում են Սերվեթին

իր բնակարանում: Նրանց նպատակն է Սերվեթին դեմոկրատիայի ու ազատ արտահայտվելու իրավունքի մասին բան սովորեցնել: Հոլանդիայում, ով համաձայն չի մի գրքի հետ, դիմում է դատարանին: Նրան ասում են, որ «իրենք տեղյակ են, որ ինքը սպառնացել է և կամ պատվիրել է ուրիշներին, որ սպառնան այն անձնավորություններին, որոնք կապվում են մի գրքի հետ»: Իմ անունը չեն նշում, բայց հրաժեշտի պահին Սերվեթն ասում է. «Բարևեք Ստեյլա Բրամին»:

Հաջորդ օրն այցելում են Թահսիմին: Այս մեկն էլ նմանապես հրաժեշտի ժամանակ բարևներ է հղում՝ ինձ փոխանցելու համար:

Հոկտեմբերի կեսին ես արդեն հոգնում եմ ինձ շրջապատող լուրջությունից: Միլիցիոներներին տեղեկացնում եմ, որ մտադիր եմ տուն վերադառնալ: Արենդոն ու Հենքը դա «միանգամայն անպատասխանատու» որոշում են գտնում: Սակայն, ես անդրդվելի եմ:

Ապա Արենդը հետևյալն է ասում ինձ. «Մենք չէինք ուզում քեզ ասել, բայց հիմա ստիպված ենք: Քրեական հետախուզական ծառայությունից տեղեկացել ենք, որ Թուրքիայից վարձկան մարդասպան են ուղարկել այստեղ՝ մի ինչ-որ գրքի վերաբերյալ գործ կատարելու համար»:

— Չի բացառվում, որ այս մարդասպանը քո կամ քո գործակից Մեհմեթի համար եկած լինի: Նա ձերբակալվել է և հարցաքննվել: Իհարկե, ամեն ինչ հերքել է և հետո վտարվել,— ասում է Հենքը:

— Ես դա չեմ հավատում... անհնար է... չի՛ կարող պատահել:

— Հիմա հասկանո՞ւմ ես, թե ինչու չես կարող վերադառնալ տունդ,— հոգոց է հանում Արենդը:

Պոչս կծկած վերադառնում եմ ազարակ: Վարձկան մարդասպանի ասելուսից հետո աչքս քուն չի գալիս: Մեհմեթը նույնպես շատ անհանգիստ է: Պատվիրում ենք հակահրազենային ժիլետ Հոլանդիայի լրագրողների միությունից:

Մեզ պաշտպանող «նետաղեղ թիմը» պատրաստում է մի պլան: Ըստ այդ պլանի, եթե մենք պաշտոնապես սպառնացման զանգատ ներկայացնենք, հնարավոր կլինի սպառնացող-

ներին ձերբակալել և այդպիսով մեզ սպառնացող վտանգը մեծապես կնվազի: Սկզբում չենք համաձայնում, սակայն, հուսահատված ըմբռնում ենք, որ եթե մարդասպան են ուղարկում, կարող է մեկ էլ իրենց գործն անեն:

Դրանից կարճ ժամանակ անց զանգահարում է Սերվեթը:

— Գանգատվել ես սպառնացման համար: Այժմ մի պրոբլեմի առաջ ես կանգնած,— ասում է նա:

— Բացատրիր,— պատասխանում են ես՝ աշխատելով հանգիստ ձևանալ:

— Փե. Քա. Քա.—ն քեզ սպանելու է ու մեղքը գցելու է ինձ վրա: Չէ՞ որ ես հարմար մի կասկածյալ եմ,— ասում է Սերվեթը:

— Բարի, շնորհակալություն զուշացմանդ համար:

— Չգույշ եղիր նաև քրեական հետախուզական ծառայությունից,— շարունակում է նա,— այնտեղից էլ հնարավոր է քեզ ահաբեկեն ... պարզապես շփոթ առաջացնելու համար կամ հենց նույն շարժառիթով, ինչ որ Փե. Քա. Քա.—ն:

Մեզ ասում են, որ հարկավոր է «մի քանի ամիս» քաքնված մնանք: Սակայն, հինգ շաբաթից անց ես այլևս չեմ համբերում: Որոշում եմ կապվել ներքին գործոց նախարար Հանս Դեյքստալի հետ: Նախարարը մտահոգված է իմ ապահովության համար: Իրեն եմ ուղարկում մի հեռապատճեն (ֆաքս), որով հայտարարում եմ, որ ուզում եմ վերադառնալ իմ աշխատանքին և իրենից հարցնում, թե արդյոք նա կարո՞ղ է իմ անվտանգությունը երաշխավորել, թե՞ ոչ:

Հոկտեմբերի 29—ին նախարարը պատասխանում է նույնպես հեռապատճենով: Նա նշում է, որ սպառնացումները լուրջ է ընդունում և այդ պատճառով Ամստերդամի ոստիկանությունն արդեն միջոցներ է ձեռնարկել

Միլիցիան միջոցներ է ձեռնարկել: Բավական թեթևացած վերադառնում եմ տուն:

Երեկոյան հեռախոսս զանգում է:

— Հիմա ի՞նչ,— հարցնում եմ ես՝ ընկալուչը վերցնելով:

— Դուք խոսում եք Ամստերդամի քաղաքապետ Սխելտո Փատեյնի հետ,— լսվում է գծի այն կողմից:

— Օ՛...

Բավական շոյված եմ զգում ինձ:

— Կներեք, որ այդպես անքաղաքավարի ողջունեցի Չեզ, կարծեցի, որ դարձյալ մի Գորշ Գայլ է զանգահարում:

— Ո՛չ, ո՛չ, ես եմ,— ասում է քաղաքապետը:

Մտահոգ հարցնում է իմ կացության մասին և հայտնում, որ ինձ զանգահարելու է Ամստերդամի միլիպետը՝ իմ «անձնական ապահովության կապակցությամբ»: Վստահության համար, ահա՛ իմ հեռախոսահամարը: Կարող ես ուզածդ ժամին ինձ զանգահարել»:

Տասը րոպե շանցած՝ դարձյալ լսվում է հեռախոսիս զանգը: Միլպետը չէ, այլ նրա տեղակալ Յոպ ֆան Ռիսենն է:

— Դրանք ծայրահեղականներ են, ինքդ լավ պիտի գիտենաս,— գոռում է նա:— Մենք դժվար թե կարողանանք քո ապահովությունը երաշխավորել: Ես չեմ կարող Արենդին ասել՝ քեզ, քո անկողնումդ էլ հսկի: Նախընտրելի է, որ հեռանայիր...ը...ը... քաքնվեիր: Ամենալավ ապահովությունը հեռու մնալն է:

— Բոլորովին չեմ ուզում այդ մասին մտածել,— ասում եմ ես՝ բարկացած:— Նախարարը պատվիրել է, որ դուք հարկ եղած միջոցները ձեռնարկեք:

— Դու մեզ համար մեծ պրոբլեմ ես ստեղծում,— ասում է Ֆան Ռիսենը:

— Ուզում ես ասել՝ Գորշ Գայլերը ինձ և ձեզ համար պրոբլեմ են ստեղծում,— պատասխանում եմ ես:

— Համենայն դեպս, դուրս մի՛ գնա: Իսկ եթե պե՛տք է, որ դուրս գաս, մենակ դուրս մի՛ եկ:

Մտածում եմ. սա մի տեսակ տնային կալանք չէ՞:

Ոստիկանությունն, իրոք, դժգոհ է իմ վերադարձից: 1997—ի հոկտեմբերի 29—ին «Է.Ն. Էր. Սե. Հանդըլսբլադում»⁴, Ամստերդամի միլիցիայի մի խոսնակ այսպես է արտահայտվում. «Մենք հատուկ խորհուրդ ենք տվել իրենց՝ հեռանալ: Եթե լրագրողները մեր խորհրդին չեն հետևում, դա իրենց պատասխանատվությունն է»:

Դրանից մի երկու շաբաթ անց, «Դը Ֆուլքսկրանք»⁵ թերթում. ոստիկանության խոսնակ Կլաս Վիլտինգը հայտարարում է, որ հավելյալ միջոցներ չեն ձեռնարկվել, քանզի «մենք նախապես այդ երկու լրագրողներին խորհուրդ ենք տվել միառժամանակ հեռու մնալ և միևնույն պահին դիմել ենք մի շաբթ ապահովա-

կան միջոցների»։ Թե ի՞նչ «ապահովական» միջոցների մասին է խոսքը, Վիլիհիմը ոչինչ չի ասում. այսքանը միայն. «Այժմ էլ, որ նրանք վերադարձել են, նույն միջոցները ուժի մեջ են, քանզի դրանք բավարար էին»։

Ո՞ր «ապահովական միջոցներն» ի նկատի ունի միլիցիայի խոսնակը։ Մեր քաքնվե՞լը։ Միլիցիոներ Արենդը զայրացած զանգահարում է ինձ. «Ո՛չ մի միջոց էլ չեն ձեռնարկել, ոչ ի՞նչ»։ Նա կամավոր իր արձակ օրը տրամադրում է, որպեսզի մի բան կարգավորի։

Ապա զանգահարում է քաղաքապետը։

— Թեև մենք ամենայն զգոնությամբ ենք գործում, սակայն չենք կարող ձեր ապահովությունը հարյուրին հարյուր տոկոս երաշխավորել,— ասում է նա։— Ջգույշ եղի՛ր։ Միշտ տեսր ու մատիտ հետդ վերցրու, որպեսզի կասկածելի ավտո նկատելիս համարանիշն արձանագրես։

Ինչ—որ բաներ են տեղի ունենում։ Օրինակ՝ ինձ համար նշանակվում է մի կապ՝ միլիցիայի մոտ։ Եթե որևէ բան պատահի, պետք է նրան զանգահարեմ։ Նույնպես իմ բնակարանի շուրջ «ուժեղացված ավտո—հսկողություն» է նշանակվում։ Դա նշանակում է, որ քսանչորս ժամը մեկ, ոչ կանոնավոր պահերին, միլիցիայի մի միկրոբուս գալիս է կանգնում բնակարանիդ առջև։ Մեջը նստած դետեկտիվները աչքի տակ են առնում կասկածելի անձնավորություններին։

— Իրականում, տնտղում են կանանց սրունքները,— քմծիծաղով ասում է միլիցիոներ Ռոնը։ Որպես ձեռք առնված ապահովական միջոցներից մեկը, նա գալիս է ինձ մոտ։

— Շատ դետեկտիվներ, այժմ ոտքերը սեղանին դրած, ֆուտբոլի մրցություն են դիտում, բայց արի ու տես՝ ինչքան գործ են թափել գլխիս,— զանգատվում է նա։

Երբ մի—մի ժամ անցնում է իր գալուց, զգույշ տոնով խնդրում եմ իրենից՝ իմ բնակարանը ստուգման ենթարկել ապահովության տեսանկյունից։

Մասնագետն անցնում է գործի և զննում տան բոլոր անկյունները։ Հինգ բոպեից ավարտում է իր գործը։

— Շատ հանգիստ կարող են ներս մտնել,— ասում է նա ու

շարունակում,— դու պետք է պատուհաններդ էլեկտրոնային սարքերով պատասպարես։

Հետո քարացած հայացքով նայում է իր դիմաց. «Նայի՛ր, ահա, քո պատշգամբից են ներս գալու, վերցնելու են համակարգիչդ ու տանդ պատերին Գորշ Գայլերի լոգունգներ են գրելու»։

— Այդ քո ասած էլեկտրոնային ապահովասարքերը ինչքա՞ն են նստելու ինձ վրա,— հարցնում եմ։

— Վստահ, մի հազար եվրոյից պակաս չի լինի։

— Այդքան գումար ես չունեմ։ Հենց քաքնվելն արդեն բավական թանկ է նստել վրաս։

Ի՞նչ անել։

— Ես մի եղբորորդի ունեմ, որ ապահովական սարքերի գործի մեջ է։ Թերևս կարողանամ նրա միջոցով մի «ստիկեր» քեզ համար դասավորել,— առաջարկում է Ռոնը։

— Ստիկե՞ր։

— Մի աֆիշա, որ մուտքիդ դռան վրա ես փակցնում։ Վրան նշված է, որ բնակարանը պատասպարված է ապահովական սարքերով։ Թերևս դա հավանական անկոչ հյուրերին հետ փախցնի։

Նոյեմբերի սկիզբն է։ Ներբզործնախարար Դեյկստայի հետ նստած ենք մի սեղանի շուրջ։ Նա ուզում է իմանալ Գորշ Գայլերի հետևում թաքնված «ինտելեկտուալ ուժերի» մասին։ Մտահոգված է Թուրքիայի միջամտմամբ Հոլանդիայի թուրք համայնքի գործերի մեջ։ Գորշ Գայլերի կազմակերպած հավաքներում միշտ ներկա է թուրք հյուպատոսը և նույնիսկ թուրք դեսպանը։

— Թուրքիո այս միջամտությունը խանգարում է ինտեգրացիան,— ասում է Դեյկստայը։— Մակայն, եթե այս մասին մի բան ես ասում, իսկույն մեր արտգործնախարարության ձայնը դուրս է գալիս։

Դեռևս երեք շաբաթ այս հանդիպումից չանցած՝ նախարար Դեյկստայը հղում է մի նամակ խորհրդարանին։ Նամակում նա եզրակացնում է, որ «Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի ակտիվիստները երկակի ուղեգիծ են բանեցնում»։ Մի կողմից նրանք ասում են, որ աշխատում են ինտեգրացիայի հաջողեցման համար, իսկ իրենց ներսում էմ. Հա. Փե.—ի տեսակետներին

ու գաղափարներին են հարում և իրականում գործում են որպես այդ թուրք քաղաքական կուսակցության Հոլանդիայի մասնաճյուղը: Գոյություն ունի «կազմակերպչական ու գաղափարախոսական կապ թուրքիո ծայրահեղ աջակողմյան ուժերի և Հոլանդիայի թուրքական համյանքի այն մարդկանց միջև, որոնք կազմում են Հոլանդիայի թուրքական ֆեդերացիան»: Այս նամակի հետևանքով, ներքին անվտանգության ծառայությունը հրահանգ է ստանում՝ թուրք համայնքի ծիրից ներս քաղաքական ծայրահեղական հոսանքների հսկողության տակ առնելու:

Մենք դրվում ենք Հոլանդիայի դիվանագիտական ապահովության դիվիզիայի, այսինքն՝ հոլանդական պետության ապահովական ամենաբարձր մարմնի հովանու ներքո: Մի օր ճաշից հետո, Ամստերդամում՝ միլիցիայի մի բաժնում, ես ու Մեհմեթը հանդիպում ենք դիվիզիայի աշխատող Փեյթեր Հոնդերսին:

Մի սենյակում, որ մեզ համար է ապահովվել, պետք է գրուցենք:

— Կարելի՞ է, որ Խերիթն էլ ներկա լինի, — հարցնում եմ ես: — Խերիթն իմ կապն է միլիցիայում:

— Ինչո՞ւ ես ուզում, որ նա ներկա լինի:

— Բնակա՞ն չի:

Դուքը պինդ գոցում է ու ասում.

— Ո՛չ, բոլորովին հնարավոր չի: Հիմա կբացատրեմ՝ ինչու: Ոստիկանության մեջ ո՛չ ոքի չպիտի վստահեք:

— Եվ այս բանը դիվանագիտական ապահովության դիվիզիայի պաշտոնյան է հայտարարում:

— Ցավում եմ, որ այդպես է, — ասում է Հոնդերսը: — Ես Չեզ խորհուրդ կտայի միլիցիայի ո՛չ մի աշխատողի հետ գաղտնի հարցերի մասին չգրուցեք: Նույնիսկ կասե՛ի՝ երբեք նրանց մի վստահեք: Դեռ ոչինչ չեղած՝ ձեր ինֆորմացիան անբաղձալի մարդկանց ականջին է հասնելու:

— Իսկ ինչո՞ւ հիմա ես մեզ այդ բանն ասում, — ասում է Մեհմեթը, — մենք հենց նորերս ենք միլիցիայի մոտ տեղեկանք սովել:

Հոնդերսը այսպես է նկարագրում մեզ սպառնացող վտանգը մեզ՝ գրքի հեղինակներին: Մեզ դիվայնացնելու, որպես չարական մարդիկ ներկայացնելու մտադրություն ունեն Գորշ Գայլե-

րը: Բորբոքիչ թուցիկներով ու ասեկոսեներով Փե. Քա. Քա.-ի հետ մեր կարծեցյալ կապերի մասին, նրանք ստեղծում են հույժ լարված մթնոլորտ: Այդպիսի մի մթնոլորտում պետք է զգույշ լինենք այն պատահական «խենթերից», որոնց կարելի է հանդիպել բոլոր շրջանակներում ու խմբերում, և որոնք համոզված են, որ մեզ այն աշխարհն ուղարկելով՝ Ալլահին մեծ ծառայություն են մատուցում: Պատահական հանդիպում մեզ հետապնդողների հետ, նույնպես վտանգավոր հանգամանք է: Քանզի ցատկով տարված այդ մարդիկ կարող են ցանկացած պահ ամեն ինչ էլ անել:

Իսկ ինքը ի՞նչ խորհուրդ կտա մեզ:

— Երբե՛ք նույն ճանապարհով տնից մի՛ հեռացեք կամ տուն վերադարձեք: Միշտ զգո՛ւ եղեք: Եվ հատկապես ձեզ ցույց տալուց, հրապարակայնությունից խուսափեք: Եթե որևիցե տեղում ելույթ եք ունենալու, թույլ մի՛ տվեք, որ հայտարարեն: Հնարավորին չափ անանուն ու անճանաչ գործեք, — Հոնդերսն ապա խոսքն ուղղում է ինձ ու հարցնում, — ինչո՞ւ միառժամանակ չես զբաղվում մոդայի մասին թղթակցությամբ:

Մեզ տրվում է մի «ՎԻՊ»՝ ազդանշանի սարք ու մի հեռախոսահամար, որով կարող ենք գիշեր-ցերեկ զանգել: Չանգելու դեպքում սպառազինված մի ջոկատ ճանապարհ է ընկնում նշածդ վայրը:

Միլիցիայի բաժնում ինձ համարյա լավ եմ զգում: Խոսք եմ բացում վարձկան մարդասպանի մասին:

— Հավատալս չի գալիս, — ասում եմ: — Քրեական հետախուզական ծառայությունը իրենից բաներ է հնարում, — ու Հոնդերսի երեսով եմ տալիս, — դու ինքդ ասում ես, որ միլիցիային չպիտի հավատալ:

— Բայց այս ինֆորմացիան ճիշտ է, — ասում է նա: Չերբակալման ժամանակ վարձկանի գրպանում գտնվել է մի տոմս՝ Մերվեթի հեռախոսահամարով:

Հոնդերսից ստանում ենք մի թղթապանակ՝ «գաղտնի» կնիքով: Կազմի վրա նշված է՝ «Ապահովության խորհուրդ՝ տիկին Էս. Էմ. Էմ. Բրամի ու պրն Էմ. Ուլգերի համար. 11 նոյեմբեր, 1997»: Ուղարկող-հրատարակչի մասին ոչինչ չի նշված:

Հատվածներ թղթապանակից. «Դուք պետք է ձեր մեջ զար-

գացնեք առողջ անվստահության զգացում, մի տեսակ շարունակական զգոնություն և արթունություն և դա դարձնեք ձեր բնավորության գիծը: Կարևոր է, որ ցուցաբերեք անկանխագուշակելի, անկանոն վերաբերմունք»: Տրամաբանական խորհուրդ է, սակայն շուտ ոգևորվելու պատճառ չկա: Տեսեք, ինչպե՞ս է շարունակվում դա: «Գործնականում, այդ բանում ձեզ պետք է օգնեն առաջին հերթին ձեր անմիջական շրջապատի մարդիկ, ինչպես ձեր հարազատները, ընկերներն ու գործակիցները»:

Ուրեմն, մի ամբողջ բանակ պիտի զորակույի ենթարկենք: «Հարկ եղածն արեք, որ մթում վերադառնալիս, մուտքի վայրը լուսավորված լինի, և տնեցիները կամ գործակիցները տեղյակ լինեն ձեր գալուց»:

Իսկ հետևյալ խորհրդի մասին հարևաններն ի՞նչ պիտի մտածեն. «Երբեք ուղղակի մի՛ գնացեք նստեք մեքենայի մեջ, այլ նախ ուշադիր շրջապատը զննեք: Ուշադիր եղեք օտարուտի, անստվոր իրերից, ստուգեք մեքենայի տակը, դուրս ցցված ինչ-որ իր փակցված չլինի: Լավ զննեք ավտոդողերը, նայե՛ք անվահեծերի ներսը»:

Ի՞նչ ուշագրավ խորհուրդ. թե դա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ ավտոյում ռումբ տեղադրելու մեթոդյա կատարելագործված տեխնիկաների դիմաց, հարց է:

Խորհուրդների շարանը, սակայն, շարունակվում է. «Այն ժամանակները, երբ դուք ձեր նամակներն անհոգ բացում էիք, անվերադարձ անցել են: Ռումբ պարունակող ծրարներն այսօր կարելի է բավական բարակ պատրաստել: Ծրարը պահելով լույսի դիմաց՝ կարելի է պարզել նրա բովանդակությունը: Այսուհետև, յուրաքանչյուր նամակից պիտի հոտ քաշեք: Կան պայթուցիկներ, որոնք նույնի հոտ են տալիս»:

Պետական անանուն թղթապանակն այսպես է ավարտում իր խորհուրդները. «Անհուսալի մի կացության մեջ դիմադրություն ցույց մի՛ տվեք»: Այլ խոսքով, թողեք, որ ձեզ հոշոտեն:

Մեր տեղեկանքներից հետո մեզ սպառնացողներին ձերբակալում են: Ամիսներ են անցնում, բայց ոչինչ չենք լսում:

Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի հայտարարած «դատական գործերի հեղեղից» շատ բան չի նկատվում: Մի-

միայն Իբրահիմ Չիֆլը արագացված մի դատ է բացում մեր դեմ: Դատ բացելու պահին Չիֆլը ներկայացնում է Քրիստոնյա-դեմոկրատ կուսակցություն – Սե. Դ.Ե. Ա.⁸-ն Բոս Էն Լոմեր քաղխորհրդում: Նա նույնպես զբաղեցնում է «մեկերտ» կոչված աշխատատեղի՝ Ամստերդամի թուրքական մշակութային կենտրոնում, որը Հոլանդիայի թուրքական ֆեդերացիային կից մի կազմակերպություն է: Բայց արդյո՞ք իրոք Չիֆլն է, որ մեր դեմ դատ է բացում: Թվում է, թե վերոհիշյալ ֆեդերացիան է, որ Չիֆլին առաջ է գցում տեսնելու համար, թե դատն ինչպե՞ս է առաջ ընթանում: Չիֆլը պահանջում է ո՛չ միայն գրքում իր մասին արված նշումի ուղղում (նա պնդում է, որ ինքը Գորշ Գայլ չէ), այլ այն, որ գիրքը միանշանակ արգելվի:

1998 թվի փետրվարի 6-ին Ամստերդամի դատարանը որոշում է արձակում, որ ուղղման հարկ չկա և ոչ էլ որևիցե պատճառ կա խնդրո առարկա գիրքը շրջանառությունից հանելու:

Անցնում է:

Մի երեկո հեռախոսս զանգում է. «Փեյթերն է քեզ հետ խոսում»: Պետական դիվանագիտական ապահովության ծառայության Փեյթեր Հոնդերսն է:

— Ի՞նչ եմ լսում, — ասում է: — Ելույթ ես ունենալու Դևենտերի թատերասրահո՞ւմ:

— Որտեղի՞ց իմացար, — հարցնում եմ ապշած: — Այդ մասին ոչ մի տեղ ոչինչ չի հայտարարվել: Ես ճշտորեն հետևել եմ գաղտնապահության մասին տրված ցուցումներին և թույլ չեմ տվել, որ իմ ելույթը նախապես հայտարարվի:

— Մենք ամենուրեք ունենք ականջներ ու աչքեր, — պատասխանում է նա: — Իսկ ինչի՞ համար ես գնում և ի՞նչ ես ասելու:

— Կանանց օրվա կապակցությամբ խոսելու եմ անբավարար կրթված, թերուս կանանց աշխատանքային դրության մասին: Թեման ոչ մի կապ չունի Գորշ Գայլերի հետ:

— Համենայն դեպս, նրանք ամենևին ուրախ չեն քո՝ այնտեղ հայտնվելուց: Բարեհաճի՛ր զանգահարել Դևենտերի միլիցիային:

Չանգահարում եմ.

— Չե՞ս կարող ելույթդ չեղյալ հայտարարել,— հարցնում է գծի այն կողմի միլիցիոները:

— Ինչո՞ւ:

— Ինքդ պիտի լավ գիտենաս: Այս քաղաքում կա Գորշ Գայլերի ուժեղ մի կորիզ:

Ես որոշումս չեմ փոխում: Իսկ Դևեմտերի ոստիկանությունը ոտքի է կանգնած:

Երբ ես թատերասրահի տնօրեն, համակրելի Վիմի հետ ներս եմ մտնում թատրոն, երկու միլիցիոներ մեզ ուղեկցում են: Նրանք մեզ հայտնում են, որ քաղաքապետը տանը պատրաստ մտած է հեռախոսի կողքին:

Ելույթս սկսվում է: Սրահում մտած կանայք սենոված հայացքով նայում են բեմին: Ջարմացած են: Բեմում կանգնած են երկու ոստիկան իմ հետևում՝ ինձ հսկելու համար: Ելույթի ավարտին ոստիկաններն անմիջապես Վիմին քաշում են մի կողմ ու ասում. «Իրեն տար հասցրու կայարան, այլապես՝ մենք դա կանենք»:

Սրահի հետևի ելքից մեզ առաջնորդում են դեպի դուրս: Ինչքան էլ, որ լավ մտադրությամբ էի ընդառաջել ելույթի հրավերին, միանգամից, սակայն, կորցնում եմ վերստին ելույթ ունենալու փափագս:

Մարտ, 1998: «Կաֆե – 2001»-ի սեփականատերերից մեկի սպանության մասին գոյություն ունեցող թյուրիմացությունը միտքս զբաղեցնում է: Ի՞նչ են մտածում այժմ այդ մասին կաֆեի մարդիկ: Ես և քարտուղարուհիս՝ Անյան, որոշում ենք մախ կացությունն ստուգել: Անյան հանձն է առնում մի երեկո գնալ սրճատուն: Վստահության համար ես մնում եմ տանը:

Սրճատնում ոչինչ չի փոխվել: Մաշված կահույքը, նարնջագույն լամպերը և պատից կախած օրացույցը՝ թուրքական դրոշակով, իրենց տեղումն են: Իր տեղումն է նաև անկյունում դրված հին, ճկճկացող խաղասեղանը և նույնիսկ պատին փակված ծանուցումը. «Ձենք կամ թմրեցուցիչ կրելը, կամ առք ու վաճառքն արգելվում է»:

Սրճարանը հազիվ ներս մտած՝ կաֆեի տեր Ֆահրի է-նի վրա է տալիս Անյային.

— Էդ անաստված շունը, էդ քո զիբիլ ... շեֆը ..., էդ, էդ լրագ-

րող Բրամը: Մենք գիտենք, որ դու նրա համար ես աշխատում: Նա պատասխանատու է իմ եղբոր մահվան համար:

— Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս: Ո՞վ է քեզ այդպիսի բան ասել:

— Մերվեթը:

— Ա՛յ մարդ, քեզ միամտացրել է:

— Բայց եղբորս անունը նշված է գրքի մեջ, չէ՞:

Վեց թուրք տղամարդ շրջապատում են իմ քաջ աշխատակցուհուն: Երկուսը կանգնում են դռան մոտ՝ հսկելու: Անյան զգում է մի իրի սեղմում՝ իր մեջքին: Թվում է, թե հրազեն է:

— Հայդե՛, գնում ենք Չանդամ*,— ասում է նրանցից մեկը,— շեֆն ուզում է հետդ խոսել:

Չանդամում Անյային տանում են գիշերային մի ակումբ: Մերվեթն այնտեղ մտած է մի սեղանի շուրջ: Անյային առաջնորդում են դեպի սեղանը: Մերվեթը շրջապատված է մի խումբ պատանհներով, որոնք ասում են՝ ինչ որ բերաններին գալիս է. «Ինչ զիբիլ է այդ քո շեֆը», «Դեռևս գործ ունենք իր հետ», «Իրեն ասա, որ դեռ հաշվին հասնելու ենք», «Նրա ձեռքերն արյունոտ են», «Նա պատասխանատու է մեր ընկերոջ մահվան համար» և այլն:

Հաղթական ժպիտով Մերվեթը լսում է այդ բոլորը:

— Լսել եմ՝ շեֆդ մի նոր գրքով է զբաղված, ճի՞շտ է,— հարցնում է նա Անյայից:

— Ո՛չ:

— Ուրեմն նա զբաղված է դարձյալ մեզնով:

— Ո՛չ:

Հարց ու փորձն ավարտվելուց հետո Մերվեթը նշան է անում իր գայլերի ոհմակին: Անյային կարող են վերցնել ու տուն վերադարձնել: Հարկ չկա, որ իր տան հասցեն ասի: Ուղղակի բերում, հասցնում են իր դռան առաջ ու իջեցնում: Սպասում է՝ մինչև մեքենան հեռանա: Երբ ուզում է դուռը բացել, նկատում է, որ բանալիները չկան:

Տեղականը է տալիս ու այդ առթիվ այլևս ոչինչ չի լսում:

Հետագայում, 2001 թվականին, Մերվեթի դեմ հարուցված մի դատական գործի ընթացքում, այս «դեպքի» մասին Մերվեթը հետևյալ բացատրությունն է տալիս. «Այդ Անյան ինձ սիրում էր, նույնիսկ ուզում էր ինձ հետ անկողին մտնել»:

Հարցը մնում է չլուծված: Ոստիկանությունը պատրաստ է միջնորդել մեր և սպանված մարդու եղբոր՝ Ֆահրիի միջև: Սակայն, երբ Ֆահրիին «միլիցիա» բառը լսում է, մերժում է. իր սրճատնում չի կարելի:

Թերևս մի հոգի՝ հանցագործ աշխարհից, մեզ կարողանա օգնել: Սկսում ենք փնտրել: Ո՛չ ոք պատրաստ չի իր մատներն այրել այս բանի համար: Մի ճանապարհ է մնում միայն. անձամբ Ֆահրիի հետ զրուցել: Ապահովության հարցը Անյան իր վրա է վերցնում:

Գտնում է Թեո անունով մի հանցագործի և իր նման մի թուրքի: Նրանց մեզ հետ ենք վերցնելու մի որոշակի ապահովության համար: Սակայն Ֆահրիի հետ մենք ենք ուղղակի զրուցելու: Թեոյի ու թուրքի ուղեկցությամբ, որն իրեն ներկայացնում է որպես Գորշ Գայլ, ես և Անյան մտնում ենք սրճատուն: Իմ մուտքը Ֆահրիին վրդովեցնում է:

Թուրքերն սկսում են իրար հետ խոսել: Թեոն անհանգիստ նայում է դռան կողմ: Ուզում է ինչքան շուտ՝ այդտեղից հեռանալ: Թուրքերի աղմուկի պահին կամացուկ շշմջում է. «Ոչինչ չեմ հասկանում իրենց ասածներից, ու մթնոլորտն էլ ինձ դուր չի գալիս: Թե իմանայի էսպես էր լինելու ... Ինչի՞ քո հիմարությունների պատասխանը ես պիտի տամ»:

— Հիմարություն:
— Բա ի՞նչ: Էդ ո՞ր խենթը Գորշ Գայլերի մասին գիրք կգրի: Վերջապես Ֆահրիի հետ նստում ենք զրույցի: Ես աշխատում եմ նրան համոզել, որ որևէ կապ չունեն իր եղբոր մահվան հետ: Անյան և թուրք հանցագործը թարգմանում են մեր ասածները:

— Ես որևէ մեղք չունեմ այս բանում,— կրկնում եմ ես,— Մերվեթը չարաշահել է քո զգացմունքները: Քո եղբոր անունը երբեք գրքում չկա:

Կոտրտված հոլանդերենով Ֆահրիին ասում է.
— Ես էլ պրոբլեմ քեզնից:

Ասածը փաստելու համար իր տաբատը ցած է քաշում ու ցույց տալիս իր սեռականը, որը կրում է հրազենով կրակոցի վնասված: Ուղղակի խփել ու ծակել են ամորձիքները:

Թեոն արդեն չի համբերում. «Հո էլ չե՞ս կարա ամեն ինչի համար նրան մեղադրել»:

1998-ի նոյեմբերի 9-ն է, Քրիստալնախտի¹⁰ հիշատակման օրը: Այդ կապակցությամբ Ամստերդամի քաղաքապետարանի սրահում կազմակերպվել է Ֆորում, բանավեճի երեկո փոքրամասնությունների մասին: Բանավեճում մասնակցող հրավիրյալներից մեկն էլ ես եմ:

Ճշգրտորեն հետևելով պետական ապահովական ցուցումներին՝ կազմակերպիչներից խնդրել եմ, որ իմ անունը չհայտարարեն: Սակայն մուտքի մոտ տեսնում եմ մի քանի ծանոթ դեմքեր՝ Գորշ Գայլեր: Նրանցից մոտ տասնհինգ հոգի ներկա են միջանցքներում. մի քանիսը տեղ են գրավում սրահում: Թուրքական հեռուստակայան (ԹՈՍԻ) ֆոտոլրագրող անձնակազմն էլ ներկա է: Գորշ Գայլերի հեռուստական անմիջապես սկսում է ինձ պատկերահանել: Ֆորումի կազմակերպիչները կանչում են միլիցիային: Երեկոն բացվում է ոստիկանների ներկայությամբ: Դրանից քիչ անց, թուրքական հեռուստակայանը հեռարձակում է իմ պատկերները:

Համահեղինակ Մեհմեթն էլ հեշտ չի պրծնում: Նայմեխեն քաղաքի «Կաֆե 044» սրահում հրավիրվել էր ելույթ ունենալու: Երբ սրահում սպասում էր երեկոյի բացմանը, զանգում է հեռախոսը: Մեհմեթին են կանչում: Գծի այն կողմից մի հոգի ասում է. «Եթե ելույթ ունենաս, մարդ ենք ուղարկելու»: Այնտեղ էլ երեկոն անցնում է միլիցիայի ներկայությամբ՝ սրահում:

Կարճ ժամանակ դրանից անց, Մեհմեթը պատվեր է ստանում հոլանդական լրատվական ծառայության՝ Ա. Էն. Փե.—ի համար մի հակա-Փե. Քա. Քա. ցույցի մասին ռեպորտաժ պատրաստելու: Քայլարշավի ընթացքում մի Գորշ Գայլ՝ Գյուվեն Իշչի անունով, հարձակվում է Մեհմեթի վրա և ուժեղ հարվածներ հասցնում: Այս Իշչին գտնվում է Ուտրեխտ քաղաքի քաղխորհրդի ընտրական ցանկում:

Միլիցիան վերջապես հասնում է: Մեհմեթն այս դեպքի մասին տեղեկանք է տալիս ու ոչինչ այդ մասին չի լսում:

Միաժամանակ, ինտերնետում՝ իմ դեմ սկսված կեղտոտ կամպանիան շարունակվում է տեղափոխվել տեմպով: Իմ լուսանկարները հրատարակվում են: Ինձ ինչ ասես՝ չեն անվանում. «Կարմրաթշիկն ու Գայլերը»¹⁰, «Նեո-ստալինիստ», «Աջակող-

մյան դրածո ...» և այլն: Այս կամպանիան վարում է ոմն Մոհամմեդ-Էլ-Ֆերս, մի կես եգիպտացի գրող, որը համագործակցում է Գորշ Գայլերի հետ: Այսպես, Էլ-Ֆերսը կապված է Թյուրքևի (թուրքական տուն) հաստատության հետ: Այս թուրքական տան նախագահ (մինչև 1 հունվար 2002) Վեյիս Գյունգյորը Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի երիտասարդական բաժնի հիմնադիրներից էր: Անցյալում նմանապես նա ակտիվ է եղել Էմ. Հա. Փե.-ին կից կազմակերպություններում:

Էլ-Ֆերսը թուրքական «յաղը գյորուշ»¹¹ կոչվող ընթերցարար տարածողներից է: Այս ավանդական սպորտն արդեն մի քանի տարի է, որ մուտք է գործել Հոլանդիայի թուրքերի մեջ: Բացի այդ, նա տեղագրվել է տեմպով հրատարակում է գրքեր, որոնց շարքում «Ուղեցույց Ստամբուլի մասին», Դուրանի թարգմանությունը հոլանդերենով և «Ինչքա՞ն են վտանգավոր թուրքերը» հետազոտություն և գրույցը:

Այս վերջին գրքի՝ «Ինչքա՞ն են վտանգավոր թուրքերը», համահեղինակն է հոլանդացի Կրիս Նիբերինգը: Գիրքը հրատարակվել է 1998 թվին, Ամստերդամի համալսարանի համագործակցությամբ – առնվազն այնպես, ինչպես շապիկի տեքստն է հայտարարում: Նիբերինգը Ամստերդամի համալսարանի հոգեբանական ֆակուլտետում, ֆակուլտետից անկախ՝ «Ա և Օ հետազոտական կենտրոնի» աշխատող է եղել:

Նիբերինգի կարիերայի կենսագրականը, սակայն, չի համապատասխանում իրականությանը: Չանգում ենք վերոհիշյալ հոգեբանական ֆակուլտետի վարիչ Փիթեր Կորտենբախին պարզաբանության համար: Նա ասում է, որ Նիբերինգն այլևս Ամստերդամի համալսարանի աշխատող չէ: Ի՞նչ է պատահել: Գրքի հրատարակման ժամանակ Նիբերինգն այլևս համալսարանում չի աշխատել ու պարզապես չարաշահել է համալսարանի անունը: Սակայն այս, այսպես կոչված, համալսարանի աշխատողի շնորհիվ, գիրքն ստանում է գիտական երանգավորում: Կորտենբախը դժվար կացության մեջ է հայտնվում, իր ասելով, «ուլտրա-ազգայնամուլ թուրքերի գրքով, որոնք հրատարակել են գիրքը՝ իբր համալսարանի աջակցությամբ»: Համենայն դեպս, ըստ գրքի հեղինակի, տեղի է ունեցել 180-ի չափի հարցազրույց՝ սրճատներում, դպրոցներում ու մզկիթներ-

ում: Իսկ ո՞վ է ընտրել այս վայրերը հարցազրույցի համար. վերոհիշյալ թուրքական տունը, Թյուրքևին, որը նաև հրատարակել է գիրքը: Իսկ սրան ֆինանսավորել է Վեստերփարկ քաղաքամասի խորհուրդը: Նույնիսկ 2002 թվականին, Թյուրքևին ստացել է 11,800 եվրո նպաստ:

Գրքում փորձում են հավակնել, որ մեր թաքնվելը նախապես ծրագրված հրապարակայնության մի խաղ է եղել: Հեղինակները գրում են, թե նրանք քայլելով անցել են մեր հրատարակչության շենքի առջևից: Բաց մնացած պատուհանի ճեղքից լսել են բարձրաձայն գրույց: Մուշի միջից նշմարել են դեմքեր. Ստեյլա Բրամն է, Վիկ ֆան դե Ռեյթը և Մեհմեթ Ուլգերը: Շամպայնի շշի խցանի ձայնը սփռվում է ամստերդամյան գիշերվա մեջ: Իբր թե մենք ասել ենք, թե մեր «Գորշ Գայլեր» գրքով թուրքերին ամենուրեք հանցագործ ենք ներկայացրել և, որ լրատվական միջոցները մեր եզրակացությունները «միանշանակ» ընդունել են:

Հեղինակները շարունակում են. «Բրամի և Ուլգերի գրքից հետո յուրաքանչյուր հոլանդացու աչքին ամեն մի թուրք չարական մի ֆաշիստ է: Նրանք մեզնից վտանգավոր մի կարիկատուրա են գծագրել: Ավելի լավ կլիներ, որ «հոլանդացի ժուռնալիստները մեր Գորշ Գայլի հետ զբաղվելու փոխարեն մի քիչ լրջորեն զբաղվեին իրենց հոլանդական ֆաշիստական Առյուծի հետ»: Եվ վերջապես. «Բավական է, որ մի տաք գլուխ մեկը իրենց մի տեղ հանդիպի: Սակայն դա իրենք լավ գիտեին, երբ իրենց գործն սկսել են: Այդ ռիսկն իրենք գիտակցորեն են ընդունել»:

Այս գրքում նշված ոմն մի թուրք, որն իրեն Գորշ Գայլ է անվանում, հայտարարում է, որ մեզ «պետք էր դատապարտեին ու բանտը նետեին ժողովուրդների մեջ ատելություն սերմանելու համար»: Ու հետո շարունակում է.

— Գերմանիայում, վերջին հինգ տարիների ընթացքում, թուրքերի դեմ շատ ավելի հարձակումներ են տեղի ունեցել, քան հրեաների դեմ՝ Հիտլերի իշխանության գլուխն անցնելուց հինգ տարի առաջ: Միայն դա բավական է, որ իդեալիստներն ակտիվորեն պայքարեն այն մթնոլորտի դեմ, որ ստեղծվել է այսպիսի ծիծաղելի հրատարակությունների հետևանքով: Չկարծեք, որ

մենք խոնարհաբար կսպասենք, մինչև որ մեզ նորից այսպիսի մի բան պատահի: Մեզ չշփոթեք հրեաների հետ:

Համաձայն Էլ-Ֆերսի ու Նիբերինգի, գոյություն ունի «նեո-Ստալինիստական մի ցանց»՝ Հոլանդիայի լրատվական միջոցների, քաղաքական ղեկավարների շրջանակներում ու համալսարաններում: Այս համագործակցության ցանցը, ըստ վերոհիշյալ գրողների, տարածում է քաղաքական կողմնակալ հայեցողություն, հրատարակում է իրավիճակն «անկայունացնող» գրքեր, վիժեցնում է «ինտեգրացիան քաջալերող» հետազոտական աշխատանքները, և այսպիսով, պառակտում ստեղծում թուրք համայնքի մեջ:

2000 թվականի աշունն է: Հակառակ արդեն 1997-ին մեր տված տեղեկանքների, մեզ սպառնացողները ազատ են արձակված: Սակայն դրությունը հանդարտվել է: Էմոցիաները այլևս բորբոքված չեն, ինչ, որ մեզ համար հույժ բաղձալի է:

Ներքին անվտանգության ծառայությունը (Բե. Ֆե. Դե.) այժմ՝ Ա. Ի. Էն. Դե., տակավին «հսկում է» Գայլերին: Արդյո՞ւնքը: Ծառայությունը նկատել է «սերտ կապեր» Հոլանդիայի թուրքական ֆեդերացիայի և Թուրքիո Էմ. Հա. Փե. կուսակցության մեջ: Այս կապը հստակորեն երևում է այն իրողությունից, որ Էմ. Հա. Փե.-ի պաշտոնյաները, Հոլանդիայում տեղի ունեցած ֆեդերացիայի վերջին համագումարի ընթացքում, միջամտել են հիշյալ ֆեդերացիայի նախագահական ընտրությունների մեջ:

— Սակայն, լավ լուրեր էլ կան,— գրում է Բե. Ֆե. Դե.—ն իր 2001 թվականի տարեկան զեկույցի մեջ:— Գայլերին չի հաջողվում իրենց համակիրների թիվն ավելացնել: Թվում է, թե նրանց չնվազված ուշադրությունը դեպի Թուրքիա, ինքնին պատճառ է դարձել նրանց շարժման առավել մեկուսացմանը՝ Հոլանդիայում:

Իրոք այդպե՞ս է: Գերմանիայում այս մասին բոլորովին ուրիշ կարծիք ունեն: Նայենք, օրինակ, Բադեն-Վուրտեմբերգ նահանգի հետախուզական ծառայության 2000 թվականի զեկույցին: Ըստ այս գերմանական ծառայության, Եվրոպայի թուրքական ֆեդերացիան, որն համախմբում է Եվրոպայի Գորշ Գայլ կազմակերպություններին, «հիմնվելով այն գաղափարաբանության վրա, ըստ որի թուրք ցեղն ամենից բարձրն է,

աճող տեմպով ազգայնամոլություն ու բացահայտ ռասիզմ է քարոզում»: Այս գաղափարաբանությունը նույնպես, «թուրք լինելն» ու «մուսուլման» լինելը այնպիսի ձևով է շաղկապում իրար, որ մյուս կրոնները համարվում են ստորադաս: Նմանապես, «ժողովուրդ-ազգ» բառն այնպիսի մի իմաստով է գործածվում, որ բազմակարծիք մի հասարակության գոյությունը բացառվում է, և բացեիբաց թշնամանք է պրոպագանդվում, օրինակ՝ քրդերի դեմ: Այս բոլորն առնվազն կասկածի առիթ է տալիս այն խաղաղասիրական հայտարարությունների մասին, որ ֆեդերացիայի ղեկավարությունը երբեմն-երբեմն անում է: Գերմանական հետախուզական ծառայությունը նույնպես մատնանշում է Գորշ Գայլերի բռնություն կիրառելու տրադիցիան:

2000 թվականի նոյեմբերի վերջին ինձ զանգահարում է «Այսօր» հեռուստակայանի մի լրագրող ու ասում. «Կարևոր լուրեր ունեմ. Գորշ Գայլերի մասին է և հույժ գաղտնի»:

Լրագրողն ուզում է անձամբ ինձ հետ խոսել: Ճաշի ժամերին հայտնվում է ինձ մոտ: Սկզբում բառերը ծամծմում է: Հետո. «Մտադիր են Գորշ Գայլերին ձերբակալել: Հենց նրանց, որ գրքումդ նշել ես»:

Խոսքը Սերվեթի ու Թահսիմի մասին է: Ուրեմն, դարձյալ մեր ուղիները խաչաձևվում են:

Ինչ որ լսում եմ, տեղի է ունենում: Չարմանալի է, որ կասկածյալները ձերբակալման ժամանակ տանն են: Այս գաղտնի ինֆորմացիան հասնում է նաև «Դը Թելեխրաֆ»¹² օրաթերթին: Երբ նոյեմբերի 28-ի կանուխ առավոտյան Սերվեթին իր անկողնու միջից հանում ու տանում են, թերթի լրագրողները կազմ ու պատրաստ ներկա են դեպքի վայրում: Թերթի առաջին էջում տրվում է լուրը: Նկարում Սերվեթն է՝ աչքերը կապած գիշերաչին զգեստով, որին երկու ոստիկաններ իրենց մեջ առած տանում են: Խորագիրը. «Գորշ Գայլերի պարագլխին անկողնու միջից ձերբակալել են – Ամստերդամի ոստիկանությունը մեծ հարված է հասցրել ահաբեկչական այս խմբակցությանը»:

Ամբողջությամբ 23 մարդ է ձերբակալվել, որոնցից տասնչորսը օպերատիվ թիմերի միջոցով: Այս մաքրագործման ակցիային մասնակցել են երեք հարյուրի չափ միլիցիոներներ:

— Չերթակավածները տարբեր չափերով ու մեղադրանքներով կասկածվում են, ի շարս այլոց սպառնացումի՝ դրամաշորքության, անօրինական ազատագրկման, հրազեն ունենալու և քմբիրի առևտրի մեջ,— տեղեկացնում է Ամստերդամ-Ամստելլանդ միլիցիայի հաղորդագրությունը:— Առգրավված իրերի շարքում են տասնհինգ հրազեն, քմրամիջոցներ և այլն:

Նույնիսկ Չեյրուրխերդեյկ քաղաքամասում գտնվող թուրքական ֆեդերացիային պատկանող մեծ մզկիթ Ուլու Ջամին խուզարկման է ենթարկվում: Քանի որ սա տեղի է ունենում Ռամազան ամսում, որը մուսուլմանների ծոմի ժամանակն է, կրքերը բորբոքվում են: Մզկիթ հաճախողները շտապ դատ են բացում Հոլանդիայի կառավարության դեմ, սակայն պարտվում են:

— Ուրիշ բան չէր կարելի անել,— հայտարարում է Ամստերդամի միլիտսի տեղակալ Յոպ Ֆան Ռիսենը նոյեմբերի 29-ին, էն. էս. էր. Հանդլսբլադ օրաթերթում: Իր ասելով՝ մարդկանց կյանքը վտանգի մեջ էր.

— Ի նկատի առնելով գործերի բնույթը և խնդրո առարկա մաֆիայի շրջանակներում արձակված «մահվան վճիռները», անհրաժեշտ էր: (...): Այս հանցագործ խմբակցության մոտ գտնվել են մեծ չափով Գորշ Գայլերին պատկանող նյութեր: Սա մի հանցագործ խումբ է, որ քաղաքական նպատակների համար թուրքական միջին դասի քաղաքացիներին սպառնում է ու դրամ շորթում նրանցից:

«Հեթ Փարոլ» թերթը քրքրում է եղելությունը: Դեկտեմբերի 8-ի համարում Կուրթ Ֆան Էսն ու Յոս Ֆերլանը «Ո՞վ է իր ձեռքերն այրում թուրքական մաֆիայի գործում» հոդվածում բացահայտում են, որ ոստիկանությունն արդեն վաղուց գիտեր, թե սպառնալիքները ո՞ւմ գործն է: Հոդվածում նշված է, որ 1997 թվի վերջին, «նետադեղ» հետախուզական հատուկ թիմը ներքին մի զեկույց էր պատրաստել: Ըստ «Փարոլի», «Հետախուզությունը պարզել է, որ սպառնացողները ազգությամբ թուրք են եղել և կապեր են ունեցել այն թուրքական ֆեդերացիայի հետ, որի կենտրոնատեղին գտնվում է Ամստերդամի Չեյրուրխերկեյկ քաղաքամասում»:

Չարմանքով ու ապշանքով ես ու Մեհմեթը կարդում ենք «Հեթ փարոլի» հոդվածը: Չէ՞ որ միլիցիան այդ բոլորն արդեն

գիտեր: Ապա, ուրեմն ինչո՞ւ համար են գործն այսքան քարշ տվել:

2001 թ. փետրվարի 19: Բջջայինս զանգ է տալիս: Ամստերդամի շրջանային դատարանի դիվանադպիրն է: Առանց նախաբանի ինձ հաղորդում է.

— Դուք կանչվում եք դատարան՝ վկայելու Սերվեթի ու Թահսինի գործում: Փետրվարի 27-ին դուք պետք է ներկայանաք դատարան:

— Ինչո՞ւ,— հարցնում եմ ես:

— Որովհետև գլխավոր կասկածյալների փաստաբանն է Չեզ կանչում:

Չգիտեմ՝ ի՞նչ պատասխանել: Չէ՞ որ դրությունը երկար ժամանակ հանդարտվել է:

— Ես՝ որպես լրագրող, օգտվում եմ իմ լռելու իրավունքից,— պատասխանում եմ ես՝ ինքնավստահ:

— Բայց տիկին Բրամ, դուք լռելու իրավունք չունեք: Ընդհակառակն, դուք որպես վկա պարտավոր եք խոսելու:

— Ներեցե՞ք:

— Դուք հարկադրված եք վկայելու: Եթե չներկայանաք, կարելի է Չեզ պարտադիր բերման ենթարկել և հնարավոր է՝ նույնիսկ պատանդ վերցվեք:

Արի ու տես ի՞նչ թանապուր են սարքել: Յուզմունք տալ երկու ծանր հանցագործի դեմ: Իսկ իմ ապահովության հա՞րցը: Ըստ դատարանի ատենադպիրի, այդ մասին էլ մտածել են: Իմ հասցեն թղթապանակիս մեջ չի նշվում: Այդ իսկ պատճառով էլ ատենադպիրն ինձ զանգահարում է: Դատարանը չգիտի, թե ես որտեղ եմ ապրում.

— Մի բույե սպասիր, փահ, այս ի՞նչ է,— լսում եմ գծի այն կողմից,— սա քո հասցեն չէ՞: Թղթապանակի միջից կարդում է իմ հասցեն:

Հաջորդ օրը զանգահարում է գործի նախաքննության դատավոր Խերթ Յանսենը: Ինձ խորհուրդ է տալիս համագործակցել: Այլապես հնարավոր է ինձ արգելափակեն դատարան բերելու համար:

— Եթե ուզում ես այս բանից խուսափել,— ասում է Յանսենը,— պետք է մշտապես աննշմարելի դառնաս:

Ինձ զանգահարում է նաև դատախազ Ֆրիթս Պոստյունուսը.
«Քո ցուցմունքը հույժ կարևոր է: Մենք քո վրա հաշիվ ենք անում»:

Պարզվում է, որ մեզ ոչ միայն գլխավոր կասկածյալների փաստաբանն է կանչում, այլ նաև դատախազը, դատավորը և մեկ խոսքով՝ բոլոր կողմերը:

Ի՞նչ է հարցը իրականում: Երեքուկես տարի տեղեկանք տալուց հետո, մենք՝ զանգատվողներս, պետք է ցուցմունք տանք, որպեսզի լավ չմշակված քրեական մի հետախուզություն փրկենք վիժվելուց: Մեր այս եզրակացությունն անհիմն չէ: Վերը նշված «Հեք փարոլ» թերթը, որն ուշադիր հետևում է դեպքերին, հարցազրույց է անցկացրել գլխավոր կասկածյալների փաստաբանների հետ: Ըստ նրանց հայտարարության, ոստիկանության այս հետախուզությունը մակերեսային հետազոտության մեթոդիկայի մի օրինակ է, քանզի դա հիմնված է միայն հեռախոսագանգերի ունկնդրման վրա:

— Իբր թե այդ մարդիկ հեռախոսով բան էլ ասում են,— քամահրում է Մեհմեթը:

Ատենադպիրի հեռախոսից հետո մենք շտապ խորհրդակցում ենք. «Մեր ապահովության համար ձեռք առնված միջոցները որո՞նք են»: Ահա մի քանիսը. «Բնակարանի հասցեն դուստուն չպիտի նշվի», «Ավտոմոբիլային հսկողություն», «Զգուշացնող ստիկեր՝ դռանը վրա», «Պետական մի տարօրինակ գեկուցապանակ՝ ժամանակավրեպ ապահովական խորհուրդներով», «Ելույթ՝ երկու միլիցիոներների մեջտեղում»:

Եվ հետո միանգամից կանչվում ես ցուցմունք տալու: Մենք դեռ չգիտեինք էլ, թե ի՞նչ ողորմելի իրավական դիրք ունի վկան, ցուցմունք տվողը՝ հոլանդական քրեական օրենքում: Ի տարբերություն կասկածյալի, վկան լռելու իրավունք չունի: Բացի այդ, վկան պարտավոր է ներկայանալ դատարան, մինչդեռ կասկածյալը կարող է չներկայանալ: Այսպիսով, վկաները, որոնք ոչ հազվադեպ տուժող կողմն են լինում, հարկադրվում են տուժել կրկնակի:

Իրականում իրավապահ մարմինները մեր տեղեկանքը չարաշահել են իրենց սեփական հետախուզության դուռը բանալու համար: Մենք երբեք այնպիսի գործերի մասին, ինչպիսին են՝

առևանգում կամ դրամաշորթություն, որով կալանավորված Գայլերն այժմ մեղադրվում են, բան չենք ասել:

— Այժմ, որ իրենք իրենց գործը տեղ չեն հասցրել, մենք պետք է ցուցմունք տանք,— ասում է Մեհմեթը՝ դառնացած:— Բանից դուրս է գալիս, որ լրագրողները, որոնք հանցագործ մի խմբակցության գոյությունը բացահայտում են, պետք է ներկայանան դատարան՝ փաստ ներկայացնելու համար:

Իրականությունն այժմ պարզ է մեզ համար. լրագրողը համարվում է վկա և ենթարկվում հարցաքննության: Որոշում են չհամազործակցել:

Մեր տեսությունը, որ մենք թերի մշակված քրեական մի թղթապանակի համար պիտի ներկայանանք, ճիշտ է դուրս գալիս: 2001 թվի մարտի 30-ին Հոլանդիայի ժուռնալիստների միության միջոցով վարձված իմ փաստաբաններ Քորին Դալեբաուք և Հերման Դուլեմանը հանդիպում են նախաքննության դատավոր Խերթ Յանսենին և դատախազ Ֆրիթս Պոստյունուսին: Հանդիպման նպատակն է իրավապահ մարմիններին համոզել, որ ինձ չպիտի ներգրավեն իրենց հետախուզական գործի մեջ: Իրավապահները, սակայն, չեն համոզվում:

Հետո փաստաբան Դալեբաուքը նամակով ինձ տեղեկացնում է այդ գրույցի արդյունքը:

— Դատախազը, ինչպես նաև նախաքննության դատավորը, չեն փոխում իրենց որոշումը նույնիսկ այն տեսական դեպքում, որ դուք Ձեր տեղեկանքը հետ վերցնեք: Դատախազն իր տեսակետն այսպես է փաստարկում՝ Ստեյլա Բրամի, ինչպես նաև Ուլգերի տեղեկանքը այս գործի մեջ կարևոր էլեմենտներ են համարվում: Իսկ այժմ, որ կասկածյալներն ամեն ինչ հերքում են, նրանց դատական ծանուցման մեջ նշված սպառնալիքը «ամենածանր» մեղադրանքներից է: Ինչ վերաբերում է մյուս մեղադրանքներին, պետք է տեսնել, թե արդյոք դրանց փաստել կարելի՞ է, թե՞ ոչ: (...): Իսկ եթե դուք Ձեր տեղեկանքը հետ վերցնեք, շատ հավանական է, որ դատարանը, նույնիսկ այս սպառնալիքի վերաբերյալ ազատ արձակման վճիռ կայացնի, որով հետև պաշտպանյալներն ու դատարանը բավարար հնարավորություն չեն ունեցել Ձեր տեղեկանքների վստահելիությունը

քննության ենթարկել: (...), և այսպիսով միանգամայն հնարավոր է, որ կասկածյալներն ազատ արձակվեն:

2001 թվի հունիսի 8-ի, առավոտյան ժամը 7-ին, միլիցիան դռանս առաջ է:

— Քեզ չասացի՞,— հաղթական տոնով երիտասարդ միլիցիոները դառնում է իր գործընկերոջը:— Գորշ Գայլերի լրագրողուհին – ինքն է:

Իմ երեսի առաջ թափ են տալիս մի թուղթ. «Բերման հրաման»: Հղված Ամստերդամի շրջանային դատարանի կողմից:

Պետք է իրենց հետ գնամ: Մեքենան կանգնած է բնակարանիս առջև: Ոստիկանները նստում են առջևի նստարանին, իսկ ես՝ հետևի: Կողքիս դռները կողպում են: Միլիցիոները, որ դեկի հետևն է, ամենևին չի շտապում:

— Փո՛ւ, լրագրողին անկողնուց հանիր ու տար դատարան,— ասում է նա:— Ի՞նչ են ուզում ձեզնից:

Բացատրում եմ երկուսի համար էլ.

— Իրավապահ մարմիններն իրենց գործը հաջողեցնելու համար լրագրողներին ճնշման տակ են դնում: Հետախուզական մոլուցքի առաջ ամեն ինչ պետք է մի կողմ քաշվի, հատկապես, եթե հետախուզողներն իրենց գործը փչացրել են:

Օրենքով, հեռուստակայաններն իրավունք չունեն ֆուտբոլի մրցախաղերի խուլիգանների, ինչպես նաև ցույցերում մասնակցողների պատկերները հեռարձակել: Մինչդեռ լրագրողների դեմ զանգատվելը «գրպարտության» մեղադրանքով, սովորական բան է դարձել: Դատարաններում հաճախ հանդիպում ես այսպիսի լրագրողների: Կուն Ֆոսկաուլը, օրինակ, դատարանի կողմից արգելափակվեց, որովհետև չէր ուզում իր աղբյուրը բացահայտել:

— Հիմա իմ հերթն է,— ասում եմ ես:— Հարկադիր ցուցմունք պիտի տամ դատարանում՝ ընդդեմ Գորշ Գայլերի:

— Չանե՛ս,— ասում է երիտասարդ միլիցիոները, որը հայելու միջից ինձ է նայում,— թուրքերը շատ քիճուտ են. ես այդ գիտեմ փորձի բերումով:

Քառորդ ժամ մնացած ութին՝ հասնում ենք արդարադատու-

թյան պալատը: Մուտքի ուղեփակոցը բարձրանում է: Մեքենան ներս է մտնում ու գնում կանգնում է փակ մի տնակում: Երկու միլիցիոներ իրենց ատրճանակները հանում ու մի պողպատյա արկղի մեջ են դնում:

Ես առաջնորդվում եմ դեպի մեկուսարանների բաժինը: Սա խուցերի տաղտկալի մի համակարգ է: Որոշ տեղերում պատի ներկը ճաքճքել ու թափվել է: Պահակները բնավ չեն խորշում իրենց դժկամությունը թաքցնելուց: Առիթը բաց չեն թողնում իրար հետ վիճվելու:

Ինձ առաջնորդում են դեպի մի սեղանիկ: Սեղանիկի հետևում նստած է երիտասարդ մի հսկիչ: Արագ մի հայացք է նետում ինձ վրա, հետո սկսում է ուշադիր զննել մի թերթիկ ու դիմում իր առջևից անցնող մի գործակցի. «Ալլո՛, հե՛յ, այս տիկինը, խուց 30-ը՞ պիտի տարվի»:

— Այդտեղ նշված է, չէ՞,— կշտամբում է իր գործակիցներից մեկը:

— Խուց 30,— կրկնում է հսկիչը ու նշում անում մի կտոր թղթի վրա: Հետո վիրահատության մի զույգ սպիտակ ձեռնոց է դուրս բերում ու զցում սեղանի վրա: Համազգեստով մի կին դժկամությամբ հազնում ձեռնոցները է:

Միլիցիայի ավտոյի վարիչը, որն ամբողջ ժամանակ մոտս կանգնած է, ցնցված է: Նա կարծել էր, թե մինչև դատավարության սկսումը ես մի տեսակ մեկօրյա արձակուրդի մեջ եմ օրս անցկացնելու:

— Իրոք, հա՞րկ է, որ նա այնտեղ տարվի,— ասում է նա հսկիչներին,— այս տիկինն այդ գրքի գրողն է:

Երբ տեսնում է, որ ոչ ոք բան չի ասում, շտապ իր այցետոմսը բռնի մեջ է դնում ու ինձ ուժ և կարողություն մաղթում:

— Շարժվիր,— հրամայում են ինձ:

Ավելի ուշ, երեսս պատին պիտի կանգնեմ, ոտքերս չռած ու ձեռքերս՝ պատին դեմ տված: Սպիտակ ձեռնոցներ հագած կինը պատրաստվում է ինձ մարմնական խուզարկման ենթարկել: Ես բողբում եմ. «Ի՞նչ ես անում, ես հո հանցագործ չեմ»:

Առանց պատասխանելու՝ սկսում է իր գործը: Խուզարկում է գրպաններս, կոշիկներս, ապա՝ ակնոցս աչքերիցս վերցնում ու հրամայում է. «Կորսե՞րդ հանի՛ր»:

— Ի՞նչ, կորսե՞քս:

— Օրենքն է պահանջում:

— Այս պարոնների ներկայությամբ:

Դատախազության հինգ հսկիչներ հետաքրքրված՝ մեզ են նայում:

Կողքիս մի մարդու հրում են պատի դեմ: Իմ պայուսակը, կորսե՞քն ու ակնոցը դնում են մի պլաստիկ պարկի մեջ: Հսկիչներից մեկն ինձ առաջնորդում է: Անցնում ենք երկար մի միջանցքով, որի երկու կողմերում էլ կան խցիկներ: Բացում է խցիկներից մեկի դուռը: Ներս են մտնում: Դուռը փակվում է հետևումս:

Համար 30 խցիկը երկուսով երկու մի հավաքում է: Ընդամենը երկու-երեք քայլ կարող ես վերցնել: Հատակում թափված է աղտ ու փսխուճք: Պատերը լի են ձեռագիր նշումներով. «դեռևս տասնհինգ ամիս էլ կա», «ինչպե՞ս կարող եմ դիմանալ», «միայն Աստված կարող է ինձ դատել» և այլն: Մի կողմում կա անկողնու մման մի բան: Վրան քանդակված է մի մեծ կեռախաչ: Չեմ համարձակվում նստել: Առաստաղին մի օղափոխիչ կա, որը խցիկի միակ պերճանքն է: Այնտեղից թարմ օդ է ներս մղվում: Հարևան խցիկում մեկն աղաչում է, որ իրեն «մեթադոն»¹³ հասցնեն: Քիչ այն կողմից լսվում է ճիչ ու գոռոց. «Ինձ հանե՛ք այստեղից»:

Ինձ հանդարտ պահելու համար սկսում են փոքր քայլերով խցիկում շրջել: Մեծապես ցնցված եմ: Մեկուսարանում փակվել մի գիրք գրելո՞ւ համար: Ա՞յս է մեր զբաղմունքի վերջը:

Մոտավորապես ժամը տասին քառորդ պակաս, դռան փականքը շարժվում է ու բացվում:

— Տիկի՛ն Բրամ, համեցե՛ք դուրս,— լսվում է մի ձայն:

Խցիկիս դուռը բացվում է, և ես շրջապատվում եմ դատախազության հսկիչներով. «Իմ մասին էլ գրելո՞ւ ես», «Իմ մասին ի՞նչ»:

Ինձ տանում են մի պատուհանի առաջ: Իմ իրեղենները հետ են ստանում:

— Խնդրե՛մ, այս հարցաթերթիկն ստորագրե՛ք,— ասում է պատուհանի հետևի մարդը:

Հարցաթերթիկը «կասկածյալների» համար է:

— Երբվանի՞ց եմ ես դառել կասկածյալ,— բողոքում եմ ես:
— Տիկի՛ն Բրամ..., խնդրում եմ, շտապե՛ք, դատավորներն սպասում են:

— Նախքան ներս գնալս, ուզում եմ կորսե՞քս հագնել:

— Ցավում եմ, դրա համար ժամանակ չկա:

Դատարանի դուռը բացվում է: Մրահը լիքն է տեղեկատվական միջոցների ներկայացուցիչներով: Մրահի հակադրությունը խցիկի հետ այնքան մեծ է, որ ես մի պահ ինձ կորցնում եմ: Այնպես, ինչպես մութ մի սենյակից քեզ միանգամից բերեն վառ արևի տակ: Համարյա գլխապտույտ եմ բռնում: Ո՞ր պիտի գնամ նստեմ: Խարխափելով նստում եմ պատահական նստարանին: Այ քեզ բան: Ուղիղ նստել եմ կասկածյալ Թահսինի կողքին, որն ատելությամբ ինձ է նայում: Մոտ վեց ամիս նախնական կալանքի տակ է եղել: Երևի կարծում է, որ դա իմ մեղքն է: Չախ կողմում նստած է Սերվեթը, որը նույնպես մի վեց ամիս ճաղերի հետևում է անցկացրել: Մի այնպիսի հայացք է նետում ինձ վրա, որ կարծես թե արդեն վստահ է, որ այս անգամ էլ ազատ է դուրս պրճնելու:

Դատավորներն սկսում են հարցեր տալ: Ոչինչ չեմ հասկանում իրենց հարցերից: Միակ բանը, որ կարողանում եմ հասկանալ, այս է. «Ես ոչինչ չունեմ ասելու»: Ապա իմ փաստաբանուհի Դալեբաութն սկսում է իր պաշտպանական ճառը: Բացատրում է, թե ես ինչո՞ւ չեմ ուզում վկայել, և թե ինձ արգելափակելը դատարան բերելու համար անիմաստ գործ է: Դատավորներն ազդված են: Բոլորն էլ ընդունում են փաստաբանուհիս արգումենտները:

Հայացքս նետում եմ դատախազ Պոստյունուսի կողմը: Խուսափում է երեսիս նայելուց: Մեծ ճիգ եմ թափում, որ չճչամ գլխին. «Դու իմ տեղեկանքը չարաշահել ես»:

Հետախուզական միլիցիոներ Արենդը, որն ամեն ինչից քաջ տեղյակ է, պատրաստակամություն է հայտնել իմ փոխարեն ցուցմունք տալու, ինչ որ փաստաբանուհիս առաջարկում է դատարանին: Դատախազը, սակայն, զարմանալիորեն մերժում է առաջարկը: Ինչո՞ւ: Ասում է, թե «դա երկրորդ ձեռքի ցուցմունք է»:

Թահսիմն ու Սերվեթը, որպես ազատ քաղաքացիներ, լքում են դատարանը:

- 1 Ի նկատի ունի Երկրորդ աշխարհամարտը
- 2 Սոտավորապես կես միլիոն եվրո: Այստեղ խոսքը նախքան 2002 թվականի մասին է, երբ տակավին գործածության մեջ էր ազգային փողը:
- 3 Het Parol – հոլանդական օրաթերթ
- 4 NRC Handelsblad – հոլանդական օրաթերթ
- 5 De Volkskrant – հոլանդական օրաթերթ
- 6 V.I.P – շատ կարևոր մարդկանց համար պատրաստված մուտք, վայր կամ իր
- 7 Christen–Democratisch Appél (C.D.A.) – Հոլանդիայի ամենամեծ կուսակցություններից մեկը
- 8 Zandaam – Ամստերդամի հյուսիսում գտնվող քաղաք
- 9 Kristallnacht – Երկրորդ աշխարհամարտի նախօրեին, այդ օրը Բեռլինում հարձակման ենթարկվեցին հրեական հաստատությունները նացիների կողմից
- 10 Սոտավորապես նույն անունով հոլանդական մանկական հեքիաթ
- 11 Չիթոտ մարմնով ըմբշամարտ
- 12 De Telegraaf – հոլանդական օրաթերթ
- 13 Սինթետիկ ուժեղ բնրեցուցիչ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ak, Marih, "Türkes'in adayı partiyi karıştırdı". Cumhuriyet, 22 february 1996.
- Aleemi, J., Zur soziale und psychischen Situation von Bilingualen. Frankfurt a. M., 1991.
- Allochtonen in Nederland 1996. Centraal Bureau voor de Statistiek, Voorburg/Heerlen, juli 1996.
- De andere kant van Nederland. Over preventie en bestrijding van stille armoede en sociale uitsluiting. Ministerie van Sociale Zaken en Werkgelegenheid, november 1995.
- Autochtone, allochtone en buitenlandse criminele groepen. Enquëtecommissie opsporingsmethoden – Tweede kamer, vergaderjaar 1995–1996.
- Baelde–Van Hugte, G., en J. den Exter, Een ontwikkeling naar Fascisme. Scriptie, juli 1980.
- "Bayrak, Vatan, Allah", In: Ortadoğlu, 1 november 1996.
- "Belçika Ülkücü Türk Federasyon 5. Büyük kurultayı". In: Türkiye, 9 mei 1996.
- Beleidsplan. Turkse Federatie Nederland, oktober 1996.
- Bora, Tanil, Milliyetçiligin Kara Bahari. Birikim Yayinlari, 1995.
- Bora, Tanil, "Türkiye" de Milliyetçilik ve Azinliklar". In: Birikim, maart, april 1995.
- Bora, Tanil en Kemal Can, Devlet Ocak Dergâh. İletişim Yayıncılık, november 1994.
- Braam, Stella, en Mehmet Ülger, "De eer der Turken". In: De Groene Amsterdammer, 6 december 1995.
- "Çelik: Çatli ile devlet görevi yaptik". In: Emek, 30 Januari 1997.
- Çitil, İbrahim, Gurbet yazarlari 1 Kompozisyon yarismasi. Türk Kültür Merkezi, augustus 1993.
- Dereli, Murat, Başkanlar Konuşuyor. Yesi Yayinlari, 1996.
- "Devlet Ocak Dergâh: Birleşenler Ayrişirken". In: Birikim, augustus 1992.
- "Devlet savaşı uyuşturucu parasi ile finanse ediyor". In: Emek, 11 maart 1997.
- "Eroinin Ankara–Londra hattı". In: Emek, 1 february 1996.
- "Geç kalmış bir hesap". In: Nokta, 11 september 1988.
- "Gölhan: Devlet için kurşun atan bencede şeriflidir". In: Türkiye, 3 december 1996.
- "Görkemli kurultay". In: Türkiye, 13 mei 1996.
- "Grauwe Wölfe in die CDU", In: Der Spiegel, 43/1996.
- "Grijze Wolven slaan tentakels uit – comité beschuldigt Turkse politici van banden met extreem rechts". In: Trouw, 9 april 1997.

- "De Grijze wolven en de halve maan". In: Motief, augustus 1980.
- Hiçyılmaz, Semih, Susurluk ve Kontrgerilla Gerçeği. Evrensel Basım Yayın, maart 1997.
- "Kocam, Ağar' la tanışıyordun". In: Hürriyet, 25 november 1996.
- Landman, Nico, Van mat tot minaret. Amsterdam, 1992.
- "MHP mafyasıyla seçimde". In: Evrensel, 6 december 1995.
- "MHP" den gazetemize tehdid". In: Evrensel, 9 december 1995.
- "MHP mafyasına suçüstü". In: Evrensel, 21 februari 1996.
- "MHP"li Turgut: Ali Rıza Gürbüz akrabam değil". In: Cumhuriyet, 23 februari 1996.
- Moll, Hans, "Politiedossier: lid van Turkse bende infiltreerde in de politiek". In: NRC Handelsblad, 1 februari 1994.
- Mumcu, Uğur, "Ülkücü Ceteler". In: Milliyet, 28 september 1989.
- Nota inzake de subsidieering van organisaties van allochtonen in Amsterdam. Gemeente Amsterdam, 1985.
- Olgun, Ahmet, "Het Turkse onkruid". In: Nieuwe Revu, 13-20 maart 1996.
- Onurumuz peşkeş çektiğimiziz". In: Ortadoğulu, 5 augustus 1996.
- Öznur, Hakki, Ülkücü Hareketi 1. Akik, maart 1996.
- Öztürk, Unal, " Gençlik Sempozyumu". In: Hürriyet, 16 december 1996.
- "Rechtbank: Çiller schuldig". In: Rotterdams Dagblad, 7 mei 1997.
- Roth, Jürgen, en Marc Frey, Die Verbrecher-Holding. R. Piper GmbH & Co. KG., 1995.
- Sahin, Serkan, " Balkan Rotasinda Türkiye...". In: Nokta, 7-13 januari 1996.
- "Tosun operasyonu". In: Demokrasi, 25 maart 1996.
- Türkeş, Alparslan, Temel Görüşler. Kaner yayinlari, 1944.
- Türkeş, Alparslan, 9 İşik Hamle/Töre Yayincilik.
- "Türkeş 'li Kurultay". In: Hürriyet, 13 mei 1996.
- "Turkse nationalisten bijeen". In: Rotterdams Dagblad, 9 oktober 1995.
- "Türk Federasyon". In: Türkiye, 3 mei 1996.
- "Türk Faşistleri CDU" yöneldi". In: Evrensel, 21 oktober 1996.
- "Ülkücüler eline silah almayacak". In: Hürriyet, 16 december 1996.

Ստեյլա Բրամ, Մեհմեթ Ուլգեր

Գ Ո Ր Շ Գ Ա Յ Լ Ե Ր
Հետազոտություն բուրբ ծայրահեղ
աջակողմյանների մասին

Հոլանդերենից թարգմանեց՝
Արսեն Նազարյան

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ ՍՈՎԿՄՏ ՄԿՐՏՉՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ ՄՆՇԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր՝ ԱՐԱ ԲԱՂԴԱՍՍՐՅԱՆ
Համակարգչային ծևավորումը՝ ԳԱՐԵԳԻՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ
Համակարգչային շարվածքը՝ ՍՈՒՄԱՆՆԱ ԱԿԵՏԻՍՅԱՆ
Կազմի ծևավորումը՝ ԱՐԵՎԻԿ ԴԱԿՈՒՅԱՆԻ
Սրբագրիչ՝ ԼԵՆԱ ԽՈՍՏԻԿՅԱՆ

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 84x108 1/32
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 7,75 տպ. մանուկ
Տպաքանակը՝ 2000 օրինակ
Գինը՝ պայմանագրային

«Զանգակ-97» հրատարակչություն
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8
Հեռ. 54-89-32, 54-05-17: E-mail: zangak@arminco.com
Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում

89574
Հազարավոր թուրքեր Բելգիա-Հոլանդիայի սահմանամերձ
Հասելթս-Խրենզվանդ քաղաքի սրահներում իրար ողջունելիս «գորշ
գայլի» բարև են բռնում: Մարդիկ առևանգվում են: Կեղծ փողի առևտուր
է լինում: Ոչ ոք առանց գենքի փողոց դուրս չի գալիս: Թմրանյութերի
առևտուր է գնում: Կափարյալ հնազանդություն է քարոզվում թուրք
ղեկավարների հանդեպ: Մզկիթներն ապօրինի մնացողների օթևան են
դառնում: Ներթափանցումներ են տեղի ունենում Հոլանդիայի
քաղաքական կուսակցությունների մեջ:

Այս բոլորը մասն են կազմում **Գորշ Գայլերի** մասին հեփաքըքրա-
շարժ մի հեփազոփության, որը նախաձեռնել են ժուռնալիստական
դուեփ Սփեյլա Բրամն ու Մեհմեթ Ուլգերը:

Ռոտերդամում, Ամստերդամում ու այլ թուրքաշար վայրերում Մեհ-
մեթն իրեն ներկայացնում է որպես մի անձնավորություն, որ հե-
փաքըքրված է **Գորշ Գայլերի** կազմակերպությամբ: Սփեյլա Բրամն
ընկերակցում է նրան: Ժուռնալիստական այս զույգին հաջողվում է ձեռք
բերել առաջին կարգի տեղեկություններ այն դարբնոցի մասին, ուր
դաստիարակվում են թուրք երիփասարդները «մեծ իդեալի» համար:

Գորշ Գայլերի նպատակը չի սահմանափակվում միայն Մեծ
Թուրանի սփեղծմամբ և Թուրքիան իբր աշխարհի ամենահզոր
տերությունը դարձնելով: Հոլանդիայում, Գերմանիայում ու Բելգիայում
նրանք միանշանակ պայքարում են հասարակական ինփեգրացիայի դեմ:

Գորշ Գայլերը վերադարձել են: Ընդհատակյա գոյությունից հեփո
նրանք կարողացել են հաստատվել Հոլանդիայի բազմաթիվ քաղաք-
ներում ու շրջաններում, երբեմն նույնիսկ պեփական նպաստով: Եթե
Հոլանդիայի հասարակությունը շարունակի անտարբեր մնալ թուրք
երիփասարդների ճակատագրի հանդեպ, այն, ինչ այժմ մի ուրվական է
միայն, իրականություն կարող է դառնալ: Այդ ժամանակ «մենք՝
թուրքերս» գոչողներն իրենց պեփությունը կկազմեն Հոլանդիայի և մյուս
եվրոպական երկրների փարածքում:

Սփեյլա Բրամն ու Մեհմեթ Ուլգերը ազափ լրագրողներ են և աշխա-
տել են փարբեր տեղեկատվական հաստատություններում:

ՎԵՏԱ

A 89574